Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

340
1794-86

w 301.
28

2158

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
U.S.S.R. Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
1 MAR 2010

ՀԱՅՈՑ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԸ.

Բ. ԳԻՐՔ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ.

Ն. Վ. Մուլիք-Թաղավ

ՇՈՒՇԻ
ՏՊԱԳԱՏԻՊ Ա. ՏԷՐ-ՍԱՀԱԿՅԱՆՑԻ
1905.

38.849

27 JUN 2013

Дозволено цензурою. Тифлисъ 28 Февраля 1905 года.

Ընտ բարձու հրամանի Նորին Ս. Օծութեան Վեհափառ Հայրապետի ազգիս, Տ. Տ. Մկրտչի, Դիւանս թոյլատրէ տպագրութիին հրատարակութեանս։
Դիւանապետ՝ Կորիւն վարդապետ

ի 8 Յունուարի 1905
Տփխիս
Թ. 6

ՆՈՒԷՐ

ԹՈՒՂԹՈՒԵՑԻ

Պ. ԼԻՒԴՎԻԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ՍԵՐԳԷՅԵԱՆԻՆ

ՀԵՂԻՆԱԿԻՑ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

«Հայոց եկեղեցական իրաւունքի» Ս. Գրքի մասին մի երկու ամսագրում մի քանի նկատողութիւններ եղան, որոնք արդէն հենց իմ կողմից ի նկատի առնուած և յիշուած էին գրքիս մի քանի տեղում։

Եթէ գիտութիւնների մէջ պահպանողական գիտութիւն կայ, մէկն էլ իրաւաբանութիւնն է, եթէ որ ճիւղերի մէջ պահպանողական ճիւղ կայ, մէկն էլ եկեղեցական իրաւունքն է, և այդ շատ հասկանալի պատճառով, որովհետև եկեղեցական իրաւունքի գլխաւոր աղբիւրները կազմում են Աւետարանը և նախկին եկեղեցու աւանդութիւնը, որոնք ունին համարեա 1900 տարուայ վաղեմիութիւն և այնպիսի վճռական և անվիճելի դրոշմական յատկանիշ՝ որպիսին է Աստուածային, որը՝ իբր էութեամբ անթոյլատրելի է համարում եկեղեցու հիմնական խնդիրների քննութիւնը, փոփոխութիւնը և տարբեր կարծիքների արտայայտութիւնը, ’ի բաց առեալ վարչական և կանոնադրական կողմերը, վերոյիշեալ հիմամբ ընդհանուր եկեղեցու զանազան «եկեղեցական իրաւունք»ները համարեա թէ կրկնութիւններ են մէկը մեսի այլ և այլ դասաւորութեամբ, որպիսիներից մէկն էր և իմ Ս. գրքի ո՛չ հայկական մասը և նոյնպէս Բ. գրքիս նրան համապատասխանող կտորը. իսկ երկուսի մէջ հայկականը եթէ ոչ նոր, գոնէ համախմբուած և դասաւորուած մի գործ է, որը մեր եկեղեցու կեանքի հետ ծանօթացողի համար կարծում եմ չի լինել կարևորութիւնից զուրկ մի աշխատութիւն։

«Հանդէս Ամսօրեայի» մատենախօսի առաջ մի փաստ չկար դաւանական միակողմանիութիւն նկատելու գրքից մէջ, քանի որ ընդհանուր ազգային եկեղեցու կանոնադրութեան լրումը պահանջում է, որ ազգիւրները ունենան հանրական հիմք և ոչ մասնական, ինչպիսին է օր. կարնոյ ժողովը քալկետոնականութիւնը ընդունելու համար եղած, որը և մատնացոյց է անում լիշեալ ամսագրի մատենախօսը։

Ն. Վ. Մ. Թ.

Ա. ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ.

Բ. ԵԿԵՂԵՑՈՒ ԸՆԴԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եկեղեցու որոշման մէջ (տես ա. գիրք. 4 երես) մենք դանազանեցինք երկու մաս, տեսանելի և անտեսանելի, անտեսանելին հաւատն է, որի վրայ Յիսուս Հաստատեց անդըրդուելի հիմքերով իւր եկեղեցին. տեսանելին՝ այն անհատներն են—ժողովուրդը, որը Քրիստոսի հաւատքով միացած, կազմում է հաւատացեալների հասարակութիւնը։ Այս հասարակութիւնը ինչպէս է կազմւում. ով իրաւունք ունի դրա անդամ համարուելու, ինչ իրաւունքներ և պարտաւորութիւններ ունի անդամը. փորձենք տեսնել։

Ա. գրքի մէջ եղած եկեղեցական կանոնների համաձայն սկզբնական և հիմնաւոր միջոցը, որով կարելի է եկեղեցու անդամ լինելու իրաւունքը և պարտաւորութիւնները ստանալ, է մկրտութիւնը դրոշմով, և պաշտօնապէս միանալը եկեղեցու հետ առանց կրկնամկրտութեան, եթէ միացողը արդէն նախկին իւր եկեղեցու մկրտութիւնը ընդունած է։

Իւրաքանչիւր մարդ, որը կընդունի եկեղեցու դաւանութեան և սահմանադրութեան համաձայն մկրտութիւն, կը համարուի եկեղեցու անդամ և ձեռք կ'բերի եկեղեցական իրաւատիրութիւն։ Այսպէս էր ընդհանուր կանոնը բոլոր եկեղեցիների համար մինչև նրանց բաժանումն։ Բայց, նախ քան բաժանումն, երբ առաջացան զանազան աղանդներ, հերձուածներ, որոնցից մեծամասնութիւնը ընդունում էր քրիստոնեայ անունը, իսկ դաւանանքի մէջ տարբեր հայեացք էր մտցնում, երբեմն չընդունելով մկըր-

տուԹիւնը, երբեմն մկրտելով ոչ ընդհանուր եկեղեցու սահմանաձի համեմատ, այլ երեք որդու, կամ երեք հօր անունով, այդպիսի անձինք եկեղեցու ծոցը մտնելիս, չէին կարող ընդունուել առանց իրանց նախկին մոլորուԹիւններից հրաժարուելու, իսկ եԹէ դրանք եկեղեցու սահմանած կարգով չէին մկրտուած, պէտք ընդունուէին միմիայն կանոնաւոր մկրտուԹեամբ—դրոշմով, մկրտուԹիւն ստացած լինելու դէպքում, այդպիսիները հրաժարուում էին իրանց բոլոր մոլար վարդապետուԹիւններից ընդհանուրի առաջ և եկեղեցու անդամ համարուում եպիսկոպոսի օրհնուԹեամբ՝ նրա ձեռքը գլխներին ընդունելով (Նիկիայի—8, 7, 11, կ. բարս)։

Այս, վերջին դէպքի նմանները վարուում եկեղեցիները՝ բաժանումից յետոյ, մէկ դաւանուԹիւնից միւսը անցնելու ժամանակ, նորեկը միայն հրաժարուում էր նախկին դաւանուԹիւնից առանց ենԹարկուելու կրկնամկրտուԹեան։

Հին եկեղեցում մկրտուողը պիտի անշուշտ պատրաստուէր մէկ, երկու, երեք տարի, մինչև որ կատարեալ հասունուԹեամբ և նախապատրաստուԹեամբ արժանանար մկրտուԹեան։

Կանոնաւոր մկրտուԹիւնը լինում է երեք անգամ ընկղմամբ (ՄատԹ. ԻԸ. 19). ը—առ. 49 և 50 կանոններով (տես ա. գիրք 104—105 եր.) ով այսպէս չի մկրտիլ, կ'զրկուի կարգից։ Բացի ընկղմումից հին եկեղեցում գործ էր ածւում և սրսկման ձևը, երբ հիւանդ էր մկրտուողը, կամ ջուրը քիչ էր, այսպիսի ձևով մկրտուածը կղերում չէր ընդունւում, որովհետև այդպիսի դէպքերում մկրտուած անձի կատարեալ հաւատք և հասունուԹիւն ունենալուն վերաբերմամբ միշտ կասկածներ էին յարուցանւում։

Սրսկմամբ մկրտուԹիւնը գոյուԹիւն ունէր արևմտեան եկեղեցում. Գրիգոր—զ. պապը հրամայեց կատարել ընկղմամբ. Թոյլ էր դրւում նոյնպէս միանգամով և ոչ երեք ընկղմամբ, օր. Իսպանիայում. իսկ Միլանում միայն գլուխ էին ընկղմում ջրի մէջ առանց մարմինը Թրջելու (տես Пр. соб. 1858 г. Обз. церк. пост). Մեր և յունաց եկեղեցին մկրտում է երեք ընկղմամբ ըստ ը.—առ. կանոնաց։ Նախկին դարերի մեծահասակների մկրտուԹիւնը տեղի տուաւ փոքրերի, որոնց համար եկեղեցին սահմանեց երաշխաւորներ, այն պայմանով որ երաշխաւորները (կնքահայրները) պատրաստէին մանուկներին համաձայն եկեղեցու վարդապետուԹեան և քրիստոնէական կրօնի ոգու և պատասխանատու լինէին նոր մկրտուածների փոխարէն հասարակուԹեան առջև։

Այսպիսով մկրտուԹիւնը Թէ մեծերին և Թէ փոքրերին՝ երաշխաւորների միջոցով, իրաւունք է տալիս եկեղեցու անդամ լինելու և իրաւատէր համարուելու։

Այստեղից ծագում է մի ուրիշ անմիջապէս կապ ունեցող հարց, արդեօ՞ք եկեղեցու անդամ լինելը կախուած է մարդուս ազատ կամքից և անձնական դրամադրուԹիւնից Թէ ոչ։ Եկեղեցու կանոնները ասում են, որ առանց եկեղեցու չկայ փրկուԹիւն, առանց եկեղեցուն պատկանելու և նրա միջոցով իրականացնելու կեանքի մէջ հոգևոր բարձր նպատակները և գաղափարները՝ չի կարելի, ճշմարիտ քրիստոնեայ լինելու համար, պէտք պատկանել եկեղեցուն իբրև միակ փրկող հաստատուԹեան աշխարհիս մէջ։

Միայն պիտի 'ի նկատի ունենալ, որ այդ անհրաժեշտուԹիւնը ստիպողական չէ', հապա բարոյական (Ս. գիրք 198, 200 եր.), իւրաքանչիւր մի նոր մտնողից պահանջւում է գիտակցական հաւանուԹիւն և կատարեալ պատասխանատուուԹիւն իւր արածների վերաբերմամբ։ Ուստի և՝ հիւանդ ուղեղով և կամքով մարդիկ չ'պիտի ԹոյլտուԹիւն ստանան մկրտուելու. ՏիմոԹէոս Աղէքսանդրացին 2 և 4 կանոններով արգելում է այսահարներին մկրտել մինչև չառողջանան կամ վերջին դէպքում, միայն մեռնելիս։ ԿարԹագենի 54 կանոնով հիւանդները միայն այն ժամանակ էին Թոյլատրւում մկրտուԹեան, երբ անկարող լինելով անձամբ՝ բերանով դաւանելու քրիստոնէուԹիւնը, նրանց փոխարէն մի ուրիշն իբրև երաշխաւոր վկայում էր։ Հասակաւոր մկրտուողներին երկար ժամանակամիջոց էին նշանակում դաւանուԹեան հետ լաւ ծանօԹանալու համար, դիտակցուԹեամբ և

հասուն խելքով ըմբռնելու քրիստոնէութիւնը և ապա մկրտուելու (տես ա. գիրք. 147, 224, 1,225), այս բանը պարզ երևում է մկրտութեան խորհուրդը կատարելու ժամանակ քահանայի արած աղօթքներից և նրա տուած հարց ու պատասխաններից (տես Մաշտոց կարգ մկրտութեան)։

Այդ տեսակէտով արդէօք երախաների մկրտութիւնը չի հակասում այդ կանոններին։ Այդ մասին կանոնական սահմանադրութիւնները որոշում են այսպէս, որովհետև ծնողները, դաստիարակները և երաշխաւորները (կնքահայրեր) պարտաւորւում են անշուշտ կրթել և դաստիարակել իրանց մանուկ մկրտուածներին այնպէս, ինչպէս պահանջում է եկեղեցական կարգ կանոնը, որ նրանք պատասխանատու են հասարակութեան առաջ իրանց յանձն առած սուրբ պարտականութեան համար, ուստի և եկեղեցին թոյլ է տալիս մեծերի պատասխանատուութեամբ փոքրերին մկրտել, մինչև իսկ մերժելով նրանց, որոնք իրանց որդուց չէին մկրտում։ Փոքրերի մկրտութիւնը սկսուած է հէնց առաքեալների ժամանակ, երբ Պետրոսիանները այդ մերժում էին, այն ժամանակ Կարթագենի ժողովը նզովեց դրանց և բացատրեց որ փոքրերի մկրտութիւնը ազատում է նրանց Ադամայ մեղքից։ Յուստինիանոսի օրէնքներով խիստ պատժի սպառնալիքներով հրամայւում էր մկրտել իրանց որդիներին (Սոկոլով —210 եր.)։ Մինչև իսկ եկեղեցին իւր խնամքին է վերցնում և մկրտում բոլոր դէն ձգուած, գերութեան մէջ ծնացած, այլ միջոցով գտնուած անտէր երախաներին, կնքահայր նշանակելով սարկաւագներին, և սարկաւագուհիներին եթէ մկրտուողներն աղջկերք են։

Հնուց սովորութիւն էր երաշխաւոր (կնքահայր) նշանակել այնպիսի անձանց, որոնք կարող էին իրանց անմիջական հսկողութեամբ կրօնական դաստիարակութեամբ կրթել մկրտուածներին, դրա համար սարկաւագները և կանանց համար սարկաւագուհիները համարւում էին ամենայարմարը, որոնք կկարողանային պատասխանատուութիւնը վերցնել իրանց վրայ։ Կանանց համար հէնց առաջին դարուց սկսած

սարկաւագուհիներ նշանակուեցին, ոչ միայն կնքամայր լինելու, այլ և մկրտութեան մէջ մասնակցելու, սրանք կան նոյ մկրտում էին ուսուցանում, իսկ եպիսկոպոսը կամ քահանան վարագոյրի արանքով օծում էին մեռոնով. յետոյ արդէն կնքահայրութիւնը դարձաւ հանրական, իւրաքանչիւր մարդ իւր ծանօթին, ազգականին կանչում էր մկրտութեան ժամին և մկրտուածին տալիսնրա գիրկը, առանց նախկին դարերի խիստ պատասխանատուութիւնը սանիկի դաստիարակութեան վերաբերմամբ նրա վրա բարդելու։ Մկրտութիւնը կատարում էր ըստ հրէական թլպատութեան կարգին, եօթերորդ օրը, երբեմն ուշ՝ եթէ եղանակը վատ էր, երբեմն շուտ, եթէ մահուան վտանգ կար։ Մեր կանոններով մկրտութիւնը կատարւում էր եկեղեցում, վատ եղանակի և հիւանդութեան դէպքում տանը։ Ոչ քրիստոնեայի՝ հայոց եկեղեցու անդամ լինելու միակ միջոցն է մկրտութիւնը ըստ ծխի հայոց եկեղեցու, քրիստոնեայ այլադաւանի հայոց դաւանութիւն ընդունելու միջոցն է՝ դրաւոր հրաժարուել նախկին դաւանական որոշումներից, և բացարձակ եկեղեցում դաւանել հայոց եկեղեցու ուղղափառութիւնը և նրա անդամ լինելը։ Ռուսահայոց շրջանում դաւանափոխութիւնը լինում է պետական հաստատութիւնների գիտութեամբ և թոյլտուութեամբ։

Բ. ԵԿԵՂԵՑՈՒ ԸՆԴՐՄԻ ՊԱՐՏՔ ԵՒ ԻՐԱՒՈՒՆՔԸ

(Սոկոլով—211 եր.)

Եկեղեցու անդամը ձեռք է բերում այն բոլոր պարտք և իրաւունքները իբրև հաւատացեալ, որոնք նպաստում են նրան հասնել իւր հոգեկան ձգտումների և պիտոյքների կատարման։ Նա իբրև եկեղեցու անդամ, առաջին՝ իրաւունք ունի մասնակցելու եկեղեցու Աստուածպաշտական բոլոր կարգերին, հնազանդելով դաւանական և օրէնսդրական կանոններին, երկրորդ՝ մասնակցելու եկեղեցական հասարակական զանազան ընտրութիւններում, օր. եկեղեցու պաշտօնեաների,

կալուածների կառավարիչների, հոգևոր դպրոցների վարիչների, ուսուցիչների, նոյնպէս և եկեղեցու նիւթական ապահովման խնդրում և.: Երրորդ՝ ընտրուելու և լինելու եկեղեցու պաշտօնեայ, վայելով այն բոլոր արտօնութիւնները, որոնք կապուած են այդ պաշտօնի հետ: Չորրորդ՝ իրաւունք ունի բոլոր եկեղեցական—հասարակական գործերում մասնակցելով հանդերձ արդարութիւն և դատ պահանջելու այդ շրջանում ոտնակոխ արած իրաւունքների համար: Վերոյիշեալ իրաւունքների հետ կապուած են և պարտաւորութիւններ. առաջին՝ անհատը ընդունուելով եկեղեցու անդամ, յօժարակամ մտնելով այդ շրջանի մէջ պարտաւոր է ընդունել այն դաւանաբանական և վարդապետական ուսմունքը և կարգերը, որոնք ընդունում է եկեղեցին, Լաւոդիկեայի 46 կանոնը այդ պայմանով է ընդունում մէկին եկեղեցու անդամ (ա. գիրք 224 երես), մինչև իսկ այդ պարտաւորութիւնը գրաւոր գրւում էր մկրտուղից և մտցնւում եկեղեցու դրքերի մէջ: Երկրորդ՝ Աստուածապաշտական արտաքին արարողութիւնների և կարգերի մէջ, նա պարտաւոր է ենթարկուել այն սահմաններին, որոնք որոշուած են եկեղեցական կանոնով, իրաւունք չունի իւր կարծիքի համեմատ փոփոխութեան ենթարկել և իւր համար նոր ձևերով կարգեր սահմանել: Բոլոր ինքնակամ ժողովուրդները, փոփոխուած ժամերգութեամբ աղօթատեղիները համարւում են եկեղեցուց դուրս և արգելւում են եկեղեցական կանոններով. (տես ա. գիրք 98, 204, 237): Արհամարհական վերաբերմունքը դէպի հաստատուն կարգերը, եկեղեցական կանոնները, ենթարկւում էին խիստ պատիժների (ա. գիրք 204 երես): Խորհուրդների կատարումը, խոստովանութիւն, հաղորդութիւն համարւում են ջերմեռանդ քրիստոնեայի պարտք և պատիժների էր ենթարկւում նա, որ առանց պատճառ բերելու հրաժարւում էր հաղորդուելուց (ա. գիրք 90, 210 երես): (Սոկոլով—213 եր.): Երրորդ՝ իւրաքանչիւր անդամ պարտաւոր է հնազանդել հոգևոր կառավարչական հաստատութիւններին և անձանց, որովհետև եթէ անդամը յօժարակամ մտնում է

այդ շրջանը, որի հասարակական կազմակերպութիւնը, քայքայման չենթարկուելու համար, հաստատուած են հսկող հիմնարկութիւններ և անձինք որոշ իրաւունքներով, ուստի և պարտաւոր է կատարելու որոշուած պահանջները և հնազանդուել արդէն օրինական ոյժ ստացած կարգերին: Չորրորդ՝ անդամի պարտաւորութիւնն է կատարել բոլոր այն կանոնները, որոնք կսահմանի հասարակական խորհուրդը ամբողջ եկեղեցու տնտեսական ներքին և արտաքին կազմը պահպանելու և ապահովեցնելու համար: Այս ստիպողական ձև ունեցող կանոններից չի կարելի հեռու եղրակացութեան գնալ, թէ, եթէ կրօնը, եկեղեցին բարոյական կանոններով և հոգեկան—քրիստոնէական գաղափարների քարոզներով են կամենում մարդկանց ուղղել, նրանք պէտք ստիպողական միջոց գործ չդնեն, պէտք մարդու ներքին ազատութիւնը չսահմանափակեն, այլապէս եկեղեցին իւր բարոյական—վարդապետական նշանակութիւն ունեցող դերից քաղաքացիական կփոխուի: Եկեղեցին ամենևին ստիպողական միջոցով գործ չի կատարում այն դէպքում, երբ խնդիրը վերաբերում է ներքին աշխարհին, բարոյական—կրօնական կողմին, ու՛ր ո՛չ մի բռնադատական միջոցով չի կարելի անհատի ներքին աշխարհը փոփոխութեան ենթարկել կրօնական մտքով, այն է ստիպել որ հաղորդութեամբ փրկուի մեղքերից, հաւատքով ընդունի խորհուրդների ներգործութիւնը և. այս ձևի խնդիրներում եկեղեցին տալիս է կատարեալ ազատութիւն ամեն մի անդամի, որը պատասխանատու է միայն իւր խղճի առաջ. մինչև իսկ, երբ խնդիրը վերաբերում է եկեղեցական —վարչական, հասարակական գոյն ունեցող կողմերին, այդ դէպքում անդամները եթէ զլանում են իրանց պարտքը կատարել, եկեղեցին դատապարտում է նրանց ոչ մարմնական պատժի սպառնալիքով, այլ ենթարկում է ապաշխարանքի, բանադրանքի և եկեղեցուց մերժման: Բոլորովին տարբեր հանգամանք է, երբ անդամը սահմանից անցնում է, խանգարում է ընդհանուր կարգը և գայթակղութեան պատճառ դառնում, այսպիսի դէպքում ընդհանուրի շահը պահանջում

է դիմել հասարակութեան միւս անդամներին զսպելու միջոցներ գտնել և սանձահարել կարգ խանգարողներին՝ դիմելով ի հարկէ ոյժի, մարմնաւոր իշխանութեան միջոցով։ Այսպէս Անտիոքի 5-րդ կանոնը (ս. գիրք 211 երես) և Շահապիվանի ժողովը որոշում են դիմել ոյժի և բռնի կերպով կարգ սահմանել. մինչև իսկ մեր Շահապիվանի 447-ի ժողովը մահուան պատիժ է նշանակում բոլոր հաւատուրացներին և եկեղեցու կարգերին հակառակողներին. այս խիստ կանոնների չկիրկնումն ուրիշ ժողովներում, ապացոյց է որ հայաստանը գտնւում էր խիստ բացառիկ հանգամանքներում, Վարդանանց պատերազմի երկունքում, երբ դաւաճան հայերը կրօնափոխ լինելով, անխղճաբար աւերում էին եկեղեցիները, այդ հանգամանքը ստիպեց նախարարներին միանալ եկեղեցու խիստ պահանջների հետ մահուան պատիժ նշանակելով հաւատուրացներին։—Բացի այդ բացառիկ դէպքերից, այլևս ուրիշ որև է ժողովի կանոններում չենք պատահում այդպիսի խիստ վճիռների, համաբեա ամեն տեղ նոյն համոզեցուցիչ՝ խրատական կարգերն են սահմանւում. իսկ ինչ վերաբերում է անհատի անձնական կապ ունենալու չափին եկեղեցու հետ, այդ բոլորովին անկախ և ազատ վիճակի մէջ է դրած, իւրաքանչիւր անհատ պատասխանատու է իւր խղճի առաջ, եթէ անձնական ազատութեան մի որև ճնշում նկատեց եկեղեցու կողմից, նա կարող է իսկոյն և եթ խզել իւր կապը այդ եկեղեցու հետ և դուրս դալ այդ հասարակութեան սահմանած կրօնական պարտաւորութիւններից, այլապէս եկեղեցին ծառայած չէր լինել դարաւոր և բարոյական բարձր սկզբունքին՝ որ եկեղեցու անդամ լինել կարելի է հասուն գիտակցութեամբ և յօժար կամքով։

Գ. ԵԿԵՂԵՑՈՒ ԸՆԴԱՄՈՒԹԻՒՆԻՑ ԶՐԿՈՒԵԼԸ.

Եկեղեցու անդամութիւնից կարելի է զրկուել երկու ձևով, կամ կամաւոր կերպով, երբ ինքնակամ հեռանում է անդամը, և ակամայ, երբ զանազան յանցանքների համար դատապարտւում է եղեղեցուց մերժման։ Հին կանոններով ապաշխարութեան ենթարկում էր եկեղեցին յանցաւոր անդամին 4 ձևով, կանգնացնելով լացողների, դրսի ապաշխարողների, ներսի ապաշխարողների և հաւատացեալների հետ և ապա թոյլ էր տալիս իբրև հաւատացեալ մասնակցել եկեղեցական ընտրութիւններին և ներկայ լինել պատարագին ցրվերջ։ Նայելով յանցանքին, նրանք ենթարկւում էին համապատասխան ապաշխարանքին մէկ տարուց սկսած մինչև 20 տարի կամ ցմահ, միմիայն մեռնելիս իրաւունք էր դրւում հաղորդուելու. մինչև իսկ Սարդիկիայի ժողովի կանոններով օրինազանց եպիսկոպոսին հրամայւում էր ցմահ ապաշխարել և չհաղորդուած թաղուել*)։ Բանադրուածներին իրաւունք չկար թաղելու օրինաւոր կարգով, եթէ բանադրանքը չվերացրած մեռնում էին (տես Ա. գիրք. 171, 434, 611)։ Բայց ընդհանրապէս, մեծ յանցաւորները մինչև իսկ մեռնելիս արժանանալով հաղորդութեան՝ մտնում էին իրաւատէր անդամների շարքը։ Մկրտուած անհատը՝ եթէ ենթարկւում է զանազան մեղքերի համար այլ և այլ պատիժների և մինչև իսկ ցմահ անհաղորդութեան, բայց և այնպէս պահում է եկեղեցու անդամութեան այն իրաւունքը, որը տրւում է նրան մկրտութեան խորհուրդով, որպիսին համարւում է անջնջելի, և այս հիմամբ ամենածանր յանցանքների համար դատապարտուած և եկեղեցուց հեռացրած անդամը՝ նորից վերադառնալիս՝ չէր ենթարկւում կրկնամկրտութեան, այլ պէս ուրեմն մկրտութեամբ ստացած եկեղեցական իրաւատիրութիւնը մնում է ցմահ։

*) Ընորհալին 32 կանոնով (տես Ը. գ. 579 երես) այլազգիների միջոցով բռնի եպիսկոպոսական իրաւունք ձեռք բերողին ենթարկում է կարգալոյծ լինելուն, մեռնելիս հաղորդութիւն չտուանալուն և քահանայական թաղումից զրկուելուն։

Դ. ԵԿԵՂԵՑՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԲՐԱՏՆՈՐՈՆԴԸ

Եկեղեցու անդամները բաժանուում են երկուսի, աշխարհականների և հոգևորականների, հոգևորականներն էլ ըստ իւր կարգի՝ հասարակ պաշտօնեաների, եկեղեցական—վարչական իշխանութիւն ունեցողների և վանականների:

Աշխարհականների պարտք և իրաւունքի մասին արդէն խօսուեց նախորդ գլուխներում իբրև եկեղեցու անդամի:

Հներում հոգևորական ընդհանուր բառի փոխարէն գործ էր ածւում կլիրոս բառը, կղեր, կղերական ըստ մեր կանոնների, յունական այդ բառը նշանակում է վիճակ, բաժին. այդպէս յիշւում է գործք առ. Ա. գլ. 17, 25 (Մատաթիայի ընտրութիւնը Յուդայի փոխարէն):

Այդ բառը գործ էր ածւում երկու նշանակութեամբ, 1) իբրև հոգևորականների համախմբումն և 2) այն դրութիւնը որը բռնում է հոգևորականութեան մէջ որև է անձը: (Սոկոլով—221 երես): Յունական կլիրոսի փոխարէն հռոմայեցիք գործ էին ածում օրդօ բառը, որ նշանակում է դաս, կարգ, այն մտքով թէ եկեղեցում սպասաւորողների որ դասին է պատկանում հոգևոր անձը: Ա. դարում, առաքեալների ժամանակ հոգևոր դասակարգը կար երեք աստիճանով, սարկաւագ, քահանայ և եպիսկոպոս. (գործք. ժգ. 18, ի. 17, 28, Ձ. Յ. Փիլիպ. Ա. գլ. 1—3): Դ. դարում սկսում են աւելանալ նոր պաշտօններ, սարկաւագի օգնականներ—կիսասարկաւագներ, սաղմոս երգելու համար—սաղմոսասացներ կամ երգիչներ, առաքելական թղթերը կարդացող—ընթերցողներ, ջահ վառողներ—ջահընկալներ, այսահարներին երդմնեցնող—երդմնեցուցիչներ:

Հոգևորականութեան մէջ մտնելու համար, եկեղեցում ծառայելու, սպասաւորելու և ժողովրդականների հոգևոր պէտքերը հոգալու համար պէտք է ընդունել ձեռնադրութեան կարգը, առանց որի ոչ ոք չի կարող վայելել այն իրաւունքները, որոնք յատկացուած են այդ դասակարգին:

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
U.S.S.R. Публичная Библиотека
7/XI. 1922
имени Ленина
Ա. ՀԱՄԱՐՏՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ
1003
14592

Ե. ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆ ԴԱՍԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՊԱՏՄԱԿԱՆՆԵՐ

(Соколовъ, церковное право. Церковныя постановленія о священствѣ, и о таинствѣ священства (Прав. собесѣдникъ 1859, 1857 г. г.); устройство церк. іерархіи Пр. собесѣд. 1858 г.)

Եկեղեցու վարդապետութեամբ ձեռնադրութեան հետ միասին ձեռնադրուող անձը ստանում է առանձին հոգեկան շնորհքներ այդ աստիճանի համապատասխան գործողութիւններ կատարելու համար: Ձեռնադրութեան խորհուրդը՝ քահանայութիւնը սահմանեց Քրիստոս, փչելով իւր աշակերտների վրայ տալով նոցա հոգին սուրբ (Յով. ի. 21—23). իսկ աշակերտները այդ շնորհքը և իրաւունքը տուին իրանց յաջորդներին ձեռնադրութեամբ (ձեռք դնելով). գործք—գ. 6. ԺԳ. 23, Ա. տիմ. գ. 14): Ձեռնադրութեամբ շնորհք տալու սովորութիւնը կար և Հին—ուխտումը, Յակովբ նահապետը ձեռքը դնելով օրհնեց Եփրեմին և Մանասէին, Մովսէս ձեռք դնելով իշխանութիւն տուաւ Յեսուին՝ սրբոյ շնորհքը հայցելով նրա վրայ (Ե. Օրին. լգ. 9): Նոյն ձևով առաքեալները ձեռք դնելով հոգին սուրբ էին աղօթքով իջեցնում ձեռնադրուողի վրայ: Դիոնիսիոս Արիսպագացին այսպէս է նկարագրում իւր ժամանակի ձեռնադրութիւնը «Ձեռնադրուող եպիսկոպոսը, երկու ծնկով չոքած զոհարանի (սեղանի) առաջ, գլխին բռնած ունենալով Աւ՝ծոյ խօսքը և եպիսկոպոսի ձեռքը, օրհնւում է սրա միջոցով ընդունելով սրբազանութեան շնորհք. քահանան նոյնպէս չոքած զոհարանի առաջ՝ կողքից, գլխին բռնած ունենալով եպիսկոպոսի աջը, ընդունում է քահանայագործութեան շնորհքը: Սարկաւագը կողքից՝ չոքած զոհարանի առաջ մի ծնկով, գլխին բռնած ունենալով եպիսկոպոսի աջը, օրհնում է, ստանալով (ծառայողի) սպասաւորողի աստիճան» (Прав. соб. 1867 г.) Կարթագենի Դ. ժողովի 2-րդ կանոնով, երկու եպիսկոպոս Աւետարանը բռնում են ընծայացուի գլխին, մէկը օրհնում է, իսկ մեւսները ձեռքները դնում են գլխին և առաջինի հետ

շարունակում օրհնութիւնը։ Այս մասին խօսում են Առաքել. և Նիկ. կանոնները (տես Ա. գիրք 83 և 148—149 երես)։ Հոգևորականութեան այդ երեք աստիճանը գոյութիւն ունէր և Հին—ուխտի մէջ. ա. քահանայապետը, բ. քահանաները, գ. Ղևտացիք։ Առաջինները Ս.Հարոնից սկսած ժառանգաբար ստանում էին քահանայապետութիւնը և օծւում էին իւղով ոչ միայն գլխի սրսկմամբ, այլ և գլխից սկսած մինչև ոտքեր (ղև. է. 12, սաղմ. ճլբ. 2)։ Քահանայք Ս.Հարոնի որդիներից էին Եղիազարի ցեղից, 7 օր գոհ անելուց յետոյ ընդրւում էին իրանց պաշտօնում. (ել. 29. գլ. ղև. 8. գլ.)։ Ղևտացիք ծառայում էին քահանաներին. (թուոց գլ. ը.)։ Նոյն ձևը համարեա մնաց քրիստոնէութեան շրջանում, սարկաւագներ համարւում էին քահանայի օգնականներ և ծառայողներ. քահանայք եկեղեցու սեղանում սպասաւորողներ. իսկ եպիսկոպոսները ընդհանուր հսկող, տէր և տեսուչ։ Ձեռնադրութեամբ տրւում է զանազան աստիճաններ, բարձր, որը միացած է քահանայութեան խորհրդի հետ, և ստորին՝ որը քահանայութեան խորհուրդի հետ չի միացած, թէև ձեռնադրութեամբ է տրւում. առաջինը ծառայում է սեղանում, երկրորդը սեղանից դուրս եկեղեցու մէջ. առաջինը կատարում է նուիրապետական պաշտօններ, երկրորդը միայն պատրաստւում է մտնելու նուիրապետութեան մէջ։ Երկրորդը կրթւում է, հետևողաբար զարգանում է այդ աստիճանների մէջ և ապա արժանանում ընդունուելու բարձր կարգի մէջ։ Որովհետև բարձր շրջանը, սրբազնագործ պաշտօնեաները մեծ իրաւունքներ և պարտքեր են յանձն առնում կատարելու, ուստի և եկեղեցական կանոնադրութիւնը ամեն միջոց գործ է դնում սահմանել այնպիսի կանոններ, որոնց օգնութեամբ հնար լինէր հասարակութեան մէջի լաւ ոյժերը համախմբելու, կոչելու այդ պատասխանատու դերը յանձն առնելու։ Այդ շրջանի մէջ մտնելու համար չի պահանջւում, դասակարգային, ժառանգական կամ ազնուական դասի առաւելութիւնները, անխտիր ընդունւում են ամեն կարգի պատկանող անձինք, միմիայն արժանաւոր յատկութեամբ։ Բացառութիւն

կազմում են կանայք, որոնք առաքելական սահմանադրութեան համաձայն իրաւունք չունին սրբազնագործ պաշտօնեայի կարգեր կատարել, այլ իբրև սարկաւագուհի և ստորին պաշտօնեայ կարող են ծառայել եկեղեցում այն էլ տարիքը հասնելուց յետոյ. Եպիփանոսը ասում է, կանանց թոյլ չտալ պատարագ անել, հապա միայն պաշտօնակատար լինել, թէև հներում յիշւում է քահանայուհիներ, բայց նրանք չէին կատարում քահանայի պաշտօն, այլ այդ անունը կրում էին, որովհետև մի-անների համեմատութեամբ աւագ էին (Սօկօլ. 228) (Ա. կոն. ժգ. 34) (Ա. Տիմ. բ. 12)։

Այժմ տեսնենք ինչպիսի պայմաններ են պահանջւում ձեռնադրուողից, ինչ յատկութիւններ են հարկաւոր ընդունուելու և չընդունուելու համար այդ շրջանի մէջ։

1) Հոգևոր այդ ասպարէզը չեն ընդունւում այն պակասութիւն ունեցող անձինք, որոնց պակասութիւնները կարող են խանգարել եկեղեցական պարտականութիւնները կատարել, որ ասել է թէ ոչ թէ մարմնական արատ ունենալն է պատճառ բերւում, այլ գլխաւորապէս պաշտօնը ճշտութեամբ կատարելու արգելքը, որը նկատւում է և Մովսիսական օրէնքի մէջ (ղև. լա. 16) օր. խլութիւնը, կուրութիւնը արգելք են լինում ա—առ. 78 կանոնով (111 եր. Ա. գիրք) մտնելու հոգևորականութեան մէջ, բայց աչքով խեղը և ոտքից վնասուածը (111 երես) որը կարող է շարժուել և անխափան պաշտօն կատարել, եթէ արժանաւոր անձն է, կարող է մինչև իսկ եպիսկոպոսական աստիճանի հասնել, որովհետև ա—առ. 77 կանոնը (111 երես) ասում է՝ պղծողը ոչ թէ մարմնական արատն է, այլ հոգեկան։ Նոյն կերպով և բնական ներքինին, կամ բռնի միջոցով այդ պակասութիւն ստացողը, եթէ արժանաւոր է, կարող է ա—առ. 21 կանոնով (Ա. Գ. 95 երես) հասնել բարձր աստիճանի։ Իսկ ինչ վերաբերում է այն պակասութիւններին, որոնք վայել չեն եկեղեցական կարգեր կատարողին, ժողովրդի յարգանքը, պատկառանքը վայելելու տեսակէտից, օր. շեղ աչք, կաղ ոտք ունենալը, որոնք կարող են ծիծաղ յարուցանել պաշտօն կա-

տարելիս, թէ և արգելական ոչինչ չկայ սրանց վերաբերմամբ, բայց այդ պակասութեան տէր անձանց առհասարակ չեն ընդունում այդ կարգի մէջ վերոյիշեալ անպատեհութիւնն առաջացնելու երկիւղից (թագ. առ. 2 կանոն. Ա. գ. 491 երես)։ Մարմնական պակասութիւնների մէջ մտնում են այն հիւանդութիւնները, որոնց տէրերը ուղիղ դատողութիւն, հասուն խելք չունին, կամ նրանք, որոնք շատ անգամ ենթարկուում են հոգեկան խանգարմունքների, այսպիսիներին ա—առ. 79 կանոնը (111 Ա. գիրք) անուանում է այսահարներ, որոց հետ կարելի է միացնել և խելագարներին, հոգեկան այլ և այլ խանգարմունք ունեցողներին, այսպիսի հիւանդութիւնները հարկաւ կարող են արգելք հանդիսանալ եկեղեցական պաշտամունքները սրբութեամբ կատարելու։ Որովհետև եկեղեցու պաշտօնեայ ընտրուում են հասուն խելքով, առողջ հոգով, և որոշ կամք ունեցող մարդիկ, ուստի և եկեղեցական կանոնները այդպիսի յատկութիւններ ձեռք բերելու համար որոշում են տարիքը՝ հասակը, ընդունելով որ տարիքը փորձի, դաստիարակութեան, կեանքի և շրջանի մէջ շփուելուց յետոյ տալիս է կանոնաւորուած, քիչ ու շատ հաստատուն բնաւորութիւն. այդ հիմունքով զանազան աստիճանի համար նշանակուում են զանազան տարիքներ. այսպէս՝ քահանայի համար Նէոկիսարիայի 11 կանոնը նշանակում է 30 տարեկան հասակը (Ա. գ. 199 եր.). Թագ. ախ. 3 կանոնը 30 տարեկան (Ա. գ. 477 եր.), իսկ Սսի 3 կանոնը 27 տարեկան (Ա. գ. 452). սարկաւագի համար սահմանուում է ըստ Կարթագենի 25 տ. ըստ Թագ. առ. 27, ըստ Սսի 27 տ., կիսասարկաւագների համար 20 տարեկան հասակ, սարկաւագուհիներին 40։ Ա.ւելի ստորին պաշտօնեաների համար որոշ տարիք չկայ նշանակուած, միայն փոքր հասակից ընդունուում են միաբանութեան մէջ ոչ իբրև աստիճանաւոր, այլ իբրև պատրաստուող*)։ Հներում ինչպէս երևում է Կարթագենի 20 կանոնից թոյլատրուում էր փոքրերին մասնակցել ընթերցողի, երգչի պաշտօնով ժամերգութեան մէջ, այսպէս էր և մեր

*) Տես Ներսէս Ե—ի 83 կանոնը. Ա. գ. 612 երես։

եկեղեցում հներում և այժմ. թէև Զ. տիեզերական ժողովը պահանջում էր, որ առանց օրհնութեան ոչ ոք ընթերցող և երգիչ չլինի եկեղեցում, բայց մեր եկեղեցին համարում էր այդ պաշտօնները ազատական և ոչ պարտաւորական և ոչ ենթարկուող ձեռնադրութեան կամ օրհնութեան, և այդ տիեզերական ժողովի սահմանածը ոչ պարտաւորեցուցիչ իւր համար, քանի որ Զ. տիեզ. ժողովը չի ընդունուում հայոց եկեղեցուց իբրև օրէնսդիր և հանրական։ Եպիսկոպոսների համար ըստ Թագ. առ. կանոնների որոշուում է ոչ պակաս 30 և ոչ աւելի 50 տարեկանից. մանաւանդ որ Սարդիկիայի ժողովի կանոններով ոչ ոք չի կարող եպիսկոպոսութեան հասնել առանց իւրաքանչիւր ստորադաս աստիճանում որոշ ժամանակամիջոց մնալուց, այնպէս որ ամենավաղ հասակն պիտի համարել 30 տարեկանը։ Հռոմէական կարգերով փոքր աստիճանաւորների համար նշանակուում է 7—13 տարեկանը, կիսասարկաւագներին 21, սարկաւագներին 22, քահանաներին 24, եպիսկոպոսներին 30. Յուստիննիանոսի 123 և 127 նովելլայով ոչ պակաս 30 տարեկանից՝ հասակ է որոշուում եպիսկոպոսի համար (Սոկօլով, Ռորչակով)։ Մեր մէջ այն կանոնները և տարիքների որոշ լինելը միշտ չէ պահպանուում, ժամանակի, հանգամանքների և այլ կողմնակի պատճառներով օր. ուսման, կրթութեան, միշտ փոփոխութեան է ենթարկուում ընտրեալների նշանակումն և աստիճան ստանալը, Գրիգոր տղան կաթուղիկոս դարձաւ համեմատաբար շատ փոքրը հասակում, ոչ աւելի քան 30։

2) Ընտրեալի արժանաւորութիւնը կշռելիս մեծ տեղ էր բռնում բարոյական կողմը, նա պիտի լինէր բարոյական, բոլոր յատկութիւններով բարձր ժողովրդից, ծանօթ քրիստոնէական հաւատի, պաշտամունքների, իւր պարտաւորութիւնների և եկեղեցական կանոնների հետ։ Թէ առաքելական, թէ օտար մասնաւոր և թէ մեր ժողովների, Ս. Հարց, մեր կաթուղիկոսների կանոններով և սահմանադրութիւններով ընծայացուն պիտի լինէր ուսումնական, կրթուած, քարոզիչ, պատժուում էր մինչև իսկ նա որ ընդունում էր տգէտին հոգևորակա-

նուիրեան մէջ. Ս. Սահակի, Շնորհալու, Գէորգ Գ.-ի, Ներսէս-Ե-ի կանոնները. Ա. գիրք 517, 558, 603, 631 երեսներ: Ընճայացուի դաւանութեան և կրթութեան աստիճանը իմանալու համար քննութեան էր ենթարկւում եպիսկոպոսի ձեռքով, կամ գրաւոր ներկայացնում էր իւր հաւատոյ դաւանանքը, իսկ վարք ու բարքի կողմից վկայում էր ժողովուրդը ընտրութեան ժամանակ, առանց քաշուելու ամեն մի անգամ իրաւունք ունէր թուելու ընճայացուի լաւ և վատ կողմերը, բարոյական արժանիքը և պակասութիւնները. այդ հիմամբ և օտար անձը չէր կարող հովիւ ընտրուել մի որևէ ժողովրդի վրայ մինչև որ ժողովուրդը լաւ չճանաչէր, նրա մասին հաւաստի ճշգրիտ տեղեկութիւններ չժողովէր և հաստատ վկայութիւն չտար: Գէորգ-Գ-ի կանոններում որոշ գծուած է թէ ընտրութեան կարգը և թէ ժողովրդի կողմից կազմելիք համախօսական թղթերի ձևը և հոգևոր իշխանութեան ներկայացնելը. Ա. գ. 633 երես: Ընտրեալի հաստատական գիրքը ունի որոշ կէտից նշանակութիւն. հներում երբ հաստատական կարգը ուրիշ հիմունքներ ունէր, կար դասակարգ, որի անդամները ծնուելով նոյն շրջանում կապուած էին որոշ պայմաններով ուրիշ անձանց հետ, չէին կարող ազատ իրանց կամքով մտնել հոգևորականութեան մէջ, խանգարելով ուրիշի իրաւունքը: Այդ դասակարգին պատկանում էին ստրուկները: Ա—առ. 82 կանոնով (Ա. գ. 112 եր.) ստրուկների հոգևորականութեան մէջ մտնելը պիտի լինէր միայն տիրոջ թոյլտուութիւնից և արձակումից յետոյ. տէրերը իրաւունք ունէին յետ կանչելու ստրուկներին, եթէ նրանք քահանայ կամ եպիսկոպոս չէին, կամ 20 տարի շարունակ չէին վարել եկեղեցական պաշտօն, կային որոնք այդ պատրուակով խուսափում էին ստրկութիւնից: Նոյն համեմատութեամբ եթէ զինուորականը և քաղաքացիական ծառայութեան մէջ եղած անձինք չազատուին իրանց ծառայութիւնից չեն կարող հոգևորական դառնալ:

4) Առաքելական թղթերի հիման վրայ իրաւունք չունէին հոգևորականութեան մէջ մտնելու երկակները, երկրորդ

անգամ պսակուածները, և աստիճանից զրկւում էին նրանք, որոնք երկապսակէին: Ա. Տիմոթ. Գ. 2, 12 և Տիտոսի Ա. 6. պարբերութիւնները սահմանում են որ եպիսկոպոսը և սարկաւագը լինին «միոյ կնոջ այր»: Երկապսակ աշխարհականները ապաշխարանքի էին ենթարկւում, իսկ չէին կարող հոգևորական դառնալ Ա—առ. 17 կանոնի համաձայն (Ա. գ. 93 երես): Ձեռնադրութիւնից յետոյ պսակուելը արգելում է լուսաւորչի 2 կանոնը (Ա. գ. 505) և պսակուող քահանային ենթարկում է 9 տարուայ ապաշխարանքի: Բարսեղ մեծը 12 կանոնով (Ա. գ. 240) արգելում է եկեղեցու սպասաւորներին—ընթերցողներին և երգչին երկապսակ լինել, եթէ դրանց կինը կմեռնի պաշտօնում եղած ժամանակ, կարող են երկրորդ անգամ պսակուել ապաշխարանքի ենթարկուելով և այն պայմանով որ ցմահ բարձր աստիճանի չկարողանան հասնել: Յուստինէանոսի 123 և 137 նովելլայով, եթէ մինչև անգամ պատահմամբ բարձր աստիճանի հասնէին երկապսակները, պէտք է յետ առնէին աստիճանները և նախկին սպասաւորութի վիճակի մէջ թողնէին: Երկապսակ կոչւում էին և նրանք, որոնք պսակւում էին այրի կնոջ հետ, կամ անհաւատարմութեան պատճառով արձակուած կնոջ հետ: Եթէ անհաւատարիմ արձակուած կնոջ հետ ամուսնացած լինելը իմացւում էր ձեռնադրութիւնից առաջ, նա զրկւում էր հոգևորականութեան մէջ մտնելու իրաւունքից: Եթէ աշխարհականի կինը մեղանչում է, ամուսինը հոգևորական դառնալ չի կարող, իսկ եթէ ձեռնադրութիւնից յետոյ կինը մեղանչում է, նա կամ պիտի կնոջից բաժանուի, կամ զրկուի քահանայագործութիւնից (199 եր. Ա. գ. 8 կանոն), որովհետև եկեղեցու հայեացքով քահանան իւր ընտանեկան անաղարտ կեանքով պիտի օրինակ լինի ժողովրդին: Աւելի խստութեամբ է խօսում այս մասին Նահապիվանի ժողովի 2-կանոնը (Ա. գ. 323) ոչ միայն քահանայի և կնոջ մեղանչման դէպքում, այլ և երբ քահանայի դուստրը, տղան կմեղանչեն, պէտք մեղանչողները կամ խստաւ հեռանան իրանց տանից, կամ հեռացնուեն քահանայական տանից, ա-

պաշխարանքի ենթարկուելով և զրկուելով եկեղեցու բաժնից. իսկ պոռնիկ աղախինը խոյոյն և եթե պիտի հեռացնուի այդ տանից: Նոյն կանոնով ոչ քահանան իրաւունք ունի երկրորդ անգամ պսակուելու և ոչ երէցկինը: Նոյն ժողովի 3 կանոնը (Ա. գ. 326) զանազանում է կուսանի պսակը երկակի պսակից, երկակի կամ պոռնկութիւն արածի պսակը կատարւում է խաչակնքած ուռի ծառի ոստով և ոչ խաչ ու աւետարանով: Լաւսաւորչի 5-րդ կանոնը (Ա. գ. 506) կուսանի պսակը երկապսակի հետ համարում է ոչ քաջալերական և ենթարկում է պսակուողներին 3 տարուայ ապաշխարանքի: Երկակ համարելի է և այն կացութիւնը, երբ մէկը պահում է հարճ, կամ կնոջ հետ միասին պահում է երկրորդ կին. Ա. գ. 93 երես 17 կանոն, այդպիսիները չեն կարող հոգեւորական դառնալ: Չէին կարող հոգևորական դառնալ և նրբանք, որոնք ազգակցական, խնամիական և կնքահայրական չհաս աստիճաններում պսակուած էին, նոյնպէս և նրանք ամուսնացած էին ստրուկուհու, անարգուած և անառակ կանանց հետ (Ա. գ. 93, 94): Երկակների այս կանոնները խստութեամբ գործնականութեան մէջ չեն գործադրուել, պատահում էին հանգամանքներին նայելով դէպքեր, երբ եկեղեցու կառավարիչները, զիջողաբար էին վերաբերւում դէպի զանցառուները Անկիւրիայի 10 կանոնը (Ա. գ. 137) թոյլ է տալիս սարկաւագին պսակուել և ծառայութեան մէջ մնալ, եթէ ձեռնադրութիւնից առաջ յայտնել է եպիսկոպոսին այդ մասին և եթէ պսակուելու իրաւունք է տուել եպիսկոպոսը: Լաւսաւորչի 2-կանոնը (505 եր. Ա. գ.) պսակուող քահանային 9 տարուայ ապաշխարանքի է ենթարկում առանց կարգալուծութեան: Թէոդորիդը ձեռնադրեց մէկ երկակի մինչև իսկ եպիսկոպոս և երբ նրա վրայ յարձակուեցին, նա մատնացոյց արաւ իւր նախորդների վրայ: Անտիոքի Աղէքսանդր եպիսկոպոսը Ակակիայի հետ ձեռնադրեցին մի երկակի: Պօլսի Պրոկղ եպիսկոպոսը հաստատեց մի քանի երկակների ձեռնադրութիւնը: Բինգամի կարծիքով գործնականութիւնը այսպիսի դէպքերում խիստ զանազանւում էր տրուած կանոնների պահանջից (Սօ-

կօլով—241): Սօկօլովը 242—3 երեսներում հետևեալն է ասում այդ մասին. այդպիսի բացառութիւններ լինում էր այն հիմամբ, որ այրու հետ պսակուելը կամ ձեռնադրութենից յետոյ պսակուելը հիմնւում էր գլխաւորապէս բարոյական մաքրութեան կատարեալ պահպանման վրայ և ոչ գաւառնաբանական վճռահատութեան, շատ անգամ կոյսի վրայ պըսակուելը չէր տալիս անարատ կեանքի բարոյական այն արժէքը, որը ենթադրւում էր ընդհանրապէս: Հին եկեղեցու «արգելքը ընդունել երկապսակներին չի բղխում այն միստիքական գաւանաբանական սկզբունքից պսակի մասին, որ իբր թէ միանգամով պսակն է՝ Քրիստոսի եկեղեցու հետ միանալու միստիքական ձևակերպութիւնը, հապա նրանից որ երկրորդ ամուսնութիւնը ենթադրել է տալիս բացակայութիւն բարոյական ողջախոհութեան, որը պահանջում է եկեղեցին իւր նուիրապետութեան անդամներից»: Հռոմէական եկեղեցին այնքան հեռու է գնացել այս խնդրում, որ արգելքները դարձրել է գաւանաբանական որոշումն, օր. չընդունել բոլոր ապօրինի ծնուածներին*, հերետիկոս ծնողների որդիներին մինչև երկրորդ աստիճան հօր կողմից և առաջի աստիճան մօր կողմից, թէկուզ որդիները ուղղափառ լինեն. բոլոր քրէական գատաւորներին, որոնք օրէնքի հիման վրայ մահուան են դատապարտում յանցաւորներին, դատախազներին, երդուեալ դատաւորներին և առհասարակ բոլոր մահուան պատիժ սահմանելում մասնակցողներին, անդամահատներին, որոնք իրանց գործողութեամբ մահ կպատճառեն մարդու, բռնի կերպով անպատուաճ կոյսի հետ պսակուողին կամ բռնի կերպով անարգուած կնոջ հետ կենակցող ամուսնուն:

5) Քրէական յանցանքներում բռնուած անձինք զրկւում են հոգևոր ասպարէզ մտնելու իրաւունքից, սպանութիւն կատարողներ, աւազակութիւն և գողութիւն անողներ, կեղծիք կամ ստոր գործերում բռնուածները չեն կարող հոգևորական դառնալ, նոյնպէս և կամաւոր կերպով իրանց ներքինիացնողները. տես Առաքելական, Սիկիական և Շահապիվանի

* տես (Ս. Յահակի) 8 և 23 կանոնները. Ա. գ. 520 և 522 երես):

կանոնները. Ա. գ. 95, 146 երես։ Թեթև յանցանքներ են համարւում ակամայ և բոլորովին իրանց անկախ պատճառով արուած սպանութիւնը, ինքնապաշտպանութեան համար սպանութիւնը, բռնութեամբ եղած ներքինիացումն կամ իրան կամքից դուրս բժշկի միջոցով հիւանդութեան դէպքում եղած ներքինիացումն, այդպիսի դէպքերում եկեղեցին զիջողաբար է վերաբերւում և շատ անգամ ընդունում է իւր դասի մէջ։ Բացի քրէական յանցանքներից, այն անբարոյական գործողութիւնները, որոնք մեղադրական ոչ մի արտաքին երևոյթ չեն ներկայացնում, կամ աւելի պարզ չի կարելի դատի միջոցով հաստատել մեղադրանքները, զրկւում են անհատին հոգևորականութեան մէջ մտնելու իրաւունքից, ենթարկելով այդպիսի յանցագործներին իրանց սեպհական խղճի դատաստանին. այսպէս օրինակ ծածուկ մեղանչումը, երկու կողմի համաձայնութեամբ կատարած անառակութիւնը, այդ մտքով խօսում են կեսարիայի 9 և 10 կանոնները Ա. գ. 199 երես։ Եթէ այդպիսի անբարոյական գործերի մասին վկայութիւն է տալիս ինքը ժողովրդը, կամ ամբաստանւում է անհատը մի քանի վկաների կողմից, այդպիսի դէպքում ընդհատւում է հոգևորականութեան մէջ մտնելու իրաւունքից, այսպէս պարզ որոշում է Ա.-առ. 61 կանոնը, Ա. գ. 107 երես։

Թեր և դէմ կարծիքների տեղիք է տալիս այդ յանցանքների վաւերականութեան աստիճանը պարզելու խնդրում, սպանութեան հարցը. պատերազմի մէջ սպանութիւն կատարած զինւորը կարո՞ղ է հոգևորական լինել թէ ո՛չ, կամ ապստամբ մարդկանց և մահուան դատապարտուած անձանց՝ գնդակահար անող զինւորները կամ պաշտօնեաները կարող են հոգևորական դառնալ թէ ո՛չ։ Սուրբ Հայրերից Աթանասը ոչ միայն թոյլ է տալիս, այլ և գովասանքի և պատուի է արժանացնում պատերազմի հերոսներին. չորրորդ դարուց ընկած մեր բոլոր Հայրապետները ոչ միայն թոյլ էին տալիս այդպիսիներին հոգևորական դառնալ, այլ և ինքեանք անձամբ սուրբի ձեռին պատերազմում էին թշնամիների դէմ պաշտպանելով հայրենիք և եկեղեցի, այդպէս էին Ներսէս

մեծ, Յովհան Մանդակունի, Յովսէփ, Ղևոնդ երէց, մինչև Ներսէս Ե. Վարդանանց պատերազմում նահատակուածները համարուեցին սուրբ։ Բայց այլ կերպ է նայում խնդրի վրայ Բարսեղ մեծը, նա 13 կանոնով (Ա. գ. 240) 3 տարուայ ապաշխարանք է սահմանում պատերազմում սպանութիւն կատարողի համար և ապա թոյլ տալիս հաղորդուելու։ Յունաց մեկնիչները պատմում են, որ երբ Փոկա կայսրը կամեցաւ նահատակների դասը կարգել պատերազմում սպանուածներին, եկեղեցու ներկայացուցիչները ծգտուելով Բարսեղ մեծի կանոնով, չհամաձայնեցին կայսեր առաջարկութեան հետ, բայց երբ մի եպիսկոպոս և մի քանի քահանայ ասացին որ իրանք էլ են մասնակցել պատերազմին և կողմնակից դարձան կայսեր առաջարկութեան, այն ժամանակ ժողովը արգելեց վերջիններիս քահանայագործութիւն անել. յետոյ, ի հարկէ, մոռացութեան տրուեց Բարսեղ մեծի կանոնը և գործնական կեանքը տարաւ իւր յաղթութիւնը, ըստ յունաց մեկնիչների այդ կանոնը խիստ է և ոչ համապատասխան բիւզանդական պետական կարգերին։

6) Բացի գողութեան, շնութեան, անառակութեան մէջ դատապարտուած անձինքներից, որոնք զրկւում են հոգևոր ասպարէզ մտնելուց վերոյիշեալ հիմունքներով, եթէ մէկը երդմնազանցութեան, կախարդութեան մէջ բռնւում է, հաստատւում է վկայութեամբ և դատաստանով, զրկւում է նոյնպէս հոգևորական դառնալու իրաւունքից. այդպէս սահմանում է Բարսեղ մեծ իւր 64, 82, 8 կանոններով (Ա. գ. 246 եր.) և Շահապիվանի ժողովը իւր 8, 9, 10 կանոներով (Ա. գ. 332, 333)։

7) Հոգևորական դառնալուն արգելք էր հանդիսանում և վաշխ առնելը, խստիւ պահանջւում էր հոգևոր անձերից հեռու մնալ այդ անվայել արարքից, իսկ աշխարհականներից նրանք, որոնք ըստ Բարսեղ մեծի 14 կանոնի (Ա. գ. 240) յետ կտային վաշխը բաշխելով աղքատներին և խօսք կտային շահասիրական գործերով չզարապել, իրանք կարող էին հոգևորական դասը մտնել։ Պետական օրէնքները այժմ էլ ար-

գելում են վաշխառուԹեամբ պարապել, այդպիսի պարապմունքը համարելով ոչ մարդասիրական և օրինաւոր։

8) Պարզ է, որ հոգևորական շրջանի մէջ մտնել չէին կարող հաւատուրացները, հերետիկոսները, պատահական կերպով մտածները անմիջապէս հեռացնում էին այդ ասպարէզից կարգազուրկ լինելով. Ա. գ. 107 (62 կ.), 332, 153 երես։

Ահա այս են այն ընդհանուր հիմունքները, որոնցով աշխարհական անձինք իրաւունք ունէին եկեղեցու պաշտօնեայ համարուելու. դժբախտաբար հայոց եկեղեցու գործնականուԹիւնը խստուԹեամբ չի հետևում այդ կանոններին, մեծ զիջողուԹիւններով է ընդունում ընծայացուներին, այն խըստուԹիւնը կրթական ցէնզի նկատմամբ, որով ընտրուում են կաթոլիկ և բողոքական եկեղեցիներում ընծայացուները, նոյնը ոչ միայն չի գործադրուում հայոց եկեղեցում, այլ և դանցաւուԹեան է դրուում այդ գլխաւոր կէտը։

Ջ. ՁԵՌՆԱԴՐՈՂ ԸՆԶԻ ԼԻԱԶՕՐԿՈՒՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ.

ՀոգևորականուԹեան մէջ մտնելու համար, բացի այն խոչընդոտներից, որոնք միատ մի թուեցինք, հարկաւոր է և իրաւունք ունեցող պաշտօնեայ, լիազօրուԹիւն ունեցող անձնաւորուԹիւն, որ կարողանայ նուիրեալ անձին ընդունի հոգևոր կարգի մէջ։ Ո՞վ պէտք ընդունի, ո՞վ իրաւունք ունի ձեռնադրուԹիւն կատարելու։

Ա.-առ. 2 կանոնը, Նիկիայի 19, Անտիոքի-9, լաւոտ. 26 կանոնները, Սահակի, Շնորհալու, Ներսէս ե-ի, Գէորգ դ-ի կանոնները (Ա. գ. 84, 158, 212, 221, 528, 575, 611, 633 երես) սահմանում են, որ նուիրապետուԹեան մէջ գըտնուած անձինքներից նա կարող է ձեռնադրուԹիւն կատարել, ով եպիսկոպոսուԹեան աստիճան ունի։ Եպիսկոպոսական աստիճանի այդ իրաւունքը դրուում է յաջորդաբար հետևորդներին սկիզբ առնելով առաքեալներից։ Բոլոր պաշտօնեաները ստանում են ձեռնադրուԹիւն, բացի ստորին սպասաւորներից, ընթերցողից, երգչից և այլն. յունական կանոններով (է-րդ տիեզ. ժող. 14 կան.) քահանան ձեռնադրուԹիւն է տալիս ստորին պաշտօնեաներին իւր եկեղեցում սպասաւորելու, իսկ վանահայրը իւր վանքում. յունաց մեկնիչները ասում են, որ ձեռնադրուԹեամբ եկեղեցական աստիճան տալով ստորին պաշտօնեաներին իրաւունք է դրուում կղերի մէջ մտնելու. իսկ ուս Յովհաննէս վարդապետը բացադրում է Բ. հար. 539 երեսում, թէ ստորինի պաշտօնեաների ձեռնադրուԹիւնը պէտք հասկանալ՝ ձեռքը գլխին դնելով և օրհնելով թոյլ տալ եկեղեցում կարդալ և ոչ բուն ձեռնադրուԹիւն համարել։ ԿարԹագենի կանոններով և մեր ձեռնադրուԹեան մաշտոցի կարգով ստորին պաշտօնեաներին աստիճան տալը ձեռքը գլխին դնելով սկզբունքով ընդունուում է մեր մէջ, որ պարզ երևում է սարկաւագի ձեռնադրուԹեան կարգից, որտեղ սարկաւագացուն օրհնուԹեամբ ստանում է դռնապանի, ընթերցողի, երգմնեցողի, ջահընկալի աստիճաններ առանձին տոմարով և օրհնուԹեամբ իրրև սարկաւագի օգնականների, բայց գործնականուԹեան մէջ երգիչ, ընթերցող դռնապան չեն ստանում ջոկ ջոկ այդ աստիճանը, երգել իմացողը երգում է, կարդալ իմացողը կարդում, իսկ դռնապան և աւելածու միշտ փոփոխակի ընտրուում են առանց աստիճան ստանալու։

ՁեռնադրուԹիւն կատարող անձը, այսինքն եպիսկոպոսը, հետևեալ լիազօրական յատկանիշները պիտի ունենայ ձեռնադրուԹեան նկատմամբ։

1) Եպիսկոպոսը պէտք անշուշտ իւր աստիճանը ստացած լինի գլխաւոր համարուած եպիսկոպոսից — կաթուղիկոսից, որը իւր ունեցած աստիճանը և իրաւունքը ստացել է յաջորդական կարգով Գրիգոր Լուսաւորչից և նրա միջոցով առաքեալների յաջորդներից և առաքեալներից։ Որտեղ որ այդ նուիրապետական յաջորդական օրինաւոր եպիսկոպոսական աստիճան ընդունելու կարգը չի պահպանուում, այնտեղ այդպիսի ձեռնադրուԹիւնը համար-

ւում է ապօրինի և անվաւեր։ Գրիգոր Լուսաւորչից սկսած բոլոր հայոց եպիսկոպոսները ձեռնադրւում են ամենայն Հայոց կաթուղիկոսից, թէև Աղթամարի և Սսի կաթուղիկոսները քաղաքական պատճառով բացառութիւն են կազմում իրանց թեմերում ձեռնադրած եպիսկոպոսների նկատմամբ, բայց ըստ կանոնական իրաւունքի, նրանք էս շարունակութիւն են Լուսաւորչի ձեռնադրութեան իբրև շարունակութիւն երբեմն եղած ամենայն հայոց հայրապետութեան Ա.-առ. 1, Սարտիկիայի 6, Ննոր-Հալու 12, Երուսաղէմի ժողովի 1, 2, 3 կանոնները (Ա. գիրք, 83, 230, 576, 465 երես) սահմանում են և պարզաբանում վերոյիշեալ կարգը որոշ և հաստատուն կերպով։

2) Բացի առաջին պայմանից՝ ձեռնադրութիւնը պիտի լինի բացարձակ արդարութեամբ, առանց ստութեան, խաբէութեան, կեղծիքի և այլ տգեղ հանգամանքների։ Պօլսոյ ժողովի 4 կանոնով (Ա. գ. 168 երես) Մաքսիմ չնական եպիսկոպոսի բոլոր ձեռնադրութիւնները անվաւեր հրատարակուեց, որովհետև ինքը Մաքսիմը ձեռնադրութիւնը ստացել էր խաբէութեամբ Եգիպտական եպիսկոպոսներից. նոյնպէս և անվաւեր հրատարակուեց Նովարի՝ Հռոմի եպիսկոպոս լինելը, որովհետև խորամանկութեամբ էր ստացել իւր աստիճանը օրինաւոր եպիսկոպոսից (Եւսեբ. Ջ. 43)

3) Ձեռնադրողը պիտի ձեռնադրութիւնը կատարի այն ձևով և սահմանադրութեամբ, որը կարգել է եկեղեցին և պահպանում է, այդ սահմանից դուրս իրաւունք չունի ձեռնադրողը որև կարգ մտցնել։ Ձեռնադրական Մաշտոցը տալիս է մեր եկեղեցու համար որոշ և պարզ կանոններ, որոնցով անփոփոխ ղեկավարւում են ցայսօր։

4) Ձեռնադրողը՝ ձեռնադրութիւնը կատարելու րոպէին չպիտի գտնուի այնպիսի դրութեան մէջ, որը ինքն ըստ ինքեան անվաւեր է կացուցանում այդ գործողութիւնը. օրինակ. եթէ եպիսկոպոսը ձեռնադրութեան ժամանակ արդէն կարգալոյծ եղած է, հերետիկոսական կամ ազանդաւորական խմբերի անդամ է, կամ հերձուածների կողմնակից է դարձել։

Կարգալոյծ եղած եպիսկոպոսը համարեա միշտ համարւում է հեռացուած նուիրապետութիւնից և աշխարհականաց դասը կարգուած. եթէ կարգալոյծ եղածը կհամարձակի նորից նախկին պաշտօնը կատարել, Ա.-առ. 28 կանոնով (Ա. գ, 97) բոլորովին զրկւում է եկեղեցու հաղորդակցութիւնից։ Այդպիսի եպիսկոպոսի ձեռնադրութիւնը կանոնական տեսակէտից անվաւեր է։

Հերետիկոսական կամ ոչ քրիստոնեայ հասարակութեան անդամ եղող եպիսկոպոսը համարւում է ուղղափառ եկեղեցուց հեռացած։ Այդպիսի հոգևորականներին կանոնները բոլորովին զրկում են աստիճանից և զղջման դէպքում ընդունում են իբրև աշխարհական (Ա. գ, 107 երես, 62 կանոն)։ Այդպիսի դէպք պատահեց Կիպրիանոսի ժամանակ, Կարթագենի ժողովը մերժեց հաւատուրաց երկու եպիսկոպոսի ընդունել ապաշխարութեան միջոցով իրանց աստիճանում։ Մկրտութիւնը և ձեռնադրութիւնը անկրկնելի են, իսկ եթէ այդ խորհուրդները կատարել են ոչ ուղղափառ հոգևորականներ, այդ դէպքում հերետիկոսի կատարած խորհուրդը համարելով անվաւեր, Ա.-առ. 68 կանոնի համաձայն (գ. Ա. 109) պէտք այդպիսի անձինք նորից մկրտուեն, կամ ձեռնադրուեն։ Այն հերետիկոսները, որոնք աղաւաղում են հաւատի գլխաւոր դաւանութիւնը, օր. պաւղիկիանները երրորդութեան, մարդեղութեան մերժմամբ, (Նիկ. 19 կանոն. Ա. գ. 158 երես), Մանիքեցիք, Վալենդենեանք, Մարկիոնականները—ընդհանրապէս, Գնոստիկեանք, Սաբելեանք, Եւնոմեանք, Մոնտանեանք (պօլ. 7 կանոն, Ա. գ. 171 երես) և այն հերետիկոսները, որոնք մկրտութեան հետ, չեն ընդունում իբրև ուղղափառ և նրանց կրօնական գործողութիւններն անվաւեր են համարւում։ Դրանց ձեռնադրութիւնը համարւում է անվաւեր։ Իսկ ինչ վերաբերում է զանազան հերձուածողներին, որոնք գլխաւոր կէտերում եկեղեցու հետ նոյն են, միայն դաւանաբանական բացադրութիւնների մէջ տարբերւում են, օր. Արիոսականները, Մակիդոնեանք, Ապողինարեանք, սրանց եկեղեցու ծոցը վերադառնալիս, նորից չէին մկրտում, միայն դրոշմում էին զգալարանքները (Ա. գ. 171 երես)։

Ձեռնադրուած անձանց Ա.թանասը պատուիրեց երկու ձևով ընդունել, եթէ արիոսական գլխաւոր հոգևորականներից են դարձողները, չընդունել կղերի մէջ, այլ իբրև աշխարհական հաւատացեալ թողնել եկեղեցի, իսկ եթէ բռնութեամբ, կարիքից ստիպուած են արիոսական դարձել, ապաշխարանքի ենթարկելուց յետոյ ընդունել նոյն ձեռնադրական աստիճանում: Մակեդոնի աղանդին պատկանող եպիսկոպոսներին ընդունում էին նոյն աստիճանում, միայն Նիկիոյ Հանգանակը խոստովանելուց յետոյ. Մելիտէն, Կիւրեղ երուսաղէմացին արիոսական եպիսկոպոսներ էին, որոնք նոյն աստիճանով ընդունուել են ուղղափառ եկեղեցում: Գործնական կեանքը այսպիսի դէպքերում ի նկատի ունէր անհատների 'ի սրտէ զղջումը և պատրաստականութիւնը քան լոկ կանոնը:

Հերձուածողները ըստ Բարսեղ մեծի նրանք են, որոնք միմիայն կարծիքների մէջ են տարբերւում ուղղափառ եկեղեցուց, իսկ գաւանաբանական կէտերում նոյն են: Եթէ քահանան կմերժի եպիսկոպոսի նշանակած պատիժը կատարել և իւրայիններով առանձին ծուխ կազմելով անկախ եկեղեցական վարչութիւն կհաստատի --, նա կհամարուի հերձուածող: Բարսեղ մեծը 1 կանոնով թոյլ է տալիս ընդունել հերձուածողներին նոյն աստիճանով, եթէ կզղջան և ապաշխարանք կկրեն: Նիկիայի 8 կանոնով (Ա. գ. 452 երես) որոշուեց ընդունել Նովատիան հերձուածողներից նոյն աստիճանում, ձեռքը գլխին դնելով և միացնելով ուղղափառ կղերի հետ: Նոյն ժողովը նոյն վճիռը դրեց Մելիտեանների համար Եգիպտոսում:

5) Բացի վերոյիշեալ կանոններից, որոնք անհրաժեշտ են ձեռնադրութիւնը վաւերական անելու համար, հարկաւոր են և ձեռնադրողի կողմից ունենալ ուրիշ զուտ իրաւաբանական լիազօրութիւն: Ամեն մի եպիսկոպոս իրաւունք չունի ձեռնադրելու, եթէ ա'յդ իրաւունքը նրան չի յատկացրած աւելի բարձր իշխանութիւնից՝ 1) ձեռնադրող եպիսկոպոսը պիտի լինի թեմի առաջնորդ, եթէ հրաժարւում է առաջնորդութիւնից, նա այլևս իրաւունք չունի նոյն թեմում

ձեռնադրութիւն կատարելու: (Ա. գ. 214, 99, 466—468:) 2) Յաջորդութիւն անող եպիսկոպոսը ինչպէս և հին քորեպիսկոպոսներն իրաւունք չունեն ձեռնադրութիւն անելու բացի ստորին պաշտօնեաներ կարգելուց (Ա. գ. 215, 467): 3) Առաջնորդը իրաւունք չունի իւր թեմից դուրս որևէ մէկին ձեռնադրելու, այլապէս անվաւեր կհամարուի ձեռնադրութիւնը, բացի այն դէպքից՝ երբ ձեռնադրութիւնը լինում է թեմի առաջնորդի թոյլտուութեամբ (Ա. գ. 156, 231, 467): 4) Բացի թեմի առաջնորդի արած ձեռնադրութիւնից իւր սեպհական թեմում, բոլոր այն եպիսկոպոսների ձեռնադրութիւնները այլ և այլ թեմերում վաւերական են, եթէ լիազօրական հրաման ստացել են ամենայն Հայոց կաթուղիկոսից, կամ աշխարհի կեդրոնական բարձր հոգևոր իշխանութիւնից: 5) Լիազօրութիւն ունեցող եպիսկոպոսի արած ձեռնադրութիւնը այն ժամանակ է վաւերական, երբ ընծայացուն ընտրուած է ժողովրդի և կղերի ընդհանուր ցանկութեամբ և որոշմամբ (469, 633 երես):

Ի. ՁԵՌՆԵՐԴՐՈՒԹԵԱՆ ՎԻՃԱԿՈՒՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ.

Որպէս զի ձեռնադրուող անձը ամենայն կողմից լինի համապատասխան՝ թէ մտաւորապէս թէ բարոյապէս իւր բարձր պաշտօնին՝ առանց որևէ է կասկածելի և անորոշ յարաբերութեան դէպի իւր ժողովուրդը, ուստի և ձեռնադրութեան խորհուրդը պիտի անպայման կրի վաւերականութեան աստիճան որը խստութեամբ պահանջում են եկեղեցական կանոնները:

1) Ձեռնադրութիւնը վաւերական լինելու համար, պէտք ձեռնադրուողը խորհրդի կատարման միջոցին հասարակութեան և ձեռնադրողի առաջ խոստովանի, դաւանի այն՝ ինչ որ եկեղեցին ընդունում է, որպէս զի ճշտութեամբ կատարի ապագայում բոլորը, ինչ որ եկեղեցու կանոնները պահանջում են: Այս կարգը սահմանեց առաջին անգամ Օգոստինոսը Ափրիկայի եկեղեցու համար և ընդունուեց միւս եկեղեցիների կողմից: Այդ կարգը հաստատութիւն գտաւ պետական օրէնք-

ների մէջ, որոնցով պահանջւում էր հիմնուած եկեղեցական կանոնների վրայ թէ՛արևելեան թէ արևմտեան եկեղեցիներում՝ լուր ամենեցուն երդմամբ խոստանալ կատարել բոլոր կանոնական պահանջները։

2) Թէոփելէս Աղէքսանդրացու 7 կանոնով ձեռնադրութիւնը պիտի կատարուի բոլոր հաստարակութեան առաջ իբրև վկայութիւն տուողի, դրա հակառակ եղած ձեռնադրութիւնը, այն է, եկեղեցուց դուրս, ծածուկ տեղերում, անվաւեր է (ինչպէս չընդունուեցին Մաքսիմ ցինիկի ձեռնադրուածները)։ Լաւոդիկիայի 5 կանոնով (Ա.. գ. 217 երես) ձեռնադրութիւնը կատարւում է միայն հաւատացեալների ներկայութեամբ պատարագի այն մասում, երբ բոլոր կարգի ապաշխարողներն դուրս էին գալիս։

3) Սարդիկիայի ժողովի 10 կանոնով (Ա.. գ. 230 երես) ձեռնադրութիւնը պիտի կատարուի ոչ բոլոր աստիճանները միանգամից տալով, ինչպէս շատ անգամ պատահում էր հալածանքից և կարիքից ստիպուած, այլ հեռզհետէ, ստորին աստիճաններից մինչև բարձրը հասնելը, ամեն մէկում որոշ ժամանակամիջոց մնալով։ Եղել են շատ դէպքեր թէ արտաքին և թէ մեր եկեղեցական կեանքում, երբ սարկաւագութիւնից, քահանայութիւնից, մինչև իսկ աշխարհական կեանքից ուղղակի եպիսկոպոս և կաթուղիկոս են ձեռնադրել։ Ոսկեբերանը իւր երկու սարկաւագներին ուղղակի եպիսկոպոս նշանակեց զանազան քաղաքների վրայ. աշխարհական կարգից եպիսկոպոսի աստիճան ստացան Ամբրոսիոսը, Կիպրիանոսը, Պօլսոյ Նեկտարը, Եւսեբիոս Կեսարացին են։ Մեր մէջ Գրիգոր Լուսաւորիչը, երկու որդիքը, Ներսէս մեծը, Զաքարիա կաթուղիկոսը՝ աշխարհական վիճակից կաթուղիկոս, եպիսկոպոս դարձան; Յովսէփը քահանայութիւնից կաթուղիկոս։ Երբ 858-ին Պօլսի պատրիարք ընդրուեց աշխարհական դասից փոքր՝ 7 օրում յաջորդաբար, Նիկոլայ ա. պապը նկատեց, որ եկեղեցական կանոններին հակառակ է։ Չնայելով այդ բացառութիւններին, այնու ամենայնիւ աստիճանական կարգով բարձրանալու կանոնը իւր ոյժի մէջ մնաց։

4) Ձեռնադրութիւնը պիտի կատարուի որոշ տեղի, եկեղեցու, հօտի վրայ, և ոչ անորոշաբար ձեռնադրուի առանց տեղի և նշանակման։ Հներում ծուխ այժմեայ մտքով չկար, ծխերը առաջացան Ե-դարուց սկսած, այլ կար որոշ շրջանով եկեղեցի, որի հովուութիւնը յանձնւում էր անպայման մի եպիսկոպոսի, որը մշտական պիտի մնար իւր հօտի շրջանում, ուրիշ տեղ չհեռանար, և շրջագայելով քարոզութեամբ պարապէր, այդ հիմունքով մի որև է գաւառում լինում էին շատ եպիսկոպոսներ առանձին իրաւասական շրջանով։ Յետոյ արդէն երբ թեմերը առաջացան, գլխաւոր եպիսկոպոսների պաշտօնը որոշուեց, մեր մէջ կաթուղիկոսութիւնը առաջացաւ, այնուհետև ձեռնադրում էին եպիսկոպոսներ կաթուղիկոսական դրան համար, խորհրդականի, աւագ լուսարարի, մեծ դատաւորի պաշտօններով։

5) Ձեռնադրութիւնը եթէ կատարուած է կանոնաւոր կերպով, պիտի չկրկնուի (Ա։ գ. 109), այսինքն, եթէ զանազան յանցանքների, և մեղքերի պատճառով հոգևոր անձը ենթարկւում է կարգազրկութեան, կարգալուծութեան, զրկուելով պատուից և իրաւունքից, ապաշխարանք և պատիժը կրելուց յետոյ, եթէ վերստին կանչուի նախկին աստիճանին, այդ դէպքում նա նորից ձեռնադրութիւն չի ընտանում, նախկին ձեռնադրութիւնը իւր ոյժի մէջ է։

6) Քահանաների և սարկաւագների ձեռնադրութիւնը կատարում է մի եպիսկոպոս, իսկ եպիսկոպոսինը անշուշտ 2 կամ երեք ըստ Ս.—առաքելական 1 կանոնի Ա.. գ. 83 եր։ Յետոյ սահմանուեց որ եպիսկոպոսի ձեռնադրութիւնը լինի եպիսկոպոսական ժողովով և Միտրոպոլիտի ներկայութեամբ և մասնակցութեամբ։ Իսկ մեր մէջ Լուսաւորչից սկսած մինչև այսօր եպիսկոպոս ձեռնադրում է միմիայն ամենայն հայոց կաթուղիկոսը, իսկ Աղթամարի և Սսի կաթուղիկոսները իրանց թեմերի համար. բացի այս պայմանից մնացած և այլ ձևով ձեռնադրուած եպիսկոպոսները՝ եպիսկոպոս չեն։ Մասնաւոր կաթուղիկոսների եպիսկոպոսներից եթէ կամենան Մայր աթոռի միաբան կոչուել, պիտի չորքեն ամենայն հայոց կաթու-

ղիկոսի առաջ, հանդիսաւոր կերպով իրանց միաբան կոչեն Ս. Էջմիածնի և հնազանդ Վեհափառ Հայրապետի հրամանաց և ապա իջման տեղի առաջ խոստմունքը հաստատելով, լինին նոյն աստիճանով Էջմիածնի միաբան։

Կաթուղիկոսական ձեռնադրութիւնը լինում է 12 եպիսկոպոսի մասնակցութեամբ և միջոցաւ։

7) Ձեռնադրութեան համար պահանջւում է ձեռնադրուողի կողմից յօժարութիւն և կամաւոր ցանկութիւն, հակառակ կամքի ձեռնադրութիւնը վաւերական չէ։ Ներում բացառութիւն եղել է, ոյժով ձեռնադրել է ժողովուրդը և հոգեւորականութիւնը մի քանի եպիսկոպոսներ, որոնք ոչ թէ սէր չէին զգում դէպի այդ սուրբ պաշտօնը, այլ իրանց շատ ստոր էին համարում այդ աստիճանից. ակամայ ընդրուած և ձեռնադրուած են. Լուսաւորիչ, մեծն Ներսէս, Կիպրիանոս, Գրիգոր Հրաշագործ, Սթանաս են։

Բ. ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆԻՉՆԵՐԸ

(Изложеніе каноническихъ постановленій о клирѣ» «Хрис. чтеніе 1860 г. II ч.». Церковное право, Соколовъ—310 стр.)

Ձեռնադրութեան միջոցով աշխարհականներից ընդհատուելով կազմւում է մի նոր դասակարգ, որ կոչւում է կղեր, հոգեւորականութիւն, եկեղեցականութիւն, եկեղեցու պաշտօնեայ, որոնք չնայելով իրանց զանազան աստիճաններին, բոլորը միասին վերցրած ունին ընդհանուր պարտքեր, նշանակութիւն, ընդհանուր հովուութեան և ժողովրդին ծառայելու միևնման պարտաւորութիւններ, այս տեսակէտից, իբրև ամբողջական դասակարգ, առանց աստիճանի խտրութեան ունին որոշ դիրք, պարտքեր, իրաւունքներ և կացութեան որոշակի պայմաններ։

Հոգեւոր դասակարգը կազմուած լինելով այնպիսի անձինքներից, որոնք ընտրուած են ժողովրդի այն անդամներից

որոնք վարք ու բարքով, կրթութեամբ և բարոյականութեամբ բարձր են միւսներից, նրանք պէտք իրանց պաշտօնակատարութեամբ, հովուական պարտքի ճիշտ կատարմամբ օրինակ հանդիսանան ժողովրդին. թէ ինչպէս պէտք վարուեն հօտի հետ, ինչպէս հովուեն և կեանք վարեն, այդ մասին թէ ս. գրքում, թէ ժողովների և թէ ս. հարց կանոններում կան բազմաթիւ ցուցումներ, խրատներ։

1) Մեր կանոնները պահանջում են որ ոչ միայն ներքուստ, այլ և արտաքուստ, այն է դրսի նիստ ու կացի, շորի, հագուստի կողմից հոգեւորականները բռնեն օրինակելի դիրք, չերևան այնպիսի ձևով և դիրքով, որոնք կարող են ծիծաղ յարուցանել ժողովրդի մէջ. հագնեն այն ձևով և տարազով, որոնք ժողովրդի համար և նրա աչքին պատկառելի է համարւում։*)

*) Ծանօթութիւն. Թէ երբ է սկսել հոգեւորականութիւնը տարբեր տարազով երևալ և ժամերգութեան ժամանակ բոլորովին այլ զգեստ հագնել, այդ մասին տանք մի քանի տեղեկութիւններ. ժամերգութեան ժամանակ առանձին հանդերձ գործ ածելը, գոնէ Ասիայում, պէտք համարել առաքեալների ժամանակից, քանի որ թէ առաքեալները թէ իրանց հրեայ աշակերտները քարոզում էին սինագոգաններում և հրէաների ձևով աղօթում և հագնւում, քրիստոնէական համայնքներ կազմելուց, սարկաւագի, քահանայի, եպիսկոպոսի դասեր հաստատելուց յետոյ ըստ հրէական—քահանայապետների, քահանայից և ղևտական ծառայողի, պէտք մոցնէին այն հանդերձները ժամերգութեան ժամանակ, որոնք դարերի ընթացքում սրբագործուած և Մովսէսից ըսկսած յարդի էին և պարտաւորական համարւում հրէից տաճարներում քահանաների համար։ Բինգամի կարծիքով (տես Սոկոլով—323 երես) «կղերը ունէր ժամերգութեան համար առանձին հանդերձներ գոնէ դ. դարու սկզբին, այդ ժխտել չի կարելի, բայց այդ ժամանակ նկատելի լինէր սովորական հագուստների մէջ առանձին տարազ, այդ բանին հակասում են հին չատ ցուցմունքներ»։ Ոսկեբերանի ժամանակ հոգեւորականութիւնը ըստ սովորութեան սև չոր էր հագնում, իսկ Նովատեանները իբրև նորամուծութիւն սպիտակ։ Աֆրիկայի և Գաղղիայի կողմերում կղերը տարբեր հագուստ չէր գործածում. Յերոնիմոսը Եզեկիէլի մեկնութեան մէջ ասում է «մենք չպէտք ածիլենք մեր գլուխը Օզիսի և Սերապիսի քրմերի նման, ոչ էլ երկարացնել՝ բարբարոսների և վին-

ուղների նորաձևութեան հետևելով, հապա քահանաները պէտք եւան գան պատռուածի և վայելուչ արտաքինով, ոչ ածիլելով ճաղատի չափ, ոչ էլ այնպէս խուզելով որ ածիլուած երևան, հապա թողնեն որ բուսնին և կաչին ծածկեն (նոյն տեղ 314)։ Մեր աղբիւրներին նայելով դարուս հայոց մէջ ոչ միայն եկեղեցում, այլ և դրսում հոգևորականները աւանդին սարազով չոր էին հագնում, որ կոչւում էր «հանդերձ կղերիկոսաց». Փաւստոսը Ներսէս մեծի ընտրութեան համար ասում է, «զբերին կղերիկոսաց հանդերձները և հագցրին նրան» (59 երես)։ Ներսէս մեծը թոնաւորելուց յետոյ, երբ գնաց վրանը, Փաւստոսը (183 երես) ասում է «երբ մտաւ իւր օթևանը, հանելով իւր պարեգօտը, սիրտն էր ցոյց տալիս». պարեգօտը այժմեայ կապանէ կամ վերարկուն, ըստ ձևի հրէական պարեգօտի։ Իսկ Մանաղկերտցի Ջաւէն կաթողիկոսի նորաձևութեան համար ասում է 223 երեսում, «զի ամենայն քահանայից ուսոյց առնել հանդերձս պինուորաց։....զի ոչ ըստ կրօնիցն ազանէին քահանայքն զպճղնաւորն, այլեաս օրէն էր ի բնէ, այլ սկան պատռոտը—կտաւրան ի վերայ ծնգացն առնել.....»։ Մի քահանայի ձեռնադրութեան համար ասում է 226 երեսում. «հրամայէր (եպիսկոպոսն) լուծանել զհանգոյցս սեկնոցին, և արկանել նմա պղաբոդոն» (փիլոն)։ Յովհան Մամիկոնեանը իննակաս վանքի կրօնաւորների համար ասում է «սեաղգեաս», «վնկղաւոլք», որ նշանակում է նրանք հագնում էին սև զգեստ երկար, և գլխներին վեղար։

2) Որպէս զի հոգևորականները միշտ լինին ողջախոհութեան, պարկեշտութեան, համեստ կացութեան օրինակ, կանոնները արգելում են մտնել այնպիսի տեղեր, որտեղ գինարբութիւն, զեղխութիւն և անկարգ գործողութիւններ են կատարւում. օր. գինետուն, պանդոկներ, զուարճական վայրեր (Ա. գ. 106, 221, 226). այս կանոնները չափաւոր ուրախութիւնը չարգելելով հանդերձ, թոյլ չեն տալիս մասնակցել շռայլ կոչունքներում և խրախճանութիւններում (609 եր. 58 կ. Ներսէս—Ե)։

3) Բարոյական կասկածներից հեռու մնալու համար և ժողովրդի մէջ մոլորութիւն չյարուցանելու նպատակով, ոչ մի հոգևորական չպէտք իւր մօտ պահի ո՛չ մի կին, բացի մօտ ազգականներից, որոնք կասկածից հեռու են (Ա. գ. 147, 222, 249, 335)։

4) Հոգևորականները պիտի հեռու մնան այն բոլոր

զուարճական, ըմբշամարտական տեղերը այցելելուց, որտեղ բացի անվայել արարքներից ո՛չ մի լրջմիտ գործ չի կատարւում. նոյնպէս հներում թատերավայրերը, ուր կռապաշտական, կախարդական, և այլ վատ հակումներ գրգռող տեսարանները չեն ներկայացնում. նոյնպէս թղթախաղի տներ, որտեղ բացի ժամավաճառութիւնից ոչինչ օգուտ չէր կարելի ստանալ։ Լուսաւորչի 27 կանոնը (509 եր.) մինչև իսկ ձեռնածուներին 2 տարուայ ապաշխարանքի է ենթարկում։ Մանգակունու խրատները խստիւ արգելում են թատերախաղեր գնալ, ո՛չ միայն հոգևորականներին, այլ և աշխարհականներին, համարելով այն խաղերը կռապաշտական։

5) Արգելւում էր հոգևորականներին աշխարհային գործերով զբաղուել, շահագրգռական զբաղմունք ունենալ. օր. կերակրանոց և հիւրատուններ պահել, կամ կառավարիչ լինել այդպիսի տեղերում, անազնիւ ճանապարհով փող դիզել, վաճառականութիւն, առևտուր անել, խանութ դնել։ Պարզ է որ այս կանոնները չեն արգելում եթէ հոգևորականը ազնիւ պարապմունք ունենալով, շատացնում է իւր ընտանիքի, կամ եկեղեցու, վանքի արդիւնքները, օր. վաճառելով հացապտուղների աւելորդը, այգու գինին, փետակների մեղրը և։ Աշխարհային պարապմունքով զբաղուելու արգելքը առաջանում էր նրանից, որ շատերը թողնելով իրանց հոգևոր պարտքերի կատարելը, խառնւում էին ժողովրդական գործերի մէջ, դարաւոր լինելով, գիւղապետի կամ հարկահանի պաշտօն յանձն առնելով, շատերը զինուորական ասպարէզ էին մտնում, ուրիշները որսորդութեամբ պարապում (Ա. գ. 102, 226, 580, 611, երես)։

6) Կանոնները խստիւ արգելում են հոգևորականներին փողը շահով տալ, կամ վաշխառութեամբ պարապել։ Յունա-հռոմէական կանոններով վաճառականներին թոյլ էր տրւում փողը տալ պարտապաններին $8_0/^0$-ով. մնացածներին $6_0/^0$-ով. իսկ բարձրաստիճան մարդիկ պիտի բաւականային $4_0/^0$-ով։ (Սօկօլով—317). Այժմ պետական օրէնքով $12_0/^0$-ից աւելին վերցնողը համարւում է վաշխառու, հոգևորականները շատ

շատ իրաւունք ունէին փոխ տալու առանց շահի և տուած փողը յետ ստանալու (Ս. գ. 102, 157, 217, 382)։

7) Արգելւում է հոգևորականներին երաշխաւոր լինել դատարաններում. այդ հիմքով Յուստինիանոսի 123 նովելլայով արգելւում էր դրանց՝ առևտրական, պարտատիրական պայմաններում, դատարաններում պատասխանատու անձանց փոխարէն երաշխաւոր, միջնորդ, հոգաբարձու և կատակատար լինել զանազան անձանց։ Այդ արգելքները դրուեցին նրա համար, որ առաջին՝ հոգևորականները չշեղուին իրանց ուղղակի պարտաւորութիւններից, և երկրորդ՝ որ երաշխաւորութեան դէպքում չենթարկուեն քաղաքացիական գործերի պատրուակով, դատի, խիստ պահանջների, անպատուութեան և պատժի։ Իսկ այնպիսի դէպքերում, երբ հարկաւոր է խնամել որբ ու տնանկներին, խնամատարութեան տակ ընդունել տարներին և աղքատներին, այդպիսի դէպքերում թէ եկեղեցին և թէ տէրութիւնը թոյլ էին տալիս ոչ միայն օգնական հանդիսանալու, այլ և ինքեանք դրանց նպաստում էին այդ բանում (Ս.. գիրք. 94,

8) Հոգևորականները իրանց ընտանեկան կեանքով պիտի լինին մաքուր և օրինակելի բոլոր հօտի համար. ամուսնական կեանքը պիտի որոշ բարոյական սկզբունքներով առաջնորդուի։ Ամուսնական կեանքի պարտաւորութիւնները միևնոյն չէ բոլոր եկեղեցիների համար, գոնէ մինչև Ե. դարը համարեա թէ միևնոյն ամուսնութեան վերաբերեալ կանոններով էին առաջնորդւում բոլոր եկեղեցիները, յետոյ արդէն զանազանութիւն մտաւ այդ եկեղեցիների կանոնների մէջ։ Հռոմէական եկեղեցին բոլորովին արգելեց ամուսնութիւնը բոլոր հոգևորական աստիճաններում, բողոքական եկեղեցին ընդհակառակն ամուսնանալ թոյլատրեց բոլորովին, յունաց և հայոց եկեղեցին ամուրիութիւն սահմանեց եպիսկոպոսական և վարդապետական աստիճանների համար, թոյլ տալով ամուսնանալ քահանայական դասակարգին։ Սակն մի եկեղեցի իւր արածը ապացուցանելու համար դիմում է հին եկեղեցու կանոններին և գործնականութեան, որտեղ և գտնում է իւր

ցանկացածը, որովհետև հինը չէր արգելում ոչ մէկը և ոչ միւսը, ով կամենում էր ամուսնանում էր, ով չէ, մնում էր ամուրի։

Տիրտուղիանոսը, որ ապրում էր Ք. դարում, իւր գրուածքներում ասում է Ե-գլխում, ինչքան ինձ յայտնի է, երկկին քահանաները զրկւում էին քահանայութիւնից։ Ժա. գլխում լիշում է, որ պատարագը անում էր և ամուսնացած և կուսակրօն քահանան, շրջապատուած ամուսնացած և կուսակրօն սարկաւագներով։ Սոկրատը (Ե. դարում) Ե. գլխում ասում է, որ Թեսալիայում եթէ կղերականը շարունակում էր կնոջ հետ ապրել որի հետ ամուսնացնել էր ձեռնադրութիւնից առաջ, մերժւում էր կղերից. իսկ արևելքում եթէ եպիսկոպոսները իրանց կանանցից հեռանում էին, այդ անում էին յօժար կամքով, իսկ շատերը կանանց պահում էին և եպիսկոպոսութեան ժամանակ երախաներ էին ունենում։ Եպիփանոս կիպրացին (Ե. դարում) ասում է, ամուսնացած և որդիներ ունեցող անձին եկեղեցին չի տալիս քահանայական աստիճաններ, մանաւանդ որտեղ խիստ են եկեղեցական օրէնքները, իսկ միւս տեղերում եթէ հակառակն է լինում, այդ ոչ եկեղեցական կանոնով է, այլ մարդկային թուլութիւնից և կարիքից ստիպուած են ամուսնացեալին ձեռնադրում։ Յերոնիմոսը (Ե. դարում) վկայում է, որ հոգևորականները իրանց զսպում էին ամուսնական անկողնից։ (Սօկօլով-325 եր.)։ Վերոլիշեալից երևում է, որ հինումը օրէնքը իւր խստութեամբ չէր գործադրւում, որովհետև այդ հարցը դաւանաբանական նշանակութիւն չունէր, որքան կառավարչական, տեղի, ժամանակի և հանգամանքների հետ կապ ունեցող։ Գրիգոր Լուսաւորիչը 3 տարուց յետոյ բաժանուեց կնոջից, կինը մտաւ կուսանոց, ինքը նուիրեց հոգևոր ասպարէզին։ Նրա կրտսեր որդին վանք մտաւ իբրև կրօնաւոր, իսկ մեծը ամուսնացաւ, եպիսկոպոս ձեռնադրուելուց յետոյ առանձնացաւ ամուսնուց։ Մինչև Ե. դարը Ս. Սահակի ժամանակ կաթուղիկոսները մեծ մասամբ ամուսնացած էին, կաթուղիկոս ընտրուելուց յետոյ կուսակրօն կեանք էին վարում։ Ամուսնութիւնից հեռանալը

անպայման պարտք չէր Հոգևորականութեան համար. իսկ առաքեալների ժամանակ ամուսնութիւնը սովորական էր, և պարտք էր սահմանուած որ եպիսկոպոսը, սարկաւագը «միոյ կնոջ» այր լինէին. (Տիմ գ. Տիր. ա.)։ Ա.—առ. 51 կանոնը (Ա.. գ. 106) ասում է, եթէ եպիսկոպոսը, երէցը, կամ սարկաւագը, կամ քահանայական կարգից որևէ մէկը կը-հրաժարուի ամուսնութիւնից, մսից, գինուց, ոչ թէ ժուժկալութեան պատճառով, այլ պիղծ համարելով և անարգելով ստեղծագործութիւնը, դրանք կամ ուզուեն կամ կարգալոյծ լինեն և մերժուեն եկեղեցուց։ Յամենայն դէպս Զ-դարուց սկսած հալոց մէջ կուսակրօնութիւնը մտաւ գործնականութեան մէջ, և այլևս եպիսկոպոս և կաթուղիկոս չենք ունենում ամուսնական կեանքով։ Նիկիայի ժողովում երբ հարց բարձրացաւ կուսակրօնութեան համար պարտաւորական օրէնք սահմանելու, Թեբէի Պափնուտ եպիսկոպոսը, որը կուսակրօն էր, երկար խօսեց ժողովում այդ մասին, ճգնեց ցոյց տալ որ աւելի լաւ ամուսնանալ, քանթէ վատթար կեանք վարել, քանի որ ամենքը չեն կարող ողջախոհ կեանք վարել, միայն ով անպակաս ձեռնադրութիւն կստանայ, իրաւունք չունենայ յետոյ պսակուելու, իսկ ով պսակուած կլինի հոգևորական, իրաւունք չունենայ կնոջ արձակել։ Եպիսկոպոսի խօսքերը մեծ ազդեցութիւն արաւ և ժողովը համաձայնելով նրա կարծիքի հետ, կուսակրօնութեան համար պարտաւորական կանոն չսահմանեց։ (Սոկրատ. Ա.. Սոզոմեն. Ա..)։ Յուստինիանոսի 123 նովելլայով կարգադրուեց, սոցրին պաշտօնեաները ազատ են ընտրելու կուսակրօն կամ ամուսնացեալ կեանք, բայց սարկաւագ լինելուց առաջ նրանք կամ պիտի պսակուեն, կամ խօսք տան որ ձեռնադրութիւնից յետոյ պիտի վարեն ագնիւ կեանք և առանց օրինաւոր կնոջ պիտի ապրեն, Ամուսնական կեանքը չի վերջանում քահանայ կամ սարկաւագ ձեռնադրուելով, թէ և ժուժկալութիւնը և մաքրութիւնը աւելի գերադասելի է հոգևոր անձանց համար, բայց նոյնպէս այդ լինելով ազատ վճռի գործ, ստիպողական չէ, ամուսնական յարաբերութիւնների շարունակու-

թիւնը անհամապատասխան չի համարուում քահանայական կոչման (Սոկոլով—331),

Տրուլլի ժողովը 691 թուին լսելով, որ Հռոմի պապը ստիպողական կարգադրութիւն է արել երեք բարձր քահանայական դասակարգի համար կուսակրօնութիւն պահպանել անպայման կերպով, դատապարտեց այդ կարգադրութիւնը քահանաների և սարկաւագների վերաբերմամբ և որոշեց 13 կանոնով. 1) Քահանաներին և սարկաւագներին չարգելել ամուսնութեան մէջ մնալ, 2) ոչ ձեռնադրութիւնից առաջ և ոչ յետոյ՝ նրանցից չպահանջել ամուսնական յարաբերութիւն ունենալ իրանց կնոջ հետ, 3) պատժել նրանց, որոնք բարեպաշտութեան պատրուակով կհեռացնեն կնոջ հակառակ նրա կամքի։ Վերոյիշեալները ի նկատի առնելով կարելի է հետևեալ կանոններով ամփոփել այդ հարցը։

1) Որ ամուսնացեալ հոգևորականները լինին մի կնոջ այր։ Թէ և Թէոդորիտը երկրորդ ամուսնութեան մէջ մտած անձանց ձեռնադրում էր և արդարանում էր նրանով, որ ուրիշների օրինակին է հետևում (Սոկոլով—334)։

2) Ամուսնութեան մէջ մտնելը պիտի լինի նախ քան ձեռնադրութիւնը, բացի ստորին պաշտօնեաներից, որոնց թոյլ էր տրւում յետոյ էլ ամուսնանալ։ Յուստինիանոսի ժամանակ այնքան շատ էր ձեռնադրութիւնից յետոյ ամուսնացողների թիւը, որ հնար չկար առանց խիստ պատժողական օրէնքների դիմելու առաջն առնելու, մինչև իսկ այդպիսիների ինչքը գրաւում էր յօգուտ եկեղեցու և որդիներին ապօրինի հրատարակելով զրկում էր ժառանգութիւնից։

3) Հոգևորականի կինը մեղանչելիս, կամ պիտի արձակուի, կամ ինքը ամուսինը լուծուի կարգից։

4) Եպիսկոպոս, վարդապետ, վանականները պիտի լինին կուսակրօն, և իրաւունք չունենան պսակուելու։

Մինչև ե. դար, ինչպէս վերևում ասացինք, կամաւոր էր եպիսկոպոսի կոյս կամ ամուսնացեալ լինելը։ Սոկրատի վկայութեամբ Թեսալիայում, Մակեդոնիայում և Յունաստանում արդէն սովորութիւն էր դարձել կուսակրօն հոգևորա-

կանութիւնը, միայն արևելքում շարունակւում էր ամուսնացեալ հոգևորականութիւնը, նոյն իսկ որդիներ ունեցող եպիսկոպոսներ հազուագիւտ չէին։ Կամաց կամաց եպիսկոպոսական աթոռի համար սկսեցին նախապատուութիւն տալ այն անձանց, որոնք վանական էին, որոնք ամուրի էին, կամ որոնք կամաւոր յօժարութեամբ հեռացած էին իրանց կանանցից։ Յուստինիանոսը 528 թուին պատուիրեց ընտրել եպիսկոպոս այն անձանց, որոնք ծանրաբեռնուած չէին ընտանիքով, որպէսզի եկեղեցու ինչքը, ստացուածքը մնայ ուղղակի եկեղեցուն և չգնայ եպիսկոպոսի ընտանիքի պահպանութեան համար։ Երեք տարի յետոյ արգելեց ընտրուած և ձեռնադրուած եպիսկոպոսին կենակից կնոջ հետ։ 535-ին հրամայեց, որ եպիսկոպոսութեան ընտրելիները կամ լինին վանական, կամ առնուազը վեց ամիս կղերում մնացած լինի և բաժանուած կնոջից և չունենայ որդիք և մօտ ազգականներ։ Հակառակ այս օրէնքի գնացողը պատժուելով, զրկուի կարգից, ձեռնադրողն էլ բանադրուի։ Այսպէս շարունակուեց մինչև 691 թիւը, Տրուլլի ժողովը, որի վճիռը արդէն յայտնի է, սրանից յետոյ արդէն վերջանում է ամուսնացեալ եպիսկոպոսութիւնը։ Մեր մէջ ինչպէս ասացինք, վերջին ամուսնացած կաթուղիկոսն էր Ս. Սահակ. նրանից յետոյ գոնէ ոչ մի փաստ չունինք հաստատելու , որ ամուսնութիւնը չէր վերացած. կուսակրօնների եպիսկոպոս և կաթուղիկոս ընտրուելը մեր մէջ աւելի վաղ սկսուեց քան օտար եկեղեցիներում։ Մեր առաջի վանական կաթուղիկոսն էր Արիստակէս «որ ի մենակեաց լեառնակեաց կրօնս մտեալ էր» Ագաթ. 494), «և էր Արիստակէս կուսան՝ սուրբ 'ի մանկութեն է» Բիւզ. 9)։

Թ. ՆՈՒԻՐԱԳՈՒԹԻՒՆՔ ԸՆԴՄԱՆՐՔ.

«Православный собесѣдникъ» 1858 г.

Հոգևոր դասակարգ ասելով, ինչպէս նախորդ գլխի մէջ ասացինք, հասկանում ենք երկու տեսակէտից, առաջինը՝ իբրև

հոգևոր պաշտօնեաներ առանց աստիճանի խնդրութեան, որոնք ունին ընդհանուր պարտքեր, ընդհանուր շահեր և ձգտումներ. և երկրորդ՝ աստիճանի զանազանութեան տեսակէտից, իբրև նուիրապետութեան անդամներ, ունին առանձին վերցրած որոշ իրաւունքներ և պարտքեր։ Հին կազմուլթեան մէջ իբրև առաջին աստիճան, որը ընդունում է և ձեռնադրում հոգևոր անձանց է եպիսկոպոսութիւնը, երկրորդ տեղը բռնում է քահանայական դասակարգը և ապա սարկաւագները։ Նայենք ըստ կարգի։

Ա. ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐ.

Երբ Յիսուսի համբարձումից յետոյ առաքեալները սկսեցին իրանց քարոզչական գործը, ամեն տեղ Երուսաղէմի շրջանում, երբ հետևորդներ էին գտնում, նշանակում էին նրանց վրայ քահանաներ, որոնք միևնոյն ժամանակ իրանց գործակիցներ էին (գործ. ժը. 20, Ա.—Պետ.—ե. 1)։ Դրանք խորհուրդներ էին կատարում, ժողովրդին քարոզում, քրիստոնէութիւնը տարածում, նշանակած ժամանակին աղօթքներ կարդում հաւատացեալներին (Ա.—Տիմ. ե. 17, 18)։ Քահանաներ նրանք նշանակում էին օրհնելով և ձեռնադրելով (գործ. ժգ. 23), որոնք շատ անգամ կոչւում էին տեսուչներ, եպիսկոպոսներ (գործ. ի. 28. փիլ. Ա. 1), ներկայացուցիչներ (Ա.—թես. ե. 12) և դլխաւորներ (Եբր. ժգ. 17). Երուսաղէմի փոքրիկ շրջանում նախկին մի քանի տարիները կային երեք դասակարգ, առաքեալներ, քահանաներ և եղբայրներ (գործ. ժե.-1—4, 22, 23), որը և հաստատում են իրանց թղթերում Ս. Եպիփանը, Թէոդորիտը, Ոսկեբերանը։ Երբ յետոյ կամաց կամաց առաքեալները դուրս եկան Երուսաղէմի շրջանից, անցան միւս երկրները, այն ժամանակ նըշանակեցին իւրաքանչիւր մեծ շրջանի համար մի մի տեսուչ, հսկող։ Առաջին ներկայացուցիչը, որը կարգուեց առաքելա-

կան ձեռնադրութեամբ Երուսաղէմի շրջանի վրայ, էր Յակովբ Տեառն եղբայրը (Եւս. ք. 1, 23. գ. 5)։ Պօղոս առաքեալը անցնելով Ասիայի կողմերը զանազան տեղերում փոքր ժամանակի մէջ յաջողեց հաւատացեալներ գտնել և Եփեսոսի շրջանում ներկայացուցիչ նշանակեց Տիմոթէոսին (Ա.—Տիմ. ա. 3. Բ—Տիմ.-ա-6), իսկ Կրետէ կղզու վրայ Տիտոսին (Տիտ. ա. 5)։ Այսպէս բոլոր առաքեալները ամեն տեղ տարածուելով ձեռնադրեցին յաջորդներ և տեսուչներ։ Կղեմէս Աղէքսանդրացին (գ. դարում) պատմում է, որ Յովհաննէս առաքեալը, որ բոլոր առաքեալներից շատ ապրեց, տեսնելով իւր վախճանի մօտենալը և բազմաթիւ աղանդաւորների բազմանալը, ձեռնադրեց շատ եպիսկոպոսներ փոքր—Ասիայի եկեղեցիների վրայ, խրախուսելով ամուր կենալ իրանց հաւատքի մէջ։ Առաքեալների ձեռնադրած՝ շրջանների այդ կառավարիչները այն ժամանակուանից արդէն եպիսկոպոսներ էին անուանում, ստանալով առաքելական լիազօրութիւն եկեղեցին կառավարելու. շատ անգամ եպիսկոպոս բառի փոխարէն գործ էր ածւում քահանայ բառը, նոյն իսկ սարկաւագ, դրանից շատերը ենթադրեցին, այժմ էլ հէնց, որ եպիսկոպոսական աստիճան առանձին չկայ, բոլորի իրաւունքը մի և նոյն է, քահանայքն էլ իրաւունք ունին ձեռնադրութիւն կատարելու եպիսկոպոսի օրինակով։ Եւ մասամբ ճշմարիտ է այն, որ նախկին դարում անխտիր եպիսկոպոս և քահանայ կոչումն դրւում էր նոր ձեռնադրուած անձանց (գործ. ի. 17, 28), որովհետև հրէից քահանան ընդհանուր նշանակութիւն ունեցող բառ էր, նշանակում էր աւագադոյն, քահանայք—աւագանի, հէնց իրանք առաքեալները իրանց անուանում էին քահանայ—այդ իմաստով (Բ—Յով. ա - 1). երբ հօտը դեռևս շատ սակաւաթիւ էր, պարտաւորութիւնների բաժանման հարկ չկար, անխտիր թէ քահանայ, թէ եպիսկոպոս նոյն պարտաւորութիւններն էին կատարում հաւատացեալների նկատմամբ և նոյն իրաւունքներն ունէին (Տիտ. Ա.—5). երբ արդէն քրիստոնեաների թիւը շատացաւ, հովիւները բազմացան, կամաց կամաց հարկ զգացուեց վէ-

ճերի, հակաճառութիւնների պարզաբանութեան համար դիմել աւելի աւագագոյնին, առաջուց ընտրուածներին և այսպիսով երկու դասակարգի, առաքեալներից օրհնուածների և սրանց նշանակած քահանաների մէջ սկսուեց պարզօրէն տարբերութիւն դրուել։ Յերոնիմոսը պատմում է, որ եպիսկոպոսական պաշտօնի և անուան տարբերութիւնը և պարզ կերպով գործածութիւնը առաջացաւ Կորնթացոց խռովութիւններից յետոյ (60 թուականներին)։ Տերտուղիանոսը, Իգնատիոս Աստուածակիրը իրանց գրուածքներում արդէն պարզ որոշում են երկու աստիճանների տարբերութիւնը, պարտքը և իրաւունքը։ Եպիսկոպոսները համարւում էին առաքեալներից ձեռնադրուած, իսկ քահանաների ձեռնադրութիւնը յանձնուած եպիսկոպոսներին, սրանց յանձնւում էին մեծ շրջաններ, թեմեր բազմաթիւ քահանաներով հովուելու, իսկ վերջիններիս փոքր ծխեր առանձին եկեղեցով՝ ստորադրուած եպիսկոպոսին (Ա.—Տիմ.-Ե. 17, Բ.—Տիմ. Բ, 2)։ Եպիսկոպոսների առաւելութիւններն էին՝ 1) առաքեալներից յաջորդաբար և անմիջապէս ստացած իշխանութիւնը, 2) լիազօր կառավարութիւն թեմի մէջ գտնուած բոլոր եկեղեցիների, քահանաների (Правос. Собесѣд. 1858 г.): Եպիսկոպոսների առաքելական յաջորդութիւնը մեծ դեր էր խաղում հնում մի որ և է եկեղեցու առաքելական և օրինաւոր համարուելու խնդրում, որի հիման վրայ էլ չէին ընդունում զանազան հերետիկոսների եպիսկոպոսութիւնը և քահանայութիւնը, պահանջելով նրանցից առաքեալներից սկսած մինչև իրանց ընտրեալ եպիսկոպոսը յաջորդական ցուցակ։ Եւ այդպէս հին եկեղեցիներում կար առաքեալներից մինչև իրանց ժամանակակից եպիսկոպոսի ցուցակը ցանկը—տաճարում դրած։ Եւսեբիոսը յիշում է Ի. Գլ. 22—Հռոմի, Աղէքսանդրիայի, Անտիոքի, Լաւոդիկի, Կեսարիայի եպիսկոպոսների ցանկը յաջորդական կարգով։ Երուսաղեմի առաջին եպիսկոպոսն էր Յակոբ Տեառն եղբայրը, ապա նրանց ցեղից Սիմէոն Կղէոպա, Իւստոս. Եփեսոսի եկեղեցում Յովհաննէս առաքեալ և աւետարանիչ, նրա յաջորդ

Պողիկարպոսը, որը զատկի վէճերում մասնակցեց. Հռոմում Պետրոս առաքեալ, ապա Կղիմէս նրա յաջորդներից. Հայոց եկեղեցում Թադէոս և Բարդուղիմէոս առաքեալները, որոնց յաջորդութիւնը շարունակուեց Արտազում և Մծբինում, ապա Լուսաւորիչ: Առաքելական յաջորդութեան և եպիսկոպոսական իրաւունքների և աստիճանի առաջին տեղ բռնելը եկեղեցու նուիրապետութեան մէջ վկայում են բոլոր գրողները. Իրենոսը գրում է, Դ. 26 և Ե. 20, «պէտք հնազանդել հովիւներին, որոնք եկեղեցում են և յաջորդաբար նշանակուել են առաքեալներից, որոնցից շնորհատուութեամբ ստացել են Հոգին Սուրբ. նրանցից պիտի ճշմարտութիւն սովորել, նրանք են հսկում հաւատի վրայ, նրանք են պահում առաքելական աւանդութիւնը, օրէնքները և նրանք են տալիս եկեղեցու աստիճանները: Նոյն մտքերը և խրատները գտնում ենք Լուսաւորչին և Սահակին վերագրած կանոններում: Սակայն առաքեալներին յատկացրած իրաւունքները չպէտք վերագրել յաջորդներին, առաքեալները ընտրուեցին Յիսուսի ձեռքով և ուղղակի շնորհք ստացան (Հոգյն սրբու) Սուրբ Հոգուց և երրորդ՝ նրանց լիազօրութիւնը տարածուեց բոլոր հաւատացեալների վրայ և ոչ մի շրջանի, որպիսին է եպիսկոպոսներինը: Առաքեալների ժամանակից ըստ աւանդութեան եպիսկոպոսին ձեռնադրողն է 2, 3 եպիսկոպոս նոյն իսկ նրանց ժողովը, իսկ միւս աստիճանաւորներին օրհնողն է մի եպիսկոպոս. (Ա. Գ. 84, 83): Բացի ձեռնադրութեան իրաւունքից, եպիսկոպոսին է պատկանում եկեղեցու ղեկավարութիւնը և կարգապահութիւնը: Խորհուրդների կատարման գլխաւոր տնօրէնն է եպիսկոպոսը, որի թոյլտուութեամբ և քահանայքը կատարում են օրէնքները: Եպիսկոպոսն միայն իրաւունք ունի եկեղեցի օծելու: Եպիսկոպոսին է պատկանում ուսուցանելու բարձր իրաւունքը, նա պիտի կանոնաւորի ուսուցման կարգը և պատրաստի ուսուցիչները (Ա.—Տիմ. Ե. 17, Բ—Տիմ.—Բ. 2): Եպիսկոպոսը միայն իրաւունք ունի կոչուելու գլխաւոր հովիւ ներկայացուցիչ եկեղեցու, կապելու և արձակելու, դա-

տելու քահանաներին (Ա.—Տիմ. ե. 19) և պաշտաման կարգի վրայ հսկելու, հովուելու իւր թեմի հօտը: Այդ իրաւունքների հետ նա ունի և մեծ պարտքեր. նախ պատասխանատու Կաթուղիկոսի, ժողովրդի, եպիսկոպոսական ժողովի առաջ իւր եկեղեցու համար, հաւատի անթերի պահպանման, եկեղեցիների բարեկարգութեան, եկեղեցական կանոնների ճշգրիտ և անթերի կատարման համար:—Նա է պատասխանատու եկեղեցու գոյքի և ստացուածքի կանոնաւոր պահպանման, գործադրման համար, նրանցից բաժին հանելու աղքատներին, տնանկներին, որբ և այրիներին, հիւրասիրելու օտարներին, հիւանդներին նոյն հաշուով. պատասխանատու նոյն գոյքի վատնման և շռայլաբար կորստի մատնման համար: Եպիսկոպոսի ընտրութիւնը լինում էր հետեւեալ կերպով: Առաքեալների ժամանակ իրանք էին ընտրում արժանաւոր մարդ և եպիսկոպոս ձեռնադրում. Կղիմէս Աղէքսանդրացու վկայութեամբ Տեառն եղբայր Յակոբը եպիսկոպոս ձեռնադրուեց Երուսաղեմում Պետրոս, Յակոբոս և Յովհաննէս առաքեալների ձեռքով: Կանոնների հիման վրայ ընտրութիւնը և ձեռնադրութիւնը լինում էր այսպէս, երբ եպիսկոպոսական աթոռը թափուր էր մնում, մեծ եպիսկոպոսը, մետրոպոլիտը հրաւէր էր ուղարկում բոլոր աշխարհի կամ շրջանի եպիսկոպոսներին հաւաքուել այնտեղ, որտեղի վրայ պիտի եպիսկոպոս ձեռնադրուի: Գալիս էին բոլորը, ով չէր կարող գալ տեղի հեռաւորութեան, հիւանդութեան և այլ պատճառով, ուղարկում էր գրաւոր համաձայնութիւն, կամ կարծիք, բայց առնուազը պիտի լինէր երկու երեք հոգի (Ա. Գ. 83 երես). Ձայների մեծամասնութեամբ կամ միաձայն ընտրում էր եպիսկոպոսը և ձեռնադրում էր անշուշտ մետրոպոլիտի համաձայնութեամբ, և նրա ձեռքով: Ընդհանրապէս ընտրում էին տեղական անձինքներից, կղերից, իսկ երբ լինում էր անթեմ եպիսկոպոս, որին կարելի էր նշանակել, կամ եթէ պատահում էր, որ խռովութիւն էր ընկած լինում ժողովրդի և կղերի մէջ ընտրեալի վերաբերմամբ, կամ յարմար էր դատւում տեղա-

փոխել մի եպիսկոպոսին մյուս թեմ, այսպիսի դեպքերում ընտրում էին ոչ տեղական կղերից, այլ դրսից, այն պայմանով որ ընտրուածը անշուշտ լինի ընդունելի թէ ժողովրդի և թէ կղերի կողմից: Ընդհանուր եկեղեցում ժողովուրդը մասնակցում էր ընտրութեան այսպէս, նա իւր ներկայութեամբ վկայութիւն էր տալիս ընտրեալի վարքի, բարքի վերաբերմամբ, եթէ վատ էր ճանաչում, չէր ընդունում, իսկ եթէ լաւ էր ճանաչում, ընդունում էր: Ժողովրդի այդ կարծիքը թէև անմիջական չէր, թէև ինքն չէր ուղղակի ընտրում, բայց նրա ձայնը մեծ նշանակութիւն ունէր. որովհետև եպիսկոպոսական ժողովը ուշադրութեամբ դիտում էր որ ընտրուածը լինի արժանաւոր և ոչ պակասութիւններ ունեցող: Աթանասին, Գրիգոր Աստուածաբանին, Օգոստինոսին ընտրեց ժողովուրդը, որոնք ստորագաս հոգևորականների ընտրութեան դէպքում չենւում էին ժողովրդի ցուցման վրայ: Իսկ եթէ պատահում էր, որ զանազան կուսակցութիւնների պատճառով ժողովուրդը ընտրուածին չէր ընդունում, այն ժամանակ Ա.—առ. 36 կանոնով (Ա. Գ. 99) պատժի էր ենթարկւում կղերը, որ չէր կարողացել համոզել ժողովուրդը. այստեղից երևում է, որ թէև ժողովրդի մասնակցութիւնը կար, բայց մեծ ձայնը, վերջնական վճիռը պատկանում էր հոգևոր իշխանութեան: Լաւոդեկեայի 12 և 13 կանոնը (Ա. Գ. 219) թոյլ չի տալիս ամբոխին մասնակցել ընտրութեան, թողնելով այդ բանը եպիսկոպոսական ժողովին. այս կանոնը երևում է բացառիկ և տեղական գոյն ունեցող և հետևանք է կուսակցական կռիւների: Գ. դարից սկսած, երբ քրիստոնէութիւնը դարձաւ քաղաքացիական կրօն, ընտրութիւններին սկսեցին մասնակցել բարձրասիճան անձինք, նոյն իսկ կայսրները, յամենայն դէպս այս դէպքերում էլ վճռական ձայնը մնում էր հոգևոր իշխանութեան: Մինչև իսկ մարմնաւոր իշխանութեան մասնակցելու չափը այդ բանում թուլացնելու դիտաւորութեամբ, խիստ կանոններ հրատարակուեցին (Ա. Գ. 98, 149, 468, 576), մերօրեայ ժողովը կարգալոյծ է անում այդպիսի ձևով

ընտրուած եպիսկոպոսին, իսկ Շնորհալին նզովում է և բանադրում բոլոր ժողովականների որոշմամբ: Ընտրութեան ձևը արևմտեան և արևելեան եկեղեցիներում դարերի ընթացքում փոփոխութեան ենթարկուեց: Կոստանդիանոսից յետոյ, երբ կայսրները և իշխանները սկսեցին խառնուել եկեղեցական գործերում, շատ անգամ անարժան մարդիկ յոյս չունենալով ժողովրդի վրայ, դիմում էին ուղղակի Կայսրին խնդրելով նշանակել կայսերական հրամանով եպիսկոպոս, այս դրութիւնը ստեղծուեց մասնաւորապէս աղանդաւորների յարուցած խռովութիւնների ժամանակ, Նեստորի օրերում իւրաքանչիւր կուսակցութիւն իւր եպիսկոպոսի գործը յաջողեցնելու համար դիմում էր կայսերական կառավարութեան օգնութեան, որով և սահմանադրուեց առանց մարմնաւոր իշխանութեան հաստատութեան կամ վաւերացման առաջնորդներ չնշանակել: Զ—Դարում Յուստինիանոսի նովելլաների միջոցով որոշուեց, որ կղերը և քաղաքի առաջին մարդիկ ընտրեն երեք հոգի եպիսկոպոսացու, համախոհական կազմեն և երդմամբ ստորագրեն որ ճշմարիտ է կատարուած ընտրութիւնը և ուղարկեն մետրոպոլիտին, որը մէկնու մէկին պիտի ձեռնադրի (123, 137 նովել.): Եկեղեցին յունաստանում ընդունեց այդ կարգը. այդ կարգը իբրև օրէնք մտաւ Վասիլ Մակեդոնացու (բազիլիկի) «Թագաւորական դրքերի» և Փոտ պատրիարքի նոմոկանոնի մէջ (Թ. դարում). բայց կանոնը մնաց մեռած տառ, մանաւանդ պատկերամարտութեան ժամանակ, երբ կայսրը կամեցած մարդուն եպիսկոպոս էր նշանակում. յունաց եկեղեցին այդ անկանոնութեան առաջն առնելու համար, թէ Ե—րդ և թէ 870 թուի ժողովներում արգելեց որ մարմնաւոր իշխանութիւնը չխառնուի եպիսկոպոսների ընտրութեան գործում, այդ ձևով մասնակցող թէ եպիսկոպոսը, թէ իշխանը և թէ զօրավարը ենթարկուեն նզովքի: 963-թուին Նիկիփոր Փոկա Կայսրը հրամայեց, որ թէ պատրիարքը և թէ եպիսկոպոսները ընտրուին և հաստատուին կայսերական յուցմամբ և հրամանով:

Հռոմի եկեղեցին սկզբից հակամիտ էր դէպի ժողովրդա-

կան ընտրութիւնը. Յուլիոս եպիսկոպոսը Աթանասին պաշտպանելու համար գրուած թղթում յատագովում է ժողովրդական ընտրութիւնը և պախարակում այն՝, որ օտար եպիսկոպոս են նշանակում քաղաքի վրայ առանց ժողովրդի ցանկութեան, նրա ցուցման և ընտրութեան: Ե. դարու սկզբին Իննոկինդիոս ա. պապը դատապարտեց մի մետրոպոլիտի արարք, որը «հակառակ ժողովրդի ցանկութեան և եկեղեցական կարգապահութեան» եպիսկոպոս է նշանակել. բայց 12-րդ դարուց արդէն Հռոմի եկեղեցին ժողովրդական ընտրողական մասնակցութիւնը բոլորովին վերացրեց, բոլոր հոգևորականների ընտրութիւնը և նշանակումն յանձնեց պապին:
(Տես Объ участіи міряпъ въ дѣлахъ церкви, съ точки зрѣнія прав. канонич. права—1866, казань. А. Павлова.):

Հայոց եկեղեցում և Ափրիկայի եկեղեցիներում աշխարհականների մասնակցութիւնը ընտրութեան գործում մնաց ըստ նախկին աւանդական կարգին. թէ նախալուսաւորչեան դարերում և թէ Լուսաւորչից յետոյ եպիսկոպոս—առաջնորդներ ընտրում էր Հայոց մէջ թեմը, իշխանները և ժողովուրդը, մինչև իսկ բոլորովին երկրորդական նշանակութիւն տալով կղերին: Ծգ. դարում Ստեփաննոս Օրբէլեանը այսպէս է նկարագրում իւր Սիւնեաց աշխարհի առաջնորդ ընտրելը. «և ժողովուելով մեր եպիսկոպոսները իմ հօր մօտ (Տարսայիճ Սիւնեաց իշխան) ինձ հրաւիրեցին գնալ Թագաւորական աշխարհ Կիլիկիան, երջանիկ կաթուղիկոսի և աստուածասպակ Հայոց Թագաւորի մօտ մետրոպոլտութեան ձեռնադրութիւն ստանալու Սիւնեաց աթոռի վրայ» 227 եր. Ս. Օրբելեան: Ստեփ. Օրբելեան 52 երեսում բերում է առաջնորդական ընտրութեան նաև հետևեալ ձևը «բողոք բարձեալ ամ ազատաց և տանուտեարց և աւագ քահանայից աշխարհին առ մեծ բարեպաշտուհին Սահակիա՝ խնդրէին իւրեանց առաջնորդ: Իսկ նորա պատրաստեալ դեսպանս 'ի մեծ և 'ի պատուական արանց և յընտիր քահանայից՝ բազում ընծայիւք և պիտանի պատարագօք ուղևորէ առ կաթուղիկոսն Հայոց Մուշէ (Վահան Մամիկոնեանի ժամանակ), և թախանձէ զնա գալ յաշխարհ իւր և ընտրեալ արժանաւոր այր՝ կացուցանել յաթոռ մետրոպոլտութեան Սիւնեաց». կաթուղիկոսը գալիս է Սիւնիք. «հրամայէ ժողովոյն ընտրել իւրեանց առաջնորդ, զի ձեռնադրեսցէ: Ապա ամ բազմութիւն զաղաղակ բարձին 'ի մի բերան և ասեն. «խնդրեմք մեք տեսուչ հոգւոյ մերոյ զհայր Երիցակ և բայ'ի նմանէ ոչ պիտի մեզ այլ ոք»: Առաջնորդների ժողովրդական ընտրութեան վառաւոր ապացոյցն է Տաճկահայոց եպիսկոպոսների ընտրութիւնը և նշանակումն: Սահմանադրութեան 97 յօդուածով (Ս. գիրք 771 երես) առաջնորդի ընտրութիւնը լինում է պատրիարքի ընտրութեան նման, գաւառական ընդհանուր ժողովով, խառը ժողովի տեղեկագիրը ուղարկւում է պատրիարքարան. պատրիարքը կետրոնական վարչութեան խառը ժողովի հաճութեամբ կհաստատի ընտրութիւնը և բարձրագոյն դռան հրամանագիրը ստանալուն հոգը կտանի: Ռուսահայոց մէջ մինչև պօլօժենիայի հաստատութիւնը 1836—թիւը, նոյն կերպով կընտրուէին և կհաստատուէին կաթուղիկոսից առաջնորդները. նորանից յետոյ 2 հոգի առաջարկւում է կաթուղիկոսի կողմից կայսեր և մէկն ու մէկը հաստատւում է, կարող է և չըհաստատուել: Պարսկահայոց մէջ, ընտրում է ժողովուրդը, հաստատում է կաթուղիկոսը և առանձին գրութեամբ իմացնելով Պարսից շահին, խնդրում է նրա վաւերացումն և ընդունելը: Եպիսկոպոսների ընտրութեամբ նշանակման շատ փայլուն ապացոյցն է ձեռնադրութեան կարգը, որով ժողովրդի բոլոր դասակարգերը մասնակցում են ընտրութեան, հրապարակօրէն յայտնելով իրանց հաւանութիւնը: Երուսաղէմի ժողովը 1651 թուին 3 կանոնով սահմանում է «առանց ժողովրդի խնդրանաց և վկայական թղթի ո՛չ ոք եպիսկոպոս չձեռնադրուի» Ս. գ. 467 երես: Ուսուցչապետ Պաւլով չատագով հանդիսանալով ժողովրդի մասնակցութեան եկեղեցական գործերում, ուրախութեամբ է արձանագրում այն հատ ու կտոր փաստերը ընդհանուր եկեղեցական պատմութեան

մէջ, որոնք հաստատում են իւր ցանկացածը, դժբախտաբար ծանօթ չլինելով Հայոց եկեղեցու գործնականութեան մէջ խոր արմատ ձգած ընտրողական սկզբունքի հետ, չի կարողանում ոչ մի փաստ բերել մեր շրջանից, որ լիապէս հաստատէր իւր տեսութիւնը:

Բ. ՔԱՀԱՆԱՅԵՐ.

Եկեղեցու նուիրապետական երկրորդ աստիճանը կազմում է քահանայութիւնը, իբրև ներկայացուցիչ այդ կարգի է քահանան: Քահանայ նշանակում է աւագագոյն անդամ եկեղեցու, ընտրուած յարգելի և պատուաւոր անդամներից: Քահանայի պարտաւորութիւններն են, 1) կատարել խորհուրդները և պաշտամունքները. 2) ուսուցանել և քարոզել. 3) իրաւունք կապելու և արձակելու: Նա չի կարող կատարել մի քանի գործողութիւններ, որոնք վերապահուում են եպիսկոպոսական աստիճանին. 1) չի կարող մեռոն եփել. 2) եկեղեցի օծել և 3) ձեռնադրութիւն կատարել: Մեռոն եփելը արգելուած է քահանաներին և վերապահուած եպիսկոպոսին ըստ բոլոր եկեղեցաց, Կարթագենի 348 թուի ժողովը այդ կարգը համարում է հնաւանդ. Զ. տիեզերական ժողովի 2—րդ կանոնը իսպառ արգելեց քահանաներին եփել, իսկ ըստ մեր եկեղեցու վաղեմի կանոնների, Թադէոսի, Մակարի, Սահակի, Սսի և ն. վերապահուած է միմիայն կաթուղիկոսին (Ա. գ. 487, 521, 412, 428): Այդ իրաւունքը համարւում է առաքելական յաջորդական, որը ստացւում էր առաքելական ձեռնադրութեան ժամանակ Հոգոյն Սրբոյ շնորհքի իջմամբ. մեռոնը համարւում է այդ ստացած շնորհքի տեսանելի իջնումը, որ կատարւում է մկրտութեան—դրոշմի ժամանակ քահանային ձեռքով եպիսկոպոսի թոյլտուութեամբ: Բարեղ մեծը մեռոնի օրհնութիւնը համարում է առաքելական աւանդութիւն: Իւոնիսիոս Արիսպագացին, Թէոփիլոս Անտիոքացին, Տերտուղիանոսը, Կիպրիանոսը, նոյնպէս և առաքելական կարգադրութիւնները վկայում են այդ մասին վաղ ժամանակից: Մանկանց դրոշմելու հարցը վիճաբանութեան տեղիք է տուել արևելեան և արևմտեան եկեղեցիներում: Մինչև այսօր Հռոմէական կանոնով քահանան իրաւունք չունի դրոշմելու, նա միայն մկրտում է մանկան, իսկ եպիսկոպոսը դրոշմում: Մեր և Յունաց եկեղեցու կանոններով քահանան է դրոշմում, իսկ մեռոնի եփելը թողնելով բարձր աստիճան ունեցողին: «Առաքելական կարգադրութիւնների» մէջ թոյլ է տալիս և քահանային դրոշմել. «Դո՛ւ, եպիսկոպոս կամ քահանայ, առաջ օծիր իւղով, ապա մկրտիր ջրով, և վերջապէս դրոշմիր մեռոնով»: Երբ Փոտ պատրիարքի ժամանակ վէճ ծագեց այդ մասին Հռոմի հետ, Փոտը գրեց, «սովորեցնում են, որ քահանաները իրաւունք չունեն մեռոնով մկրտելու, որ այդ իրաւունքը օրէնքով պատկանում է եպիսկոպոսին: Բայց որտեղ է այդ օրէնքը: Ո՞վ է գրել: Առաքեալները թէ հայրերը . թէ որև է ժողով. որտեղ և երբ է գրուել և հաստատուել: Բայի դրանից եթէ քահանաներին չի կարելի մեռոնով օծել—դրոշմել, այն ժամանակ չի կարելի և միւս խորհուրդները կատարել. օր. մկրտել և ն. և ն.».— (Правос. собесѣд. 1858 г.): Փլորենտինի ժողովում այդ խնդրի մասին խօսք եղաւ, բայց դրական փաստեր չգտնուելով, հարցը մնաց առ կախ: Յարմարութեան տեսակէտից էլ շատ դժուարութիւն կայուցանի այն սովորութիւնը, երբ եպիսկոպոսը գիւղէ գիւղ շրջելով պէտք դրոշմէր բոլոր մկրտուածներին, եթէ դրոշմելու իրաւունքը յատկացնուէր միմիայն եպիսկոպոսին:

Գալով երկրորդ կէտին, որ քահանաները իրաւունք չունեն տաճար, սեղան, եկեղեցի օծելու, այդ պարզ և որոշ գրուած են բոլոր եկեղեցական կանոններում: (Ա. գիրք. 338, 427): Քահանաներին չտալ իրաւունք ձեռնադրութեան, այդ արդէն մտած է եկեղեցու գործնականութեան մէջ հէնց առաքեալներից սկսած:

Ուսուցանելու, քարոզելու իրաւունքը տրուած է քահանաներին առաքեալների ժամանակից. Քրիստոսի 72 աշակերտները (Մատթ. իր. 19, 20, Մարկ. ժզ. 16, ա—Տիմ. ե. 17) իրաւունք էին ստացել քարոզելու: Առաքելական 58 կանոնը պատուիրում է թէ եպիսկոպոսներին և թէ քահանաներին սովորացնել ժողովրդին բարեպաշտական բոլոր կարգերը. Եգիպտոսի մէջ եկեղեցում երբ Օգոստինոսը առաջին անգամ քահանայական աստիճանում եպիսկոպոսի ներկայութեամբ սկսեց քարոզել, շատերին նորամուծութիւն երևաց, բայց տեսնելով այդ սովորութեան առաւելութիւնները, ընդհանուր կանոնի տակ ընկաւ, միայն եպիսկոպոսի ներկայութեան դէպքում, նախօրօք թոյլտուութիւն պիտի խնդրուէր նրանից քարոզ խօսելու: Կապելու և արձակելու իրաւունքը պատկանում է թէ եպիսկոպոսին թէ քահանային. ա—առ. 52 կանոնը մինչև իսկ սահմանում է, որ եթէ գրանք զըղջացող մեղաւորի մեղքերին թողութիւն չեն տալ, կմերժեն, իրանք զրկուեն կարգից՝ իբրև պատիժ իրանց գլխաւոր պարտաւորութիւններից մէկը ճշտութեամբ չկատարելուն համար: Հներում ապաշխարութիւնը և խոստովանութիւնը երկու ձևով էր լինում, բացարձակ, բոլոր ժողովրդի առաջ և առանձին, գաղտնի: Առաջին դէպքում ապաշխարութեան ժամանակը, աստիճանը, դասը որոշում էր եպիսկոպոսը, որը հսկում էր ապաշխարողի ջերմեռանդութեան կամ անուշադիը լինելուն վրայ, և երբ բոլորովին զղջացած էր գտնում նրան, ինքն թողութիւն էր տալիս նրան և արձակում: Իսկ գաղտնի խոստովանութեան դէպքերում գիմում էին քահանային, որը և արձակում էր մեղքերը: Բացի այդ, քահանան որոշ մասով մասնակցում էր և եկեղեցական տնտեսական կառավարութեան մէջ եպիսկոպոսի նախագահութեամբ և ձեռնադրութեամբ. իսկ իւրաքանչիւր քահանայ իւր եկեղեցու կարգապահն է և հսկողը, թէ ստորին պաշտօնեաների, թէ կարգ կանոնի պահպանման վրայ և մանրամասն հաշիւ պիտի տար եպիսկոպոսին այդ մասին: Քահանայք իրաւունք չունէին առանց եպիսկոպոսի աստիճան ընդունելու և առանց ժողովրդի համաձայնական ընտրուելու և ծխական քահանայ նշանակուելու: 2) իրաւունք չունէին առանձին սեղան հաստատել, ծուխ կազմել և ըմբոստաբար առանց եպիսկոպոսի թոյլտուութեան, հակառակ նրա կամքի անկախ եկեղեցական կազմութիւն և վարչութիւն հաստատել (Ա—առ. 31 կանոն): 3) Կասկածաւոր և թիւրիմացութիւններ առաջացնող զանազան կանոնների և կարգերի կատարման ժամանակ, առանց եպիսկոպոսի որոշման ոչինչ չպիտի ինքնագլուխ անէին: 4) Ամեն մի զանցառութեան, անկանոնութեան դէպքում նրանք կարգի էին հրաւիրուում եպիսկոպոսի կողմից և յանցագործութեան դէպքում, ապաշխարանքի և պատժի ենթարկուում:

ՔՐԻՒՆԵՑԻ ԸՆԾՐՈՒԹԻՆԸ ԻՒ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՆԸ.

Ա—Առաքել. 2 կանոնով (Ա. գ. 84) քահանայի և սարկաւագի ձեռնադրութիւնը կատարում է եպիսկոպոսը: Քահանայի ընտրութիւնը կատարուում էր երկուստէք՝ թէ հոգևոր իշխանութեան կողմից թէ ժողովրդի: Բարսեղ մեծի 89 կանոնով (Ա. գ: 249) պէտք ձեռնադրուողը անցնի բոլոր փորձառական աստիճաններով, որպէս զի լաւ սովորի եկեղեցու կարգ կանոնը և վարք ու բարքի կողմից ընդունելի լինի ժողովրդից և իշխանութիւնից առանց երկմտութեան. Հին կարգով, ասում է նա, եկեղեցու պաշտօնեայքը պիտի ընդունուէին փորձութիւնից յետոյ, որպէս զի նրանք միշտ ծառայութեան և հսկողութեան տակ լինելով, զսպէին իրանց վատ հակումները և ուղղութեան գային. իսկ քահանաները և քոբեպիսկոպոսները մշտական տեղեկութիւններ էին հաղորդում նրա վարքի մասին եպիսկոպոսին: «սրանից յետոյ, հրահանգում է Բարսեղ մեծը քորեպիսկոպոսներին, ընտրեցէք և ընդունեցէք արժանաւորին, բայց մի նշանակէք Դուք կղերի անդամ, հապա այդ թողէք ինձ. իմացէք, որ առանց

իմ իրաւունքի ընդունուածը կհամարուի աշխարհական». ըստ Բարսեղի ժողովուրդը քիչ մասնակցութիւն ունէր եկեղեցու պաշտօնեայի ընտրութեան գործում: Եւ ընդհակառակը՝ մէս կողմից ունենք Կիպրիանոսի խօսքերը, որոնք ապացուցանում են թէ որքան մեծ նշանակութիւն է տալիս Աֆրիկայի եկեղեցիներում հոգևորականի ընտրութեան գործում ժողովրդի մասնակցութեան, նա ասում է «Աստուած հրամայում է Թուոց գրքում (20, 25, 26) Մովսէսին, որ բոլոր ժողովրդի առաջ ընտրի քահանայ, այսինքն սովորեցնում և ցոյց է տալիս, որ քահանայ կարգելը ոչ այլապէս է լինում, բայց եթէ ժողովրդի գիտութեամբ, որպէս զի ներկայ եղողները վկայեն ընտրեալի մասին, բացէ ի բաց ասելով նրա արժանաւորութիւնը և պակասութիւնները. այդ ժամանակ միայն կլինի արդար, ճշմարիտ և օրինաւոր ընտրութիւն, որովհետև ընդհանուրի դատաւճռով է ընտրւում հոգևորականը» (Правос. Собесед. 1867г): Որիգինէսը ասում է «քահանայ կարգելիս անհրաժեշտ է ժողովրդի ներկայութիւնը, որ բոլորը իմանան, որընտրւում է ժողովրդի ամենալաւ, ամենաուսումնական, ամենասուրբ և ամենաբարեգործ անձը, որը ներկայ է լինում նրա համար, որ ապագայում գժտութիւնների տեղիք չտայ». Объ участіи мірянъ въ дѣлахъ церкви . . А.Павловъ): Նիկիայի ժողովի կանոններում թէև ոչ ժողովրդական ընտրութեան մասին ոչինչ չկայ, բայց նրա ուղղած շրջաբերականում Աֆրիկայի եկեղեցիներին, ասում է, «ընտրուածները լինին արժանաւոր և ընտրուեն ժողովրդի կողմից, միայն Աղէքսանդրեայի եպիսկոպոսի համաձայնութեամբ» (Սոկր. Ս.. 9): Հայոց եկեղեցու մէջ անխափան սկզբից մինչև այժմ պահպանւում է նախնեաց սահմանադրութիւնը և Աֆրիկայի եկեղեցու նման ընտրողական սկզբունքը անխախտ մնում է իւր ոյժի մէջ: Հայոց եկեղեցու կանոնները պարզ և որոշ հրամայում են ընտրել քահանային ժողովրդի վկայութեամբ. իսկ Գէորգ Դ. որոշում է, որ քահանան պիտի ընտրուի ժողովրդի համախոհականով, այն է գիւղական հասարակութեան

ժողովով տանուտէրի կնքմամբ և ուղարկուի համախոհականը վիճակային Աստենին, որը և ընդունում է ժողովրդի որոշումն և ձեռնադրութեան իրաւունք ձեռք բերում Սինոդից: Այդպէս է սկզբից, Տահապետվանի ժողովից սկսած, Թադէոս առաքեալին վերագրած կանոններից սկսած բոլորը հաստատում են ժողովրդական ընտրութեանը սկզբունքը. (Ս.. Գիրք, 338, 451, 469, 477, 522, 633 երես) Տաճկահայոց և Պարսկահայոց մէջ նոյն ընտրողական կարգը պահպանւում է ամենայն սրբութեամբ մինչև այսօր:

Գ. ՍԱՐԿԱՒԱԳՆԵՐ

Երրորդ կարգն է նուիրապետութեան՝ սարկաւագների դասակարգը: Սրանք առաջին անգամ ընտրուեցին ծառայելու հաւատացեալներին (Գործք—Զ. գլ.). հոգալու և կանոնաւորելու նրանց պէտքերը, դարմանելու աղքատների կարիքները: Դրանք այդ աստիճանը ընդունեցին առաքելական ձեռնադրութեամբ. (գործ. Զ. 6,8,5,), թոյլտւութիւն ստանալով ծառայել քահանաներին և լինել քահանայ (Ա—Տիմ. Գ. 8—13): Բոլոր հայրերը՝ Իգնատիոս, Յուստինոս, Կիպրիանոս, Տերտուղիանոս, «Առաքելական կարգադրութիւնները» համարում են սարկաւագներին քահանայական դասակարգի անդամ, իբրև օգնական քահանայի և եպիսկոպոսի: Սարկաւագների պարտաւորութիւնները, 1) Սրանք պատարագի ժամանակ ընդունում էին ժողովրդից ստացուած նուէրները, հաց, գինի, պտուղներ, և անուն անուն յիշում էին, որ քահանան պատարագին յիշատակի. 2) Եկեղեցում քարոզ կարդաց էին, խմացնելով ժողովրդին աղօթելու, չոքելու, ապաշխարելու ժամանակ, իսկ ապաշխարողներին կանգնեցնում էին իրանց տեղերում և ժամանակին եկեղեցուց դուրս հանում. 3) Աւետարանը կարդում էին եկեղեցում. 4) Հաղորդելու էին բերում եկեղեցում գտնուողներին և տանում էին երբեմն բացականների տները և հաղորդութիւն տալիս, բռնած ունենալով սկիհը, կամ թաշկինակը. 5) Սեղանի

վրայ գտնուած Սրբազան իրերը և անօթները նրան էին յանձնում պահպանելու և հսկում (սիրոյ երեկոյի) ճաշի վրայ. 6) հսկում էին եկեղեցում կարգապահութեան, լռութիւն պահելու վրայ։

Բացի այդ, մինչև ստորին կարգերի սահմանումն, նրանք կատարում էին բոլոր կարգերը, այն է աղքատներին և այրիներին կերակրում, գրաւոր հաշիւները պատրաստում, չմկրտուածներին քրիստոնէական կրօնքը ուսուցանում ևն, իսկ երբ ստորաբաժանումներ եղան, այն է կիսասարկաւագներ, ընթերցողներ և այլք, այն ժամանակ այդ պարտաւորութիւնները դրին ստորին աստիճանաւորների վրայ։ Նրանք մասնակցում էին տիեզերական և տարեկան եկեղեցական ժողովներում, միայն կանգնած լսում էին առանց ձայնի իրաւունքի. միայն Աթանասը իրրև սարկաւագ Արիոսի դէմ յարուցած մեծ խռովութեան ժամանակ տիեզերական ժողովում իրաւունք խնդրելուց յետոյ վէճի բռնուեց Արիոսի հետ և ճարտար լեզուով պաշտպանեց ուղղափառ եկեղեցին։ Եփեսոսի ժողովի ստորագրութիւնների մէջ կան և սարկաւագների։

Ընդհանուր օրէնքով սարկաւագները իրաւունք չունեն ո՛չ մկրտութիւն անելու և ո՛չ քարոզելու. բայց հներում բացառութիւններ միշտ լինում էին, Ոսկեբերանը, Եփրեմ Ասորին սարկաւագ ժամանակ եկեղեցում քարոզում էին։

ՍԱՐԿԱՒԱԳՈՒՀԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սարկաւագուհիները կային Պօղոս առաքեալի ժամանակից (Հռոմ. ժգ. 1) Պօղոյ եկեղեցում Յուստինիանոսի և Հերակլի ժամանակ 40 հոգի կար։ «Առաքել. կարգադրութիւնները» պատուիրում են որ դրանք լինեն կոյսեր, կամ բարեպաշտ այրիներ, և 40 տարեկան։ Նիկիայի 19 կանոնով (Ա. Գ. 158 երես) նրանք ստանում էին առանձին ձեռնադրութիւն։ Նրանց պարտաւորութիւններն էին, 1) կանանց պատրաստել մկրտութեան համար. 2) Մկրտութիւնը՝ եթէ

մեծ կանայք էին մկրտւում, կատարում էին նրանք, իսկ դրոշմը՝ վարագոյրի ետևից՝ անում էին եպիսկոպոսը կամ քահանան. 3) կնքամայր էին լինում հներում բոլոր աղջիկ մկրտուածներին. 4) կանանց վերաբերեալ բոլոր հոգացողութիւնները եպիսկոպոսի պատուէրով կատարում էին սրանք, 5) այն դռների մօտ էին կանգնում եկեղեցում, որտեղից կանայք էին մտնում և նրանց մէջ կարգապահութեան վրայ հսկում։

ԿԻՍԱՍԱՐԿԱՒԱԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կիսասարկաւագները կոչւում էին ուղղակի ծառայողներ (Նիկ. 2, Լաւոդ. 22,43), նրանց պարտաւորութիւնն էր պատարագի ժամանակ կանգնել դռան մօտ և կարգ պահպանել, հսկել ապաշխարողների վրայ, նրանք ձգում էին ոչ ամբողջ ուրար, այլ բազկուրար ձախ բազկին, հագցնել պատարագչի զգեստը, խնկարկել քարոզ կարդալ և այլն։ Սրանք եկեղեցուց դուրս կատարում էին եպիսկոպոսի զանազան յանձնարարութիւնները։

Ռուսաց պետական օրէնքով հայոց եկեղեցու կիսասարկաւագը իրրև սրբազնագործ ազատ է զինուորական ծառայութիւնից։

ՍՏՈՐԻՆ ՊԱՇՏՕՆԵՈՒԹԻՒՆԸ

Ստորին պաշտօնեաները զանազան եկեղեցիներում զանազան թուով են, մի տեղ 3, մի տեղ 4, երրորդ տեղում 6։ Ա.—Առաք. 69 կանոնը (Ա. գիրք, 109 երես) յիշում է 3 աստիճան, 1) կիսասարկաւագ, 2) ընթերցող, 3) երգող։ «Առաքելական կարգադրութիւնները» 4 են յիշում. 1) կիսասարկաւագ, 2) ընթերցող, 3) երգող, 4, դռնապան։ Լաւոդիկիայի 26 կանոնով (Ա. գ. 221 երես) յիշւում է և երգմնեցուցիչ, 24 կանոնում յիշւում է. 1) ընթերցող, 2) երգիչ, 3) երգմնեցուցիչ, 4) դռնապան։ Եպիփանոսը յիշում է

նաև գրագրներ. Յերոնիմոսը նաև գերեզմանափորեր (Прав. собесѣд 185 г.)։ Եւսեբիոսը Զ. 43 երեսում ասում է, Կիպրիանոսի և Հռոմի Կօրնելիոս եպիսկոպոսների թղթերից երևում է որ Հռոմի եկեղեցին այն ժամանակ ունէը «46 քահանայ, 7 սարկաւագ, 7 կիսասարկաւագ, 42 ջահընկալ (акалуѳъ), և 52 երգմնեցուցիչ՝ երգիչ և դռնապան. ուրեմն ըստ Հռոմի եկեղեցուն պիտի աստիճանները հաշուել այսպէս. 1) կիսասարկաւագ, 2) ջահընկալ, 3) երգմնեցուցիչ, 4) երգիչ, 5) դռնապան։ Համբրոնացին չիշում է, 1) կիսասարկաւագ, 2) ընթերցող, 3) երգիչ։ Ստեփաննոս Օրբելեանը՝ 1) կիսաս. 2) գրակարդաց, 3) սաղմոսերգու կամ երգիչ։ Յովհաննէս կաթողիկոսը 1) կիսասար. 2) վերծանող (ընթերցող) և 3) ոաղմոսերգու (երգիչ). Եղիշէն (Ե. դարում) էգլ. չիշում է՝ սաղմոսասացք և գրակարդացք։ Ա. գաթանգեղոսը՝ միայն անագանոսք է չիշում, որ է ընթերցող, մեսրոպի համար անորոշաբար «և որ այլ ևս ի պաշտօն տեառն կային»։ Մեր հայրերի դասաւորութիւնն է այնպէս՝ ինչպէս Ա.—Առ. 69 կանոնում չիշատակածը. իսկ այսօրուայ մեր ձեռնադրութեան մաշտոցը, որը անվիճելի կերպով ընդունւում է եկեղեցու կողմից իբրև ձեռնադրական օրէնք—ձեռնարկ, բաժանում է սուրբին աստիճանաւորներին այսպէս, կղերիկոսների աստիճանաւորների և դպիրների կարգերի. աստիճանք կղերիկոսաց երկու են, սաղմոսերգու կամ երգիչ և աւետարանչու. դպիրների կարգերն են, 1) դռնապան, 2) ընթերցող, 3) երգմնեցուցիչ, 4) ջահընկալ, 5) կիսասարկաւագ։ Մաշտոցի կանոնով մինչև 4 աստիճանը, ջահընկալութիւնը կարելի է պսակուել, իսկ կիսասարկաւագութիւնից սկսած չի կարելի պսակուիլ։ Այս բոլոր ձեռնադրութիւնները կատարւում են այն ժամանակ, երբ ձեռնադրւում է դպիր, քահանայ և սարկաւագ, իսկ մասնաւորապէս սովորութիւն չէ մեր եկեղեցում առանձին աստիճան տալ դռնապանին, կամ երգմնեցուցիչին. մեր մէջ սովորաբար գործ է ածւում երեք ձեռնադրութիւն, այն է 1) դպրի, որին դրւում է 4 աստիճան, ջահընկալութիւն,

որև կոչւում է ըստ ժողովրդականաց չորս աստիճանաւոր, կամ տիրացու, որը կարող է և պսակուել. 2) սարկաւագի, որը ուղղակի ձեռնադրւում է սարկաւագ և 3) քահանայի։ Մաշտոցը ունի որոշ պարբերութիւն «ձեռնադրութիւն դպրաց, սարկաւագաց և քահանայից»։ Սեբէոսի մէջ կարդում ենք, 85 եր. «Շնորհիւն Ա՛ր յեպիսկոպոսապետ և յամենայն ուղղափառ եպիսկոպոսաց» և յերիցանց, ի սարկաւագաց «և ի դպրաց.....»։ Լինին ստորին պաշտօնեայքն 5, թէ 7, թէ 1, միևնոյն է եկեղեցու համար, որովհետև դրանք բոլորը համարւում են սարկաւագի օգնականներ և դրանց պաշտօնները եկեղեցու գործնականութեան մէջ ստեղծուել է միմիայն սարկաւագի պաշտօնը թեթևացնելու համար։ Հին եկեղեցում 3 աստիճան կար, ինչպէս և յիշեցինք, եպիսկոպոսի, քահանայի և սարկաւագի ըստ հին Օրէնքի։ Եկեղեցիների մէջ երբ վէճ բարձրացաւ 7 աստիճանի, 9 աստիճանի խնդրի վերաբերմամբ, սկսեցին երկնային 9 դասուց հրեշտակապետաց կարգին նայելով այդ փոքր աստիճանաւորներին՝ որոնք սարկաւագի օգնական էին, դասակարգ համարել։ Մաշտոցը քահանայական եօթն աստիճան է համարում դռնապանից սկսած մինչև քահանայութիւն, ութերորդը՝ եպիսկոպոսութիւն և իններորդը կաթուղիկոսութիւն որով 9 դասք եկեղեցւոյ լրանում է։ Որովհետև Օրբելեանի 9 դասակարգութիւնը քաղաքական նպատակով էր ստեղծած և ոչ բուն եկեղեցական, պարզ է որ դասակարգութեան մէջ պիտի հետևենք Մաշտոցին։ Մեր եկեղեցու գործնականութիւնը այսպէս է, ով լաւ կարդալ, երգել գիտէ, կարող է եկեղեցում երգել, կարդալ. դռնապան՝ որ է աւետարանչու՝ որէ ժամհար ընտրւում է ծերունի մարդկանցից վարձով, որ եկեղեցին մաքուր պահի, աւլի, զանկերը խփի և մեծ մասամբ լինում է անգրագէտ, որոնք ծառայում են առանց որևէ աստիճան ստանալու։ Սրանցից միմիայն դպիրը՝ որէ ջահընկալ՝ որէ տիրացու՝ չորս աստիճան ըստանում է ձեռնադրութեամբ եպիսկոպոսից և կոչւում է չորս աստիճանաւոր և համարւում է հոգևորական դասի

մէջ մտած անձնաւորութիւն: Մինչև իսկ Զ տիեզերական ժողովի կանոնների մէջ մտաւ Հայոց եկեղեցու այդ սովորութիւնը, որ ընթերցողը և երգիչը առանց ձեռնադրութեան իրաւունք ունեն կարդալու և երգելու եկեղեցու մէջ և այդ համարւում էր ժողովի կողմից ոչ կանոնական: Իսկ երրորդ կարգը, որէ երդմնեցուցիչների, որոնց պարտքն էր հին եկեղեցում՝ հոգով սրբով հալածելու դևերին մարդկանց հոգուց և մարմնից երդման միջոցով հրաժարեցնելով նրանց, ալժմ ամենևին գոյութիւն չունի, և իբրև ձևականութիւն դրւում է հոգևոր ձեռնադրութիւն ստացող անձին միմիայն անուանական կերպով ձեռնադրութեան միջոցին:

Ք. ՎԱՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳ

Վանական դասակարգը իւր հոգևոր նշանակութեամբ բռնում է բարձր տեղ եկեղեցու մէջ և իւր բացարձակապէս Աստուծոյ նուիրուելովը կազմում է նրա յենարանը, բայի այդ մասնակցելով եկեղեցու կեանքի մէջ՝ նրա բոլոր վարչական և ուսուցանողական գործողութիւններին, ընդհանրապէս համարւում է նուիրապետութեան մի մաս.

Վանական կեանքը սկսուել է շատ վաղ և զարգացել է աստիճանաբար. Պօղոս առաքեալը այդպիսի խստակեաց կեանքի առաջի օրինակն է. (Ա—կորն, Թ. 4—27): Ա—Առ. 51, 53 կանոնները (Ա. Գ. 106) մատնացոյց են անում այն կեանքը, որը վայել է աշխարհից հեռացած հոգևորականին, այն է չափաւորութիւն կերակրի մէջ և ժուժկալութիւն ամուսնութեան մէջ: Մարդիկ և կանայք նուիրում էին իրանց խիստ կեանքի, կուսութեան, բարի գործերով պարապելուն, աղօթքի և պասերի: Դրանք առանձին դասակարգ չէին կազմում, ապրում էին իրանց տներում, ժողովրդի մէջ և վարում էին իրանց սովորական գործերը:

Կիպրիանոսը վկայում է, որ աշխարհից քաշուած կոյսերը շարունակում էին ապրել իրանց ծնողների տանը: Որիգենէսը պատկանում էր այդպիսի խստակեացներին և

միևնոյն ժամանակ ապրում էր ժողովրդի մէջ, Աղէքսանդրիայի դպրոցում ուսուցչութիւն էր անում և ամենաեռանդոտ դաստիարակն էր և քարոզիչը (Եւս. Զ. 3): Աթանասը պատմում է որ շատ եպիսկոպոսներ իրանց նուիրելով խստակրօնութեան, նոյն ժամանակ և կառավարում էին իրանց եկեղեցիները: Այդպիսի անձինք կոչւում էին ասկետներ, խստակրօններ: Երբ հալածանքները մեծ ծաւալ ստացան, պետութիւնը սկսեց իւր ոյժերը դործ դնել չարչարանքի և տանջանքի մատնելով քրիստոնեաներին, մանաւանդ Գ. դարում, այդպիսի մարդիկ, աւելի անվրդով և ապահով կեանք վարելու համար հեռանում էին գաղտնի վայրեր, որտեղ հալածողները չէին կարող մուտք գործել, այն է անտառներ, լեռներ, մաղարաններ, քարայրեր. որտեղ երկար մնալը մեծ մասամբ կախուած էր հալածանքների տևողութիւնից, այնտեղ առանձնանալով իրանց մխիթարութիւնը գտնում էին աղօթքի և ինքնազոսյութեան մէջ, շատերը սովորում էին ցմահ մնալ այրերում: Ահա այսպէս է սկսւում վանական կեանքի հիմնաւորութիւնը: (Прав. Собес. 1858 г.): Վանականութիւնը սկսուեց և զարկ ստացաւ Եգիպտոսում, առաջիններն եղան Պօղոս և Անտոն: Առաջին ճգնաւորն եղել է Պօղոս, որ անցրել է իւր կեանքը 23 տարեկանից սկսած մինչև 120 տարեկան հասակը ճգնութեան մէջ. նրա կեանքից հեռացած տարին, 251 թուին ծնուեց մեծ յայտնի ճգնաւոր Անտոնը. որը վաճառեց բոլոր ունեցածը, նուիրեց աղքատներին և գնաց ճգնութեան. նա Թեբէի ըրջակայքի Կօմ գիւղից էր: Նա աշխատում էր և աշխատանքի մեծ մասը տալիս էր ուրիշներին, ամենահարկաւորը պահում էր իրան ուտելու համար: Նա այցելում էր յայտնի բոլոր ճգնաւորներին, ծանօթանում էր բոլորի նիստ ու կացի հետ և իւր համար կարգեր սահմանում: Տասն տարի դագաղում մնաց, աւելի ջերմեռանդութիւն ցոյց տալու նպատակով, տասն տարուց յետոյ, վեր կացաւ և սկսեց խիստ ճգնութիւն. նա ցանում էր ցորեն, բանջարեղէն, եկոյզներին—հիւրերին կերակրում: Նրա հռչակը շատ բարձրացաւ,

մեծ համարում ստացաւ, այնպէս որ Արիոսական կուսի ժամանակ, ինքն և իւր ճգնաւորները մեծ պաշտպանութիւն ցոյց տուին ուղղափառութեան. նա մեռաւ 105 տարեկան հասակում: Եղբայրանոցների հիմնադիրն էր Պաքմոսը, Թեբէից, ծնուած 292 թուին. նա հիմնեց Նեղոսի կղզիների վրայ փոքրիկ ընկերութիւն. փոքր ժամանակից յետոյ եղբայրութիւնը այնքան շատացաւ, որ սոխպուած եղան 8 առանձին կացարաններ—վանքեր շինել, 3000 բնակիչներով. իսկ յաջորդ դարու սկզբին արդէն վանականների թիւը հասնում էր 50,000-ի: Վանականները երեք՝ երեք ապրում էին խուցերում, նրանք անպայման հնազանդում էին խուցերում աբբային (հայր—ասորական): Նրա ձեռքի տակ ամեն մի վանք ունէր առանձին վանահայր. բոլոր վանականները տարին երկու անգամ ժողովւում էին գատկին և օգոստոսին դլխաւոր վանքը: Բոլորը բաժանւում էին 24 դասի, ամենահասարակները համարւում էին Ա. դաս, մնացածները ըստ գիտութեան և վարքի կազմում էին յաջորդ դասակարգերը: Նրանք ապրում էին հանրական կեանքով, ամեն բան հասարակաց էր, արգելւած էր ասել, իմը, քոնը, ամեն ինչ պատկանում էր հասարակութեան. նրանք պարապում էին երկրագործութեամբ և արհեստով, կոշով և պարան հիւսելով, և այլ զբաղմունքներով. եղած ձեռագործները վաճառւում էին և բարեգործական նպատակների գործ դնում. նրանք օրը երկու անգամ աղօթում էին, չորրորդ և վեցերորդ օրերը շաբաթուայ պաս էին պահում և շաբաթ ու կիրակի հաղորդւում. հացը ուտում էին միասին սաղմոսերգութեամբ, լուռ և երեսները քողով ծածկած, որ չտեսնեն միմեանց. ուտելը պիտի համապատասխանէր աշխատանքին, այսինքն քիչ աշխատողը քիչ պիտի ուտէր. հիւանդներին խնամում էին շատ կարեկցութեամբ. նրանք հագնում էին Եղիա մարգարէի նման այծի մորթուց գգեստներ. երբէք չէին հանւում, միայն հաղորդուելուս գօտիկը արձակում էին: Քնում էին շորերով և այնպիսի ձևով շինուած անկողիններում, որ կանգնած դրութեամբ էր պա-

հում նրանց: Պաքմոսի քոյրը մի անգամ եկաւ տեսութեան, նա դռնապանի միջոցով ասաց, որ կխօսի նրա հետ այն ժամանակ, երբ քոյրը կանանց համար վանք կշինի: Վանականները կանանց համար վանք չինեցին, և Պաքմոսի քոյրը բացաւ այդ վանքը կոյսերի և այրիների համար, որոնք կոչւում էին Նօննա, դրանց կանոնագրութիւնը կազմեց եղբայրը: Պաքմոսը մեռաւ 348 թուին: Պաքմոսի օրինակին հետևեցին շատերը, մասնաւորապէս Մակար և Ամմոն ճգնաւորները. Դ. դարու վերջին դրանց թիւը հասաւ 5000 հոգու: Անտոնի աշակերտ Իլարիոնը Պաղեստինում հիմնեց վանականութիւնը. Սերաստիայի եպիսկոպոս Եւստաթիոսը հիմք դրաւ Հայաստանում, Պոնդոսում, իսկ Ամանասը Հռոմում, ուր փախել էր իւր թշնամիներից ազատուելու համար: Դրանք միանման չէին ապրում, մի մասն իբրև միայնակեացները ապրում էին մաղարաններում, այրերում, քերծերում, ջոկ ջոկ, կամ խուցերում. իսկ մնացածները խմբերով ապրում էին շէնքերում, որ կոչւում էին վանքեր: Իւրաքանչիւր մենաստան իւր կանոնագրութիւնը ունէր, բայց նրանք ընդունում էին միակերպ վանական պարտաւորեցուցիչ օրէնքը, այն է՝ *կուսութիւն, անշահասիրութիւն* եւ *հնազանդութիւն*: Առաջի պայմանը դրւած էր նրա համար, որպէս զի վանականը ժուժկալութեամբ և կրքերի սանձահարելով ներքին կատարելագործութեան կարողանայ հասնել. երկրորդը՝ հրաժարեցնելով բոլոր շոյող և շահասիրութեան տանող աղբիւրներից, սովորեցնում էր քիչով բաւականանալու սկզբունքը, որպէս զի մարմինը կարողանայ կրթել աւելի բարձր ձգտումների հասնելու համար. երրորդը՝ իբրև եղբայրական սիրով կապուած մարդ, պիտի ոչ մի առիթ չտար վէճերի, անհնազանդութեան և այլն. դրանց մէջ մեծը, փորձուածը նշանակւում էր կառավարիչ և դեկավար, որ կոչւում էր հայր, կամ վանահայր, կամ վարդապետ: Վանահայրն էր միակ հսկողն և պատասխանատուն վանքի համար, նրանք խստութեամբ պահանջում էին բոլորից հլու հնազանդութեամբ կատարել բոլոր կանոնները. վանական եղողը պիտի 3 տարուայ

փորձութեան ենթարկուէր, տանէր մեծերի վիրաւորանքը, արհամարհանքը, կոպիտ վարմունքը և կրէր պատիժները. դրանց հաւատքը փորձւում էր դժուար և խիստ պարապմունքների ենթարկմամբ: Օրինակի համար մէկին իբրև փորձութիւն հրամայուած էր, 3 տարի շարունակ 3 վերստ հեռաւորութիւնից շարունակ ջուր կրել՝ չոր մի ինչ որ փայտ ջրելու համար: Մեծ խստակեցութիւն էին ցոյց տալ և ճգնաւորները, ամբողջ տարիներով սիւնի գլխի աղօթք էին անում Աստուծուն և ծնրադրութեամբ օրներն անցկացնում. օր. Սիմէօն սիւնակեացը 37 տարու չափ կացաւ սիւների գլխին, միանգամից անընդհատ շարունակաբար 1244 ծունր էր կրկնում. ապրեց մօտ 70 տարի: (Թօլերմօն, ընդհ. եկեղ. պատմ. 312—314): Արևելքում, Փոքր-Հայքում, Պոնտոսում և Կապադովկիայում վանականութեան մեծ գարկ տուաւ Բարսեղ մեծը, Հայաստանում Գրիգոր Լուսաւորիչ և տպա Մեծն Ներսէս, անթիւ անհամար վանականները մեծ մասամբ պարապում էին արհեստներով, գործելով, հիւսելով, տղաներ պատրաստելով: Ե. դարու սկզբից սկսւում է վանականութիւնը տարածուել Արևմուտքում, գլխաւոր հիմնադիրն էր Բենեդիկտ — 480 թուականներին, թէև Ամթանաս վաղուց թողել էր Հռոմում իւր հետևորդները, բայց կազմակերպուած ոյժ չէին ներկայացնում: Բենեդիկտի ճգնաւորական կեանքի հռչակը ամեն տեղ տարածուեց, և նրան ընտրեցին վանքի աբբա. սա փոքր ժամանակում կառուցեց 12 վանք և բնակեցրեց վանականներով, նրանք ընդունում էին և մանուկներ. մեծերը պիտի իրանց կանանց թողնէին, վաճառէին ամեն ինչ և աղքատներին տային. պիտի հնազանդէին վանահօր իբրև Քրիստոսի փոխանորդի: Նրանք ապրում էին հանրավարական սկզբունքներով, ամեն ինչ ընդհանուր էր, ինչ որ մասնաւոր բան գտնէին միաբանի մօտ, կվաճառէին և դանձարանը կձգէին փողը: Բարեկամներից ընծաներ ստանալ չէր կարելի: Օրը աշխատում էին 7 ժամ արհեստներով, մնացած ժամանակը կարդում էին և աղօթում. սեղանի ժամանակ բոլորը լուռ նստած ուտում էին և լսում ընթերցողի ձայնը, որ կար-

դում էր Ս. Գրքից: Գինի և միս արգելուած էր, միայն հիւանդներին էր թոյլ տրւում և հիւրերին ու օտարներին: Նորերը կոպիտ կտորից էր, և միշտ հագներին, գիշեր՝ ցերեկ, քնելուս չէին հանում, մի սենեակում 10—12 մարդ էին պառկում մահճակալների վրայ: Թեթև յանցանքների համար առանց ճաշի էին թողնում, զրկում էին ժամերգութիւնից, բանդարկում էին և մարմնական պատիժ տալիս: Բենեդիկտ վանքեր շինեց Գաղղիայում, Իսպանիայում, Սիկիլիայում. մեռաւ 543 թուին (տես Թօլերմօն. եկ. պատմ.): Նախ քան Լուսաւորիչ Հայաստանում շատ քրիստոնեաներ կային, Լուսաւորիչը մնացած հայերին քրիստոնեայ դարձնելուց յետոյ, մտցրեց վանականութիւնը, հետը բերելով Կապադովկիայից բազմաթիւ վանականներ: Ագաթանգեղոս 486 երեսում այսպէս է նկարագրում. «Եւ դարձեալ բազում և անհամար զունդս վանականաց 'ի շէնս և յանշէնս, զաշտական շինակեացս և լեառնակեացս, անձաւամուտս և արգելանս հաստատէր»: Բիւզանդից հետևեալ տեղեկութիւններն ենք քաղում, կրօնաւորները մեծ մասամբ օտարներ էին, Դանիէլ յայտնի քորեպիսկոպոսը, նրա աշակերտները, Շաղիտա և Եպիփան օգնականներ էին կառավարութեան մէջ. այս անապատականներին համար ասում է. «Լնոյր գերկիրն Ծոփաց վանիւք և դնէր վարժեաւր ընդ ամենայն երկիրն Ծոփաց... անցանէր և յերկիրն Աղձնեաց, լուսաւորէր և զնոսա, և լնոյր գերկիրն Աղձնեաց վաներով և շինէր վկայանաց մի յաւանին . . . առնոյր նա (Եպիփանը) զաշակերտս իւր արս միանձունս լեռնականս անապատականս, արս 500, երիտասարդ գնալ յերկիրն յունաց»—187 երես: «Եւ ամեն շէն և անապատ տեղերում միայնանոցներ էին շինում. (Եղիշէ. Գ. գլ.): Ըստ Եղիշէի վանքերում գտնւում էին վկայարաններ, որտեղ և երէցները պատարագ էին անում. նրանց կեանքը այսպէս է նկարագրում. «Որոնք, առանց կանանց հետ միաբանութիւն կազմելու, զանազան ազգերից մի տեղ ժողովուելով, բնակւում են երկ-երկու, երեք-երեք, կամ աւելի շատերը միասին, ինչպէս իրանց հայրական գաւառներում: Շինում են

միմիանցից բաժանուած մանր խուցեր փոքր և բաւականաչափ հաստ պատերով՝ ցրտից և արեգակից պահպանելու համար. բաւականանում էին խոտերէն անկողիններով. ամառուայ վերարկուներ և ձմեռուայ երկայնաթև ծածկոցներ էին գործ ածում, հագնում էին նմանապէս երկայն փիլոններ. նրանք անդադար պաշտամունքի մէջ շրջան կապած՝ կարգով կանգնում են և զուարթ ոգով հոգևոր երգեր են ասում ամենքի հօր Աստուծուն։ Նրանք կանգնում են միմեանց հանդէպ աչքերը ներքև խոնարհեցրած նայում են իրանց ոտի մատներին, կարծես թէ ամենքը դէպի մի կէտ ուղղելով իրանց հայեացքը, աչ ձեռքը ծնօթի վրայ դրած, իսկ ձախը կուրծքի վրայ, ես կարծում եմ որ այս բանը նրանք սովորել են բնական հայրերից». Եղիշէ 248 եր. «Նրանց կերակուրը ցամաք հաց է և վայրենի բանջար, ... և խմածը խստակ ջուր, որ անձրևի կաթիլներից են ժողովում փոսերի մէջ ... ամբողջ ցերեկը միաբան ծոմ պահելով սպասում են մինչև արեգակի մայր մտնելը,... ամբողջ օրը տօթում են, երգում են մինչև երեկոյեան ժամը...»։ Կուսանոցների համար ասում է Բիւզանդ—192 երեսում, «Ներսէս Մեծը (Ներսէս Մեծը) բոլոր գաւառներում այս կուսաստաններըը, որ կուսան և հաւատացեալ եղողները միանգամայն այնտեղ ժողովուին պաս պահելու և աղօթելու և կերակրուելու .... այս բանները հրամայում էր Պապ թագաւորը աւերել, և ... կուսաններին պիղծ խառնակութեան մէջ ձգել». «Այս Գինդը Տարօն գաւառից էր, մեծն Դանիէլի աշակերտ էր եղել, իսկ նրանից յետոյ զլուխ աբեզայից, և վարդապետ միանձանց, և առաջնորդ մենակեցաց, և վերակացու վանորէից, և ուսուցիչ ամենայն անապատաւորաց և տեսուչ ամենեցուն .... միահանդերձք, բոկագնացք, զգաստացեալ խոտաճարակք, ընտաբուտք արմատակերք, զօրէն զաղանաց 'ի լերինս շրջէին, լեշկամշկօք և մորթիօք ալճենեօք, նեղեալք, տառապեալք և տարակուսեալք, յանապատի մոլորեալք, 'ի ցուրտ և 'ի տօթ, 'ի քաղց և 'ի ծարաւ վասն սիրոյն. Աստուծոյ». 230 երես։ Ըստ Եղիշէի

250 երես, «գինի կամ այլ այդպիսի բաներ բոլորովին չեն գտնուում նրանց սուրբ միաբանոցների մէջ. ամբողջ օրը կարդում են, շատերը վարդապետում են, բարի խրատներ են տալիս ժողովրդին Ս. Գրքերի վկայութիւններով»։ Թէ այս խիստ կանոններով չկառավարուողներ էլ կային, ապացոյց է Փարպեցու թղթից հետևեալը. «Կերակուրները եփել սորված չէի, որ ձկան աղիքներով և հաւի փորոտիքներով այդ ուտողների համար լաւ լաւ կերակուրներ պատրաստէի, և թերևս այդպիսի բաներով կարողանայի մարդու հաճելի լինել»։

Լուսաւորչի առաջին վկայարանն էր Ս. Հռիփսիմեանց, Դալիանեանց, ձեռնադրութիւնից յետոյ Մշոյ Ս. Կարապետի վկայարանը. թէև Ստեփաննոս Օրբելեանը համարում է Թանահատի վանքի սկզբնաւորութիւնը 112 թուականից։ Ըստ խորենացու Ներսէս Մեծի հրամանով Խադդը շինեց բոլոր գիւղերում վանքեր, «զի լինիցի օտարանոցք և տեղի սննդեան սրբոց և ծերոց և անուղևորաց տածումն» (Բ. գլ.)։ Զ. դարուց սկսած արդէն չիշւում են վանքեր, որոնց հետ կից կար և բարեգործական հիմնարկութիւններ. Սիւնիքում Զ. դարում Գիւտայ վանք ուրկանոցով. նոյն դարում Անաստաս Կաթուղիկոս շինեց Ակռուռ մօտ հիւրանոց և աղքատանոց. Ժ. դարում Հոռոմոսի վանքը կոչւում էր «Ասպնջականոց». Սանահնի վանքը, Նարեկայ վանքը, Դերջանի Խլաձորի վանքը, Անձևացեայց Հոգեաց վանքը ունէին օտարանոցներ, հիւրանոցներ և վերջինս կուսանոց։ 9-րդ դարից սկսած մինչև 13-րդ դարը հռչակուեցին իրանց վանականներով, կրօնաւորներով, Սիւնեաց Տաթևու վանքը, Թանահատի վանքը, Գեղարքունեաց Մաքենոցաց վանքը, Սևանայ, Աղթամարայ, խոտակերից վանքերը, Արշարունեաց Կամրջաձորի վանքը, Շիրակի կարմիր վանքը, Հաւիճոյ վանք Շիրակում, Սանահին և Հաղբատայ վանքերը, Մարաշու վանքը Փոքր-Հայքում, Սև լեառն Մարաշում, Գետկայ վանք, Դրազարկի վանք Կիլիկիայում, Գանձասարի վանք Արցախում, Բջնոյ և Արտազու վանքերը (Տես Հայկական Հին—Պլրուքիւն)։

Հայոց վանքերը մտցրին իրանց մէջ այն կարգ կանոնը, որը սահմանել էր Լուսաւորիչ, Մեծն Ներսէս և Սահակ, այդ կանոնները արդէն մտած էին Փոքր Հայքի վանքերում Բարսեղ մեծից սկսած: Ընդհանուր վանականութիւնը ունենալով բոլորովին առանձնացած կեանք և առանձին կանոններ, կապ չունէր հոգևորականութեան հետ, չէր ենթարկւում եկեղեցականութեան վերաբերեալ կանոններին, նրանք մինչև իսկ ենթարկւում էին աշխարհականների պատիժներին, որովհետև չունէին ոչ մի եկեղեցական աստիճան: Նրանք մինչև իսկ եկեղեցի չունէին, վանքից գնում էին մօտիկ եղող եկեղեցիները և մասնակցում ժամերգութեան և հաղորդութիւն առնում: Իւրաքանչիւր վանք, կամ մի քանի վանքեր միասին պահում էին առանձին քահանայ, շինում էին վանականները վանքի մօտ եկեղեցի, ուր մշտական վանքի երէցը կամ վանաց երէցը ժամերգութիւն էր կատարում և խորհուրդները հաղորդում նրանց: Սոզոմենի վկայութեամբ (Բ. գլ. 24) վանքերը հեռու գտնուելով քաղաքներից և եկեղեցիներից, քաղաքային վարչութիւնները թոյլ տուեցին իրանց համար եկեղեցիներ շինել առանձին քահանայով, կղերով: Կամաց կամաց հոգևոր իշխանութիւնն գտնելով դրանց վարքն ու բարքը խիստ կրօնական, ընդունելով նրանց յինարան եկեղեցու, թոյլ տուաւ վանականներից ընտրել քահանայացու և տալ նրան եկեղեցական ձեռնադրութիւն. մեծ մասամբ վանահայրը լինում էր քահանայ: Վանական կեանքը լինելով օրինակելի դպրոց քրիստոնէական կրօնի, շատ անգամ երբ հոգևորական անձանց պակասութիւն էին զգում, վանականներից հրաւիրում էին կղերի մէջ մտնելու համար: Մինչև իսկ եպիսկոպոսական աստիճանի համար յարմար պատրաստ անձինք չունենալու դէպքում ընտրում էին վանականներից. իսկ յետոյ արգէն գերակշռութիւն էին տալիս վանականին եպիսկոպոսական աստիճանի համար քան քահանաներին: Յուստինիանոսի նովելլաները բացարձակ առաւելութիւն էին տալիս ընտրութեան գործում վանականներին, որոնք երբև ոչ ընտանիքատէր մարդիկ յարմարաւոր էին համարւում իրանց ամբողջ կեանքը նուիրել եկեղեցուն: Վանականներին նշանակում էին զանազան բարեգործական, հոգևոր, կրթական հաստատութիւններում ուսուցիչ, վերակացու, կառավարիչ: Վանահայրերը մասնակցում էին տեղական և տիեզերական ժողովներում, ուր ուզարկում էին իրանց պատգամաւորներին, որոնք հաւասար ձայնով ժողովականների հետ մասնակցում էին օրէնսդրական և դատավարական գործերին: Վանքերը կամաց կամաց այդպիսի մասնակցութեան շնորհիւ գարձան համարեա եկեղեցական հաստատութիւններ, վանքը գարձաւ եկեղեցի օծմամբ և վանականութիւնը ենթարկուեց առաջնորդի հսկողութեան: Մեծն Ներսէսի ժամանակ սարկաւագապետ Խադն էր գլխաւոր հսկողը կաթուղիկոսի կողմից ոչ միայն բոլոր վանքերի, այլ և բարեգործական հաստատութիւնների: Թէ ինչ կանոններով և կարգերով էին կառավարւում վանքերը և վանականները այդ կտեսնենք յաջորդ մասում, վանական կառավարութեան վրայ խօսելիս: Վանքերը մեր մէջ մեծ գարկ ստացան 10, 11, 12-րդ գարերում, ուր խմբուած էին բազմաթիւ վանականներ ունենալով, 200, 300—500 անդամներ, որոնք պարապում էին գրականութեամբ, արհեստներով, երաժշտութեամբ, ուսուցչութեամբ: Թէ ինչպիսի կացութիւն ունէին այդ գարերի հայոց վանքերը, այդ լաւ երեւում է 13-րդ գարու պատմագիր Ստեփաննոս Օրբելեանի նկարագրութիւնից. «Եւ էր վանքն (Երիցս վանաց) այն տեղի գեղեցիկ . . . . և ի ներքին պարսպին խցկունք և միանձունք թուով քառասուն՝ մշտնջենաւորք, խարազնագեստք, լուռք, որք իբր գկանխեղանս մշտավառս և անշէջս յիւրաքանչիւր խղի հանապազ դգնութեամբ վառեալք լինէին լոցով շնորհաց Հոգւոյն...»: Իսկ Թանահատի վանքի վերաբերմամբ ասում է. «Եւ էին սահմանաւորք, մշտապաշտօնք, հեռացեալք յամենայն փափուկ կերակրոց,... հացիւ և լոկ ջրով վճարէին զպէտս իւրեանց՝ և գայն յաւուրց միանգամ ընդ երեկս, լոկիք, հեզաշարժք,. . . բանջարօք և ընտովք շատանային, վասն որոյ Թանահատք կոչեցան...»:

Վանքերը կամաց կամաց իրանց նախկին ոյժը կորցրին առաջուայ դրութիւնը և կացութիւնը փոխեցին, արդէն 19-րդ դարում մնում էին միայն նախնեաց բեկորները. քիչ ու շատ հին վանքերի նմանութիւնը պահել էր Սևանայ վանքը, Վանայ Ծովի վանքերը, Ս. Կարապետինը, Երուսաղէմի վանքը և այլն:

Սուրբ Էջմիածինը վերջին դարումս դարձաւ դատական և վարչական կետրոն, ուր միաբանութիւնը արդէն չունի այն նախկին վանական գոյնը: Գէորգ—Գ.-ի օրով բացուեց Ձեմարանը, բոլոր Հայերի համար դարձաւ կրթական—կրօնական կետրոն, և որից սփռւում են կրթուած հոգևորականներ՝ աշխարհիկ թէ կուսակրօն՝ թեմերը և գաւառները: Տաճկահայաստանում այդպիսի կրթական կետրոններ կազմում են Արմաշու վանքը, մանաւանդ Օրմանեանի օրով (այժմ Պօլսոյ պատրիարք) և Ս. Երուսաղէմը, որոնք տալիս են Տաճկահայ թեմերին կրթուած հոգևորականներ: Նախկին վանական կազմի միաբանութիւններ ունենք այժմ Ռուսահայաստանում Սևանայ վանքը, Տաճկահայաստանում Վանայ Ծովի և Մշու ու Երուսաղէմի վանքը:

Այդ վանքերի այժմեայ դրութեան և կառավարութեան, տնտեսականի մասին կխօսենք Գ. գրքում:

Կաւսանաց վանքերը բոլորովին քչացել են, Ռուսահայոց մէջ մնացել է Շուշու կուսանաց անապատը 5—7 կոյսերով և Ցխիխինը, որոնք նախկին վանքերի նմանութիւնը չունեն. թէ Տաճկահայոց մի քանի կուսանոցները թէ Ռուսահայոցը և թէ երկուսի վանականութիւնը ժամանակի ոգու համապատասխան նշանակութիւնը չունենալով, բոլորովին կորցրել են բարոյական—կրօնական ազդեցութիւնը և ենթարկուել են ոչնչանալուն. ժամանակը պահանջում է որ վանքերը և կուսանոցները կամ լինեն Վենեակի և Վիեննայի մենաստանների նման ուսման և գրականութեան կետրոն, կամ Էջմիածնի նման ուսումնարանական—վարչական կետրոն, այլապէս վանքեր՝ լի պորտաբոյծ և ծոյլ վանականներով տեղի պիտի տան կամ չքացման, կամ կրօնական—բարոյականութեան հակառակ ազդեցութեան:

Բ. ԵԿԵՂԵՑՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ.

Եկեղեցու ընդհանուր կառավարութեան վրայ մանրամասն հայեացք ձգելու համար, յարմար է բաժանել մի քանի մասերի, որոնց վրայ և առանձնակի կխօսուի. ա. վարչական կառավարութիւն. բ. տնտեսական կառավարութիւն. գ. օրէնսդրութիւն. դ. դատավարութիւն. ե. պահպանողութիւն:

Ը. ԵԿԵՂԵՑՈՒ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ.

1) *Ընդհանուր եկեղեցական կառավարութիւնը.*

Ընդհանուր եկեղեցու միանման և անդորր կառավարութիւնը տևեց մինչև այն ժամանակ, երբ բոլոր եկեղեցիները կառավարում էին մի ոգով, երբ դաւանաբանական, ծիսական վէճեր չէին մտել մէջտեղ, այն է մինչև Ե. դար. 451-ին, երբ Հայոց եկեղեցին բաժանուեց, նոյնպէս և ասիական եկեղեցիները, 9—10-րդ դարերում Հռոմի եկեղեցին բաժանուեց և ստացուեցին զանազան, անկախ, միմիանց հետ կապ չունեցող եկեղեցիներ: Տեսնենք ընդհանուր եկեղեցին մինչև բաժանուիլը ինչպէս էր կառավարում: («Правос. собесѣдн. 1858. управленіе вселенской христ. церкви»):

Նախկին եկեղեցու կառավարութեան մէջ երևում էր ընդհանուր մի պատկեր, այն է՝ եղբայրական միութիւն, քրիստոնէական ոգու համաձայն սերտ կապ, առանց միմեանց ստորագրելու ձգտումով, առանց ճնշելու ցանկութեամբ. բազմաթիւ, բազմատարր, տարբեր լեզուներով ազգերի եկեղեցիները այնքան սերտ և այնքան միմեանցից անկախ կառավարում էին, որ այժմեայ դրութեան ժամանակ մինչև իսկ երևակայելի չէ: Լուսաւորչի բերած եպիսկոպոսներ, վարդապետներ, վանականներ, բոլորն էլ համարեա օտարներ էին. կրօնական հայեացքների միութիւնը թոյլ չէր տալիս բաժանումն առաջանալ այլատարը ցեղերի մէջ, ոչ մի եկեղեցի ոտնձգութիւններ չէր անում միւսին իրան ենթարկելու համար, բոլոր թեմերը, եպիսկոպոսները միմեանց հաւասար

էին իրանց համարում: Հռոմէական խիստ միապետական կազմը երբ առաջացաւ, այն ժամանակ բոլորովին ուրիշ ուղղութիւն ստացաւ եկեղեցական վարչական ձևը. ամեն բան ստորադրուեց պապին, միահեծան իշխանաւորին, որը ձգտում է կլանել բոլոր եկեղեցիները, զրկելով նրանց անկախութիւնից: Բողոքական եկեղեցին ընկաւ ուրիշ ծայրալեղութեան մէջ, եկեղեցու վերաբերմամբ ինքնուրոյն իրաւունք չի ընդունում, նա կամ միանում է քաղաքացիական կառավարութեան հետ և ստորադրում նրան, կամ եկեղեցուն է յատկացնում ուսումն և քահանայագործութիւնը, չընդունելով եկեղեցու մէջ նուիրապետական տարբեր աստիճանական սկզբունքը, ուստի և չի ընդունում եկեղեցական վարչական կառավարութիւն բառի բուն նշանակութեամբ: Մեր մէջ մնաց նախկին եկեղեցու ոգին իւր ժողովրդական —ընտրական սկզբունքներով. նոյնպէս և յունաց եկեղեցին, որը պապի անսխալականութեան ձգտումներով չէ առաջնորդուում, որքան ժողովական --ընտրական սկզբունքներով:

Հին եկեղեցու ընդհանուր միութեան հիմք կազմում էր Աւետարանի ոգին, առաքեալների սահմանած ժողովական սկզբունքով կառավարութիւնը. Քրիստոս տուաւ իւր աշակերտներին հաւասար իրաւունքներ կառավարելու բոլոր աշխարհի եկեղեցիները մի սկզբունքով, այդ երեւում է աւետարանիչների վկայութիւններից (Մատթ. ԺՀ. 17—20, 28): Առաքեալները անմիջապէս կառավարութեան ձև որոշեցին, այն է խորհրդով և ժողովով. բոլոր խնդիրները վճռում էին այդ սկզբունքով (Գործ. Ա. 15): Առաքեալների յաջորդները վարուեցին այնպէս, ինչպէս որ պատահել էր նրանց տեսնել առաքեալների ժամանակ, այն է խորհրդակցութեամբ և ընդհանուր համաձայնութեամբ, գլխաւոր սկզբունք ընտրելով հաւատք և սէր, Քրիստոսին մի գլուխ ճանաչելու մէջ լինին մէկ, համաձայն և սիրով, իսկ մանրամասնութիւնների մէջ՝ նայելով տեղական պայմաններին՝ համակերպուել հանգամանքների հետ՝ չխզելով ընդհանրութեան հետ միութեան կապը: Հին ձևը ունէր համաշխարհային ընաւորութիւն, ունէր ընդհանուր մարդկային գոյն և ոչ տեղական ազգայնական, այդ եկեղեցու համար կար մի անդամ, այն էր հաւատացեալ մարդ, ինչ ազգութեան և ինչ դասակարգի պատկանելիս էլ լինէր: Իրինոսը (+202) վկայում է. «Եկեղեցու ներկայացուցիչները, դիտելով բոլոր տիեզերքը, հաստատ պահում են առաքելական աւանդութիւնը և ցոյց են տալիս մեզ, որ բոլորը ունին միևնոյն հաւատը, բոլորը դաւանում են միևնոյն Հօրը, և ընդունում են Որդու մարդեղութեան միևնոյն նպատակը և միևնոյն հոգեկան շնորհքները. ղեկավարում են միևնոյն կանոններով և միևնոյն օրէնքներով, թէ եկեղեցու կառավարութեան և թէ աստիճանակարգութեան մէջ»: Կիպրիանոսը ասում է. «Բոլոր առաքեալները շնորհուած են հաւասար պատուով և իշխանութեամբ, բոլորն էլ Քրիստոսի հօտը հովուող հովիւներն են: Այդ միութիւնը մենք պիտի հաստատ պահենք և պաշտպանենք, մանաւանդ եպիսկոպոսները, եկեղեցում գլխաւորութիւն անողները, որովհետև եպիսկոպոսութիւնն էլ մի է, որի մէջ ամէն մէկս իւր մասն ունի . . . Քրիստոս հիմնեց մի եկեղեցի, թէև բաժանուեց իւր մասերով բոլոր աշխարհի չորս կողմերում, մի եպիսկոպոսութեամբ, կազմուած միանման մտածող բազմաթիւ եպիսկոպոսներից... ընդհանրական եկեղեցին մի է, անբաժան է և անքակտելի և դրա համար պիտի միացած լինի բոլոր նուիրապետների փոխադարձ կապով». (Նոյն Пр. Соб. 1858 г.): Նոյնպիսի վկայութիւն տալիս է Իգնատիոս Աստուածակիրը, «Մեր Տէր Յիսուս Քրիստոսի մարմինը մէկ, դրա համար մի պիտի լինի և աշխարհի մէջ սեղանը (եկեղեցին) և ամեն տեղ մի եպիսկոպոս»: Այդ միութիւնը, ճշմարիտ որ, կար Հին եկեղեցում և ամենագլխաւոր օրինակը և առաջնորդը եղան իրանք առաքեալները, որոնք թէև լիագօր կառավարիչներ էին, բայց առանց խորհրդակցութեան և ընդհանուր վճռի ոչինչ չէին անում (Գործ. Առաք.), ոչ միայն դաւանաբանական, ծիսական, այլ և եպիսկոպոս ընտրելու խնդրում: Միութեան երկրորդ կապը պահպանւում էր իւրաքանչիւր եպիսկոպոսի

գրած հաւատոյ դաւանանքը հարևան եպիսկոպոսներէ՝ իրանց ընտրութեան ժամանակ, ցոյց տալու համար, որ իրանք՝ նորընտրեալները դաւանում են այն, ինչ որ ընդհանուր եկեղեցին է դաւանում. այդպիսի վկայութիւն է տալիս Երուսաղէմի պատրիարք Սոփրոնը, որը իւր ձեռնագրութենից յետոյ գրեց Պօլսոյ Սերգէյ եպիսկոպոսին. «Կայ սուրբ եկեղեցու մէջ հին առաքելական աւանդութիւն, որի հիմամբ քահանայապետութեան աստիճան ստացողները պարտաւորւում են աւագ եպիսկոպոսներին անկեղծօրէն հաղորդել, ինչպէս են նրանք դաւանում և ինչպէս են պահում հաւատը: Այդ աւանդութիւնը իւր սկիզբը վերցրել է Պօղոսից . . .», որը գնում էր ամեն տեղ, քարոզում, ամրապնդում հաւատքի մէջ, «հետևելով այդպիսի սովորութեան և հների օրինակին հետևելը համարելով ամենալաւ օրէնք, ես համաձակեցի գրաւոր հաղորդել, թէ ինչպէս եմ հաւատս պահում և ուղարկել Ձեզ. . . Ձեր բարեհայեցողութեան»: Երբորդ կապը միութեան՝ պահւում էր, մանաւանդ աղանդաւորների դէմ կռուելու միջոցներին, գիւղեր, քաղաքներ շրջելով և անձնական օրինակով, քարոզով ամրապնդելով քրիստոնէական կրօնի մէջ: Աթանասը Արիոսի դէմ կռուելու ժամանակ շրջում էր ամեն տեղ, եպիսկոպոսներ բազմացնում, վիճում աղանդաւորների հետ և ուղղափառութիւնը պաշտպանելով՝ միութիւնը ամրապնդում. նոյնպէս և Սամոսատի Եւսեբիոսը, ձեռնադրութիւններ կատարելով՝ շրջում էր Ասորիքը, Փիւնիկէն, Պաղեստինը, Կիլիկիան, քարոզում, խօսում, գրում և ուղիղ հաւատը բացատրում: Միութեան չորրորդ յենակէտներից մէկն էր այն, որ մէկ եկեղեցու կանոնը և դրածը ընդունում էր միւս եկեղեցուց առանց հակառակութեան, այդ դրդում էր եղբայրսիրութիւնը և փոխադարձ վստահութիւնը: Օրինակ, մէկ եկեղեցու մկրտուածը ընդունում էր միւսում իբրև հաւատացեալ, հաղորդւում էր բոլորի հետ ամեն տեղ, հիւրասիրւում էր և ապաստարան գտնում. և ընդհակառակը՝ մէկ եկեղեցուց բանադրուածը չէր ընդունում և միւսներից (Ա.-Առ. 12, 13,

16, 32, Նիկ. 5. Ա. գիրք—92, 93, 150): Հինգերորդ՝ եթէ պատահում էր որ մէկն ու մէկն առաքելական աւանդութիւններից շեղւում էր, իսկոյն միւսները կանչում էին, խօսքով, համոզելով, կամ փոքր ժողովներով ճանապարհ էին բերում և միութիւնը հաստատուն պահում. օրինակ, պասերի, տօների, քանի օր և որ օրերը կատարելու վերաբերութեամբ, ծնկաչոք աղօթելու և այլն, և այլն. (Ա.-Առ. 64, Նիկ. 20. Ա. գիրք—108, 159): Միութեան վեցերորդ կէտը համարում էին ժողովները, որ հաւաքւում էին զանազան երկրներից և գաւառներից մարդիկ զանազան սովորութիւններով և տարբեր հայեացքներով, շփւում էին միմեանց հետ իրանց կարծիքների, մտքերի, զգացումների հաղորդելով և միասին վճռելով որոշում էին ընդհանուր կանոններ, որոնց սկիզբ հնազանդէին և գործադրէին իւրաքանչիւրը իւր թեմում (Ա.-Առ. 20, 37, Նիկ. 5, Պօլս. 2, Լաւոդ. 40, Ա. գիրք—100, 150, 166, 223 երեսներ):

Ժողովները երկու տեսակ էին՝ տիեզերական և տեղական: Առաջին տեսակ ժողովներն էին այնպիսիները, որտեղ մասնակցում էին բոլոր քրիստոնեայ ազգերը, տեղական եկեղեցիները, որոնք վճռում էին ընդհանուր հարցեր, խնդիրներ, և որոնց վճիռները պարտաւորական էր ժողովում մասնակցողների համար: Տեղական կոչւում էին այն ժողովները, որտեղ մասնակցում էին որոշ գաւառի, որոշ աշխարհի եպիսկոպոսներ տեղական բնաւորութիւն ունեցող հարցեր վճռելու համար: Այդ երկու տեսակ ժողովների նշանակութիւնը չէր նսեմանում, եթէ ժողովականների թիւը չէր համապատասխանում ժողովի բնաւորութեան, օրինակ եթէ տեղական ժողովում աւելի շատ անդամ եղած լինէր քան տիեզերականում, ինչպէս օրինակ Ք. տիեզերական ժողովում 150 անդամ էր, իսկ Կարթագենի ժողովում 300, որովհետև տիեզերական այդ ժողովում թէև քիչ անդամ էր մասնակցում քան Կարթագենում, բայց այնտեղ մասնակցում էին բոլոր քրիստոնեայ աշխարհի ներկայացուցիչները, որոնց վճիռը պարտաւորական եղաւ բոլոր

ժողովականների և նրանց հետ բոլոր քրիստոնեայ երկրների համար, իսկ Կարթագենի այդ ժողովի, ինչպէս և տեղական ժողովներինը պարտաւորական էր միայն Կարթագենի թեմի և միւս տեղական թեմերի համար: Տիեզերական ժողովները վճռում էին. 1) եկեղեցու դաւանաբանական խնդիրները հանգանակի կամ կանոնների անունով. որպիսի իրաւունքը Եփեսոսի 7 — կանոնով (Ա. գիրք. 176—177) յատկացնում է միմիայն տիեզերական ժողովին: 2) Քննել, ստուգել և հաստատել եկեղեցու աւանդութիւնը. 3) Հին ժողովների սահմանադրութիւնը նայել և հաստատել կամ փոփոխել: 4) Վերջնականապէս քննել նոր ուսմունք եկեղեցու մէջ (Պօլ. 1, Եփես. 1. Ա. գիրք—164, 175): 5) Որոշել եկեղեցու կառավարութեան ձևը և մանաւանդ եկեղեցիների կառավարութիւնը, և սահմանափակել կամ լրացնել նրանց իրաւունքները. (Նիկ. 6, 7. Պօլ. 2, 3. Եփես. 8. Ա. գ.—151, 175, 177, 168): 6) Եկեղեցու նուիրապետութեան և իրաւունքները և կարգը՝ զանազան աստիճաններով հաստատել (Նիկ. 4, 6. (151): 8) Ընդհանուր կարգեր և կանոններ սահմանել բոլոր եկեղեցիներին վերաբերեալ: Տեղական—ազգային ժողովները համարեա նոյն իրաւունքներն էին վայելում, ինչ որ տիեզերականը, միայն իրանց աշխարհի համար, մինչև իսկ դաւանաբանական հարցերի վճռման մէջ. առաջի օրինակը տուին հայերը 507 թուին Բաբգէն կաթուղիկոսի օրով, վճռելով մերժել քաղկեդոնականութիւնը և Նիկիոյ հանգանակից չշեղուել. (Ա. գիրք—356 երես):

Ժողովներ կազմելու մէջ նախաձեռնութիւնը պատկանում էր իրան եկեղեցուն քաղաքացիական իշխանութեան օժանդակութեամբ: Եկեղեցին գործում է իր իրաւունքով ժողովի ներքին մասի վերաբերմամբ, անդամների կարծիքներով, որոշումներով, վճիռներով: Քաղաքացիական իշխանութիւնը մասնակցում էր՝ ժողովի արտաքին կարգերի վրայ հսկելով, ժողովի հրաւիրագրերը հեռու տեղեր ուղարկելով, կարգը պահելով, վճիռները ի կատար ածելով: Ժողով կազմելու, անկախ կերպով վճիռներ կայացնելու և

եկեղեցական կանոններով սահմանադրութիւն յօրինելու, անփոփոխ և անմիջական իրաւունքը պատկանում է հոգևոր կազմին—հոգևոր իշխանութեան. (Մատթ. ժը. Գործ. ժե. Եփես. 1 կանոն):

Տիեզերական ժողովներ կազմելու նախնական պատրաստութիւնները այսպէս էին լինում. եկեղեցիների հովիւները՝ փոխադարձ գրագրութեան մէջ էին մտնում միմեանց հետ զանազան խնդիրների վերաբերմամբ, և երբ Պօլսի, Ալէքսանդրիայի, Անտիոքի, Երուսաղէմի Հռոմի եպիսկոպոսները ձայնացում էին միմեանց, որոշում էին կայացնում ժողով անելու և իրանց ձայնը հաղորդում էին Յունաց քրիստոնեայ կայսրներին, խնդրելով օգնել իրանց: Առաջին ժողովը եղաւ Կոստանդիանոս կայսեր օգնութեամբ, երկրորդը՝ Թէոդոսի, իսկ երրորդը՝ Թէոդոս բ.-ի ժամանակ: Տեղական կամ ազգային ժողովները լինում էին աւագ եպիսկոպոսների, կաթուղիկոսի, եպիսկոպոսաց և իշխանաց հրաւիրմամբ՝ մասնաւորապէս Հայոց մէջ. (Ա.նտ. 9, Ա. գիրք—212, 215 երես):

Ժողովներին մասնակցելու իրաւունք ունէին, եպիսկոպոսներ իբրև եկեղեցու ներկայացուցիչներ, վանահայրեր, վանքի կողմից, քահանաներից և երբեմն սարկաւագներից, բայց գլխաւոր ձայնը և իրաւունքը պատկանում էր եպիսկոպոսներին. ժողովի արձանագրութիւններից երևում է, որ չիշւում են եպիսկոպոսների անուններ, քահանայից և աշխարհականներինը հազուագիւտ. Նիկիայի ժողովում չիշւում է 318 հայրապետ, Պօլսում 150. օտար տեղական ժողովներում նոյնպէս իրաւունքը եպիսկոպոսներինն էր, բացառութիւն կազմում էին Հայոց ժողովները, որտեղ եպիսկոպոսների հետ միաձայն և համախորհուրդ նստած էին Հայոց իշխանները և բոլոր վճիռներում՝ թէ դաւանաբանական և թէ կարգադրական երևում են իշխանների ստորագրութիւններ. այս մասին տես հետևեալ գլուխը: Տիեզերական ժողովներում բացի եպիսկոպոսներից, միւս հոգևորական դասակարգերը ունկնդիր էին, կամ կարծիքներ էին յայտնում առանց ձայնի իրաւունքի (Աթանաս—Արիոս). լինում էին երբեմն

գիտուններ, իրաւագէտներ—խնդիրը պարզաբանելու համար։ Երբեմն ներկայ էին լինում կայսրները, ո՛չ իբրև նախագահ, այլ հսկող և ունկնդիր, դրա համար և շատ անգամ չէին ստորագրում, իսկ եթէ ստորագրում էին, միմիայն հաստատողական ոյժ տալու համար։ Կոստանդիանոսը ասում էր, «Աստուած ձեզ նշանակել է հովիւ եկեղեցուն, ուստի ամեն բան ինչ որ վերաբերում է Քրիստոսի հաւատին, հարկաւոր է ձեզ կարգադրել»։ Յուստինիանոսը 135 նովելլայով հրամայեց քաղաքացիական օրէնքի ոյժ տալով մինչև իւր ժամանակը եղած տիեզերական ժողովների կանոններին, այդ ժողովների դաւանանքը ընդունել իբրև Աստուծոյ խօսք (Прав. Собес. 1858 г.):

2) ԸՆԴՀԱՆՈՒՐ (ՏԵՂԱԿԱՆ) ԵԿԵՂԵՑՒՈՅ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆՔ։

Ա.Դեռևք ազգային—տեղական եկեղեցիները իրաւունք ունէին գոյութիւն ունենալու անկախ տիեզերականից թէ ո՛չ։

Տեղական եկեղեցիների հիմքը դրին իրանք առաքեալները, որոնք ցրուելով ամեն կողմ, ամեն տեղ հաստատեցին առանձին կազմով եկեղեցիներ. երկրորդ՝ Քրիստոսի խօսքը, թէ որտեղ իմ անունով ժողովուած են մարդիկ, ես այնտեղ եմ (Մատթ. ժը—19—20). և այս ըղխում է այն հիմունքից որ բոլոր հաւատացեալները մի են ի Քրիստոս, որտեղ կամենան լինեն, ինչ ազգից և ցեղից էլ լինեն։

Հէնց առաքեալների ժամանակ տեղական եկեղեցիները անկախ կառավարութիւն ունէին առանձին կառավարիչներով, որոնք գործում և քարոզում էին անկախ՝ ի հարկէ ընդհանուր եկեղեցու ոգով.(Յով. ժե. Գաղ. Բ.). Պետրոսը քարոզում և կառավարում էր հրէա քրիստոնեաներին, Պօղոսը հեթանոս քրիստոնեաներին, Յովհաննէս Փոքը—Ասիայի ժողովրդոց, որոնք և Տիմոթէոսին և Տիտոսին լիազօրներ նշանակեցին։ Նիկիայի և Պօլսոյ տիեզերական ժողովները իրանց հեղինակութեամբ՝ կանոններով հաստատեցին տեղա-

կան եկեղեցիների գոյութեան իրաւունքը և մինչև իսկ ցոյց տուին որոնց պէտք է ըստ աւագութեան առաւելութիւն տալ (Ա. գիրք 151, 166)։ Տեղական եկեղեցիների անկախութիւնը նրա մէջ էր, որ առաջին՝ եպիսկոպոսական ձեռնադրութիւնը լինում էր այդ շրջանում, տեղական եկեղեցու միջոցով. երկրորդ՝ անկախ նուիրապետական աստիճան և կարգ ունէին (Ա. գ. 177 երես)։ Երրորդ՝ տեղական ծէսեր և սովորութիւններ էին մտցրած եկեղեցու մէջ, որոնք միւսի մէջ չկային, կամ տարբեր էին, օրինակ, զատկի կատարման օրուայ մասին, մկրտութեան և կրկնամկրտութեան, շաբաթ օրուայ պասի նկատմամբ վէճեր ծագեցին և փոխադարձ զիջմամբ վերջացան. (Իրինոսի, Եւսեբէոսի և Կիպրիանոսի, Ամբրոսիոսի և Օգոստինոսի ժամանակներում)։ Չորրորդ՝ նուիրապետական առաւելութիւնները և արտօնութիւնները, հիմնուած հնութեան վրայ (Նիկ. 7)։ Նոյն առաւելութիւնները հիմնուած քաղաքական, եկեղեցական նշանակութեան վրայ (Երուսաղէմ, Հռոմ, Պօլիս)։ Հինգերորդ՝ օրէնսդրական և դատավարական անկախ իրաւունքներ իրանց շրջաններում (Պօլ. 2. Ա. գ.—166)։

Առաջի անկախ եկեղեցին հիմնուեց Երուսաղէմում, ուր իբրև կեդրոն ժողովուում էին առաքեալները խորհրդակցելու և հրահանգներ տալու, իսկ դրսի շրջակայ եկեղեցիները օգնում էին նիւթականապէս կեդրոնին հոգալով նրանց պէտքերը (Գործք—ժա. ժե.)։ Միւս եկեղեցիները՝ Երուսաղէմից դուրս կազմում էին տեղական կառավարութիւններ առաքեալների ձեռքով և նրանց հովանաւորութեան տակ, Կորնթացոց, Եփեսացոց, Գաղատացոց, Մակեդոնացոց և այլն, հռոմէական իշխանութեան քաղաքացիական ստորաբաժանման հիմամբ։ Մեծ շրջանը կազմում էին Ասիական եկեղեցիները (Կորն. 16, 19.). գաւառի գլխաւոր քաղաքում նստում էր եպիսկոպոսը, որի անունով, կամ քաղաքի անունով կրում էին առաքելական թղթերը, Եփեսոս, Զմիւռնիա, Լաւոդիկեա, Թեսաղոնիկիա, Կորնթոս։ Շրջանների կառավարութիւնը յանձնուում էր առաքեալներից նշանակուածներին, Ասիայում Տիմոթէո-

սին, Կրետէում Տիտոսին։ Տերտուղիանոսը ասում է. «Ջրջենք առաքելական եկեղեցիները, որտեղ մինչև այսօր դեռ ևս առաքելական ամբիոնները կան իրանց տեղերում և որտեղ կարդացւում են նրանց իսկական թղթերը։ Եթէ, օրինակ, Աքիայի մօտ ես ապրում, գնա Կորնթոս, եթէ Մակեդոնեայի մօտ ես, կըգտնես Փիլիպպում, Թեսաղոնիկէում. եթէ Ասիայում կը լինես, մտիր Եփեսոս, եթէ Իտալիայում ես, Հռոմ» —(Прав, Собесѣд. 1858)։ Գլխաւոր եպիսկոպոսները նստում էին երկրի կետրոնական քաղաքում, Ափրիկայինը նստում էր Կարթագենում, Եգիպտոսինը Աղէքսանդրիայում, Իտալիայինը Հռոմում, Գաղիայինը Լիոնում։ Եկեղեցու կազմակերպութիւնը աւելի որոշ ձևակերպութիւն ստացաւ Կոստանդին կայսեր ժամանակ, եկեղեցու բաժանումները զուգընթաց գնում էին քաղաքական բաժանման հետ։ Կոստանդինը բաժանեց 4 պրեֆեկտուրայի, արևելեան, Իլլիրեան, Իտալիա և Գաղղիա։ Արևելեանը բաժանւում էր հինգ շրջանի 1) Արևելեան, 2) Եգիպտական, 3) Ասիական, 4) Պոնտոսի և 5) Թրակիայի։ Արևելեանը բաժանւում էր 15 թեմի, գլխաւոր քաղաքն էր Անտիոք. Եգիպտոսը 6 թեմի, գլխաւոր քաղաքն էր Աղէքսանդրիա, Ասիան 10 թեմի, գլ. քաղ. Եփեսոս. Պոնտոսը 11 թեմի, Կ. Պոլիս քաղաքով։ Եպիսկոպոսական գլխաւոր աթոռներն էլ բաժանուեցին նոյն կարգով, նոյն քաղաքներում նստեցին գլխաւոր եպիսկոպոսները։

ՑԵՂԱԿԱՆ-ԸՆԴՀԱՆՈՒՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿԱՐԳԻՆ Է ՊԱՏԿԱՆՈՒՄ ՆԻ ՀՐՈՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ։

Նախկին Հայոց եկեղեցին՝ նախ քան ազգային՝ անկախ եկեղեցի դառնալը բառի բուն նշանակութեամբ, երկու շրջան է ունեցել, նախա-Լուսաւորչեան և նախա-Սահակեան։

Ը) ՆԱԽԱԼՈՒՍԱՒՈՐՉԵԱՆ ԵԿԵՂԵՑԻ

(Ագաթանգեղոս, Բիւզանդ, Խորենացի, Ստ. Օրբելեան, Մովսէս կաղանկատուացի, Գարագաշեան, Գաթըրճեան).

Քրիստոնէութիւնը քաղաքացիական կրօն դարձաւ Հայաստանում Լուսաւորչի և Տրդատ Թագաւորի ձեռքով 303 —թուին, ամենաառաջին ազգը, որ ամբողջութեամբ ընդունեց այդ կրօնը, է՝ Հայոց և առաջին պատիւն է վայելում բոլոր աշխարհում այդ տեսակէտից (Րօբերթսօն — անգլիացի, եկեղ. պատմ.)։

Մինչև 300 թիւը, մինչև լուսաւորչի յայտնութիւնը, կային բազմաթիւ քրիստոնեայ Հայեր Փոքր Հայքում, Կեսարիայի, Սեբաստիայի կողմերում, Ասորոց, Միջագետքի կից սահմաններում, Արարատում, Սիւնիքում, Գողթնեաց աշխարհում, Արտազի սահմաններում, Աղուանից երկրում։ Թէ ո՞րքան կլինէին քրիստոնեայ Հայերը, շատ դժուարէ որոշել, նա մանաւանդ ժամանակակից պատմիչները այդ մասին ոչինչ չեն յիշում, նոյն իսկ Ագաթանգեղոս, որ մանրամասն նկարագրում է Լուսաւորչի գործունէութիւնը, նրա երկար քարոզը, որտեղ մէկ մէկ յիշում է 12 առաքեալների և 72 աշակերտների՝ ի սփիւռս աշխարհի ցրուիլը, և ոչ մի խօսք չի արտասանում Թադէոսի և Բարդուղիմէոսի մասին, առաջինի Եդեսիա գալը և նրա արած գործերը, որոնք մանրամասնօրէն նկարագրել է Եւսեբիոսը, քարոզում յիշում է որ Յիսուսի աշակերտները ցրուեցին «ոմանք՝ ի Մարս, ոմանք՝ ի Պարթևս, ոմանք՝ ի Խուժաստան, ոմանք՝ ի Մեջագետս, ոմն՝ ի կողմանս Գամրաց, ոմն՝ ի Պոնտոս, ոմն յԱսիա, ոմն՝ ի Փռիւգիա, ոմն՝ ի Պամփիւլիա, ոմն յԵգիպտոս, ոմն յաշխարհն Հնդկաց, ոմն՝ ի կողմն Լիբէացւոց, ոմն Կիւրենացւոց, ոմն Դաղմատացւոց, ոմն Սպանիացւոց, ոմն Ազովտայ, ոմն Որակայ, ոմն Ղակոնիա, ոմն Կապադովկիա, Բիւթանիա ...» և այսքան մանր՝ աննշան երկրների անուննների մէջ ոչ մի խօսք չի յիշատակւում Հայաստանի մէջ, այն ինչ Դ—Ե. դարերում արդէն աւանդաբար խօսւում էր Թադէոսի և Բարդուղիմէոսի Հայաստան գալու մասին։ Հէնց Բիւզանդի առաջի գլուխը սկսւում է Թադէոս առաքեալով, «՝ի քարոզութենէն Թադէոսի առաքելոյ և նորուն յելից և՝ ի մարտիրոսութենէն մինչև՝ ի կատարումն վարդապետութեանն

Գրիգորի և իւրոյ հանգստեան, և յառաքելասպան Սանադրկոյ արքային մինչև յակամայ հնազանդելն հաւատոյն . . . այն ամենայն 'ի ձեռն այլոցն գրեցան (Իմա Ղերուբնա, Ա-գաթանգեղոս և այլն). Ա. Գլ.»: Բիւզանդի սովորութիւնն է կրկնել «նստուցին զնա (Յուսիկ) յաթոռն առաքելոյն Թադէոսի և յաթոռ իւրոյ հաւուն մեծին Գրիգորի» (26 երես): Նոյն ձևով էլ խօսում է Խորենացին, 91 երես. «Գտաք նստեալ յաթոռ սրբոյ առաքելոյն Թադէոսի զնախահայրն մեր Գրիգորիոս և ըստ աւետարանին ծնող»: Բացի այդ մինչև իսկ աւանդութիւն էր պատում այդ ժամանակ, որ Լուսաւորչի յղանալը 'ի մօրէ եղել է Թադէոս առաքեալի գերեզմանի շրջակայքում, երբ զօրքերը վրայ հասնելով բռնած բերում են Անակին, «Որոց (զօրաց) պատահեալ Անակայ, ածին զնա հրամանաւ թագաւորին 'ի գաւառն, որ անուանեալ կոչի Արտազ, ի տեղի դաշտավայրս, ուր յայտնեցաւ նշխարք սրբոյ և մեծի առաքելոյն Թադէի» Խոր. Բ. Հդ. «Եւ աստ ասեմ զրոյց զսքանչելի ծերոյն՝ որ ասէր, թէ ի նախնեաց ունիմ սովորութիւն, որդի 'ի հօրէ առնլով գլիշատակ զրուցացս այսոցիկ . . . Արդ ի բնակելն Անակայ 'ի դաշտին Արտազու, պատահէ սորա տեղի օթարանին մօր առ դիւս սրբոյ առաքելոյն, որպէս թէ 'ի ներքսագոյն սրբոյ սկապանի խորանին և անդ ասեն զյղութիւն մօր սրբոյն մեծի Լուսաւորչին»: Նոյնպիսի աւանդութիւն կար նոյն ժամանակներում և Բարդուղիմէոսի մասին, որ պատմում է Խորենացին, «Զոր (Տիրամօր պատկերը) առեալ Բարդուղիմէոսի զուարճացաւ, և իբրև ընդ կենդանւոյ համարեալ նայէր: Սպա մեծաւ փութով ել 'ի Հայս հրամանաւ սուրբ Հոգւոյն, զի զթադէոս առաքեալ սպանեալ էր Սանատրուկ արքայ յԱրտազ գաւառի Հայոց»: Սպա պատմում է որ Բարդուղիմէոսը եկաւ Անահտայ կուռքը փշրեց, տեղը խաչ տնկեց, որը յետոյ Գրիգոր Լուսաւորիչը վերցրեց և շրջելով խաչակնքում էր բոլորին և ամեն տեղ, որ ամենից վերջն էլ տնկեց Տրդատի գերեզմանի վրայ. ապա Ս. Սատուածծին եկեղեցին շինեց, կոյսեր և քահանայ կարգեց, և ան-

ուանեց «Հոգեաց վանս յանուն Տիրամօրն և Սուրբ կուսին»: Եթէ քննական պատմութիւնը այս՝ աւանդութիւն համարի, յամենայն դէպս այդ իսկ աւանդութիւնը ապացուցանում է ըստ ասորական աղբիւրի, որ Թադէոսը եկել է Արտազ և նահատակուել է Սանադրուկ Հայոց թագաւորից. թէ Սանադրուկ կամ ըստ արտաքնոց Միհրդատ եղել է Հայոց թագաւոր 35—65 կամ ըստ արտաքնոց 35—37 և 41—45 թուականներին, այդ հաստատ է (տես Գարագ. քնն. պատմ.): Բարդուղիմէոսի Սիւնիք գալու մասին նոյն իսկ աւանդութիւն է մնացել մինչև Ստեփաննոս Օրբելեանը (ժգ. դար), որ ասում է «ի գառնալն Բարթողոմեայ ի պարսից անցեալ ընդ գետն Երասխ՝ մտանէ 'ի սահմանս Սիսականու, և սկիզբն արարեալ քարոզութեան յՈրթվատ գիւղ և յԱրեւիք գաւառ և 'ի տանն Բաղաց և 'ի Գողթն, որք ընկալեալ զքարոզութիւն աւետարանին՝ լուսաւորեցան մկրտութեամբ աւազանին, ի ձեռն սրբոյ առաքելոյն Բարթողոմէոսի: Իսկ ս. առաքեալն շինէ եկեղեցի 'ի Գողթն յարևմտից եզերն ի վերայ վիմի միոյ յիւրեանց հանգստեան տեղւոջն, ուր վանքն էին կալեալ, և անուն կոչեցին Տեառնընդ առաջ». ապա պատմում է, որ Կումսի անունով մէկին եպիսկոպոս է ձեռնադրում և ինքն գնում է դէպի Վանանդ, թաղում է Լուսիկ աշակերտին, մատուռ շինում, ապա Ս. Թովմայի անունով եկեղեցին կառուցանելուց յետոյ, անցնում է դէպի Դուին մայրաքաղաքը: Ստեփաննոս Օրբելեանը ասում է որ Թանահատի վանքի արձանագրութիւնից երևում է, որ այդ եկեղեցին շինուած է հայ թուականից 400 տարի առաջ, որ ասել է թէ երկրորդ դարու կէսին (151 թ.). Նոյնպէս այն աւանդութիւնը որ Տաթևի վանքը շինուել է Եւստաթէ աշակերտի անունով, որ ըստ աղուանից Աւանդութեան եղիշէ առաքեալը Աղուանից երկրումն է քարոզել եւլն. եւլն.: Այս բոլոր աւանդութիւններն հաստատում են, որ Լուսաւորչից առաջ բազմաթիւ քրիստոնեայ հայեր են եղել Հայաստանում, որ առաքեալների մասին բազմաթիւ զրոյցներ են պատելիս եղել, և այդ բոլորը դժուար թէ Ագաթանգեղոս

լսած չլինեը. բայց ինչու այն աննշան երկրների մասին խոսելիս, ոչ մի խօսք չի ասում Հայաստանի մասին և ոչ էլ Թադէոս և Բարդուղիմէոսի մասին մի խօսք, արդեօ՞ք որ չնսեմացներ Լուսաւորչի գործունէութիւնը:

Աւանդութիւնը ասում է, որ Ասկեանք, որոնք ճգնում էին Ծաղկէոյ լեռներում, Թադէոսի աշակերտներն էին, նրանք Աբտաշէս Թագաւորի ապարանքի մարդկանց քրիստոնեայ դարձրին և Սաթենիկի ազգականներին Սուքիասեանց մկրտեցին և երկու խումբն էլ նահատակուեցին: Հռիփսիմեանց ահագին խումբը ինչպէս կհամարձակէր մայրաքաղաքի հնձաններում պատսպարուել, եթէ քաղաքի քրիստոնեաների ծածուկ խնամակալութիւնը չլինէր: Թէ որքան շատ էին քրիստոնեայ հայերի թիւը Տրտատի օրով, այդ երևում է Թագաւորի հրովարտակներից, ուղղուած ոչ թէ ընդհանուր քրիստոնեաների դէմ, այլ միմիայն այն քրիստոնեաների, որոնք բացէ ի բաց ծաղրում էին կռապաշտներին և անարգում կուռքերին, մինչէ փոքրաթիւ մարդիկ կհամարձակէին այդպիսի քայլ անել. ահա հրովարտակի խոսքերը. Ագ. ժբ. «Արդ՝ եթէ յանկարծօք թէ գոցի՝ որ զդիսն անպատուեսցէ, և գոցեն զայնպիսին, կապեալ ոտիւք և կապեալ ձեռօք և կապեալ պարանոցաւ ի դուռն արքունի աճցեն, և տուն և կեանք և արարք և ստացուածք և գանձք, այն ամենայն այնոցիկ լիցի, որ զայնպիսիսն ի մէջ աճցէ»: Նոյնը հաստատում է երկրորդ հրովարտակը. «զի նոքա անհնարին լինին խափան դիպն պաշտաման, զայնպիսիսն թէ գոցեն՝ վաղվաղակի ի մէջ աճցեն, յարքունուստ պարգևք և պատիւս նոցա լինեն շնորհեալ՝ որ զնոսին յայտնեսցեն: Այլ թէ ոք չյայտնեսցէ զայնպիսին, կամ թագուսցէ և գոցի, այսպիսին ընդ մահապարտս համարեալ լիցի, և ի հրապարակ արքունի եկեալ մեռցի և տուն նորա յարքունիս երթիցէ». Քրիստոնէութիւնը այնքան ուժեղ էր, որ մինչև անգամ վախենում էին մատնել քրիստոնեային տէրութեան ձեռքը, և մահուան է դատապարտում այն կռապաշտ հային, որ դիտենալով կուռքերին անպատուող քրիստոնեային ով լինելը, չէր յայտնել տէրութեան: Այսպիսի բռնութիւնների ժամանակ պարզ է որ անձնական կրքերի և անսանձ հաճոյքների մեծ դուռն էր բացւում անպիտան և չարահոգի մարդկանց առաջ, որոնք մատնութիւններով գումարներ էին դիզում և կեղծ մուրհակներ առնելով բաց թողնում կամ բանտարկել տալիս. արդեօք այդ մաքով չհասկանալ Լուսաւորչի արածը «եւ բազում բանտականաց և կալանաւորաց ի տագնապելոյ ի բռնաւորաց փրկութիւն արար, կորզելով գնոսա ահաւորութիւն զօրութեամբ փառացն Քրիստոսի, և զբազում մուրհակս անիրաւութեան պատառեաց» Ագ ժժզ.: Վերջապէս այն գըլխաւոր փաստը, որ Տրդատ և Լուսաւորիչ շատ փոքր ժամանակում ամբողջ մի ազգ, այն էլ հայի նման ծանրամտաց, դարձրին քրիստոնեայ, մինչէ հնարաւոր էր, եթէ հայերից շատերը քրիստոնեայ չլինէին և քրիստոնէութիւնը չլինէր իբրև հանրածանօթ կրօն տարածուած երկրի բոլոր մասերում: Գարագաշեան, (որի կռապաշտական հայոց պատմութեան շրջանը լուրջ աշխատութիւն է), աշխատում է քրիստոնէութեան տարածումն և Տրդատի եռանդոտ մխիթարութիւնը այդ գործում վերագրել ուրիշ պատճառի, այն է Կոստանդիանոս կայսեր ազդեցութեան Տրդատի վրայ հարսանիքի ժամանակ 307—թուին, այն ինչ հայերը քրիստոնեայ դարձան 303-ին, իսկ ըստ Գարագաշեանի 305—306-ին, այսինքն վերոյիշեալ կայսերական ազդեցութիւնից առաջ. այդ սխալ կարծիքը հետևում է նրանից, որ նա քրիստոնէական շրջանի հրաշքները և տեսիլքները ծաղրի և հեգնութեան տալով ըստ Ըընանի, զուտ պատմական մասն էլ կորցնում է նրանց խառնուրդի մէջ և աշխատում է մեր պատմութիւնը պարզաբանել օտարով և ոչ ազգայինով, շատ անգամ առանց փաստի մերժելով ազգայինը և չենուելով միմիայն օտարինի վրայ:

Թէ որքան արագութեամբ կատարուեց քրիստոնէութեան տարածումն Հայաստանում և ինչ ծաւալով, այդ երևում է Ագաթանգեղոսից. 20 օրում մկրտուեց «զինն և

տասն բիւր մարդիկ» (190,000 մարդ), «ի ծագաց մինչև ի ծագս», Սադաղացւոց աշխարհից մինչև «ի սահմանս Կասփից, ի Փայտակարան (Պարտաւ) արքայութեան Հայոց քաղաք». նա ձեռնադրել է 400 եպիսկոպոս «աւելի քան զչորեք հարիւր եպիսկոպոս», իսկ անթիւ անհամար քահանաները և սարկաւագները այդ ցոյց է տալիս. ա) որ քրիստոնեաները շատ էին և ամեն տեղ մեծ հրճուանքով ընդունում էին Լուսաւորչին. բ) որ ոչ քրիստոնեայ տարրը վաղուց ընտելացել էր քրիստոնէութեան. գ) որ Լուսաւորչի արագ և բազմաթիւ անձանց մկրտութիւնից երևում է որ մկրտուածների մեծ մասն երախայ էին, այսինքն չմկրտուած քրիստոնեաներ: Նոյն ժամանակուայ գործադրուող ընդհանուր եկեղեցու օրէնքով, քրիստոնեան երեք, երկու, մէկ տարի պիտի պատրաստուէր քրիստոնէական կրօնի մէջ, լաւ ծանօթանար աւետարանի հետ և ապա թոյլատրուէր մկրտուելու եպիսկոպոսից քննութեան ենթարկուելուց յետոյ. Լուսաւորիչ «զօրագունդ բանակի» համար 30 օր նշանակեց, իսկ մեւնեերին որտեղ հասնում էր, մկրտում էր և եկեղեցիները շինում: Լուսաւորիչ Կեսարեայից գալիս՝ հետը բերաւ Սեբաստեայից բազմաթիւ քահանայապետներ և հոգևորականներ, որոնք մեծ մասամբ հայ պիտի լինէին, քանի որ օտարներին դժուար էր կորուել հայրենիքից և գնալ հովութեան մարդկանց և ժողովրդի վրայ. «եւ գտանէր բազմութիւն եղբարց՝ զորս հաւանեցուցանէր ընդ իւրգալ»: Թէ Փոքր Հայքում կային բազմաթիւ քրիստոնեայ հայեր և պատկանում էին Կեսարիայի թեմին և ունէին առանձին եպիսկոպոսներ, որոնք կոչւում էին Հայոց եպիսկոպոսներ, որոնք անկախ «Հայոց մեծաց» աշխարհի գլխաւոր եպիսկոպոսից կաթուղիկոսից մասնակցում էին տիեզերական ժողովներին, այդ երևում է տիեզերական ժողովի մասնակցողների ցուցակից. Նիկիայի ժողովում լիշւում է 2 Հայոց եպիսկոպոս Փոքր Հայքից, Պօղոյ ժողովում նոյնպէս երկու եպիսկոպոս, 2 հոգի էլ Եփեսոսի ժողովում, մինչև անգամ վեցերորդ տիեզերական ժողովում, որ չէ ընդունուում մեր եկե-

ղեցու կողմից, լիշւում են երկու Հայոց եպիսկոպոս Փոքր Հայքից: Կեսարիայի թեմը միշտ յարաբերութեան մէջ է եղել յունաց եկեղեցու հետ, մինչև իսկ Գանգրի տեղական ժողովը (Տես Ա. գերք 203 երես) եղաւ միմիայն Սեբաստիայի Հայերի մէջ տարածուած աղանդի համար և ժողովի շրջաբերականը ուղղուած է «Հայաստանում եղող մեր ծառայակիցներին» այն է Հայաստանի եպիսկոպոսներին, իսկ այս մասին Հայոց եկեղեցու պատմութեան մէջ մի լիշատակութիւն չկայ: Փոքր-Հայքը քաղաքականապէս համարեա միշտ յունաց ձեռքի տակ էր, միմիայն Տիգրան Բ-ի ժամանակ 190 թուականներին միացաւ «Մեծ Հայքի» հետ, քիչ յետոյ արդէն էլի նոյն վիճակին ենթարկուեց. եկեղեցական բաժանմունքն էլ միշտ զուգընթաց էր գնում քաղաքականին. Սեբէոս (Է. Դար) ասում է, որ Հայոց կաթուղիկոսութիւնը Մօրիկ կայսեր ժամանակ երկուսի բաժանուեց, յունաց և պարսից, Մովսէս և Յովհան կաթուղիկոսներով. «Եւ Յովհան ընդ նոսա (յոյնս) հաղորդեալ միաւորեցաւ, բայց Մովսէս ամենևին ոչ լինէր 'ի նոսա հուպ. . . » 53 երես: Կաթուղիկոսները կոչւում էին «Հայոց մեծաց», մինչև որ չմիացաւ Փոքր Հայքը Հայոց Նուիրապետութեան հետ, կաթուղիկոսների կոչման մէջ չաւելացաւ «ամենայն Հայոց» մակդիրը. արդէն 10-րդ դարում տեսնում ենք Խաչիկ կաթուղիկոսին ստորագրած «կաթուղիկոս ամենայն Հայոց»: Սրանք բոլորը ապացուցանում են որ Փոքր Հայքում, Սեբաստիա, Երզնկա Եփրատ գետի աջ ափով բնակուած հաները մինչև Լուսաւորիչ քրիստոնեայ էին և իրանց թեմական եպիսկոպոսին՝—Կեսարիայի արքեպիսկոպոսին երկար ժամանակ ճանաչում էին մինչև իսկ հակառակ Հայոց եկեղեցու կարգադրութեան հոգևոր պետ և վեցերորդ տիեզերական ժողովին մասնակցելու երկու եպիսկոպոս ուղարկեցին:

Բացի ներքին տեղեկութիւններից, ունինք արտաքին աղբիւրներ Լուսաւորչից առաջ քրիստոնեայ Հայերի մասին. այդ վկայութիւնները տալիս են Տերտուղիանոս, Եւսեբիոս, Փիլոմիլիանոս. առաջինը Գ. դարու գրող է, (+240 թ.) ա-

սում է, որ այն ժամանակներում բազմաթիւ հաւատացեալներ կային Հայաստանում (Գաթըրճեան). Եւսեբիոս 267—338 թ.) խօսելով Մաքսիմիանոս (306—313 թ.) կայսեր հալածանքների մասին ասում է, որ այդ կայսրը հալածանք սկսեց հայոց դէմ և հայերը ջարդեցին կայսեր զօրքը. «պատերազմ սկսեց բռնաւորը Հայոց դէմ, որոնք սկզբից հռոմայեցոց հետ բարեկամ և նիզակակից էին։ Որովհետև նրանք էլ քրիստոնեայ էին և շատ ջերմեռանդ բարեպաշտ էին, աստուածուրացը բռնացաւ և աշխատեց բռնութեամբ՝ դեւերի և կուռքերի պաշտամունքին . . .» բերել հայերին... (Գլ. Թ. Ը)։ Փիրմիլիանոս Կեսարեայի եպիսկոպոսը նոյն վկայութիւնը է տալիս, որ Հայաստանում բազմաթիւ քրիստոնեաները կային. նա Գ. դարու մարդ էր։ Մաքսիմիանոսի զօրքերի ջարդը քրիստոնեայ հայերի կողմից յանուն կրօնի ընդդէմ կռապաշտութեան հայերի նոր քրիստոնեայ դարձած ժամանակ Տրդատի օրով ապացոյց է որ քրիստոնէութիւնը վաղուց խոր արմատ էր ձգած հայերի մէջ, այլապէս նորադարձները յանուն կրօնի այդպիսի եռանդուն միջոցներ չէին գործադնիլ։ Ուրեմն կարօտ չէ ապացուցութեան որ նախալուսաւորչեան եկեղեցի ունեցել են հայերը և այն էլ հայաստանի բոլոր անկիւններում, որտեղ տիրապետում էր երկու մեծ հոսանք, յունական և ասորական. հայերը գիր չունէին, ուստի և սուրբ գիրքը և ժամերգութիւնը լինում էր Փոքր Հայքում, Սեբաստիայում և յունական մասում— յունարէն, իսկ Միջագետքում, Եդեսիայում, Ասորիքում— ասորերէն, գուցէ և Ատրպատականում պարսկերէն. մանաւանդ որ պարսկաստանում գտնուած քրիստոնեաների առաջնորդը անուանւում էր պարսից եպիսկոպոս, իսկ Եդեսիայի դպրոցը մասնաւորապէս պարսկաստանի համար քարոզիչներ էր պատրաստում։

Թէ ինչպէս էր կառավարւում նախալուսաւորչեան հայոց-եկեղեցին, ինչ կանոններով, այդ մասին թէև տեղեկութիւն չունինք, բայց ի նկատի ունենալով ընդհանուր եկեղեցու նոյն ժամանակուայ կացութիւնը, կարող ենք հա-

մեմատական կարգով եզրակացնել, որ հայոց եկեղեցին իբրև մաս և շարունակութիւն ընդհանուր եկեղեցու, կառավարուող մեծ մասամբ օտարազգի եպիսկոպոսներով քահանաներով՝ քանի որ հայոց գիրը դեռ չէր գտնուած, հովւում էր այն օրէնքներով և կանոններով, որոնցով կառավարւում էր ընդհանուր եկեղեցին։ Թէ արդեօք նախալուսաւորչեան եկեղեցին տեղական—ազգային առանձնակի սովորութիւններ ունէր տարբեր ընդհանուր եկեղեցու կարգերից, որպիսի առանձնայատկութիւններ նոյն ժամանակուայ եկեղեցու զանազան մասերում երևում էին, պաս պահելու, զատիկը կատարելու, ճրագալոյցի օրուայ վերաբերութեամբ, օր. Ասիայում, Եգիպտոսում, Հռոմում, Գաղղիայում։ Ինչպէս Իրինէոսը (+202 թ) պատմում է, զանազան եկեղեցիներում տարբեր մանր սովորութիւններ կային, ոմանք պասը պահում էին մի օր, ոմանք երեք, ոմանք 40, մի քանի տեղ տուրքերը ժողովում էին շաբաթը մի անգամ, ոմանք ամբողջ մի անգամ, ոմանք թաթախւում էին աւազ հինգշաբթի օրը, ոմանք լոյս կիրակի և այլն և այլն։ Այս հարցերը ակամայ յարուցանում ենք այն պատճառով, որ Ե. դարում հէնց, մեր և յունաց եկեղեցու ծիսական մասերի մէջ փոփոխութիւններ և տարբերութիւններ ենք տեսնում. եթէ ընդունենք որ նախալուսաւորչեան եկեղեցի հայերը չունէին, այն ժամանակ շատ դժուար կլինէր բացատրել թէ այդ տարբերութիւնները որտեղից առաջացան, քանի որ լուսաւորիչը Գ. դարում մտցնելով քրիստոնէութիւնը Հայաստանում, նա տարածեց և հաստատեց այն կարգերը, որոնք տեսել էր Կեսարիայում, յունաց եկեղեցում, նոր բան մըտցնել չէր կարող, այն ինչ հէնց Լուսաւորչի որդի Վրդանէսը տարբերութիւններ տեսնելով նախալուսաւորչեան Ասորա—հայոց եկեղեցու և յունահայոց եկեղեցու մէջ, պատգամաւորութիւն է ուղարկում Երուսաղէմ Մակար եպիսկոպոսի մօտ խնդրելով հրահանգ, որից և ստանում է 9 գլխով կարգեր։ Վանը և Արտազը մօտիկ լինելով Ասորեստանին մըտցրել էին այն կարգերը, որ սովորել էին ասորիներից. Եդե-

սեայի դպրոցից, Երուսաղէմից, իսկ վերջինիս առաջին եպիսկոպոսը՝ Յակոբ Տեառնեղբայրը՝ ամենամեծ յարգանքն էր վայելում ոչ միայն հրէաների, այլ և դրացի ասիական ազգերի կողմից և ժամերգութիւն և համառօտ պատարագի արարողութիւնը համարւում էր Տեառնեղբօր սահմանումն:

Երուսաղէմի—ասորա—հայկական սովորութիւններով նախալուսաւորչեան եկեղեցին դործ էր ածում բաղարջ հաց, յունուարի 6-ին ծննդեան կատարումն, պասերի կատարման որոշ օրեր և այլն և այլն. Կեսարիայի կողմի յունա—հայոց եկեղեցին թէև նոյն նախալուսաւորչեան—ասորական եկեղեցին էր, բայց տեղական տարբերութիւն ունէր վերոյիշեալ կէտերում: Լուսաւորչի պատկառելի հեղինակութիւնը այդ տարբերութիւնները նսեմացնում էր, մինչև իսկ անուշադիր թողնում այդ մանր առանձնայատկութիւնները «իսկ մեք փառաւորեսցուք» հրաշալի սկզբունքով, բայց հայոց ազգային եկեղեցին իւր գործը շարունակում էր և Վրդանէսի ժամանակ հարկ զգացուեց Երուսաղէմ մարդ ուղարկել և հրահանգներ խնդրել: Թէ Երուսաղէմի եկեղեցին՝ գլխաւորութեամբ Տեառնեղբօր որքան ժողովրդական էր հայոց մէջ, այդ երևում է մի քանի պատմագրներից: Ուխտանէսը պատմում է վրաց բաժանման մասին 597 թուին և մէջ է բերում զանազան թղթակցութիւններ հայոց կաթուղիկոսի, վրաց եպիսկոպոսների և Սմբատ Մարզպանի մէջ տեղի ունեցած, որոնց մէջ միշտ կրկնւում են հետևեալ խօսքերը. «Հարքն մեր և ձեր զԵրուսաղէմի հաւատն ունէին, և Սուրբն Գրիգոր զայն-ետ նոցա, և մեք զնոյն ունիմք» 109 երես: Նոյն հեղինակը խօսելով վրաց ազգի նեղանալուն վրայ այն մասին՝ որ հայոց կաթուղիկոսը Աղուանից եպիսկոպոսին՝ արքեպիսկոպոս է համարում և վրաց եպիսկոպոսին՝ միտրոպոլիտ, արդարացնում է հայոց կաթուղիկոսի արածն նրանով, որ Աղուանից եպիսկոպոսը անդրանիկ է քան վրացը և յաջորդութիւնը ստանում է Յակոբ Տեառնեղբօրից—«Այլ թէպէտ և նոքա զալլ ոմն ասէին կանխաւ եկեալ յաշխարհն Աղուանից Եղիշէ անուն, զոր վերագոյնդ յիշեցաք, յաշակերտաց փրկ-

չին ձեռնադրեալ ի սրբոյ Յակոբայ եղբօրէն Տեառն, և քարոզեալ անդ, և եկեղեցի շինեալ նախ քան զլուսաւորութիւնն հայոց, որ է մայր եկեղեցեացն Գեսու եկեղեցին այն առ ստորոտով Ամարասու ի գաւառին որ կոչի Գորոզու, մերձ ի դաշտն Պարտաւ քաղաքի, որ կոչի Փայտակարան...»: 112 երես: Նոյնը կրկնում է և Մովսէս Կաղանկատուացին, որից և քաղել է Ուխտանէսը: Ստեփաննոս Օրբելեանը ծննդեան և մկրտութեան օրը յունուարի 6-ին համարում է Յակոբ Տեառնեղբօր սահմանադրութիւն, «այլ զճշմարիտն զկարգեալն 'ի սրբոյն Յակոբայ 'ի վեցն յունուարի զծնունդն, և 'ի վեցն ապրիլի՝ զԱւետիսն» 335 երես: Այս բոլորը խօսում են 'ի նպաստ նախալուսաւորչեան եկեղեցուն, որ ունէր տեղական ամրացած հաստատուն ծէսեր և սովորութիւններ, որոնք վաւերական դարձան Լուսաւորչով և քաղաքացիութիւն ստացան Տրդատով, և որոնք համարում էին աւանդ առաքեալներից, Երուսաղէմից: Պատմութեան ամբողջ ընթացքում երևում է որ հայոց ազգային-բուն եկեղեցուն միշտ աւելի ջերմեռանդ պաշտպաններ էին արևելեան հայերը, այսինքն նախկին նախալուսաւորչեան ասորա—հայկական եկեղեցու սերունդները, քան արևմտեան, այսինքն յունահայկական եկեղեցու, վերջինը միշտ եղել է յունասէր և լատինասէր: Մինչև իսկ Ռուբինեանց ժամանակ մի քանի ժողովներ եղան թագաւորի, կաթուղիկոսի, եպիսկոպոսների, իշխանների մասնակցութեամբ օտարամոլական գոյն ունեցող, բոլորը մերժուեցին արևելեան Հայաստանից, որոնցից և ակնածում էին Կիլիկեայի տէրերը. տես Ա. գիրք—Հայոց եկեղ. ժողովները: Նոյնը երևում է Ե. Զ. դարերից սկսած, Ղազար Փարպեցու թղթից երևում է, որ յունաստանի դէմ, յունաստանում կրթութիւն ստացած անձանց դէմ առհասարակ խիստ հալածանք կար, նրանց կրթութեան վայր յունաստանը համարւում էր աղանդների կեդրոն, պոռնկութեան վայր, երրորդ—չորրորդ պսակների չատագով և այլն և այլն. (Սեբէոս). Ներսէս Մեծի ժամանակ, Արշակը, Պապը, իշխանները հակառակ յունական ուղղութեան էին. Սահակի

ժամանակ աւելի սիրով ընդունում էին ասորի կաթուղիկոս՝ քան յոյն, կամ յունաստանում կրթուած անձի: Սրանք բոլորը, կարծում եմ, ցուցնում են թէ որքան ուժեղ և համատարած նշանակութիւն ունէր ասորա-հայկական նախալուսաւորչեան եկեղեցին. Փարպեցին ուրախանալով գրերի գիւտի համար, ասում է վառք Աստուծոյ ազատուեցինք ասորական գժուար լեզուից, որ ենթատրել է տալիս թէ Աբրահատում, հենց էջմիածնում ասորերէն էին ժամ ասում նախ քան գրերի գիւտը:

Բ) ՆԱԽԱՍԱՀԱԿԵԱՆ ՇՐՋԱՆ

Հայոց եկեղեցու երկրորդ շրջանը սկսուում է Լուսաւորչից սկսած մինչև Սահակ, կամ աւելի ճիշտ՝ Մեսրոպ և Թարգմանիչներ, այսինքն մինչև այն ժամանակ երբ հայոց գիրը գտնուեց, սուրբ գիրքը թարգմանուեց հայերէն և հայոց եկեղեցու մէջ հնչեց հայերէն ժամերգութիւնը --300 թուից մինչև 440 թուականները: Այս նախասահակեան շրջանը բոլորովին տարբերուում է յաջորդող շրջանից, նա կառավարուում էր ընդհանուր եկեղեցու կանոններով, եկեղեցիներում ժամերգութիւնը կատարուում էր անհասկանալի լեզուներով, յունարէն, ասորերէն, նոյն իսկ պարսկերէն, աւետարանը կարդացուում, թարգմանուում և բացատրուում էր շատ անգամ երկու երեք թարգմանիչների ձեռքով, հայոց եկեղեցիների վարիչներն էին մեծ մասամբ յոյներ, ասորիներ, կաթուղիկոսները և եպիսկոպոսները ժառանգաբար նստում էին իրանց հայրենական աթոռների վրայ, կաթուղիկոսների ձեռնադրութիւնը մեծ մասամբ լինում էր Կեսարիայի եպիսկոպոսից, այս ամենը միանգամից վերացաւ Սահակից յետոյ, ամեն բան դարձաւ ազգային. լեզու, մարդիկ, գրքեր, եկեղեցի, կարգ կանոն, կառավարիչներ, վանականներ: Ի հարկէ սրանով չենք նսեմացնում Լուսաւորչի և Տրդատի ահագին օգուտը, որ տուին հայոց՝ քրիստոնէութիւնը քաղաքացիական կրօն դարձնելով հայաստանում, նրանք

դրանով միացրին հեռու ընկած նահանգները միմեանց հետ, կապ հաստատեցին Քրիստոսի միութեամբ բոլոր հայոց ցրուած մասերի հետ, յունական կուռքերը արևմուտքից, ասորական կուռքերը հարաւից, կռապաշտական խառնուրդ մեհեանները հիւսիսից ջնջելով, վերացնելով՝ խաչ տնկեցին և Հայութեան մտածողութիւնն ուղղեցին դէպի մի միացման կէտի, այն է քրիստոնէութեան կետրոնի՝ էջմիածնին, դրա հետևանքը այն եղաւ որ նոյն իսկ Վրդանէս՝ Լուսաւորչի որդին՝ եկեղեցի և ազգութիւն, քրիստոնէութիւն և հայոց աշխարհ միացրեց և Պարսիկների դէմ մղած պատերազմում մեռածներին հրամայեց նահատակ համարել և տօնել եկեղեցում նրանց յիշատակը. «Վասն զի որք մեռանն՝ մեռան յաղագս աշխատին եւ եկեղեցեաց և ասաուածագործ օրինաց տուչութեան...» . . . «որք այսմ ամենայնի փոխանակ զանձինս իւրեանց ոչ խնայեցին՝ ընդ վկայս Քրիստոսի է նոցա համար պատուոյ» Բիւզ. 24 երես, բայց և այնպէս նախասահակեան շրջանը մի քանի առանձնայատկութիւններով տարբերուում է բուն ազգային շրջանից, որ սկսուեց Սահակից, Մեսրոպից յետոյ:

1) Այդ շրջանի առաջին աչքի ընկնող երևոյթն այն էր, որ ամեն տեղ տիրապետողն օտարն էր, յոյնը և ասորին, եկեղեցում, վանքերում, եպիսկոպոսների աթոռների վրայ: Լուսաւորիչ «գունդս գունդս» առնելով յոյներից բերաւ մեր աշխարհ. Լուսաւորիչ, իւր երկու որդիքը հայոց թագաւորների ցեղակից էին—պահլաւ ցեղից, Մծբնայ հայրապետը որ այնքան մեծ հռչակ ունէր հայաստանում, «ազգաւն պարսիկ կոչէր» (Բիւզ. 19). Լուսաւորչի նշանակած յաւտնի Դանիէլ քորեպիսկոպոսը—կառավարիչ և գլուխ ամենայն եկեղեցեաց «էր ազգաւ ասորի» Բիւզ. 31): Սրա աշակերտները Վաղիտա, Եպիփան, Եփրեմ, Գինդ յոյներ էին և գլուխ բոլոր վանականներին, օտարանոցների, բարեգործական հիմնարկութիւնների (Խոր. Բ. գլ. ի.). Լուսաւորչի ուղի նշանակած եպիսկոպոսներն յոյն էին, Եւգաղիոս, Բասոս, Մովսէս, Եւսեբիոս, Յովհաննէս, Ագապէս, Արտիմէս,

Աբսուկէս, Անտիոքէս, Տիրիկէս, Կիւրակոս, (Ագաթ. ՃԻԱ.), որոնք անունով մինչև իսկ խիստ տարբեր են ազգային շրջանի գործիչներից—Յովսէփ, Ղևոնդ, Եղնիկ, Յովհան, Կորիւն, Եղիշէ, Փաւստ, Տիրայր և այլն և այլն:

Եւ այլապէս էլ չէր կարելի, ինչու. որովհետև եկեղեցու լեզուն օտար էր, հայերը յունարէն, ասորերէն չգիտէին, պէտք հոգևորականները կարդային օտար լեզուներով և ահա առաջ է գալիս այդ շրջանի միւս գլխաւոր առանձնայատկութիւնը—լեզուն: 2) Լուսաւորիչ հրամայեց դպրոցներ բանալ և սովորեցնել յունարէն և ասորերէն, «Եւ գնոսա յերկուս բաժանեալ, զոմանս յասորի դպրութիւն կարգեալ, և զոմանս Հելլէն.» Ագաթ. 484 երես. այն ինչ արքունիքը իւր գործերը վարում էր պարսից լեզուով, Մեհրուժանի ժամանակ հրամայուեց ամեն տեղ գործ անել պարսկերէն: Թէ ինչ սարսափելի գործ էր կարդալ օտար լեզուով եկեղեցում գիրք և հասկացնել ժողովրդին, այդ երևում է Մեսրոպի կրած տառապանքներից և Ե. դարու պատմիչների նկարագրութիւններից, մէկը կարդում էր յունարէն կամ ասորերէն աւետարանը, երկրորդը թարգմանում էր, երրորդը մեկնում: Փարպեցին դառնութեամբ է յիշում այն օրերը, երբ հարկից ստիպուած հայ պատանիները չէում էին դէպի Եդեսիա դժուարամատչելի ասորական լեզուն սովորելու: Լեզուն պատճառ էր որ օտար հոգևորականութիւնը տիրապետում էր հայոց եկեղեցուն այդ շրջանում:

3) Երրորդ կէտն է, որ այդ շրջանում կաթուղիկոսները մինչև Աբշակ և Պապ ստանում էին ձեռնադրութիւն Կեսարիայում և այսպէս ասած կանոնական տեսակէտով կապուած էին Կեսարիայի արքեպիսկոպոսի հետ. թէև Լուսաւորիչը՝ ինքը առաջինը քանդեց այդ սահմանը ձեռնադրելով իւր որդուց կաթուղիկոս իւր փոխարէն հայոց վրայ, բայց Յուսիկին ուղարկեցին Կեսարիա, թէև Աբշակ և Պապ վերացրին խափառ կաթուղիկոսների Կեսարիա գնալը, բայց էլի արևմտեան հայոց եպիսկոպոսացուները գնում էին Կեսարիա ձեռնադրուելու ըստ Բիւզանդի. Ագաթանգեղոս և Բիւզանդ

կեսարական էին և հակառակ Աբշակի և Պապի կարգադրութիւններին (տես Բիւզանդ): Ազգային շրջանում իսպառ վերացաւ այդ:

4) Չորրորդ առանձնայատկութիւնը նախասահակեան շրջանի այն էր, որ կաթուղիկոսու և մանաւորապէս առաջնորդութիւնը ժառանգական էր: Լուսաւորիչ, Արիստակէս, Վրթանէս, Յուսիկ, Ներսէս մեծ, Սահակ, բոլորը պարթևական ցեղից, Լուսաւորչի շառաւիղներից էին, երկրորդ ցեղն էր Աղբիանոս քրմինը, որը մեծ տուն էր և յայտնի քրմական տոհմ, քրիստոնէութեան ժամանակ եպիսկոպոս ձեռնադրուած Եփրատի կողմերում նախկին քրմական շրջանում, Լուսաւորչի սիրելին և աղդեցիկ անձն, ահա դրա տոհմն էր առաջ բերում կաթուղիկոսական ընտրութեան ժամանակ, երբ լուսաւորչի ցեղից արժանաւորն չէր երևում. Աղբիանոսի տոհմից եղան Տահակ, Զաւէն, Աստղիկ (Բիւզանդ. 31. 223-224 երես), Մելիտէ և Մովսէս (փարպեցի), կոչւում էին նոյնպէս Մանազկերտցոց ցեղ, կամ ըստ Բիւզանդի «Մանազկերտեայց»: Ժառանգական կաթուղիկոսութիւնը հետևանք էր հին քրմապետութեան, որի համար ընտրում էին վահէվահեան ցեղից կամ թագաւորական տանից: Երբ նախարարները համոզում էին Սուրմակին հակառակ խօսել Սահակի դէմ, խոստանալով եպիսկոպոսութիւնը «ազգաւ» տալ նրան, նոյնպէս և երդւում էին վերջը Սահակին «ազգաւ» տալ նրան կաթուղիկոսութիւնը, որ նշանակում է ժառանգաբար տալ, յանձնել նրանց այդ պաշտօնները: Այս բանը վերջացաւ ազգային շրջանում, Սահակից յետոյ թեթև բացառութիւններով (Ընորհալու տոհմ):

5) Ինչպէս էր այդ շրջանի հայոց եկեղեցու կառավարութիւնը: Աւագի որ թէև կային տեղական սովորութիւններ մտած հայոց եկեղեցու մէջ, բայց որովհետև ամբողջ կազմը դնում էր օտարների ձեռքը լեզուի և գրերի պատճառով, ուստի և ամեն կառավարչական կարգ ընդ օրինակութիւն էր օտարի, յոյնի. Լուսաւորչի կարգերը, վանական կանոնները բոլոր յունաստանում տեսած և սովորած էին, Մեծն

Ներսէսի բարեգործական հիմնարկութիւնները, նրանց ձևը, կառավարութիւնը, կառավարիչները յունական էին և յոյներ. «ի Բիւզանդիոյ դարձեալ ՚ի Կեսարիա և եկեալ ՚ի Հայս, զամենայն կարգս ուղղութեանց հարցն իւրոց նորոգեաց, այլ և առաւել ևս, քանզի զբարեկարգութիւնն, զոր եաես ՚ի յունաց աշխարհի, մանաւանդ ՚ի թագաւորեալ քաղաքին, ի նմա նկարագրէ ...» Խորեն. ը. գլ. ի.: Սրա խորհրդածությունը, որ նա ինչ որ տեսել էր Պօլսում, մտցրեց հայոց երկրում. նոյնը ասում է Բիւզանդ 58 երեսում: Ներսէսի 12 եպիսկոպոսներով շրջապատուելը իբրև խորհրդակիցներ, դրան եպիսկոպոս և մակդիրներով, արխիդիակոնի կառավարչական-վերահսկողութիւն նշանակելը, վանքերի շատացնումը և վարչական ձևը յունաց երկրի օրինակներն էին որոնք բուն երկրում համակրութիւն չգտնելով լուռ տրտունջ էին առաջացնում և հակաեկեղեցական կուսակցութիւն առաջացնում: Սահակի 60 լուսակաց աշակերտներով շրջելով քարոզելը յունականի օրինակն էր: Այս բոլորը վերացաւ ազգային շրջանում, երբ գիրը գտնուեց:

Գ) ԱԶԳՑԻՆ ՇՐՋԱՆ

Սահակ և Մեսրոպ գտան հայոց գիրը և հայոց աշխարհը փոխուեց միանգամից, տասն տարուայ ընթացքում, ամեն բան դարձաւ ազգային, լեզու, եկեղեցի, աւետարան, սուրբերը, վանքեր, նոյ իսկ Աստուած. հայը եկեղեցում Աստուծոյ անունը յունարէն և ասորէն լսելով, չէր պատկերացնում այն, ինչ որ հայերէն բառով և գրով էր ըմբռնում: Տաւերի գլուխը անկախ դարձրեց հայոց եկեղեցին և Վարդանանց պատերազմի նահատակների արիւնով դրոշմեց անկախութեան կնիքը նրա ճակատին: Հայոց եկեղեցու անկախ բնաւորութիւնը որոշւում է հետևեալ գլխաւոր կէտերով:

ա) Հայոց եկեղեցու գլխաւոր իրաւասական մարմինն է միմիայն ընդհանուր ազգային եկեղեցական ժողովը-աշխարհականներից և հոգևորականներից բաղկացած (Տես Ա.. գիրք

437, 438, 441, 444): Այդ ազգային ժողովն է կաթուղիկոս ընտրող և հեռացնող, եկեղեցու օրէնսգիր մարմին և գլխաւոր դարաւոր, կազմակերպող ոչ միայն վարչական կարգեր և կանոններ, այլ և եկեղեցու դաւանաբանական մասի միակ սահմանող (տես Ա.. գիրք 356, 389, 390, 406, 558 երես): Թէ դաւանաբանական հարցերում միշտ աշխարհականները մասնակցում էին, ոչ միայն ե. դարից սկսած բոլոր վէճերի ժամանակ, այլ և 13-րդ դարում, երբ Կիլիկիոյ հայոց թագաւորը, հայոց կաթուղիկոսը իրանց իշխաններով և եպիսկոպոսներով հակամէտ էին դէպի օտարամոլութիւնը, այդ դէպքում արևելեան հայոց ժողովում, ուր մասնակցում էին եպիսկոպոսներ, վարդապետներ, քահանաներ, դրանց հետ միացած էին իշխաններ, վարժապետը իւր աշակերտներով. ահա դրանց ստորագրութիւնը. «ես Եսայի, կրտսեր բանասիրաց, և յետին վարժապետ իմով աշակերտօքս համախոհ եմ և միաբան ...». «Մեք անպիտան ծառայքս Քրիստոսի Եւկիւմս և Լիպարեոս՝ որդիք փառաւոր իշխանացն Տարսայիճին և Իվանէի, եղբարիք մերովք և որդւովք և ամենայն ազատօք հաւանիմք և հնազանդի մահու չափ այսմ աստուածատուր և հայրենաւանդ կտակիս, և որ հակառակին, որոշեալ լիցին ՚ի սուրբ հարցն մասնակցութենէ» (Ստ. Օրբ. 210 երես), և այսպիսի նզովք շպրտում են օտարամոլ թագաւորին և կաթուղիկոսին:

բ) Հայոց եկեղեցին իւր ազգային ժողովով, ազատ է ընդունելու և չընդունելու տիեզերական ժողովների վճիռները, կազմելու առանձին ժամերգական կարգ կանոն, որոշումներ կայացնելու զանազան բարեպաշտական և այլ խնդիրների վերաբերմամբ:

գ) Հաստատուն պահելու նախկին ժողովների կանոնները, կամ ըստ տեղի և հանգամանաց փոփոխութեան ենթարկելու և նոր կանոններ սահմանելու (Տես Ա.. Գ. Հայոց ժողովների կանոնները):

դ) Հաստատել եկեղեցու նուիրապետութեան կարգը, իրաւունքները, և զանազան աստիճանները, կարգի հրաւիրել

բոլոր զանցառուներին, դատ կանչել, պատժել և այլն։

ե) Ազգային ժողովի ներկայացուցիչ և լիազօր հսկող բոլոր եկեղեցական կարգերի վրայ, դատող, պատժող, աւանդապահ է ամենայն հայոց հայրապետը։

զ) Եպիսկոպոսական ձեռնադրութիւնը, միւռոն եփելը բոլոր եկեղեցիների համար վերապահուած է հայոց կաթուղիկոսին։ Թէ քանի թեմ կար Հայաստանում սկզբնական շրջանում շատ դժուար է որոշել, քանի որ թեմերի այժմեայ բաժանումն վերջերում կանոնաւորուեց, միայն, ինչպէս Ագաթանգեղոսն է գրում, Լուսաւորիչ ձեռնադրեց 400 եպիսկոպոս, նշանակում է իւրաքանչիւրին յատկացնելով մի մի քաղաք և փոքր թեմեր, պէտք է այն ժամանակ լինէր Հայաստանում մի քանի անգամ շատ թեմական առաջնորդներ քան այժմ, և բազմաթիւ ցրուած եպիսկոպոսներ վանահայրերի և քորեպիսկոպոսների պաշտօններով։

3) ԳԼԽԱՒՈՐ-ԵՊԻՍԿՈՊՈՍ

Եկեղեցական կանոնով բոլոր եպիսկոպոսները հաւասար իրաւունքի տէր են, բայց երկրի մէջ բազմաթիւ եպիսկոպոսների մէջ կարգ պահելու համար անհրաժեշտ էր մէկը, իբրև գլխաւոր եպիսկոպոս, որ վերահսկէր ընդհանուր եկեղեցու կեանքի վրայ. այդպիսի անձն համարւում էր այն եպիսկոպոսը, որ ձեռնադրուած էր առաջ, այդ աւագութիւնը փոփոխակի անցւում էր քաղաքէ քաղաք, ուր նստած էին զանազան ժամանակներում ձեռնադրուած եպիսկոպոսներ. բացառութիւն կազմում էր Ամիդիայի Կարթագենը, որի եպիսկոպոսը 97 թուի ժողովով պիտի համարուէր գլխաւոր եպիսկոպոս և ձեռնադրութեան կարգով նստէր նախորդի աթոռը։ Ա-Ա. 34 կանոնը (Ա. Գ. 99 երես) որոշում է որ թեմի եպիսկոպոսը առանց աշխարհի գլխաւոր եպիսկոպոսի և վերջինս էլ առանց եպիսկոպոսական խորհրդի՝ երկրի եկեղեցու գործերը չվարեն առանձնակի։ Երբեմն մի երկրում լինում էին երկու, երեք գլխաւոր եպիսկոպոսներ՝ առաջացած

քաղաքի նշանակութեան և գլխաւորութեան հասկացումից, Պաղեստինում երկուսն էին, Կեսարիայինը և Երուսաղէմինը. Ափրիկայում բացի Կարթագենի գլխաւոր եպիսկոպոսից, կային և Մավրիտանիայում, Նումիդիայում, Սիտիփում։ Մայրաքաղաքի եպիսկոպոսները կամաց կամաց իբրև թագաւորանիստ քաղաքի հոգևոր պետեր սկսեցին աւելի մեծ նշանակութիւն ունենալ և կոչուեցին միտրոպոլիտներ։

4) ՄԻՏՐՈՊՈԼԻՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Առաջի պաշտօնական հաստատութիւնը միտրոպոլիտների մասին տալիս է Նիկիայի 4 կանոնը (Ա. Գ. 148 երես), 6-կանոնում յիշում է անուն անուն այդ աթոռները, որոնք լրանում են Պօլսոյ և Եփեսոսի ժողովների կանոններով (Տես Ա. Գիրք). այդ կանոնները միտրոպոլիտների մասին մտան և տեղական արտաքին ժողովների սահմանադրութիւնների մէջ, Անտիոքի, Սարդեկիայի, Լաւոդիկեայի, (Ա. Գիրք, 219, 230, 212, 213, 214), որոնք Յուստինիանոսի հրամանով քաղաքացիութիւն ստացան և առանձին հրամանագրով Կարթագենի եպիսկոպոսը Ափրիկայի միտրոպոլիտ ճանաչուեց։ Միտրոպոլիտների իրաւունքներն էին, 1) ընդհանուր կառավարութիւն երկրի մէջ գտնուած եկեղեցիաց. 2) եպիսկոպոս նշանակել և ձեռնադրել. 3) եկեղեցական ժողով հրաւիրել և նախագահել. 4) գանգատներ ընդունել եպիսկոպոսների վրայ և դատաստան նշանակել. 5) անուան յիշատակութիւնը բոլոր շրջանի եկեղեցիներում. 6) առանց նրա թոյլի ոչ ոք չէր կարող թագաւորի մօտ գնալ կարևոր խընդիրքներով. 7) ամեն բան կարգադրել եպիսկոպոսական ժողովի խորհրդակցութեամբ։ Միտրոպոլիտը քիչ քիչ դարձաւ աւագութեան տիտղոս, որ տալիս էին և աւագ եպիսկոպոսներին, կամ մեծ քաղաքների առաջնորդներին. Մարկիանոսի կարգադրութեամբ Նիկիան միտրոպոլտութիւն կոչուեց, ինչպէս և Մակեդոնեան ըստ Յուստինիանոսի։ Միտրոպոլիտական տիտղոսը Հայոց մէջ սովորական չէր, Լուսաւորիչ դառ-

նալով ընդհանուր հայրապետ ձեռնադրում էր առաջնորդ-եպիսկոպոսներ բոլոր թեմերի համար հատասար իրաւունքներով։ 9-10-րդ դարերում երբ վէճեր ծագեցան յոյն և հռոմ եկեղեցիների մէջ, `ի միջի այլոց խօսք ընկաւ աթոռների իրաւասութեան վրայ, նրանք իրանց նախերէցութիւնը ցուցնելու համար յենւում են նաև նուիրապետական 9 աստիճանի ամբողջութեամբ իրանց աթոռների իշխանութեան տակ սննեալներուն վրայ, թէ որ աթոռը շատ արքեպիսկոպոսներ, միտրոպոլիտներ, եպիսկոպոսներ ունի, հայոց եկեղեցու անկախութեան և մեծութեան նախանձախնդիրը, Յովհաննէս պատմաբան-կաթուղիկոս թ-ժ. դարում և Ստեփաննոս Օրբելեան ժգ. դարում նրանց հետ մրցելու նպատակաւ ստեղծեցին միտրոպոլտական աթոռներ հայաստանում, հիմքը բռնելով Ներսէս մեծի և մինչև իսկ Լուսաւորչի կարգադրութիւնը, այն նպատակով իբր, որ 9 դասը հայոց անկախ հայրապետութեան մէջ լրանայ. ըստ Յովհաննու պատմաբանի, 1) հայոց Հայրապետ որ է պատրիարք, 2) արքեպիսկոպոսական աթոռներ Վրաց և Աղուանից. 3) միտրոպոլտական աթոռներ-Սեբաստիայում, Մելիտինէում և Մարտիրոսաց քաղաքում (Յով. պատ. 32-33), 4) առաջնորդներ և այլն ըստ կարգի։ Ստեփաննոս Օրբելեանը բերելով Սարգիս կաթուղիկոսի կոնդակը 1006 թուին գրած և ուղղած Սիւնեաց աշխարհին, Թագաւորին և իշխաններին, որ նախկին կաթուղիկոսներ Թէոդորոսից և Անանիայից սկսած Սիւնեաց աթոռը բաժանուել էր հայրապետութիւնից, բայց այժմ ընծայացու Տ. Յովհաննէսին ձեռնադրեցինք, ասում է կոնդակը, «ըստ առաջին աթոռակալացն միտրոպոլիտ Սիւնեաց«, որ տալիս եմ 12 գաւառն այս առաջնորդին և «աւանդեցաք նմա զնախնական պատիւն իւրեանց՝ զիաչն և զբազմականն», և այս ոչ ինձնից եմ անում, այլ ինձ բերուած բազմաթիւ նամակներից և պայմանի վճիռներից Ս. Լուսաւորչից, որդիներից, թոռներից, մինչև Ս. Սահակ յունաբէն գրուած և մատանիներով կնքուած, մինչև Անանիա, և Անանիայից մինչև մեզ հայերէն, բոլորը 55 շրջագայական

նամակ էր . . . Այդ նզովքներին նայելով յանձնում եմ 12 գաւառները՝ մի առ մի յիշելով՝ Սիւնեաց միտրոպոլիտիդ (52 երես-Փարիզի տպ.)։ 9 դասք եկեղեցու յիշելիս, կարգաւորում է այսպէս, 1) կաթուղիկոս որ է Պատրիարք. 2) արքեպիսկոպոսական աթոռ-Աղուանից. 3) միտրոպոլտական աթոռ-Տարեւ, 4) առաջնորդ-եպիսկոպոսներ և ըստ կարգի։ Միտրոպոլիտները ըստ ընդհանուր եկեղեցական կանոնի ձեռնադրում էին իրանց շրջանում եպիսկոպոսներ, Օրբելեանը վկայում է որ այդ իրաւունքը չէր տուել Սիւնեաց միտրոպոլիտներին, հապա «միայն բազմականաւն և խաչիւն մեծարեցին և նախաթոռ կոչեցին պատրեարքին», և եկեղեցիներում կաթուղիկոսի անունը չյիշել, այլ «զիւրն անուն» 148 երես։ Մինչև Օրբելեանի ժամանակ միտրոպոլտութիւն դժուար թէ եղած լինէր Սիւնիքում, եթէ Սիւնիքի հեռաւորութեան պատճառով Մայր-աթոռից, որ աստանդական էր, երբեմնակի Սիւնեաց եպիսկոպոսացուները գնացել են Աղուանից կաթուղիկոսներից-(Սմարաս կամ Գանձասար), ձեռնադրութիւն ստանալու, այդ դէպքերը եթէ առիթ տուած լինին հայոց հայրապետներին՝ Սիւնեաց եպիսկոպոսներին իրանց կողմը գրաւելու նպատակաւ մեծարական տիտղոս տալ նրանց, կարող է եղած լինել, բայց թէ Սիւնիքի եկեղեցիներում կաթուղիկոսի անունը չյիշուելու պայմանով կամ կաթուղիկոսի հետ մի «թախթի» վրայ նստելու արտօնութիւնով, այդ դժուար թէ եղած լինի, քանի որ բացի Օրբելեանից այդ մասին ոչ ոք ոչինչ չէ յիշում, (Տես ուխտանէս, Յովհաննէս կաթ. և Ստ. Օրբելեան) բայց հաւաստի կարելի է ասել, որ Օրբելեանին Կիլիկիայում թէ հայոց թագաւորը և թէ կաթուղիկոսը շատ սիրով ընդունեցին իբրև Սիւնեաց մեծ իշխանի որդու և նրան ձեռնադրեցին եպիսկոպոս և շնորհեցին «պատատաֆրաւնդէս) տիտղոսը և«կրկին թագիւ կարգեալ յաստիճան մետրապօլտութեան», այդ պէտք է ճիշտ համարել, քանի որ յետոյ էլ Օրբելեանը բոլոր իւր թոռած յիշատակարանների վրայ է լարձանագրած թողել է այդ տիտղոսը։ Ըստ Օրբելեանի մետրապօլտական իրաւունքը կայ-

անում էր երկու բանում, 1) «բարձակից և սեղանակից կաթուղիկոսի աթոռով և բարձու ՝ի միասին բազմել» և 2) զխաչանել նշանն զառաջեաւ կրել հանապազ», բայի այս նա աւելացնում է և կաթուղիկոսի անուան չլիշատակութիւնը եկեղեցում, կարծում եմ չափազանցութիւն է. (Ստ. Օրբ. իզ. գլ.)։ Յետագայ դարերում Սիւնեաց առաջնորդներն կոչւում էին ուղղակի եպիսկոպոս և երէ մէկ մէկ Սիւնեաց միտրոպոլտական աթոռ էին լիշատակւում, այդ հիմնուած էր միայն Օրբելեանի գրութեան վրայ։ Իսկ ինչ վերաբերւում է Յովհաննէս պատմաբանի լիշած 3 միտրոպոլտական աթոռներին, այն ձևական է և լիշատակուած միմիայն 9 դասակարգը լրացնելու դիտմամբ, քանի որ Սեբաստիա, Մելիտինէ, Մարտիրոսաց քաղաքները բոլորովին Հայաստանից դուրս էին, համեմատաբար քիչ հայեր ունէին բնակիչ, և երբորդ հայոց պատմութեան ընթացքում ոչ մի նշանակութիւն չեն ունեցել թէ քաղաքական թէ եկեղեցական տեսակէտից, ուստի և հարկ չկար աննշան թեմերին միտրոպոլտական պատիւ յատկացնել։ Ճշմարիտ է, միտրոպոլտութիւն Մելիտինէի, Սեբաստիայի լիշւում է, բայց ոչ հայոց կաթուղիկոսի ձեռքի տակ, այլ յունաց պատրիարքի, և նրանք համարւում էին յունական եկեղեցի, յունական մետրոպոլտութիւն, ինչպէս էր և Կեսարիայինը (տես Дѣянія всел. соборовъ IV ե. 265-268)։ Աղուանից կաթուղիկոսութիւնը երբ Ներսէս աշտարակեցու ջանքերով Ռուսաց պետութիւնը վերջացրեց 19-րդ դարու սկզբին և փոխադրեց Շուշի՝ զարթաղի թեմ կազմելով, կաթուղիկոսների յաջորդները անուանւում էին մետրոպոլիտներ ՝ի պատիւ չքացեալ կաթուղիկոսութեան, օր. Բաղդասար մետրոպոլիտը կրում էր այդ տիտղոսը ցմահ, առանց որ և է արտաքոյ կարգի իրաւունքների, այլ անուանականապէս. յետոյ արդէն նշանակուած եպիսկոպոսները սոսկ առաջնորդ կոչուեցին։ Մեր պատմութեան մէջ միտրոպոլտութեան մասին այլևս չունենք առանձին գրաւոր փաստեր, միայն Ռուբենեան ժամանակ, երբ դժուար-էր Հայոց եպիսկոպոսներին և իշխաններին գնալ

Կիլիկիա կաթուղիկոսի ընտրութեան մասնակցելու, որոշուեց, առանց չորս աթոռի, այն է Տարեւի, Արտազի, Բգնոյ և Հաղպատի, կաթուղիկոսական ընտրութիւն չանել. չորս աթոռներին յատկացրած այդ իրաւունքը գործնական հետեւանք չունեցաւ, և ապօրինաբար էր, քանի որ ընտրութիւնը համազգային էր և ամեն մի թեմ իրաւունք ունէր մասնակցելու այդ ընդհանուր գործին։

5) ԲՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՒ ԱՂԱԶԱՐԻՆ

Միտրոպոլիտներին շատ անգամ մեծարում էին արքեպիսկոպոս տիտղոսով, որ նշանակում է աւագ, մեծ եպիսկոպոս։ Ամենասը իւր նախորդին անուանում էր Աղէքսանդրիայի արքեպիսկոպոս, Եպիփանը նոյնպէս «սովորութեամբ հաստատուած է, որ Աղէքսանդրիայի արքեպիսկոպոսը իւր իշխանութեան տակ ունենայ ամբողջ Եգիպտոսը»։ Եփեսոսի ժողովում Կիւրեղ Աղէքսանդրացին և Կեղեստինոս պապը անուանւում էին արքեպիսկոպոս։ (Прав. собес. 1858 г.)։ Յուստինիանոսի 131 նովիլլայով արքեպիսկոպոսութիւնը բարձր է համարւում միտրոպոլտութիւնից, «որ այն (Յուստինեան եպիսկոպոսի աթոռի մասին) լինի ոչ միայն միտրոպոլտութիւն, այլ և արքեպիսկոպոսութիւն»։ Արքեպիսկոպոսութիւն իբրև պատուաւոր տիտղոս կրում էին Պօլսոյ, Աղէքսանդրիայի, Անտիոքի պատրիարքները, շատ թեմակալ՝ ծեր և պատկառելի առաջնորդներ։ Արքեպիսկոպոս բառը հէնց առաջին պատմագրներից սկսած հայոց մէջ գործածութեան մէջ էր. ագաթանգեղոս ճիգ. գլխում գրում է «իսկ մեծ արքեպիսկոպոսն Գրիգորիոս՝ սուրբ որդւովն իւրով Ռըստակեաւն և երևելի օգնականօքն ... շրջէր»։ Խորենացին-Գ. գլ. ծէ-պատմելով Սահակի յունաց մասի Հայաստան մտնելիս իրան վայել չարգանք չտանալուն պատճառով կայսեր և պատրիարքին արած գանգատը, գրում է, կայսրը հրամայեց ստորագրեալներին՝ պատուել Սահակին «հանգոյն արքեպիսկոպոսին կերարուս»։ Զ-ի-րդ դարերում եկեղեցու

ինն դասի վէճի ժամանակ, Յովհաննէս պատմաբանը 9 դասը լրացնելու համար ասում է, երկրորդ դասն էին՝ արքեպիսկոպոսները, որոնց աթոռներն էին Վրացը և Աղուանիցը. Օրբելեանը՝ երկրորդ դասը ընդունում է արքեպիսկոպոսները, որոնք նստում էին Աղուանից աթոռի վրայ: Եկզարխ տիտղոսը առաջացաւ այն ժամանակ երբ մի շրջանում զանազան պատճառներով միտրոպոլտական պատուով աթոռները առաջացան, մեծ քաղաքի այսինքն մայրաքաղաքի միտրոպոլիտը միւսներից զատուելու համար կոչուեց եկզարխ: Եկզարխներ համարուեցին մինչև պատրիարքութեան հաստատութիւնը, Պօլսինը, Եփեսոսինը, Անտիոքինը, Աղէքսանդրիայինը, և Նէոկեսարիայինը. վերջինիս համար ասուած է կառավարում էր կապադովկիան և «Գալաթիա, Պոնտոսը, Փոքր Հայքը, և մասամբ մեծ Հայաստանը, որի վրայ ձեռնադրեց գլխաւոր եպիսկոպոս» (Прав. Собес. 1858 г.): Նոյն տեղում գրուած է և հետևեալը «Եկզարխների այդ անուան համապատասխան էր կաթուղիկոս տիտղոսը մի քանի աշխարհներում, ինչպէս Հայաստանում, Վրաստանում, Բուլղարիայում, Եթովպիայում, Բաբելոնում . . . Այդ կաթուղիկոսներից ոմանք անկախ էին իրանց եկեղեցիներում, ոմանք ստորագրւում էին պատրիարքներին, օր. Բաբելոնի կաթուղիկոսը Անտիոքի, Եթովպիայինը — Աղէքսանդրեայի»: Brochardus monachus de Armenis ef Feorqianis. (Прав. Собес. 1858): Եկզարխները աւելի բարձր էին համարւում քան միտրոպոլիտները, Երուսաղէմի միտրոպոլիտը ենթարկւում էր և դասւում Կեսարիայի եկզարխից, Պօլսի միտրոպոլիտները ձեռնադրւում էին իրակլեայի եկզարխից; այս տիտղոսը վերացաւ պատրիարքութեան հաստատութեամբ: Հայոց մէջ եկզարխ տիտղոս չի եղել, այլ սկզբից հէնց կաթուղիկոս բառը մտել է մեր մէջ և ցայսօր մնացել է նոյն գործածութեամբ, նոյն բովանդակութեամբ:

6) ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԻՒՆՆԵՐ

Քաղաքական և եկեղեցական կեանքի բարդութեանց և

փոփոխութեանց հետևանքը եղաւ եկզարխների իրաւունքի և նշանակութեան բարձրացումն, եկեղեցիների վէճերը առաջացրին և նրանց կառավարչական իրաւունքների և պարտքերի անկախութիւն, միտրոպոլիտների նշանակութիւնը նսեմացաւ և հաստատուեցին ու առանձին դիրք ստացան նոր առաջ եկող նուիրապետական աստիճաններ, պատրիարքութիւններ, եկզարխութեանց փոխարէն: Պատրիարք նշանակում է նահապետ, ցեղապետ, ժողովրդապետ: Հրէաների նախահայրերը կոչւում էին պատրիարքներ: Հրէաները ունէին երկու պատրիարք Երուսաղէմի կործանումից յետոյ Դաւթից սկսած յաջորդաբար միմեանց աւանդելով այդ պատրիարքական իրաւունքը, նրանք նստում էին մէկը Բաբելոնում, միւսը Տիբերիադում, վերջինը և հսկում էր հռոմէական կայսրութեան մէջ ցրուած հրէաների վրայ; սրանք շարունակուեցին մինչև Ե. դարու կէսը և ապա բոլորովին կորցնելով իրանց նշանակութիւնը, ոչնչացան: (Прав. Собес. 1858 г.): Յերոնիմոսը ասում է, որ Դ. դարու վերջին՝ մոնտանիստերը ունէին պատրիարք տիտղոսով գլխաւոր եպիսկոպոսներ, որոնք հովւում էին իրանց թեմերի հօտը, եկեղեցիները: Նախկին եկեղեցում գործածութեան մէջ թէ պատահում էր պատրիարք բառը, բայց ոչ նուիրապետական աստիճանի նշանակութիւն, այլ բուն մտքով, իբրև մեծ, աւագ, պատկառելի անձնաւորութիւն: Գրիգոր Աստուածաբանը իւր հօրը՝ Գրիգոր Նազիանզացուն անուանում է պատրիարք, նա նոյպէս և պատրիարք էր անուանում Պօլսի տիեզերական ժողովի եպիսկոպոսներին, որոնք արիութեամբ կռւում էին հերետիկոսների դէմ: Թէոդոսի փոքրը 449 թ. Հռոմի Լևոն եպիսկոպոսին մի գրութեան մէջ պատրիարք է անուանում: Առաջին անգամ Սոկրատ Ե. գլ. յիշում է պատրիարքների մասին իբրև բարձր և նոր իրաւունքներ վայելող նուիրապետների, հաստատութիւն գտած իբր թէ Պօլսոյ բ. տիեզ. ժողովի կողմից, թէև այդպիսի մեծ իրաւունքներ նոյն ժողովում չէին տուած. ոմանք էլ հաստատում են որ այդ տիտղոսը և իրաւունքները Նիկիայի ժողո-

վում են որոշել, բայց այնտեղ էլ այդքան մեծ իրաւունքները չեն յատկացրել: Հներում այդպիսի մեծ իրաւունքներ ունէր Աղէքսանդրիայի արքեպիսկոպոսը, որը շատ միտրոպոլիտներ ունէր ձեռքի տակ, ձեռնադրութիւններ էր կատարում, դատի ենթարկում եւայլն եւայլն. բայց պատրիարք չէր կոչւում: Առաջին անգամ պաշտօնապէս որոշում եղաւ պատրիարքների իրաւունքների մասին Քաղկեդոնի ժողովում, զանազան վէճերի, խռովութիւնների առաջն առնելու նպատակաւ նրանց դրուեցաւ լայն իրաւունքներ. պատրիարք բառը արքեպիսկոպոս տիտղոսի հետ մտաւ ժողովի արձանագրութիւնների մէջ, թէև կանոնների մէջ այդ անունը չի յիշւում: Յուստինիանոսի 123 նովելլայով հաստատուեց և քաղաքացիական իրաւունքի սահմանի մէջ մտաւ պատրիարքի լիազօրական գլխաւորութիւնը եկեղեցու վարչական շրջանում: «Եթէ միտրոպոլիտի վրայ բողոք լինի կամ եպիսկոպոսից, կամ կղերից, կամ ուրիշ մէկից, այն ժամանակ պիտի գատի նրաց մօտիկ պատրիարքը». «ով կհակառակի միտրոպոլիտին, եպիսկոպոսին, այն ժամանակ դատը վարելը ընկնում է արքեպիսկոպոսին կամ շրջանի պատրիարքին, և նա կանոնով և օրէնքով վերջնականապէս կվճռի գործը»: Զ. տիեզերական ժողովը 36 կանոնով որոշեց պատրիարքութիւնների տեղերը և կարգը. առաջին համարուեց Պօլսոյ պատրիարքը, երկրորդը՝ Աղէքսանդրիայինը, երրորդը՝ Անտիոքինը, չորրորդը՝ Երուսաղէմինը. Հռոմի եպիսկոպոսը վաղուց յատկացրել էր իրան պապ տիտղոսը և այդպէս էլ պահեց միշտ, իրան համարելով առաջին պատրիարք աշխարհում: Պօլսոյ պատրիարքը ստացաւ Թրակիա, Պոնդոս և Ասիա, այնպէս որ 9-րդ դարում ունէր 80 միտրոպոլտութիւն, 35 արքեպիսկոպոսութիւն: Աղէքսանդրեայի պատրիարքը ունէր 10 թեմ, 100 քաղաքի եպիսկոպոսներով: Անտիոքինը 12 միտրոպոլտութիւն ունէր, Իսաւրեայից և Կիլիկեայից մինչև Արաբիա, բացի Պաղեստինից: Երուսաղէմի պատրիարքը ունէր 3 թեմ, 58 քաղաքի եպիսկոպոսներով:

Պատրիարքները ունէին այն բոլոր իրաւունքները, ինչ

որ ունէին նախկին միտրոպոլիտները և էկզարխները, և բացի դրանցից նրանց իրաւունքների սահմանը շատ լայնացաւ. 1) Նոքա էին ընդհանուր ժողով հրաւիրում և արձակում. 2) Նոքա էին միտրոպոլիտներ ձեռնադրում, նշանակում, դատում և պատժում. 3) Նրանց վճիռը վերջնական էր և բողոքման չէր ենթարկւում: 4) Իաչ հաստատելով որ և է թեմի եկեղեցում, այն եկեղեցին և վանքը ձգել իւր անմիջական հսկողութեան տակ, անկախ թեմի կառավարչից. 5) Կանոններ հրատարակել եկեղեցու համար, բացատրել զանազան անորոշ կարգեր և մեկնութիւններ տալ զանազան դէպքերի և հանգամանքների համեմատ եկեղեցական սահմանադրութիւնների վերաբերմամբ: 6) Եկեղեցում անուան յիշատակութիւն: Այդ իրաւունքների հետ գրւում էր նրանց և պարտաւորութիւններ: 1) Եկեղեցու վերաբերմամբ նոր բան մտցնել չէին կարող տեղերական ժողովի. 2) Իւր շրջանում բոլոր կարգադրութիւնները պիտի անէր եպիսկոպոսական ժողովով. 3) միտրոպոլիտի նշանակումը և արձակումը լինի եպիսկոպոսների խորհրդով:

Պատրիարքների մէջ առաջին տեղերից մէկը բռնում էր Հռոմայ պապը, ոչ իբրև ընդհանուր գլուխ, այլ մէկը պատրիարքներից որը պատւում էր իբրև մայրաքաղաքի եպիսկոպոս ըստ աւանդական կարգի: Ր. և Զ. ժողովներում Պօլսի պատրիարքը ստացաւ նոյն իրաւունքները, ինչ որ Հռոմինը, միայն առաջին տեղը վերապահուեց պապին: Վեցերորդ դարում առաջին անգամ 512 թուին, Պօլսոյ ժողովում Յովհան բ. պատրիարքին յատկացրին «տիեզերական» տիտղոսը: Յուստինիանոսը նոյնպէս շարունակեց անուանել պատրիարքին այդ տիտղոսով: Հռոմի պապ Գրիգորը հակառակ այդ տիտղոսին, սկսեց անուանել «Ծառայ Ծառայից Աստծոյ». տիտղոսները իհարկէ գործնական կեանքում ոչ մի նշանակութիւն չունեցան, պապը իբրև միահեծան պետ սկսեց բոլորին ենթարկել իրան, իսկ պօլսոյ իրաւասական սահմանը մնաց իւր շրջանում չանցնելով մեւս պատրիարքների վրայ:—(Прав. Собес. 1858 г.):

Գ) ՀՐՑՈՑ ՀՐՑՐՊԵՏՈՒԹԻՆԸ

Ինչ իրաւունքները որ ունէին Ե. Զ. դարերից սկսած պատրիարքները, նոյն իրաւունքները արդէն յատկացրել էին Դ դարու սկզբից հայոց կաթուղիկոսներին Լուսաւորչից ըսկսած։ Հայոց եկեղեցու վարչական ձևը շատ նման էր Եգիպտոսի եկեղեցու կառավարութեան, դեռ շատ առաջ պատրիարքութեան հաստատութիւնից, Աղէքսանդրիայի արքեպիսկոպոսը ունէր պատրիարքական իրաւունք, նա միակ ձեռնադրում էր առանց եպիսկոպոսների մասնակցութեան թէ միտրոպոլիտ թէ եպիսկոպոս, այն ինչ նոյն ժամանակում միտրոպոլիտ ձեռնադրում էին մի քանի եպիսկոպոսներ, նրանք ինքեանք դատում և մինչև իսկ ձեռնադրում էին եպիսկոպոսները և պատժում (260-ին Դիոնեսիոսը և 304-ին Պետրոսը). համարեա նոյն ձևով եկեղեցու կառավարութիւն մտաւ 300 թուից և հայոց մէջ։ Հէնց սկզբից հայոց կաթուղիկոսը ոչ միայն ձեռնադրում էր եպիսկոպոսներ առաջնորդութեան համար, այլ և վրաց և Աղուանից կաթուղիկոսներին, նոյն իսկ Լուսաւորիչ իւր ժառանգին հայոց կաթուղիկոս ձեռնադրեց։ Թէ ինչպէս էր լինում կաթուղիկոսի ընտրութիւն և ձեռնադրութիւնը փորձենք տեսնել։

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Առաջին կաթուղիկոսի՝ այն է Գրիգոր Լուսաւորչի թէ ընտրութեան և թէ ձեռնադրութեան համար ունենք լիուլի տեղեկութիւն՝ ագաթանգեղոսի պատմութեան մէջ լիշուած։ Լուսաւորչին հոգևոր պետ ընտրելու համար Տրդատ հրամայեց բոլոր դասակարգի անձանց կանչել ժողովի. «իսկ թագաւորն Տրդատիոս հանդերձ մխաբանութեամբ կնաւ իւրով Աշխէն տիկնաւ, և քերբ Խոսրովի դխտով, հրաման ետ ի ժողով [կոչել մխաբանութեամբ ամենայն զօրաց իւրոց։ Եւ վաղվաղակի հասանէին ի ժամագիրն ի կողմանց ըստ հրամանին՝ յԱյրարատ գաւառ ՝ի Վաղարշապատ քաղաքն։

Ջանզի և թագաւորն չու արարեալ անդր հասանէր։ Եւ կուտեցան զօրքն ամենայն և մեծամեծք և կուսակալք, գաւառակալք, պատուաւորք, պատուականք, զօրավարք, պետք և իշխանք, նախարարք և ազատք, դատաւորք և զօրագլուխք, հասեալ կային առաջի թագաւորին . . . . . Եկայք, ասէ (թագաւորն), ճեպեսցուք՝ զայս զառաջնորդ կենաց մերոց տուեալ մեզ յԱստուծոյ զԳրիգոր՝ հովիւ կացուցանել» Ագաթ. ձժա։ Թէ ինչո՞ւ Գրիգորին ուղարկեցին Կեսարիա և ո՛չ ուրիշ տեղ, օրինակ Եգեսեա, թէև Սրտազում էլ ըստ աւանդութեան եպիսկոպոս կար, բայց իսկապէս կա՞ր թէ ոչ, յայտնի չէ, բայց Եգիսեան յայտնի աթոռ էր, մեծ դպրոց ունէր, հայ պատանիները շատ էին ուղարկւում այնտեղ սովորելու, մինչև իսկ Փարպեցին այդ մասին յիշում է, պատճառն այն էր, առաջին որ Գրիգորը ընտանիքով ապրում էր Կեսարիայում, 2) կրթութիւնը ստացել էր այնտեղ, և 3) գուցէ թէ իրրև Կեսարիայի ծխական-ժառանգաւոր իրաւունք չունենար ուրիշ թեմակալից ձեռնադրութիւն ստանալ, մանաւանդ որ Կեսարիայի թեմը՝ որ կոչւում էր նոյնպէս Պոնտոսի թեմ, Նէոկեսարիայի արքեպիսկոպոսութիւն, իրրև յունական աթոռ մեծ անուն ունենար քան Եգիսիայինը։ Գրիգոր գնում է հասնում Կեսարիա և ձեռնադրւում է եպիսկոպոս – կաթուղիկոս հայոց. այն ժամանակ օծման կարգը դեռ ևս մտած չէր երևում, ինչպէս երևում է պատմագրի խօսքից. «Եւ եղեալ ժողով բազում եպիսկոպոսաց ՝ի քաղաքն Կեսարացւոց՝ զի ձեռնադրեսցեն զսուրբն Գրիգորիոս . . . սրբով աւետարանաւն եդին ՝ի վերայ զձեռս ժողովք եպիսկոպոսացն սրբոց և գլխաւորն Ղևոնդիոս, զի նա առցէ իշխանութիւն յերկինս և յերկրի, առեալ զփականս արքայութեան երկնից»։ Ձեռնադրութեան գլխի մէջ էլ ասուեցաւ, որ եպիսկոպոսի, քահանայի նախնական ձեռնադրութիւնը լինում էր մի այլ աւետարանով, ազօթքով և ձեռքը գլխին դնելով։ Նշանաւոր է Ղևոնդիոսի տուած թուղթը, որի մէջ Գրիգորի եպիսկոպոսութիւնը համարում է «նորոգեալ քահանայապետութիւն

ձերոյդ նահանգիդ» այս ձևով «Եւ հաստատեալ կացցէ վկայութիւն ի մէջ երկուց կողմանցս, զի պարգևաբաշխութիւն նորոգեալ քահանայապետութեանդ ձերոյդ նահանգիդ, առ ի մէնջ կացցէ անշարժ՝ յեկեղեցւոյ Կեսարու» . . . որ նշանակում է, թէ արդէն Թադէոսով և Բարդուղիմէոսով Հայաստանը քահանայապետութիւն է ստացել, իսկ այժմ Կեսարիայի ձեռնադրութեամբ նորոգւում է այդ քահանայապետութիւնը (տես «Նախալուսաւորչեան եկեղեցի» գլուխը)։ Տրդատի հաստատած ձևը, համազգային կաթուղիկոսական ընտրութիւնը շարունակուեց նրանից յետոյ է. Բիւզանդ պատմելով Տիրանի ժամանակ Յուսիկի ընտրութեան մասին, ասում է «Յայնժամ խորհուրդ արարեալ թագաւորին և իշխանացն, և համօրէն իսկ աշխարհին, թէ զո՞ր արժանի այնմ իմիք գտանիցին». Չահակի ընտրութեան ժամանակ. «Ապա յայնմ ժամանակի միաբան խորհեցան աշխարհօրէն խորհուրդ եթէ ում պարտ իցէ գՀայրապետութեանն գկաթուղիկոսութիւնն ունել»։ Ներսէս մեծի ընտրութիւնը այսպէս է նկարագրում Բիւզանդ-57 երես. «Ապա ի մի ժողով կուտեցան առ արքայն Արշակ մեծամեծք նահապետք ազգաց ազգաց, տոհմաց տոհմաց, գնդից և գրօշուց տեարք, ամենայն սատրապք, նախարարք և ազատք, պետք և իշխանք, զօրավարք և սահմանապահք, ՝ի մի հաւանութիւն միաբանական խորհուրդք, զի եկեսցեն տեսցեն թէ ո՞ւմ արժան իցէ նստել յաթոռ Հայրապետութեան»։ Եւ ընդհակառակն Արշակ երբ բարկացած հրամայեց բոլոր եպիսկոպոսներին ժողով կազմել Զոնակին կաթուղիկոս ձեռնադրելու, ոչ ոք չեկաւ, բացի երկու ստրուկ եպիսկոպոսից։ Ե. դարում ընտրութիւնը լինում էր նոյն կարգաւ. Սեբէոս ասում է Աբրահամ Ռշտունեաց եպիսկոպոսի ընտրութեան և ձեռնադրութեան մասին. Սմբատ մարզպան «փութացաւ խնդրել յարքայէն հրաման և հասեալ հրաման յերկիր իւր, առնէ խնդիր վասն աթոռոյն մեծի, զի կարգեսցին ի վերայ նորա տեսուչ խնամող եկեղեցւոյն և առաջնորդ փրկութեան իւրոյ, և նստուցին զԱբրահամ զՌշտունեաց եպիսկոպոսն

յաթոռ Հայրապետութեան». Ուխտանէս 60 երեսում ընտրութեան համար այսպէս է գրում. «Գրէ Սմբատ վրկան մարզպան հրովարտակ հանդերձ իշխանօք աշխարհին և նախարարօք Հայոց՝ գալ ժողովել . . . ՝ի Դուին. իսկ իբրև եկին ժողովեցան առհասարակ ամենեքեան՝ եպիսկոպոսք և վանից երիցունք և գեղջ քահանայք և իշխանք և շինականք . . . . . »։ Վարազտիրոց մարզպանը «իբրև եկն ՝ի Հայս . . . . . խորհուրդ առնէր ընդ ամենեցուն տեսանել զոմն արժանաւոր։ Յայնժամ առաջադրութեամբ Թէոդորոսի Ռշտունեաց տեառն, ընտրեցին զորն անապատական՝ որում անունն էր Գրիգոր»— (Սեբէոս-64, 65 երես)։ 9-րդ դարում ընտրութեան ձևի համար գրում է Յովհաննէս պատմաբանը-Մաշտոցի կաթուղիկոսութեան վերաբերմամբ այսպէս. «ընդ որ հաճեալ հաւանեալ թագաւորն և գահամեծաւ իշխանքն և պատուական արք ազատք ընդ գեղեցկայարմար խորհրդական գնացս նորա՝ կացուցին զնա յաթոռ Ս. լուսաւորչին Գրիգորի» (Յով. 100 երես)։

Ստեփաննոս Օրբելեան պատմելով Վահան Սիւնեաց եպիսկոպոսի կաթուղիկոսական ձեռնադրութիւնը տասերորդ դարու վերջին (968 թ.) ասում է «Ապա ամենայն ժողովն ընտրեալ զՎահան վասն առաւել սրբութեանն և իմաստութեանն՝ դնեն ձեռն ի վերայ բազմութիւն եպիսկոպոսաց և օծանին զնա կաթուղիկոս Հայոց». (211 երես)։

Կաթուղիկոսական ընտրութեան այդ ձևը յարատևեց մինչև այժմ և մտաւ Ռուսաց և Տաճկաց պետական օրէնքների մէջ 1836-ի և 1861-ի սահմանադրութեանց մէջ, տես Ա. Գիրք, 677, 726--730, 761 երես)։

Արդեօք կաթուղիկոսական առանձին ձեռնադրութիւն բացի եպիսկոպոսականից կա՞ր առաջուց՝ հէնց Լուսաւորչից սկսած, թէ յետոյ մտաւ այդ սովորութիւնը, նոյնպէս և օծումն սկզբից կա՞ր, թէ՞ յետոյ սկսուեց գործածութեան մէջ մտնել։

Լուսաւորչի ժամանակ եպիսկոպոսական ձեռնադրութիւն էր միմիայն, ձեռնադրած եպիսկոպոսը կաթուղիկոս-

եպիսկոպոսապետ ընտրուելիս չէր ձեռնադրուում երրորդ անգամ, այլ ստանում էր այն բոլոր իրաւունքները և արտօնութիւնները, որոնք յատկացնուում էին այդ բարձր աստիճանին: Ագաթանգեղոս ճիդ. գլխում ասում է, որ Տրդատ իշխաններով խնդրեցին Լուսաւորչից ձեռնադրել որդուն իւր փոխարէն կաթուղիկոս «զՈստակէս, զոր ձեռնադրեաց յեպիսկոպոսութիւն փոխանակ իւր . . . . . և յետ նորա կալաւ զտեղի Հայրենեացն, անդէն նստաւ յաթոռ կաթուղիկոսութեանն Հայոց»: Մինչև եօթերորդ դարու սկիզբը այդ դրութիւնը թէ շարունակուել է թէ չէ, տեղեկութիւն չունենք, միայն Սեբէոս, որ է-դարու պատմիչ է, Ռշտունեաց Աբրահամ եպիսկոպոսի ընտրութեան մասին ասում է, 607-615 թուականներում, որ Ռշտունեաց Աբրահամ եպիսկոպոսին ընտրեցին կաթուղիկոս, բայց ձեռնադրեցին կաթուղիկոսական ձեռնադրութեամբ թէ ոչ, անորոշ է. Սմբատ մարզպան «փութացաւ խնդրել յարքայէն Հրաման և հասեալ Հրաման յերկիր իւր, առնէ խնդիր վասն աթոռոյն մեծի, զի կարգեսցեն ի վերայ նորա տեսուչ խնամակալ եկեղեցւոյն և առաջնորդ փրկութեան իւրոյ; . . . . Եւ նստուցին զԱբրահամ. զՌշտունեաց եպիսկոպոս յաթոռ հայրապետութեան». 102 երես: Նոյն Սեբէոս՝ Ներսէս շինողի ընտրութեան համար ասում է. «մինչև եհաս յեպիսկոպոսութիւն աշխարհին, և անտի կոչեցաւ յաթոռ կաթուղիկոսութեան»: Իսկ Ուխտանէս, որ ը-դարու պատմիչ է, պատմում է Աբրահամի ընտրութիւնը և պարզ ասում է որ եպիսկոպոսներին ձեռնադրեցին Ռշտունեաց Աբրահամ եպիսկոպոսին հայոց կաթուղիկոս. «և ձեռնադրեցին զկնի սրբոյ Ջատկին յաւուր կիւրակէի՝ յելս ամսոյն նաւասարդի . . . . Եւ Մանասէ եպիսկոպոս, և Քրիստափոր եպիսկոպոս, այլ եպիսկոպոսօք հանդերձ ձեռնադրեցին զԱբրահամ մեծաւ թախանձանօք և բազում աղաչանօք . . . » (60 երես):

Մովսէս կաղանկատուացին, է-րդ դարու պատմիչը, նոյնպէս վկայում է որ Աբրահամ եպիսկոպոսը ձեռնադրուեց կաթուղիկոս-«եքարձ նզովիւք զժողովն Քաղկեդոնի և

ապա ձեռնադրեցաւ». 213 երես: Որովհետև Աբրահամ եպիսկոպոսը կաթուղիկոսութիւն արաւ 607-615 թուականներին, ուստի և մենք ուշադրութիւն պիտի ընծայենք նոյն դարու պատմիչներ Սեբէոսին և Մովսէսին քան յետնորդ դարերի պատմիչներին: Ժամանակակից պատմիչներից Սեբէոսը անորոշ է խօսում ձեռնադրութեան մասին, իսկ Մովսէսը որոշ ասում է որ եպիսկոպոսին ձեռնադրեցին կաթուղիկոս. իսկ Ուխտանէսը պատմում է մինչև անգամ որ շատ եպիսկոպոսներ ձեռնադրեցին միասին Աբրահամին կաթուղիկոս: Այժմ ինչ եզրակացութեան գանք, ընդունենք որ եօթերորդ դարու սկզբին արդէն հայոց մէջ մտած էր և երրորդ ձեռնադրութիւն, այն է կաթուղիկոսական թէ ոչ. այս հարցը աւելի կանոնական գուցէ համարուի քան իրաւաբանական և այդ հիմամբ ոչ շատ ուշադրութեան արժանի, քանի որ եպիսկոպոսը կաթուղիկոս դառնալուց յետոյ, լինէր նորից ձեռնադրուած, կամ չձեռնադրուած լինչպէս Լուսաւորչից սկսած շատերը, մևևնոյն իրաւունքներն էին վայելում իբրև կաթուղիկոս երկրի մէջ, բայց որովհետև Ե. Զ. դարերում սկսուեց վէճ պատրիարքական իրաւունքների և 9 դասակարգութեան վերաբերմամբ, մեծ իրաւունքներ յատկացնելով աւագ աթոռներին և ստորադրուած դրութիւն ստեղծելով միւս աթոռների համար, ինչպէս և հայոց, Հայոց նուիրապետները անկախ եկեղեցի հրատակելով հայոցը, սկիզբը համարելով ոչ Լուսաւորիչ միայն, այլ և Թադէոս և Բարդուղիմէոս, և 9 դասակարգը մտցնելով հայոց եկեղեցու մէջ, կաթուղիկոսին համարելով համապատիւ «տիեզերական» Պօլսոյ պատրիարքին, երկրորդ դասը համարելով վրաց և Աղուանից կաթուղիկոսներին իբրև արքեպիսկոպոսներ ևայլն ևայլն. մնացած դասերն էլ լրացնելով, կամեցան մրցել ընդհանուր եկեղեցու մէջ առաջացած նոր նուիրապետական աստիճանի հետ-այն է պատրիարքութեան, և մտցրին այդ նպատակաւ ըստ Հին Ուխտի քահանայապետական ձեռնադրութեան՝ նոր կաթուղիկոսական ձեռնադրութիւն լիակատար իրաւունքներով: Եւ Աբրհամի ձեռ-

նադրութիւնը ժամանակակից է այդ վէճերին, ուստի և դժուար չէ պնդել, որ Մովսէսի վկայութիւնը, նոյնպէս և Ուխտանէսինը հաւաստի է և կաթուղիկոսական ձեռնադրութիւնը մտած պիտի լինի եթէ ոչ 600 թուից առաջ, գոնէ այդ ժամանակներում։

Արգեօք ձեռնադրութեան հետ կաթուղիկոսական օծումն կա՞ր, թէ այդ օծումն յետոյ մտաւ սովորութեան մէջ։

Օծման սովորութիւնը կար ոչ միայն հրէաների, այլ և կռապաշտ ազգերի մէջ։ Եգիպտոսի փարաւոնների գլխին թագ դնելիս քրմապետները իւղ (елей) էին օծում գլխին։ Պարսից թագաւորներն կարդում էին տաճարում և սուրը ջրով լուացւում։ Հրէից մէջ յայտնի է Դաւթի օծումն (Սաղմոս)։ Քրիստոնէութիւնը մտնելուց յետոյ Լևոն մեծը 457-ին պսակուեց թագով. Անաստասը 491-ին պսակուեց թագաւոր պատրիարքի ձեռքով։ Օծման կարգի սկիզբը անյայտ է և անորոշ. ենթադրւում է որ Թէոդորոս մեծը օծուեց 518-ին. Յովհաննէս պատրիարքը գրում է Որմիզդ պապին, որ նա իջեցրեց շնորհաց եղջիւրը Յուստինիանոսի գլխին, որ Աստծոյ ողորմութիւնը իջնի նրայ վրայ. ծ. դարում այդ մասին վկայութիւններ կային։ («Странникъ» 1883 г. 184 երես)։ Արգեօք կայսերական օծման հետ միասին մտաւ ձեռնադրութեան մէջ օծման կարգը, կամ թէ առաջ, կամ յետոյ կա՞ր արդեօք այդ սովորութիւնը։ Այդ խնդիրը անորոշ է, մենք ունենք հատու կտոր տեղեկութիւններ այդ մասին։ Ստեփաննոս Օրբելեանը պատմում է Վահան կաթուղիկոսի ձեռնադրութիւնը և յիշում է որ օծեցին նրան կաթուղիկոս (968 թուից 969 թիւը). «Եւ թագաւորն Աշոտ՝ որդի Սմբատայ՝ առնէ ժողով եպիսկոպոսաց և հարց սրբոց ՝ի թագաւորանիստն գԵրակավան, կոչէ և զՎահան ՝ի Սիւնեաց և հրամայէ ընտրել զմի ոք յեպիսկոպոսացն և կացուցանել յաթոռ Հայրապետութեան Հայոց։ Ապա ամենայն ժողովոյն ընտրեալ զՎահան վասն առաւելսրբութեանն և իմաստութեանն՝ դնեն ձեռն ՝ի վերայ բազմութիւն եպիսկոպոսացն և *օծանեն* զնա կաթուղիկոս Հայոց». 211 երես։ Յովհան-

նէս պատմաբանը (899 – 931) պատմում է Բագրատունեաց առաջին թագաւորի օծումն Գէորգ կաթուղիկոսի ձեռամբ 858 թուականներին. «կոչեցաւ ապա և անդ մեծ Հայրապետն Գէորգ և զհոգևոր օրհնութեանցն գովութիւնս աստուածային ի վերայ կատարեալ փոխանակ օծման սրուակի իւղոյն՝ պսակեն զնա թագաւոր ՝ի վերայ Ասքանազեան ազին»։

Ալիշան՝ շնորհալու վրայ խօսելով ասում է, որ ձեռնադրութեան ժամանակ օծումն մտցնելու կարգը արաւ Շնորհալին կամ իւր եղբայրը. «շնորհալւոյ ինքներին կամ իր եղբօր հաւանութեամբ ըրած գլխաւոր նորութիւնն էր ձեռնադրութեանց մէջ միւռոնիւ օծումն ալ մտցնել . . . և թուի թէ դեռ չէր տարածուած նոր սովորութիւնն, կամ չէր լսուած ի լատինաց». 452 երես։ Նոյն գրքի 184 երեսում ասում է, որ Մխիթար կաթուղիկոսը 1343-ին պապի անունով գրած նամակում յիշում է, որ իրանից 200 տարի առաջ, «Հայք ընդունեցան ՝ի լատինաց Ձեռնադրութեան նոր կարգը, և ուրիշ մա՛լ աւելի որոշակի, թէ եպիսկոպոսի և քահանայի օծումը, զոր Հայք չունէին՝ Յունաց պէս, ընդունեցան ՝ի լատինաց Ներսիսի կլայեցւոց ատեն»։

Ըստ Ալիշանի ձեռնադրութեամբ օծումն սկսուել է Հայոց մէջ Շնորհալու ժամանակից՝ այն է 1166-1173 թուականներին, կամ ըստ նոյն անձի վկայութեան ինչպէս երևում է իբր թէ Մխիթար կաթուղիկոսի նամակից՝ 1143— թուին. եթէ հաւատանք Օրբելեանին, Վահան կաթուղիկոսը օծուեց 968 թուին, որ ասել է թէ օծման կարգը արդէն կար Ալիշանի ենթադրածից 200 տարի առաջ Հայոց եկեղեցու մէջ. իսկ եթէ մի քիչ ազատ ենթադրութիւն անենք, պիտի ասենք որ Հայոց կաթուղիկոսների օծումն սկսուել է Բագրատունեաց թագաւորների օծման հետ միասին, քանի որ թագաւոր և կաթուղիկոս համարւում էին համապատիւ և օծման արարողութիւնը հետևումն Հին ուխտի քահանայապետի և Դաւթի օծումներին. առաջին թագաւորական օծումն եղաւ Հայոց մէջ 885 թուին ըստ օրինակի յունաց կայսերաց, որին և հետևեց Հայոց կաթուղիկոսների օծումն։

ԿԱԹՈՒՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ ՊԱՐՍՔ ԵՒ ԻՐԻՒՆՔ

Լուսաւորչից սկսած կաթուղիկոսական գահը մեծ պատուի և յարգանքի մէջ էր մինչև Ս. Սահակ, յետոյ թէև իւր դիրքը պահում էր և մեծ նշանակութիւն ունէր, բայց չէր կարող ուժի, ազդեցութեան և եկեղեցական նշանակութեան կողմից հաւասարուել նախկին շրջանին: Առաջին՝ նրա համար, որ կաթուղիկոսական իշխանութիւնը շարունակութիւն էր քրմապետութեան, որը մեծ նշանակութիւն ունէր կռապաշտական շրջանում. քրմապետները ընտրւում էին թագաւորական ցեղից, Վահեվահեան տոհմից և թագաւորի հետ համապատիւ էին: Երկրորդ՝ լուսաւորչի տոհմը իբրև պարթևական ցեղ, ազգակից էին հայոց թագաւորական տան և մինչև իսկ խնամութիւն էին անում թագաւորական տան հետ. «ետ արքայորդին Տիրան զդուստր իւր կնութիւն Յուսկանն որդւոյ Վրթանիսի». Բիւզ. 10 երես: Այս երկու պայմանները Սահակից յետոյ չկային, Հայաստանի բնիկ թագաւորութիւնը վերջացաւ և աստանդական կաթուղիկոսական գահը իւր մեծ ոյժը գործադրելու միջոցներ չունէր: Նախկին շրջանում Տրդատի օրերից սկսած կաթուղիկոսացու անձանց ուղարկում էին Կեսարիա ամենամեծ փառքով, ուղեկցութեամբ բոլոր մեծ իշխանների, արքունական ոսկեապատ կառքում նստած. «Եւ հանէին զԳրիգոր յոսկեապատ կառն արքունեկան՝ սպիտակաձիգ ջորոյն» Ագաթ. ճԺգ. «զի նըստուսցեն զերանելին Յուսիկ յարքունական կառն» Բիւզ 26: Կաթուղիկոսները յետ դառնալիս կեսարիայից, թագաւորները բոլոր նախարարների հետ գնում էին ընդ առաջ. «ապա իբրև լուաւ ինքն արքայն, ընդ առաջ ելանէր նմա ՚ի դաշտն յայն կոյս գետոյն Տափերն կամրջի, ամենայն բանակօքն բազմութեամբք...» Բիւզ. 26: Այս շրջանի համարեա բոլոր կաթուղիկոսները բառի բուն նշանակութեամբ Քրիստոսի փոխանորդներ էին, անվախ և աներկիւղ քարոզիչ, պաշտպան ընտանեկան սրբութեան, խոստ յանդիմանիչ թագաւորի և նախարարաց անառակ կեանքի, լկտի վարմանց և մինչև իսկ անառակ թագաւորին արգելող եկեղեցի մտնելու:

«Զի թէպէտ աւուրբք մանուկ էր (Յուսիկ), այլ զաւագութիւն ծերութեան խրատուն յինքեան ցուցանէր, զհայրենի գործ խրատուականն զառաւելութիւն քաջութեան կատարէր« – իսկ երբ խիստ յանդիմանութիւններ ստանալուց յետոյ՝ Տիրան թագաւորը շարունակեց անառակ կեանքը, Յուսիկ կաթուղիկոսն եկեղեցու դուռը կտրեց և չթողեց թագաւորին ներս մտնել «Չես արժանի, հիմ գաս, մի՛ գար ՚ի ներքոս» Բիւզ. 28:

Կաթուղիկոսները սկզբից հէնց ձեռք բերին հետևեալ իրաւունքները, ա. Աշխարհի մէջ երկրորդ անձն համարուել թագաւորից յետոյ, իսկ եկեղեցու մէջ և եկեղեցական նուիրապետութեան մէջ առաջին անձնաւորութիւն: Նա միայն իրաւունք ունէր ըստ Բիւզանդի թագաւորի հայը օրհնել «զի որ լինին հայրապետք հայոց, նա զրանն արքունի իշխեսցէ զհայն օրհնել» 19. երես: Նրանք էին արքունիքում թէ թագաւորին, թէ թագուհուն ճանապարհի բերում և նախատում անառակ կեանք վարելում. Վրթանէսը թագուհուն նախատեց պոռնկութեան համար, «վասն զի յանդիմանէր զնա (զթագուհին) սուրբն (վրթանէս) վասն գաղտնի շնութեան և կծծութեան բարոյից պոռնկութեանն». (Բիւզ. 7): Ներսէս մեծը միշտ կշտամբում էր Արշակին և թոյլ չէր տալիս եկեղեցի մտնել. «Այլ սուրբն Ներսէս եպիսկոպոսապետն Հայոց Հանապազօր ընդդիմացեալ թագաւորին պապայ, կշտամբէր և յանդիմաներ մեծաւ վկայութեամբ յանդիմանութեամբ, և վասն չարեաց նորա բազմաց ոչ համարձակէր նմա զսեամս եկեղեցւոյն կոխել, և ոչ մտանել նմա ՚ի ներքոս» (Բիւզ. 180): Իսկ երբ Արշակ ծաղրում և ծիծաղում էր Ներսէսի խրատների և յանդիմանութիւնների համար, վերջինս անիծեց թագաւորին, նզովեց նրա արած գործերը և դուրս եկաւ ապարանքից. «աւերեսցին գործք ձեռաց քոց և մի՛ շինեսցեն» 95 Բիւզ.: Թէ որքան մեծ էր կաթուղիկոսների յանդիմանական վերաբերմունքը դէպի վատ թագաւորի արարքը, մինչև իսկ երբ կաթուղիկոսը տեսնում էր հակաքրիստոնէական վարմունքը թագաւորի կողմից և չէր

խօսում, համարում էին սարուկների սարուկ այդպիսի կաթուղիկոսին. «այլ փոխանակ Ներսէսի կացուցին զՁունակոմն անուն . . . և էր սարուկ ՚ի սարկաց արքունի». Բիւզ. 105։ Կաթուղիկոսները այդքան խիստ լինելով հանդերձ, ընդունում էին որ թագաւորն է առաջին անձն պետութեան մէջ, որ նա ամեն բան կարող է անել, ուստի և պէտք է ամեն լաւ բանի օրինակ լինի ժողովրդին. Ներսէս թագաւորին ասում է. «Այլ քեզ, ո՛վ թագաւոր, արժան էր իբրև զայր թագաւոր, յայտնի հրաման տալ և սպանանել, զի ո՛վ էր որ արգելոյր զքեզ, կամ ո՛վ էր որ պահէր զձեռն քո ի գործոյն, զոր ինչ կամէիր գործել». Բիւզ. 183։

բ. Կաթուղիկոսները իբրև գլուխ եկեղեցու իրաւունք ունեն ժողներ սահմանելու, սրբերի յիշատակը տարեկան որոշ օր կատարելու հրաման տալու, մարտիրոսների և նահատակների յիշատակը ժողնախմբելու կարգադրութիւն անելու, ՚ի հարկէ խորհրդակցութեամբ և հանրական համաձայնութեամբ։

Լուսաւորիչ սահմանում է Յովհաննու Մկրտչի ժողը. «Եւ հրամայեաց կատարել անդ ամյամբ ՚ի տեղւոյն. ժողովել ամենեցուն ՚ի յիշատակ սրբոցն, որ օր ևթն էր սահմի ամսոյ, զի խնդութեամբ ժողովեալ, զօր ժողին խմբեսցեն». Ագ. ճգե։ «Եւ զյիշատակ վկայիցն բերելոց ժամադրեաց ժող մեծ հռչակել . . . . . Նաւասարդ աւուր։ Զի ժողովեալ ի յիշատակ մեծի երանելւոյն Յովհաննու, և սուրբ վկային Աստծոյ Աթանագինի, յայնմ աւուր խմբեսցի և ՚ի նմին յաւանել»—Ագ. ճժթ։ Վրթանէս կաթուղիկոսը առաջինն եղաւ որ պատերազմի դաշտում ազգի համար մեռածներին եկեղեցական նահատակներ համարելով ժող սահմանեց, «Եւ ետ օրէնս ընդ աշխարհ մեծ քահանայապետն Վրթանէս, զնոցա առնել զյիշատակն ամյամբ, և սրբ փոխանակ աշխարհին փրկութեան մեռանիցին ՚ի նմանութիւն նոցա, եդ կանոն՝ յիշել զնոսա առ սուրբ սեղանն Աստծոյ ՚ի ժամ պատարագին . . . . . զի սոքա, ՚ի նմանութիւն Յուդայի և Մարաթեայ Մակաբէի անկան ՚ի ճակատ պատերազմի» Բիւզ. 23։

գ. Հայոց թագաւորներին օծելու իրաւունքն պատկանում էր մի միայն հայոց կաթուղիկոսներին. Բագրատունեաց առաջին թագաւորին օծելու համար հրաւիրուեց Գէորգ կաթուղիկոս, որը օծեց նաև նրա ժառանգ Սմբատին. «կոչեցաւ ապա և անդ մեծ հայրապետն Գէորգ և զհոգևոր օրհնութեանցն գովութիւնս աստուածայինս ի վերայ կատարեալ փոխանակ օծման սրուակի իւղոյն՝ պսակեն զնա թագաւոր ի վերայ Աբքանազեան ազին». Յով. կաթ. 78 երես։ Երկրորդական՝ այսպէս ասած նահանգական թագաւորներին օծումն էր տեղական առաջնորդը եպիսկոպոսներով միասին. Սիւնեաց թագաւոր Վասակին օծեց Սիւնեաց առաջնորդ Գրիգոր եպիսկոպոսը. «Եւ պայազատէ զտէրութիւն նորա մանուկ որդին իւր Վասակ, որ և սա մեծահանդէս ժողովով և ազատակոյտ բազմութեամբ օծանի թագաւոր Սիւնեաց և Բաղաց ձեռամբ Տեառն Գրիգորի՝ Սիւնեաց եպիսկոպոսի։ Օրբ. ծե. Գլ.։

դ. Կաթուղիկոսին է յատկացրած Լուսաւորչից սկսած եպիսկոպոս ձեռնադրելու մեռոն եփելու իրաւունքը հայոց եկեղեցիների գործածութեան համար։ Տես Ա. գիրք 465, 690-694, 412, 428, 487, 521, 522, 679 երես)։

ե. Ազգային եկեղեցական ժողովները հրաւիրել և ցրուելու իրաւունքը պատկանում է կաթուղիկոսին, այդ ժողովներում նախագահութիւն է անում կաթուղիկոսը՝ մինչև իսկ եթէ թագաւորը ներկայ էլ գտնուելու լինի ժողովում։ Մարմնաւոր իշխանութիւնը օգնում է և կարգը պահպանում։ Առանց կաթուղիկոսի ժողով կարող է լինել միմեայն երկու դէպքում, առաջին՝ երբ կաթուղիկոսը մեռած է՝ նոր ընտրութիւն է լինում, երկրորդ՝ երբ կաթուղիկոսին ազգային ժողովը դատ է ենթարկում հակաեկեղեցական գործողութիւնների պատճառով, այս երկու դէպքումն էլ նախագահութիւն է անում աւագագոյն եպիսկոպոսն, նախորդ դարերում Աղուանից կաթուղիկոսը, հրաւիրում էր

եպիսկոպոսական և իշխանական խառն ժողովները: Տես Ա. գիրք 313, 319, 356, 366, 389, 390, 406, 426, 437, 438, 439, 441, 444, 449, 462, 465, երես):

զ. Կաթուղիկոսի նախագահութեամբ և հրաւէրով եղած ազգային ժողովը վաւերական է այն դէպքում, երբ մասնակցում են ժողովին բոլոր Հայոց նահանգների հոգևորական և աշխարհական պատգամաւորները, հակառակ դէպքում, երբ ժողովին մասնակցում են միմեանց Հայոց թեմերի մի մասն, այդպիսի ժողովը անվաւեր է, Հայոց եկեղեցին մերժում է այդպիսի ժողովը, եթէ գտնում է ժողովի վճիռները հակառակ Հայոց դաւանութեան, եկեղեցու կարգերին և ժողովրդի կամքին: Տես Ա. գիրք. 448, 462 երես:

է. Կաթուղիկոսն է Հայոց եկեղեցու գերագոյն դատաւորը, վերջնական վճիռ կայացնողը՝ առանց բողոքման եպիսկոպոսներ, իշխաններ, նոյն իսկ Հայոց թագաւորներին, երբ վճիռները եղել են ազգային ժողովով, կամ մասնաւոր դատերը՝ եպիսկոպոսների քննութեամբ և համաձայնութեամբ: Տես Ա. գիրք. 437, 438, 439, 441, 444, 448, 449, 462 երես):

ը. Կաթուղիկոսն է օրէնսդրական մարմնի միակ գլուխը, որը կարող է կանոններ հրատարակել մարմնի հետ եկեղեցու բոլոր վարչական կազմի վերաբերեալ, բացատրել մութ կէտեր. դաւանաբանական ոչ մի փոփոխութիւն անել չի կարող առանց ազգային ժողովի. հրատարակուած կանոնները պիտի լինեն ընդհանուր ազգի կամքին և սովորութիւններին ոչ հակառակ: Տես Ա. գիրք 448, 462 երես):

թ. Կաթուղիկոսի անունը միակն է, որ ընդհանուր եկեղեցում յիշատակութեան իրաւունքն է վայելում: Բացի կաթուղիկոսի անունից յիշւում է և տեղական առաջնորդի անունը, տեղական եկեղեցիներում:

ժ. Կաթուղիկոսն ենթարկւում է ամեն բանում, ամեն խնդրում՝ միմեանց օրինաւոր ազգային-եկեղեցական ժողովի

իրաւասութեան, վճռին և կարգադրութեան: Տես Ա. գիրք. 438, 441 երես:

ժա. Կաթուղիկոսական պաշտօնը յարատև է՝ ցմահ, և ոչ մի քմահաճոյքի պատճառով հեռացնել, կամ հեռանալ ինքը գահակալը չէ կարող, բացի մարմնական և մտաւոր անզօրութեան և ճգնութեան դէպքում, այն էլ միշտ ընդհանուր ազգի ցանկութեամբ: Պատմութեան մէջ ունենք երկու դէպք՝ Եփրեմ կաթուղիկոսի հրաժարականը յոյժ զառամելութեան, տեսութեան պակասութեան պատճառով (տես ամենայն Հայոց կաթ. Երիցեանի, 602-610) և Լուսաւորչի ճգնութիւնը: Լուսաւորչի կաթուղիկոսութիւնը եղաւ 301-325 թ. և Եփրեմին 1809-1831 թուականներին: Ներսէս Ե. Եփրեմի հրաժարման հակառակ էր, գտնելով այդ հակառակ Հայոց եկեղեցու ոգուն. «Պատնի պատրիարգացեալ ըստ կանոնաց Հայոց օծութեամբ և ոչ սոսկ կոչմամբ, և չունի զիրաւունս առանձնականս ոչ բնաւ զկանոնս ազգայինս վասն հրաժարեցուց անելոյ զանձն իւր առաջ քան զվախճան կենաց իւրոց առանց երևի վնասուց պատրիարգական աթոռոյս և մեծագոյն գալթակղութեանց և շփոթութեանց ամենայն ազգին Հայոց». «Ամենայն Հայոց կաթ. եղեց.» 218 երես:

ժբ. Հայոց կաթուղիկոսին է յատկացրած «ամենայն Հայոց» տիտղոսը, Աղթամարի և Սսի կաթուղիկոսները իբրև թեմակալ առաջնորդների շրջան ունեցողներ՝ կոչւում են «տանն Կիլիկիոյ, և Աղթամարայ» կաթուղիկոսներ: «Ամենայն Հայոց» տիտղոսը առաջին անգամ պատահում ենք Խաչիկ կաթուղիկոսի կոնդակում տասներորդ դարու վերջերում. (տես «Արարատ» 1867 թ.) որ առաջացած պիտի լինի կաթուղիկոսական աթոռի բաժանման ժամանակից-967-ից յետոյ:

ժգ. Կաթուղիկոսը վայելում է այն բոլոր արտօնութիւնները և արտաքին շուքն ու պատիւը, որը վայել է իւր բարձր կոչման. շամիրներ, գաւազանակիր, պահնորդ խումբ ունենալ, արքայական կառքով շրջել «յոսկիապատ կառն ար-

քունական» և այլն և այլն։

Ժգ. Ամենայն Հայոց կաթուղիկոսին է պատկանում շնորհման և ներման իրաւունքը «ոչ յօրինակ այլոց» (испепація) Հայոց եկեղեցու մէջ. պահի աստիճաններում բացառիկ դէպքերում, ցմահ կարգալոյծ եղած քահանաների ներման խնդիրներում, և առ հասարակ վարչական-դատական դէպքերում պատիժը թեթևացնելու գործերում։

Թէ ինչ նշանակութիւն և իրաւունքներ ունի ամենայն Հայոց կաթուղիկոսը, և ինչ կարծիք ունէր Գէորգ-Դ. այդ կարևոր խնդրի մասին, երևում է նրա ներքին գործոց նախարարին պաշտօնական գրած թղթից 1870 թուի յունիսի 20-ին համարաւ 5 Ամստերդամի եկեղեցական գոյքի Էջմիածնին պատկանելու հարցի նկատմամբ։

Խօսելով քրիստոնէութեան և կաթուղիկոսութեան սկզբնաւորութեան մասին, պատմելով Տրդատի ջանքերը հայոց եկեղեցիները և վանքերը ապահովեցնելու նկատմամբ դրամով և կալուածներով, ասում է, «ճանաչէ զկալուածական և զեկեղեցական կառավարչական իրաւունս նորին, ճանաչէ ներկայացուցիչ կատարող և պաշտպան իրաւանցս այսոցիկ զկաթուղիկոսն իբրև զբարձր հոգևոր իշխանութիւն. աներկբայելի իմն է զի այս ամենայն յոյժ օրինաւոր է՝ հաստատեալ թագաւորական հրովարտակօք և հրամանագրովք»։ Բոլոր աշխարհի ծայրերում գտնուած վանքերը, եկեղեցիները կաթուղիկոսի ձեռքի տակին, կաթուղիկոսները-զամենայն եկեղեցական գործս կառավարէին, ժողովս կազմէին, եկեղեցական կանոնս հաստատէին, եթէ պատժողականս և եթէ կառավարչականս որոշէին զիրաւասական յարաբերութիւնս եկեղեցւոյն առ քաղաքական և գլխապարտական օրինադրութիւնս, օծմամբ իւրեանց հաստատէին զընտրութիւն թագաւորաց, նոցա և եթէ յատկացեալ էր և է զիրաւունս ձեռնադրելոյ զբարձրաստիճան հոգևորականս և զեպիսկոպոսունս, և օրհնելոյ զսրբալոյս միւռոն, որք են ծայրագոյն իշխանութիւն՝ի Հայաստանեայց եկեղեցւոյ։ Ռուսաստան, Պարսկաստան, Տաճկաստան և այլն ամենայն տէրութիւնք, որս այժմ բնակեալ են Հայք, ճանաչեն զլիակատար իրաւունս աթոռոյն Էջմիածնի և կաթուղիկոսաց, սակսկառավարելոյ զկարևոր գործս բովանդակ ազգին Հայոց նշանակելոյ զվիճակաւոր առաջնորդս, տալոյ զվճիռ շինութեան նորոյ եկեղեցեաց և վանօրէից, յորս զգալի է կարևորութիւն նոցին, և դարձեալ խափանելոյ զեկեղեցիս և վանօրայս, յորս ոչ գոյ ծուխ կամ միաբանութիւն, վաճառել զշինուածս եկեղեցեացն այնոցիկ և վանօրէից, նոյնպէս և զանշարժ կալուածս նոցին կամ նշանակել խնամակալս ի վերայ նորա»։

«Ի վերոյ գրելոյ անտի յայտնապէս երևի զի, ա, մի՞է օրինաւոր գլուխ առաքելական և Քրիստոսահիմն եկեղեցւոյ Հայաստանեայց, և կոչի կաթուղիկոս և է միանգամայն յաջորդ առաքելոցն սրբազանից Թադէոսի և Բարդուղիմէոսի և Գրիգորի Լուսաւորչի» իսկ աթոռը Հաստատուած է Էջմիածնում Գ-րդ դարից սկսեալ։

«բ. ի տեսչութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ բովանդակին գլխաւորապէս քառակերպ կառավարութիւնք, այս է պատրիարքական կամ մետրոպոլտական, Արքեպիսկոպոսական, Եպիսկոպոսական և Տերունի»։

«Պատրիարքական թեմն ըստ ամենայնի հնազանդ է կաթուղիկոսական կարգադրութեանց», կաթուղիկոսն է առաջնորդներ նշանակում, «իսկ ընտրութիւնք նոցին յորպիսի իշխանութիւնս, որպէս և այլ ամենայն արքեպիսկոպոսաց և թեմակալաց պատկանին երբեմն կամաց և հաճութեանց ժողովրդեանն ենթարկելոյ ընդ իշխանութեամբ նոցին, իսկ հաստատութիւն ենթարկեալ է իրաւասութեան Ս. կաթուղիկոսին Էջմիածնի»։ Պատրիարքը «իբրև լիազօր փոխանորդ կաթուղիկոսի ս. Էջմիածնի և ներկայացուցիչ համայն Հայոց Տաճկաստանի ի Պոլիս առ բարձրագոյն դրան Օսմանեան կառավարութեան, ունի ստացեալ իրաւունս հաստատուել զառաջնորդս քաղաքաց որ ի Տաճկաստան»։

2) Արքեպիսկոպոսականն է՝ երեք գաւառների կառավարութեան շրջանը։

3) Եպիսկոպոսականն է՝ քաղաքի կառավարութիւնն իւր գաւառներով։

4) Տերունի՝ այն վիճակներն ու քաղաքներն են, որոնք պատկանում են կաթուղիկոսի անընդմիջական կառավարութեան, որոնք են՝ Ռուսաստանում՝ Երևան, Աստրախան Ղզլար և այլն. Տաճկաստանում-Եւդոկիա, Զմիւռնիա, և այլն. Պարսկաստանում՝ Թաւրէժ, Իսպահան, Հնդկաստանում՝ Մադրաս. Հոլանդիայում՝ Ամստերդամ, սրանք կառավարում են կաթուղիկոսների փոխանորդների ձեռքով։

Ե.) ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ.

Ամենայն հայոց կաթուղիկոսութեան սկզբնաւորութեան հետ համարեա թէ սկսուել է Երուսաղէմի պատրիարքութիւնը իւր նախնական առաջնորդական-վանահայրական բնաւորութեամբ մինչև իսկ ըստ աւանդութեան հէնց առաջին դարից։

Ըստ մեր աւանդական պատմութեան Աբգար թագաւորի կինը՝ Հեղինէն առաջինն դրսի թագուհիներից, գնացել է Երուսաղէմ, շինութիւններ կառուցել և այնտեղ բարեգործութեամբ և ճգնութեամբ անցրել իւր օրերը։ Այնպէս որ Երուսաղէմում օտարազգիներից առաջինն եղել են հայերը, որ Հեղինէ թագուհու նախաձեռնութեամբ հիմք են դրել Երուսաղէմում հայոց վանքի շինութեան և միաբանութեան կազմութեան։ Ապա Տրդատի ժամանակ վանք շինուեց ս. Յակոբայ անունով և իւր կալուածներով իրեև ազգային սեպհականութիւն յանձնուեց հայոց հոգևորականութեան կառավարելու։ Սկզբից Յակոբ տեառն եղբօրից սկսած նըստում էին Երուսաղէմում եպիսկոպոսներ իրեև կառավարիչներ ընդհանուր եկեղեցու առանց ազգի խորութեան։ Քաղկեդոնի ժողովից յետոյ, երբ գաւանաբանական բաժանումն եղաւ, հայերը իրանց սովորութեան համաձայն շարունակեցին ազգային ծիսակատարութիւններով իրանց եկեղեցին վարել նոր յաւելուածներ չմտցնելով ծննդեան և զատկի տօների

պատճառով, այն ժամանակ սկսուեցին վէճեր հայերի և յոյնաց Երուսաղէմի եպիսկոպոսի-պատրիարքի մէջ։ Այդ ժամանակ Զ. դարում, հայոց նախարարները եօթը կենդինար (500) դրամ ուղարկեցին յունաց կայսեր, որ հրովարտակով պատուէր արձակի Երուսաղէմի պատրիարքի և յոյների վրայ, որ Հայերին և Աղուաններին այդ պատճառներով նեղութիւն չտան և սիրով վարուեն։ 637-ին, Աբրաքացոց ժամանակ հայոց նախարարները դիմեցին Արաբացի իշխաններին և հրաման ստացան առանձին եպիսկոպոս-պատրիարք ունենալ յունաց պատրիարքից անջատ և անկախ։ Հաբէշները, Խպտինները, Ասորիք առանձնացան յունաց պատրիարքի իրաւասութիւնից և մտան հայոց պատրիարքի հովանաւորութեան տակ այդ ժամանակից հէնց։ Կիլիկիայի թագաւորութեան ժամանակ, երբ խաչակիրների օգնութեամբ 1090-թուին լատինական պատրիարքութիւն հաստատուեց Երուսաղէմում, հայոց թագաւորները իրրև խաչակիրներին օգնողներ մօտիկ յարաբերութիւն սկսեցին Երուսաղէմի հայոց միաբանութեան հետ, Երուսաղէմի հայոց պատրիարքները արդէն ղեկավարել սկսեցին կաթուղիկոսական կոնդակներով և հրահանգներով, քանի աթոռը գտնւում էր նոյն ժամանակ Կիլիկիայում և հեռաւորութիւնը չէր կարող պատճառ դառնալ կաթուղիկոսի հեղինակութեան անուանական լինելուն Երուսաղէմի հայ եկեղեցու վարչական կառավարութեան վերաբերմամբ։ Օշինի ժամանակ Կոստանդին կաթուղիկոսը երբ պահանջեց որ քաղկեդոնականութիւնը մտնի հայոց եկեղեցու մէջ, Երուսաղէմի հայոց պատրիարքը արհամարհեց կաթուղիկոսի հակաեկեղեցական ընթացքը, քաջութիւն ունեցաւ ամիրապետից հրաման ստանալ անկախ պատրիարք հրատարակելու իրան Կոստանդինի հակազգային առաջարկութիւնները չկատարելու համար։ Երուսաղէմի այդ անկախ պատրիարքութիւնը եղաւ 1311-թուին, որից և առիթ համարելով Երուսաղէմի պատրիարքութեան սկիզբը շատերը ընդունեցին այդ թիւը։ (Տես Մովսէս Կաղանկատուացի 227 երես)։

Հներում վանքը ունէր իւր ձեռաց տակ 72 վանք, ահագին միաբանութիւն, վերջերումս մնացել է միայն 6 վանք, 100 տուն ծուխ բուն կեդրոնում, 200 միաբան. ունի 5 թեմ, Երուսաղէմ, Զամ, Եաֆա, Պէյրութ և Կիպրոս: Երուսաղէմի պատրիարքը եղել է միշտ ամենայն Հայոց կաթուղիկոսի իրաւասութեան ներքոյ, բայց իւր ներքին գործերում համարեա անկախ. Պօլսոյ 1861-ի սահմանադրութեամբ որոշ կարգ կանոնի տակ մտաւ թէ պատրիարքի ընտրութեան և արձակման եղանակն և թէ ամբաստանութեան դէպքում դատուելու ձևն. նա ենթարկուում է Պօլսոյ պատրիարքարանի իրաւասութեան և դրանով Հայոց կաթուղիկոսի գերիշխանութեան (տես Ա. Գիրք 746 - 748 երես): Երուսաղէմի պատրիարքը պիտի լինի էջմիածնում ձեռնադրուած եպիսկոպոս: Երուսաղէմը իբրև էջմիածնի թեմ ստանում է մեռոն Մայր—Աթոռից:

Ջ). ՊՕԼՍՈՑ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԻՒՆԸ.

Պօլսի պատրիարքութիւնը համեմատաբար աւելի նոր է, առաջացաւ Տաճկաց՝ Պօլիսը գրաւելուց յետոյ այն է 1461 թուին, երբ Սուլթան Մուհամեդ — բ. յունաց կայսրութիւնը կործանելուց յետոյ, քրիստոնեայ ազգերի հոգևոր իշխանութիւնը Պօլսում կենդրոնացնելու նպատակաւ կարգեց Հոգևոր—ազգապետներ, և՝ ի միջի այլոց Հայոց եպիսկոպոսներից մէկին, որի հետ առաջուց ծանօթ էր, նշանակեց Պօլսոյ պատրիարք, իբրև ընդհանուր՝ Տաճկաստանում գտնուած հայերի հոգևոր գլուխ և պատասխանատու անձն սուլթանի առաջ: Այսպիսով Ա.Ե. դարու կէսից մտնում է Հայոց եկեղեցու նուիրապետական կազմի մէջ նոր աստիճանաւոր առանձին իրաւունքներով և պարտքերով՝ համարեա կիսանկախ կաթուղիկոսից: Մինչև 1860 թիւը Պօլսոյ պատրիարքները ընտրում և հեռացնում էին Պօլսի Հայ իշխանների ձեռքով կայսերական հաստատութեամբ, նրանք կառավարում էին բոլոր տաճկահայ թեմերը՝ նշանակելով և արձակելով թէ առաջնորդները և թէ վանահայրերը ըն-

տրութեամբ թեմի ժողովրդի և վանքերի, նրանց կապը էջմիածնի կաթուղիկոսների հետ երևում էր եպիսկոպոսական ձեռնադրութեան, մեռոնի բաշխման և նուիրակների ընդունման ու գանձանակադրամների ժողովման մէջ յօգուտ էջմիածնի. իսկ առաջնորդական թեմերը ըստ նախնի կանոնաց համարեա կիսանկախ կառավարում էին առաջնորդ—եպիսկոպոսների ձեռքով: 1861-ից յետոյ Պօլսոյ պատրիարքների ընտրութիւնը, հրաժարումը, ամբողջ Տաճկահայոց թեմերի ընդհանուր վարչական կազմակերպութիւնը կանոնաւորուեց, կարգի տակ մտաւ ընդհանուր՝ Պօլսի ազգային ժողովի իրաւասութեան և հսկողութեան ներքոյ. տես Ա. Գիրք — սահմանադրութիւն — 730 — 772:

Պօլսոյ պատրիարքը ենթարկուում է ամենայն Հայոց կաթուղիկոսի իրաւասութեան և համարուում է կաթուղիկոսական փոխանորդ Տաճկահայաստանում. նա և նրա ձեռքի տակ եղած առաջնորդները պիտի ձեռնադրուած լինին էջմիածնում, բոլոր թեմերի մեռոնը պիտի բերուի էջմիածնից, պսակալուծութեան և այլ կարևոր, ծիսական, պատժական, դատական խնդիրներում պատրիարքը միշտ դիմում է կաթուղիկոսի վերջնական վճռին և որոշման. դաւանափոխ, ուխտադրուժ և կարգալուծութեան ենթարկուելի եպիսկոպոսներին վերջնականապէս կարգից զրկելու վճիռը վերապահուում է կաթուղիկոսին. որոշում է կայացնում այդ խնդիրների մասին պատրիարքը խառն ժողովի (տես Ա. Գ. 748, 750) հետ միասին կամ կրօնական ժողովի հետ միայն, վճիռը կաթուղիկոսին է ուղարկուում՝ ի հաստատութիւն՝ եթէ վճիռը միաձայն է, իսկ եթէ տարաձայնութիւն կայ խառն ժողովի կամ կրօնական ժողովի վճռի մէջ, կաթուղիկոսը նոր հարցեր է տալիս պատրիարքին և պարզաբանելուց յետոյ՝ վերջնական վճիռ է գնում հարցերին, այդպիսի վճիռները չեն ենթարկուում բողոքման, համարուում են վերջնական: Պօլսոյ պատրիարքութիւնը ունի 40-աչափ թեմական առաջնորդութիւններ՝ բացի Երուսաղէմից, որոնք անմիջական կապ չունեն կաթուղիկոսի հետ, կարևոր դէպ-

քերում դիմում են Պօլսի պատրիարքի միջոցով կամ երբեմն ուղղակի։

Է). ՍՍԻ ԵՒ ԱՂԹԱՄԱՐԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Աղթամարում նստեցին 10-րդ դարում քաղաքական դժբախտ պատահարների պատճառով 4-5 կաթուղիկոսներ, որոնք Բագրատունեաց ուժեղանալուց յետոյ տեղափոխուեցին Անի և Անու մօտ՝ Արգինա։ Աղթամար գնացող առաջին կաթուղիկոսն էր Յովհաննէս պատմաբան (899—931), որը տեսնելով Աբբասեան աշխարհի՝ Թուինի կործանումն և աւերումն, անցաւ Արծրունեաց թագաւորների մօտ և Աղթամարում նստեց մի առժամանակ. ապա Ստեփաննոս, Թէոդորոս, Եղիշէ, Անանիա. սրա յաջորդ Վահան Սիւնին տեղափոխուեց Արգինա (Անի). դրանից յետոյ Աղթամարում այլ ևս հայոց կաթուղիկոս չնստեց։ Աղթամարի միաբանութիւնը չկամենալով անհետացնել կաթուղիկոսական աթոռի յիշատակը իրանց վանքում, շարունակեցին ընտրած առաջնորդվանահօր կաթուղիկոս ձեռնադրել և համարել նրան իրանց թեմի գլուխ՝ անկախ ամենայն հայոց կաթուղիկոսից։ Աղթամարի կաթուղիկոսութիւնը շարունակւում է մինչև այժմ, և ենթարկւում է Պօլսոյ պատրիարքի և ազգային ժողովի իրաւասութեան. ոչ մի քաղաքացիական և կրօնական առանձնակի նշանակութիւն չունի. նա ձեռնադրում է իւր թեմի համար եպիսկոպոս և եփում մեռոն նոյն նեղ շրջանի համար. նա ունի երկու թեմ, Աղթամար և Խլգան։

ՈՒՇԱԼԻ ՄԵԾ ԳԻՐՔ ԵՒ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ ՍՍԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ։

Բագրատունեաց թագաւորութեան վերջանալուց յետոյ, երբ հաստատւում է Կիլիկիայում Ռուբենեան հարստութիւնը 11-րդ դարու վերջերում, կաթուղիկոսական գահը ապահով վիճակում պահելու դիտաւորութեամբ փոխադրւում է Կիլիկիա 1305 թուին, թէ և 1065-թուից սկսած արդէն Գագիկ թագաւորի միջոցով տեղափոխուած էր Ծամն-

դաւ դղեակը որ փոքր-Հայքումն էր։ Ծամնդաւում, Սեւլեռում, Հռոմկլայում և Սիսում մնաց կաթուղիկոսական աթոռը մինչև 1441 թիւը, երբ արդէն ջնջուած էր Ռուբինեան թագաւորութիւնը և չկար այն հեռու երկրում պաշտպան և այժ ու նեցուկ տուող այդ գահին, որը քուն երկրից հեռու լինելով՝ չէր կարողանում ունենալ այն նշանակութիւնը և ազդեցութիւնը հայաստանի մասերի վրայ, որոնք գանագան գիշատիչների ձեռք ընկած գերփուում էին։ 1441-ին Էջմիածնի համազգային ժողովը որոշեց տեղափոխել գահը Էջմիածին և հրաւիրել Սսի վերջին կաթուղիկոս Մուսաբէկեանին գալ Կիլիկիայից Աբբասեան աշխարհը։ Սսի կաթուղիկոսը մերժեց գալ և ազգային ժողովը կաթուղիկոս ընտրեց Կիրակոսին, որը 1441-ին օծուելով ամենայն հայոց կաթուղիկոս, նստեց Էջմիածնում։ Այսպիսով Կիլիկիայի կաթուղիկոսութիւնը վերջացաւ 1441-թուին։ Այդ թուականից սկսած Սսի միաբանութիւնը չկամենալով կաթուղիկոսական գահի նշանակութիւնը կորցնել, շարունակեց յաջորդաբար մինչև այսօր ընտրուած առաջնորդին կաթուղիկոս օծել Սսի թեմի վրայ։ Սսի կաթուղիկոսը ձեռնադրում է եպիսկոպոս իւր թեմի համար և եփում մեռոն նոյն շրջանի համար, ինչպէս և Աղթամարինը։ Այս առթիւ Էջմիածնի և Սսի կաթուղիկոսների մէջ համաձայնութիւն եղաւ Երուսաղէմի ժողովում 1651 թուին, տես Ա. Գիրք 465—471 երես։ Այս երկու կաթուղիկոսների յարաբերութեան և նշանակութեան մասին Պօլսոյ ազգային ժողովների նիստերում երկար վիճաբանութիւններ եղաւ, մանաւանդ Գէորգ-Գ. կաթուղիկոսի օրով, որը Սսոյ կաթուղիկոսին համարում էր հակաթոռ և ազգային նուիրապետութեան գաղափարին վնասակար և վերցնելու արժանի. ազգային ժողովը տարբեր կարծիք ունէր և քաղաքական հեռատեսութիւն էր համարում Սսոյ կաթուղիկոսութեան պահպանումն. ահա այդ կարծիքներից երկուսը. «Էջմիածնայ կաթուղիկոսն հեղինակութիւն չունի Հայաստանեայց եկեղեցւոյն վերայ, վասն զի Հայաստանեայց եկե-

ղեցւոյն հեղինակութիւնն աշխարհական և եկեղեցական ժողով է եղած և կլինի, այդպէս կուսուցանէ պատմութիւնը: Վեհափառ կաթուղիկոսը մխմեայն ծայրագոյն գործադիր իշխանութիւն ունի և առանց աշխարհական և եկեղեցական ժողովոց կարող չէ գործել»: Մի ուրիշ երեսփոխան ասում է ժողովում. «չէ, մեր մէջ չկայ այնպիսի քաղաքականութիւն մը՝ որ Սիսը բարձրացնէ և Էջմիածինը նուաստացնէ. բայց այս խնդրոյն մէջ ազգային քաղաքականութիւն մը կայ՝ չը բարձրացնել Սսոյ աթոռը, այլ և չը վերցնել, հապա պահել. պահել ժամանակ մը և օր մ'ալ վերցնել . . . ». տես «Փորձ» 1877 թիւ:

Գէորգ կաթուղիկոսը որոշում արաւ՝ «մխմեայն անկէ ընդհանուր ժողովոյ, ըստ եկեղեցական օրինի գումարելոյ ընդ նախագահութեամբ կաթուղիկոսի ամենայն հայոց» և Սսոյ խնդիրը վճռելու:

Սսոյ կաթուղիկոսութիւնը և ընտրութիւնը լինում է պատրիարքարանի գիտութեամբ, մասնակցութեամբ և հովանաւորութեամբ. թէ 1871-ին, 1895 և 1900-ի ընտրութիւնների ժամանակ ընտրութիւնը կատարուեց պատրիարքարանի կողմից ուղարկուած պատգամաւոր եպիսկոպոսի նախագահութեամբ, որը նախօրէն հրաւիրելով Սսոյ 13 թեմերի (Հաջըն, Զէյթուն, Մարաշ, Կիւրին, Դիվրիկ, Մալաթիա, Եօզղատ, Հալէպ, Այնթապ, Անտիոք, Դարէնդէ, Սիս և Ադանա) հոգևորական և աշխարհական ընտրուած պատգամաւորներին և Սսոյ վանքի կողմից նշանակուած «յարմար դատած թուով» մխրան պատգամաւորներին Ադանա, նրանց պատգամաւորական թղթերը ստուգելուց յետոյ, նախագահ եպիսկոպոսը կհրաւիրի նրանց Ադանայի ս. Աստուածածնին մայր եկեղեցին, կկարդայ պատրիարքի այդ առթիւ գրած պաշտօնական գիրն ու հրահանգները, կընտրի տեղեցատիր և քուէտուփի վրայ հսկող երկու պատգամաւոր, ապա բարեմաղթութիւններ կանի Սուլթանի, Վեհափառ կաթուղիկոսի արեւշատութեան համար, հոգեհանգիստ նախորդ Սսոյ կաթուղիկոսի համար, շարականներ երգել կը-

տայ, և կսկսի քուէարկութիւնը. 6 առաւելագոյն քուէ ստացող անձանց յուցակը կուղարկի պատրիարքարան, ուր «յարմար դատած ձևովը սրբագրութիւն» անելուց յետոյ կդարձնուի նախագահ եպիսկոպոսին, որը ժողովին յանձնելով սրբագրուած ցանկը քուէարկելու, նրանից մեծագոյն թուով անունը՝ կհռչակի կաթուղիկոս Սսոյ և հեռագրով իմացում տալով պատրիարքարան, կխնդրուի կայսերական իրադէ: («Նոր—Դար») 1900 թ. 11 մարտի №47, քաղած «Արևելքից»):

Ը). ԹԵՄԵՐԻ ԵԿԵՂԵՑԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ.

(О должностяхъ и учрежденіяхъ по церковному управленію въ древ. вост. церкви. профес. Павла-1857 г. СПБ.». Обозрѣніе древнихъ формъ помѣстнаго церковнаго управленія, 1858 г. Прав. Собес.)

Հին եկեղեցու հասարակական՝ թեմական կառավարութեան ձևը կարելի է բաժանել երեք շրջանի. առաջին շրջանում եպիսկոպոսները չունէին որոշ անձնաւորութիւններ իրանց մօտ՝ նշանակուած առանձին պաշտօնների համար, այլ միայն քահանան էր և սարկաւագը՝ որոնք եպիսկոպոսի հետ ընտանեկան կերպով կառավարում էին իրանց փոքրիկ հօտը; հներում թեմերը շատ փոքր էին, ոչ միայն մեծ, այլ և փոքր քաղաքները, աւանները կազմում էին առանձին թեմեր իրանց եպիսկոպոսներով: Գրիգոր աստուածաբանը նշանակուեց եպիսկոպոս Սասիմի վրայ, այնպիսի մի տեղի, ուր ոչ միայն շատ քիչ մարդ կար, այլ և կենսական անհրաժեշտ պիտոյքներ չէր ճարւում ապրելու համար, բայց և այնպէս այդպիսի տեղերը համարւում էին թեմեր: Թէ միտրոպոլիտները և թէ գլխաւոր եպիսկոպոսները իրաւունք ունէին իրանց շրջանը բաժանելու այնքան թեմի, որքան իրանք կկամենային: Սոզոմենի ասելով (Ը. 19) փոքր Ասիայում երկու թեմի տարածութեան վրայ գտնւում էին 400 եպիսկոպոս; Կիպրիանոսի ժամանակ Կարթագենի շրջանը ունէր 300 եպիսկոպոս: Բարսեղ մեծը, երբ տեսաւ

որ իւր թեմի մի մասը անցաւ ուրիշ միտրոպոլտի, ինքն էլ մնացած մասում շատացրեց թեմերի թիւը՝ եպիսկոպոսներ ձեռնադրելով փոքրիկ տեղերում։ Փոքրիկ թեմերի թիւը բազմացնելու պատճառներից մէկն էր աղանդաւորների շատանալը, որոնց դէմ մաքառելու համար աւելի յարմար էր համարւում եպիսկոպոսները շատացնել, որ փոքրիկ հօտերը մոլութիւններից զերծ պահելուն նպաստէին։ Բացի այդ՝ քանի որ տարէ ցտարի շատանում էր քրիստոնեաների թիւը, հարկ էր զգացւում նոր եպիսկոպոս-հովիւներ նըշանակել. և մանաւանդ եթէ եպիսկոպոսանիստ թեմական քաղաքը հեռու էր գտնւում, դժուար էր լինում հեռու անկիւններում առաջացած գժտութիւնները խաղաղացնել, այն ինչ այդպիսի անկիւններում նշանակուած եպիսկոպոսները հեշտութեամբ էին անդորրացնում իրանց հօտը։ Այդ պատճառով էլ թեմերի սահմանները խիստ և որոշ կերպով չէին բաժանուած միմեանցից, մի եպիսկոպոս, մի քանի մօտիկ գիւղերի քահանաներով և սարկաւագներով կազմում էին մի ծուխ, մի թեմ. (Ա.. Գիրք, 93, 99)։ Այնպէս որ եթէ համեմատելու լինենք այժմեայ թեմերի հետ, մի քանի տասնեակ նախկին թեմեր իրանց առաջնորդներով պիտի մտնէին այժմեանի շրջանը։ Սահմանների անորոշութիւնը և եպիսկոպոսների շատութիւնը միշտ վէճերի տեղիք էր տալիս, չորրորդ դարու վերջին թեմական կառավարութիւնները որոշ կանոններով և կարգերով բաժանուեցին միմեանցից և առանձին սահմաններով չոկուեցին։ Թեմի կառավարութիւնը կեդրոնանում էր եպիսկոպոսի անձնաւորութեան մէջ, որը ըստ իւր կարգի վարում էր իւր շրջանի եկեղեցիների հսկողութիւնը և գործերը միքանի օժանդակ խորհուրդների միջոցով. այն է՝ 1) եպիսկոպոսական խորհրդի՝ որին մասնակցում էին քահանաներ, սարկաւագներ և տեղական ծերուններ. 2) քահանայական խորհրդի և 3) սարկաւագների։ Թէ ինչպէս էին այդ խորհուրդները մասնակցում եկեղեցու կառավարութեան գործին, որ չափով, ինչ ձայնով, անորոշ է, միայն Կիպրիանոսը և Տեր-

տուղիանոսը վկայում են, որ դրանք միասին հոգում էին եկեղեցու կարիքները և խնամում այրիներին, որբերին։ Անտիոքի 24, 25 կանոնները (Ա.. Գիրք, 215, 216) իրաւունք են տալիս քահանաներին և սարկաւագներին իմանալ թէ ինչպէս է կառավարում եպիսկոպոսը եկեղեցական կալուածները։ Կառավարութեան մէջ գլխաւոր դերը խաղում էր եպիսկոպոսը, նա ժողովի էր կանչում խորհուրդի անդամներին, խնդիրներ և հարցեր էր առաջարկում, և ձայների մեծամասնութեամբ վճիռ կայացնում, թէև ուժեղ եպիսկոպոսը միշտ իւր ասածն էր անել տալիս, քանի որ միակ պատասխանատուն ինքն էր համարւում։ Եպիսկոպոսական խորհուրդը ըստ վկայութեան Տերտուղիանոսի նախօրօք քննում էր այն ընծայացուի վարք ու բարքը և ձեռնադրելու արժանիքը, որը ժողովրդի վկայութեամբ առաջարկւում էր քահանայութեան։ Աֆրիկայի եկեղեցում և ինչպէս Հայաստանում խորհուրդի մասնակցութիւնը եկեղեցու գործերում աւելի ուժեղ էր և ընդհանրացած՝ քան միւս եկեղեցիներում։ Կիպրիանոսը ասում է որ առանց քահանայական խորհրդի ոչ մի պաշտօնեայ չընդրուի. նոյնը պահանջում էր և Բասեղ մեծը. քահանայական խորհուրդը շատ անգամ խառնւում էր թեմական գործերում. Հռոմի Կօրնէլ եպիսկոպոսը Մաքսիմ շնականի և նրա կողմնակիցների գործի քննութիւնը յանձնեց քահանայական խորհրդին։ Աբիոսի դէմ վճիռ կայացնելիս Աղէքսանդրիայի եպիսկոպոսը (Աղէքսանդր) օգտուեց քահանաների խորհրդից և նրանց ձեռքով արած քննութիւնից։ Կարթագենի ժողովը (42 կանոն) որոշեց չմոյլ տալ եպիսկոպոսներին «ծախել եկեղեցական հողերը առանց ժողովի կամ իւր քահանաների գիտութեան»։ Եպիսկոպոսի բացակայութեան ժամանակ՝ եկեղեցու իրերը և գոյքը կառավարում էր քահանայական խորհուրդը, առանց վաճառելու իրաւունքի (Անկ. 15. Ա.. Գիրք-188)։ Առաջի տարում քահանաները սարկաւագների նման բաժանում էին աղքատներին և կաթոլիկներին հանդերձեղէն և ուտեստ։ Հսկում էին քրիս-

տոնեաների վարքի՝ բարքի վրայ և ամեն միջոց գործ էին դնում ուղղութեան բերել նրանց։

Սարկաւագները պարտաւորութիւնները եկեղեցու կառավարութեան մէջ էին, 1) հսկել ներքին կարգապահութեան, կանոնաւորութեան, և լուսթիւն պահպանելուն վրայ եկեղեցում. 2) Նրանք հսկում էին կղերի վրայ, նրանց արածների մասին տեղեկութիւն հաղորդում եպիսկոպոսին և քահանայ ընտրելուց վկայութիւն տալիս նրանց վարքի ու բարքի մասին. 3) Եպիսկոպոսի կարգադրութեամբ բաժանում էին որբերին, այրիներին, աղքատներին, կոյսերին ուտեստ և հանդերձեղէն։ 4) Նրանք միջնորդ էին եպիսկոպոսի և ժողովրդի մէջ, գանազան պատուէրները տալով և գործեր կատարելով։ Այնպէս որ եկեղեցու կառավարութեան մէջ մեծ դեր էին կատարում նրանք, եպիսկոպոսի գլխաւոր օգնականներն էին և գործակիցները. մանաւանդ աւագ սարկաւագ կոչումով եղածները, նշանակւում էին ընդհանուր կառավարիչներ և սարկաւագների վրայ հսկողներ։ Սարկաւագապետի պաշտօնը փոխադրեց Հայոց մէջ Ներսէս մեծը, որը եկեղեցիների ընդհանուր կառավարութիւնը յանձնեց Խատին։

Եկեղեցու կառավարութեան Բ. և Գ. շրջանները սկսուեցին պատրիարքութիւնները հաստատուելուց և գլխաւոր եպիսկոպոսների աթոռների իրաւունքները բարձրացնելուց յետոյ, երբ պաշտօնները բաժանուեցին, իւրաքանչիւր պաշտօնակատարի յանձնուեցին առանձին գործեր, առաջացաւ բարեգործական, ուսումնական գանազան հիմնարկութիւններ տարբեր կազմութեամբ և կառավարութեամբ։ Քանի թեմ կար Հայաստանում նախալուսաւորչեան շրջանում, անորոշ է, յայտնի չէ, աւանդութիւնը միայն ասում է որ եպիսկոպոսական գլխաւոր աթոռն Եդիսիայումն էր, երկրորդ աթոռը Արտազում, երրորդ աթոռ Գողթնեաց աշխարհում Սիւնիքում, ըստ Օրբելեանի 150 թուին Սիւնիքում շինուեց Ստեփաննոս նախավկայի անուամբ Թանահատի վանքը, ըստ Մովսէս կաղանկատուացու՝ Եղիշէ առա-

քեալից սկսած Աղուանից եպիսկոպոսական աթոռը կար. Լուսաւորիչ ձեռնադրեց ըստ Ագաթանգեղոսի, 400-ից աւելի եպիսկոպոսներ քաղաքների, գաւառների վրայ, յիշում է մեծ նահանգների՝ նախարարութիւնների առաջնորդական եպիսկոպոսների անունները, Եղիշէն էլ յիշում է պարսից պատասխանը գրող գլխաւոր առաջնորդների անունները, որոնցից երևում է, որ ամեն մի գլխաւոր նախարարութիւն ունեցել է և մի թեմական առաջնորդ, իբրև համապատիւ նախարարին կամ նահանգի իշխանին. բայի գլխաւոր առաջնորդից նրա թեմում եղել են վանքերում, երկրորդական քաղաքներում, մեծ աւաններում եպիսկոպոսներ, որոնք երբեմն իբրև գործակատարներ՝ կոչւում էին քորեպիսկոպոսներ։ Եղիշէն յիշում է հետևեալ առաջնորդներին, 1) Տարոնի եպիսկոպոս, 2) Մանազկերտի եպիսկոպոս, 3) Բագրեւանդի, 4) Բգնունեաց, 5) Տայոց, 6) Բասենոյ, 7) Տուրուբերանի, 8) Մարգաստանի, 9) Մարգազոյ, 10) Սիւնեաց, 11) Արծրունեաց, 12) Մոկաց, 13) Ռշտունեաց, 14) Վանանդայ, 15) Ամատունեաց, 16) Անձևացեաց, 17) Ապահունեաց. 18) Արարատայ եպիսկոպոս-առաջնորդ, որ նոյն ինքն կաթուղիկոսն էր և Եղիշէի ժամանակ Յովսէփ քահանան էր՝ ընտրուած կաթուղիկոս, ժողով հրաւիրողը։ Այս յիշատակութիւնը այն գլխաւոր նշանակութիւնն ունի, որ Եղիշէն պատմելով պատմական մեծ եղելութիւնը, պարսից թագաւորին գրելիք պատասխանի մասին, հաղորդում է որ կաթուղիկոսը կանչեց բոլոր մեծ իշխաններին և գլխաւոր եպիսկոպոսներին ժողովի, որպէսզի նրանք ցրուելուց յետոյ իրանց գաւառները՝ իբրև աշխարհական և հոգևոր մեծեր կարգադրութիւններ անեն քրիստոնէութիւնը ամուր պահելու և պարսիկներին դիմադրելու համար։ Այստեղ չեն յիշուած Վրաց և Աղուանից կաթուղիկոսները, որոնք բացակայէին այն պատճառով որ իրանք էլ նոյն ժամանակ իրանց երկրի հոգևն էին քաշում։ Այս մեծ առաջնորդութիւնները անշուշտ ունէին իրանց ձեռքի տակ բազմաթիւ եպիսկոպոսներ, որոնք երկրորդական նշանակութիւն ունէին

եկեղեցու կառավարչութեան մէջ։ Օրբէլեանը պատմելով՝ կաթուղիկոսի կոնդակի մասին, որով յանձնում է Սիւնեաց առաջնորդին Սիւնիքի 12 գաւառները, նզովք է դնում այն եպիսկոպոսների վրայ, որոնք գաւառներում ամուռներ հաստատելով կհակառակին առաջնորդին. դրանցից մէկը նստում էր Մաքենոցաց վանքում գեղարքունիքում, երկրորդը Վայոց ձորում, երրորդը՝ Երնջակում, չորրորդը՝ Գողթնիքում և այլն և այլն. «Հաստատեցաք զՎայոց ձոր, զԳեղարքունի, զՓորակն, զ Համբանդ, զՋուղայ, զԵրնջակ» և ապա նզովք է դնում, որ ոչ մի եպիսկոպոս չյափշտակի այդ ամուռները առաջնորդի ձեռքից։ Ուրեմն միմեայն Սիւնեաց առաջնորդութեան մէջ 6 երկրորդական եպիսկոպոսական ամուռ է եղել 13-րդ դարում, նոյն համեմատութեամբ էլ եղել են միւս նահանգներում։ Ուխտանէսը յիշում է 30 առաջնորդական ամուռների անուններ, յիշում է և նաև 370 այլ ամուռականներ լուսաւորչից հաստատուած և ձեռնադրուած, ընդ ամենայն 400 եպիսկոպոսներ (100 երես)։ Այժմ 5 թեմ գտնւում է Ռուսահայաստանում, մօտ 60 թեմ Տաճկահայաստանում, 2 թեմ Պարսկա—Հնդկաստանում, 2 թեմ Եւրոպա և Ամերիկայում։ Ռուսահայաստանի թեմերն են. Երևանի (Արարատեան կամուղիկոսական) Տփխսի, Բեսարաբիայի, Աստրախանի, Շամախու և Նուշու։ Տաճկահայաստանի թեմերն են. Պօլսոյ (պատրիարքական քաղաք), Ադրիանապօլսոյ, Թեքիրտաղի, Նիկոմիդիայի, Պրուսայի, Պալըքեսիր,—Պանարմայի, Պիլէճիկի, Քեօթահեայի, Զմիւռնիայի, Էնկիւրիի, Կեսարիայի, Սեբաստիայի, Թոգաթի, Ամասիայի, Շապին—Կարահիսարի, Ձանիկի, Տրապիզոնի, Կարինի, Երզնկայի, Բաբերտի, Ղզիի, Քիմախի, Պայազիտի, Վանի, լիմ-Կատւցի, Բաղէշի, Մուշի, Սղերտի, Տիարպէքիրի, Բալու—Արղնիի, Խարբերդի, Ակնի, Արաբկիրի, Չարսանճագի, (Զմշկածագ), Ուրֆա (Եդեսիա), Պազտատի, Եգիպտոսի, Պուլկարիայի, Ռումանիայի։ Մասնաւոր թեմեր—Արմաշի, Գասդեմունիք, Պիլէկէսի, Կինճի, Ադրակի, Սելանիկի, Կրետէի։ Երուսաղէմ — 5 թեմով, Շամի, Եաֆայի, Պէյրութի, Կիպ-

րոսի։ Կիլիկիա—13 թեմով. Սսի, Ատանայի, Հաճընի, Հալէպի, Այնթափի, Անթաքիայի, Մարաշի, Զէյթունի, Մալաթիայի, Նոզկաթի, Կիւրինի, Տիվրիկի, Տարենտէ։ Աղթամար և Խլգանի թեմ։ Եւրոպայի թեմ (Փարիզ, Մարսէյլ, Մանչեստր, Մուշավա). Ամերիկայի թեմ (Ուսթր Նիւ—Եորք, Պոսթոն, Լօրէնս, Զիկագօ, Ֆրեզի)։ Պարսկա—Հնդկաստանի թեմ (Ասպահան, Թեհրան, Համադան, Մատրաս, Պոմբէյ, Պատաւիա). Ատրպատականի թեմ (Խավրէժ, Սալմաստ)։

Թէ ինչպէս էին կառավարւում թեմերը, կեդրոնացումն ուժեղ էր արդեօք, թէ արտակեդրոնացումն էր աւելի տարածուած։ Մինչև Բագրատունեաց անկումն, այն է տասնևմէկերորդ դարու կէսերը, երբ կամուղիկոսական գահը ընդհանրապէս Հայաստանի կեդրոնումն էր, գուցէ թէ հնար լինի ասելու, որ կեդրոնացումն աւելի էր, այսինքն թեմերի կառավարութեան մէջ առաջնորդները զանազան հարցերի վերաբերմամբ դիմում կլինէին կամուղիկոսին, բայց յետոյ, հէնց տասերորդ դարից սկսած, այլազգիների հրոսակների աւերումները, զանազան նահանգական թագաւորութիւնների առաջանալը, Սիւնեաց, Աղուանից, Կիւրիկէի, Կարսի, Արծրունեաց, պատճառ դարձան մի կողմից կամուղիկոսական գահը աստանդական դարձնելու, միւս կողմից առաջնորդական ամուռների երաւունքները բարձրացնելու. պարզ է, որ Սիւնեաց կամ Արծրունեաց առաջնորդը չինուած իրանց թագաւորի վրայ պիտի անսահման տէր լինէր իւր եկեղեցիներին և առանց կամուղիկոսին դիմելու ամեն կարգադրութիւն անէր իւր թեմում։ Կամուղիկոսական գահը Կիլիկիայ փոխադրուելուց յետոյ այդ-կապը առաջնորդների հետ գործաւ անուանական, սրքան մեծ սիրով էին ընդունում Կիլիկիայում թէ թագաւորը և թէ կամուղիկոսը արևելեան աշխարհից եկած ընտրեալ առաջնորդացուներին, որոնք գալիս էին եպիսկոպոսական ձեռնադրութիւն ստանալու և մեռոն տանելու։ Ստեփաննոս Օրբէլեանը հիացմունքով է պատմում իւր Կիլիկիա գնալը այդ նպատակով։ Պարզ է այսպիսի հանգամանքներում առաջ-

նորդները լիակատար տէրեր պիտի լինէին իրանց թեմերում: Շնորհալին «գիր ղրկաբերականի» մէջ ասում է, հաւատալով ձեր վկայութեան, ձեռնադրեցի ձեզ առաջնորդ ընտրած քահանային (Ա. Գիրք 582 երես): Եւ ուրիշ ինչ կարող էր անել կաթուղիկոսը այնքան հեռու տեղից՝ ճանապարհների հաղորդակցութեան ամենավատ ժամանակ, երբ Հայաստանը քարուքանդ էր լինում արիւնարբուներից. նա մինչև իսկ եթէ չհաւատար էլ ընտրեալ անձի ձեռքին գտնուած համախոհական թերթին, պիտի ակամայ ձեռնադրէր եպիսկոպոս նրան և յետ ուղարկէր, ուրիշ ինչ միջոցով կարող էր ստուգել ընճայելալի ընտրական թերթի հաւաստիութիւնը: Թեմերի անկախ կառավարութիւնը արմատացաւ Հայոց մէջ, և մինչև անգամ երբ 1441-ին գահը փոխադրուեց Էջմիածին, էլի թեմերը շարունակեցին իրանց կիսաանկախութիւնը: Առաջնորդները անկախ ձեռնադրում էին քահանաներ իրանց թեմի եկեղեցիների համար, և շատ անգամ առանց որ և է սկզբունքի հետևելով, ի շնորհս իշխանի, մեծի, մամոնայի լցնելով գիւղերը և քաղաքները (տես ամ Հայոց կաթուղ. Երիցեանի). մինչև Ռուսահայոց 1836-ի պալաժէնեան բոլոր քահանաների ձեռնադրութիւնը առաջնորդին էր պատկանում առանց կաթուղիկոսի մէջնորդութեան և տեղեկութեան: 2) հաս, չհաս, չափահաս, անչափահաս պսակների տէրն ու հրամանատուն առաջնորդն էր, ոչ միայն առաջնորդը, այլ մինչև իսկ գիւղի քահանան գիւղի իշխանի հետ միասին առանց առաջնորդի կամքն հարցնելու (տես նոյն Երիցեանի գիրքը). իսկ թէ այդ դէպքերում որքան մեծ դեր էր խաղում կամայականութիւնը և իշխանական ոյժը, այդ պարզ երևում է հէնց Բագրատունեաց ժամանակից, երբ թագաւորը մոռանալով ամեն ինչ պսակուեց քրոջ աղջկայ հետ և մնաց անպատիժ և աննզովք կաթուղիկոսի կողմից: 3) Ամուսնանալու ծխական դէպքերի թոյլատրողն էր առաջնորդը, առանց դիմելու կաթուղիկոսին. Շնորհալին ասում է, արևելեան եպիսկոպոսներից ոմանք մամոնայից կուրացած անխտրաբար ամուսնե-

ներին բաժանում են, և պատուիրում է, *բաժանել միմեանց պսակութեան և հայրերից թոյլատրուած պատճառների հիման վրայ* (Ա. Գիրք 582 երես): Իսկ թէ իշխանները, մելիքները ինչպիսի ապօրինութիւններ էին անում ամուսնալուծութեան վերաբերմամբ առանց մինչև իսկ առաջնորդին դիմելու, այդ մասին անթիւ զրոյցներ են պըտտում մինչև այժմ Սիւնիքում, Ղարաբաղում: 1836-ից մինչև այժմ ահագին տարեշրջան է անցկացել, բայց և այնպէս Սիւնեցի գիւղացին միշտ այսպիսի դէպքերում կդիմի ոչ թէ առաջնորդին, այլ փոխանորդին վերջնական լուծում խնդրելու, պահանջելով պսակը իսկոյն լուծել, իսկոյն կնոջ դուրս անել բանտարկել չհասական հրաման տալ. և այլն և այլն: 4) Թեմի բոլոր եկեղեցական գոյքերի կառավարիչն ու կարգադրողն եղել է առաջնորդը. նա է ժողովել բոլոր կալուածների արդիւնքը, պտուղները, հասոյթները անկախ կաթուղիկոսից: Մայր աթոռին այսինքն կաթուղիկոսին հասնում էին միւռոնի գնալու, եպիսկոպոսական ձեռնադրութիւն ստանալու, և այլ դիպուածով գնալու ժամանակ աջահամբոյրներ, ընծաներ; միւռոն եփելու ժամանակ միշտ բոլոր գիւղերը յանուն Մայր-Աթոռի ժողովում էին մատաղներ, դրամներ և պատգամաւորներով հասցնում Էջմիածին. բացի այդ Էջմիածնի նուիրակները ղրկելիս, ընդունում էին ամենայն առատութեամբ թէ դրամ, թէ նիւթեղէն և թէ անասուններ: Առաջնորդները լիակատար տէր լինելով գոյքերին, կառավարելով ըստ իրանց կամքի, չէին կարող կամայականութիւնից և քմահաճոյքից հեռու մնալ, և զանցառութեան տալ իշխաններին, մեծերին, որոնք ամեն կերպ կարող էին վնասել առաջնորդին, հանելով, ուրիշը նշանակել տալով նրա փոխարէն, կամ պահանջելով արդիւնքի մի մասը յօգուտ իրանց, գործը՝ այսինքն եպիսկոպոսի սրած շահասիրական քայլերը մոռացութեան տալու համար: Մանաւանդ խաների ժամանակ, ամեն մի խան՝ վանք մտնելիս, առաջնորդին այցելելիս, պիտի անպայման մեծ պարգևներ ստանար, ձիեր, խաս կտորներ և այլն

ևայլն, այլապէս առաջնորդը կենթարկուէր պատուհասի. մնում էր առաջնորդներին արգիլանքները դիզել և չգործ ածել իրանց բուն նպատակի համար, այլ կոզմնակի անձանց բաշխել։ Թեմերի կառավարութեան այս ձևը վերացաւ Ռուսահայոց մէջ 1836-ից յետոյ, Տաճկահայոց մէջ 1860-ից յետոյ։

Թ). ԳԻՒՂԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

(ՔՈՐԵՊԻՍԿՈՊՈՍ).

Գիւղական եկեղեցիների կառավարութիւնը յանձնուած էր եպիսկոպոսների օգականներին, որոնք կոչւում էին փոխանորդներ կամ օգնականներ! Գ-դարում Երուսաղէմի եպիսկոպոս Նարցիսոս ծեր լինելով, օգնական ընդունեց Ք. ըան՝ իւր թեմում Ալէքսանդր եպիսկոպոսին (Եւս. Է). Գրիգոր Աստուածաբանը Սասիմի վրայ եպիսկոպոս ձեռնադրուելիս արգէն հօրը օգնականն էր Նազիանզում (Սոկ. Դ.)։ Օգոստինոսը Իպպօնում եպիսկոպոս ձեռնադրուեց Վալէր եպիսկոպոսի օգնականի պաշտօնով։ Բացի այդ օգնականներից, որոնք ընդհանուր թեմի վրայ հսկողներ էին, նշանակւում էին և փոքրիկ շրջանների կառավարիչներ, քորեպիսկոպոս անուամբ, որ նշանակում է գիւղական քահանայ, սրանք լինում էին գաւառի և համայնքի վերակացուներ, վերջիններս ենթարկւում էին առաջիններին (Զօնարա)։ Ոմանք դրանց համարում էին եպիսկոպոսական աստիճան ունեցող, ոմանք քահանայական միայն. ոմանք էլ կարծում էին որ երկու աստիճանով էլ լինում էին։ Վալսամոնը ասում է, որ քորեպիսկոպոսները Յիսուսի 72 աշակերտի փոխանորդներ են համարւում, որոնք իրաւունք չունէին ձեռնադրութիւն անելու և խորհուրդներ կատարելու, այլ միայն հոգալու աղքատների պիտոյքները։ Անկիւրիայի 13 կանոնը (Ա. Գիրք 187) արգելում է քորեպիսկոպոսներին քահանաներ և սարկաւագներ ձեռնադրել, իսկ քաղաքներում առանց եպիսկոպոսի թոյլտուութեան քահանաներ կարգել։ Անտիոքի 10 կանոնը (Ա. Գ. 212) ասում է, քորեպիսկոպոսները եթէ եպիսկոպոսական ձեռնադրութիւն էլ ունենան, իրաւունք չունին քահանայ ձեռնադրելու առանց եպիսկոպոսի հրամանի, հապա միայն նշանակեն կիսասարկաւագներ, ընթերցողներ, երգմնեցուցիչներ։ Նէոկեսարեայի 14 կանոնը (Ա. Գ. 200) ասում է, քորեպիսկոպոսները ըստ օրինակի Քրիստոսի 72 աշակերտների քահանայագործութիւն են անում և քաղաքի եկեղեցում։ Պատահում էր, որ երբ թեմական եպիսկոպոսը թեմի ժողովրդից չէր ընդունւում, կամ որև է պատճառով հօտից զրկւում էր, նա դառնում է քորեպիսկոպոս (Սոկր. Ը.)։ Հերձուածողների եպիսկոպոսները երբ միանում էին նախկին եկեղեցու հետ, դառնում էին քորեպիսկոպոսներ (Մելիտեանք, Նովատեանք)։ Քորեպիսկոպոսները ընդհանուր հսկող էին գաւառաշրջանի եկեղեցիների վրայ, Վալսամոնի ասելով ժԲ. դարում բոլորովին վերջացան, նրանց պաշտօնը մնաց, նրանց փոխարինեցին աւագերէցները, կամ ինչպէս Լաւոդեկիայի 57 կանոնն է սահմանում պերիոդեաները (այցելու, բարեկարգիչ) Ա. Գ. 226։

Հայոց եկեղեցու կառավարութեան մէջ հէնց սկզբից կար քորեպիսկոպոսների պաշտօնը, Բիւզանդ Դանիէլի համար ասում է, «էր սորա ընկալեալ զքորեպիսկոպոսութեան ձեռնադրութեան աստիճան» . . - «սա վերակացու էր և գլխաւոր եկեղեցեաց նահանգին Տարօնոյ». «Հրամանատար տեսուչ և հոգաբարձու ամենայն եկեղեցեացն Հայոց մեծաց ընդ ամենայն տեղիս» Բիւզ. 31։ Դանիէլ Քորեպիսկոպոսը գաւառների վրայ վարդապետներ էր նշանակում, «Զաղիտա, որ ի նմանէ իսկ աշխարհին Կորդուաց վարդապետ տուեալ էր և երկրորդին անուն Եպիփան, որ գաւառին Աղձնեաց և մեծաց ծովուց ի նմանէ իսկ վարդապետեալ էր»։ Եղիշէն յիշում է 43 երեսում, որ Արտաշատի ժողովում ժողովուած էին «շատ քորեպիսկոպոսներ»։ Սահակի կանոններում կան 12 յօդուածներ, որոնք տալիս են շատ մեծ իրաւունքներ քորեպիսկոպոսներին, հսկողութիւն

բոլոր շրջանի եկեղեցիների վրայ, քահանաների, սարկաւագների բարեյաւութեան և կարգապահութեան վրայ, ժամերգութեան, պաշտամունքների կատարման վրայ, մինչև անգամ ծեծելու իրաւունքով. 4-կանոնը ասում է, «օրինազանց եկեղեցականներին կշտամբեն խրատով, ծեծով և տուգանքներով պատուհասեն ատեանի մէջ, որ միւսներն վախենան և խրատուեն» Ա. Գ. 518 երես: Բայի այդպիսի խիստ իրաւունքներից, որոնք հակաեկեղեցական են մինչև իսկ, իրաւունք էտրւում նոյն կանոններում հեռացնել եկեղեցուց բոլորկարգ խանգարողներին, կռուողներին, արբեցողներին, հարկերը ժողովի, բայց ոչ ագահութեամբ դիզի և պարտականութիւնները մոռանայ. (Ա. Գ. 518—520): Իւր սուրբ Ծոյլ և անկարգութիւն անող քահանաներին, իրաւունք է տալիս 5-րդ կանոնը, զրկել մինչև անգամ պատուից՝ քահանայագործութիւնից, մինչև որ կհաշտուեն՝ զղջալով: Քորեպիսկոպոս չիշուում էմեր մէջ ժ. դարում, մինչև անգամ զօրապետի պաշտօնով և իբրև տէր-իշխող Գուգարաց աշխարհի մի մասին. երբ արքայորդին Աշոտ գնաց Ուտիացւոց Մովսէս իշխանին իրան հպատակեցնելու, ճանապարհին «մեծ քորեպիսկոպոսն, որ պայազատէրն իսկ զմասն Գուգարաց մերձ 'ի դրունս Ալանաց, գայր հասանէր զօրու բազմաւ 'ի թիկունս օգնականութեան թագաւորին». (Յովհաննէս կաթ. 163 երես). իսկ երբ Մովսէս իշխանը յաղթուում փախչում է Սիւնիք, մտածումէ գնալ մեծ քորեպիսկոպոսի մօտ իւր կողմըն ձգելու դիտաւորութեամբ և հաստատելու կրկին իւր իշխանութեան տակ (նոյն տեղը. 163 երես): Երևի երկրի բիրտ կեանքը ստեղծել էր քորեպիսկոպոս—իշխան և զօրապետ: Ստեփաննոս Օրբէլեանը կտակների տակ ձեռք քաշող վկաների թուում չիշումէ և «Ծըղկաց քորեպիսկոպոս» (Լթ. գլ.); Ծղուկը Սիւնեաց 12 գաւառներից մէկն էր, որ այժմ կոչուում է Սիսիան, որ ենթադրել է տալիս թէ ամեն մի գաւառ ունէը մի քորեպիսկոպոս: Քորեպիսների պաշտօնը մինչև այժմ էլ մնում է «գործակալ», «բարեկարգիչ» անուամբ,

նրանք չունին այն իրաւունքները, ինչ որ քորեպիսկոպոսներն նախկին դարերում:

Գիւղական եկեղեցիները առանձին վերցրած կառավարուում էին ծխատէր քահանաների ձեռքով, գրամական մասը գանձում էր երեցփոխանի կամ գանձապետի ձեռքին, որը և գնում էր եկեղեցու գործածութեան համար կանթեղները վառելու ձէթի, մոմ, բաժակի գինի (Հաղորդութեան) և այլն և այլն: Եթէ գիւղի, կամ քաղաքի մի եկեղեցում լինում էին մի քանի քահանաներ, կարգապահութեան վրայ հսկում էր աւագերէցը, նա որ առաջինն էր ձեռնադրուած, եկեղեցին օրհնում էր նա և եկամուտների-արդիւնքների վրայ հսկում էր և բաժանում ըստ սովորութեան: Քահանան իրաւունք ունի կատարելու 7 եկեղեցու խորհուրդներից միայն 6-ը, այն է, մկրտութիւն, գրոշմ, ապաշխարութիւն, Հաղորդութիւն, պսակ, և օծումն հիւանդաց. իսկ ձեռնադրութեան խորհուրդը վերապահուում է եպիսկոպոսին: Քահանան պարտաւոր է ամենայն ճշտութեամբ կատարել բոլոր խորհուրդները այն կարգով և կանոնով, որով սահմանուած են եկեղեցու Հայրերից, նա զանցառութիւնների դէպքում ենթարկուում է պատժի: Ժամերգութեան և եկեղեցու այլ պաշտամունքները պարտաւոր է կատարել ճաշոցի, տօնացոյցի, ժամագրքի, խորհրդատետրի, Մաշտոցի, շարականի, Աւետարանի, Հին կտակարանի վրայ որոշուած սահմանումներով առանց որևէ փոփոխութեան և թուլութեան: Պատարագը, որ է գինու և հացի ձևով Քրիստոսի մարմնի առաջարկութիւնը, պիտի կատարուի տաճարում, սեղանի վրայ, օրուայ երրորդ ժամին, այն է ճաշից առաջ և ձէգից յետոյ՝ բացի Ծննդեան և աւագ շաբաթ օրուայ պատարագներից, որոնք լինում են երեկոյեան: Մկրտութեան և գրոշմի սահմանումների մասին խօսուել է առաջին գլուխներում: Պսակակատարութեան բոլոր պայմանների մասին կխօսուի յետոյ: Հիւանդների օծման մասին պէտք է ասել, որ քահանան այդ խորհուրդը կատարում է միմեանց աղօթքով՝ հիւանդատիրոջ հրաւերմամբ. հէնց սկզբից հայոց

մէջ չէ մտած իւղով օծելու սովորութիւնը (տես Ա. գիրք 413, 461)։ Հաղորդութեան՝ պատարագի (*) մասին կտանք հետեւեալ տեղեկութիւնները՝ իբրև ծանօթութիւն, որը չէ մտնում իրաւական սահմանների մէջ, քանի որ այդ խորհուրդը կապ ունի միայն խղճի հետ։ Քահանաների իրաւունքն էր քարոզել և ուսուցանել, դաստիարակել փոքրերին քրիստոնէական հաւատի մէջ. կապել և արձակել, թողութիւն տալով մեղքերին։ Քահանաների տնտեսական գործերում խառնուելը, եկեղեցու գոլքի և դրամների հաշիւների վարելը շատ սահմանափակ էր, այդ մասը ամբողջապէս գտնւում էր ժողովրդի ձեռքին։ Թէ որքան անզօր էին քահանաները գիւղի հարուստների, կամ իշխան կոչուած դասակարգի առաջ, և ինչպէս սարկաբար, հլու հնազանդութեամբ կատարում էին դրանց քմահաճոյքները, շատ անգամ մեղանչելով եկեղեցական կարգերի դէմ, այդ երեւում է և հէնց այսօր, տես նաև Երիցեանի «ամենայն Հայոց կաթողիկոսութիւն» 343 երես, որտեղ մի որև է նայիր պահանջում է Հարսնիքատան 20 ոսկի փեսայից որ թոյլ տայ քահանային պսակը կատարել։ Գիւղական եկեղեցիների տնտեսական կառավարութեան մասին տես յետագայ գլուխները. պատժական և դատական խնդիրների մասին նոյնպէս յետագաները։ — Ծխաբաժանութեան և քանակի մասին տես տնտեսական կառավարութիւնը։

ԾԱՆՕԹ. (*). Պատարագի հիմնադրութիւնը առաքեալների ժամանակից է, ժողովում էին հաւատացեալները ամեն օր, բերելով հետները հաց, գինի, պտուղներ, գինին և հացը օրհնւում էր և ապա նաուում էին ըստ պատուի աստիճանի, եպիսկոպոս, քահանայ, սարկաւագ, մեծերը, փոքրերը կարգով, վայելում էին սիրոյ երեկոն, սիրոյ ճաշը, ագապը, նախօրէն աղօթելով և ձեռքերը լուանալով։ (Вечери любви удревнихъ Христіанъ. 1870, Прав. Обозр.) Նրանք կարգում էին սաղմոս, առաքելական թղթեր, նահատակների պատմութիւնը, յետոյ ժողովարարութիւն էին անում աղքատների համար, արդելելով կամ եթէ ներս էին մտած՝ դուրս անելով յայտնի մեղաւոր անձանց, սկսում էին ագապը, հաց ուտելը և ապա հաղորդութեան յիշատակը կատարել ըստ Յիսուսի օրինակի։ Այս ձևը տարածուած էր ամեն տեղ,

Ժ. ՎԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ.

Դ. և Ե. դարերում ինչպէս տեսանք, բազմաթիւ վանքեր էին կառուցել լի վանականներով Միջագետքում, Կապադովկիայում, Պաղեստինում, Հայաստանում և ընդհանրապէս արևելքում, մասնաւորապէս Եգիպտոսում, սրա համար Ոսկեբերանը ասում է, «երկինքը այնպէս զարդարուած չէ իւր բազմագոյն աստղերով, ինչպէս Եգիպտոսը զարդարուում է և փայլում կոյսերի և վանականների անթիւ բնակարաններով»։ Ոսկեբերանի և թէ այլոց վկայութեամբ կուսանոցները զուգընթաց գնում էին վանքերի հետ թէ Եգիպտոսում, թէ Թրակիայում. Թէոդոսի քոյր Պուլխերիան շինեց բազմա-

Հռոմում կայսրները երբ արգելեցին ծածուկ ժողովները կատարելը, նրանք սկսեցին Հռոմից դուրս, մասնաւորապէս Երուսաղէմում մեծ բազմութեամբ կատարել։ Որովհետև հայկերոյթից յետոյ հաղորդութեան կարգը չատ անգամ ազմուկներ էր յարուցանում, այն էլ եկեղեցիներում, ուստի և հէնց առաջին դարում, ըստ Օգոստինոսի Պօղոս առաքեալը փոխեց այդ կարգը, պատուիրելով ուտել տանը և ոչ եկեղեցում, և երկրորդ՝ առաջ կատարել հաղորդութիւնը և ապա սկսել սիրոյ երեկոն (Պօղ. Կորնթ. ԺԱ)։ Կիպրիանոսի, Տերտուղիանոսի Բարսեղ մեծի վկայութեամբ, այդ վոփոխութիւնը այսինքն հաղորդութիւնը հացից առաջ անելու կարգը, եղաւ 65 թուից սկսած. իսկ Ափրիկայի եկեղեցիները մի առ ժամանակ էլ չարունակեցին հաղորդութիւնը տալ հացից յետոյ ըստ Յիսուսի օրինակի. իսկ հաղորդութեան, ագապի ժամանակն տարբեր էր ամեն տեղ, սովորաբար կատարում էին երեկոները և դիշերը, յետոյ արդէն առաւօտները և ճաշի ժամանակ (Տերտուղիանոս). ճաշերը լինում էին կամ եկեղեցում կամ այն տանը որտեղ պատարագ էր լինում։ Բ-դարուց յայտնի է և նահատակների յիշատակին դրուած ճաշեր-պատարագներ, տարին մի անդամ։ Այդ երեկոների համար զանազան աննպատակ լուրեր էին տարածում հեթանոսները՝ իբրև անբարոյականութեան վայրեր, իսկ պետութիւնը արգելում էր իբրև վնասակար սովորութիւն, որը կամաց կամաց վերացաւ և առաջացաւ պատարագի այն ձևը, ինչ որ այժմ ունինք. այս մասին քաղում ենք հետևեալ գրքերից (Апостольскія литургій Восточной церкви. Литургій апос. Іакова, Ѳаддея, Марія и св. Марка. Ал. Петровскій. СПБ. 1897 г. Собраніе древнихъ литургій восточныхъ и западныхъ — I и II выпус. СПБ. 1874. редакц. Христ.—Чтенія).

թիւ կուսանաց վանքեր։ Օգոստինոսի վկայութեամբ կուսանաց վանքերը ոչ միայն անմերձենալի էին երիտասարդների, այլ և ծերերի համար, որոնց թոյլ էր տրւում միայն կանգնել դարպասների մօտ և նուէրներ տալ ու հեռանալ։ Վանքերը ունէին կալուածքներ՝ շնորհուած կայսրներից, իշխաններից, որոնք և անձեռնմխելի էին համարւում մասնաւոր անձանց նկատմամբ։ Վանքերը գտնւում էին առաջնորդների հսկողութեան ներքոյ, որոնք և հսկում էին վանականների վարք ու բարքի, նիստ ու կացի վրայ։
Թեմերում գտնւում էին վանքեր, որոնք անմիջապէս ենթարկւում էին միտրոպոլիտին և ապա պատրիարքին, կո-

«Առաքելական կարգադրութիւններ» ի 8-րդ դիքի հեղինակը (տես Ա. դիրք 56 երես) ասում է որ Յակոբ Տեառն եղբայրը հիմնուց երեկոյեան, առաւօտեան և ցերեկուայ ժամերգութիւնները, պատարագի երկրորդ մասը վերագրելով Յովհաննէս Ոսկեդիայի եղբօրը։ Յակոբի պատարագի մասին յիշում է Եպիփանը(† 403) Ե. դարում, համեմատելով նրա պատարագը հին կազմածներից մէկը։ Ապա Պօղոսի պատրիարք Պրօկղը († 447), Ոսկեբերանի աշակերտը, վկայում է որ «Յակոբը վիճակով ստացել էր Երուսաղէմի եկեղեցին և էր առաջին եպիսկոպոս», հին պատարագ կազմողներից մէկն է, սրա պատարագը եղաւ հիմք Բարսեղի և Ոսկեբերանի պատարագներին։ Այս մասին վկայում են Աղէքսանդրիայի պատրիարք Մարկոսը, Եփեսոսի եպիսկոպոս Մարկոսը, Վիսսարիոն՝ Նէոկեսարիայի եպիսկոպոսը։ Հայոց պատմագրների մէջ, Մովսէս Կաղականտուացին, Ուխտանէս, Ստեփաննոս Օրբէլեան մեծ պատկառանքով են վերաբերւում դէպի Յակոբ, իբրև հայոց հաւատի սկզբնական հիմնադիրը, որ ասել է թէ նրա ժամերգական և պատարագի արարողութիւնը ընդունում են սկզբից հայոց մէջ մտած (տես նախորդ գլուխներից-նախալուսաւորչեան եկեղեցին)։ Միաբնակները-ղպտիները, հաբեշները, մարօնիտները ընդունում են, որ իրանց պատարագը Յակոբինն է։ Աստեմանի կարծիքով Երուսաղէմի պատարագը ոչ միայն Երուսաղէմի թեմում, այլ և համարեա բոլոր արեւելեան եկեղեցիներում գործադրւում էր. այս պատարագը գործադրուելիս է եղել և արեւմուտքում; սրա կարծիքով Յակոբը պատարագը գրել է ասորերէն, ուրիշներն (բենոդաս) ժխտում են այդ, ընդունելով թէ պատարագը գրուած է եղել յունարէն և թարգմանուած ասորերէն։ Բարսեղ մեծը († 379) կազմեց պատարագ հնների վրայ հիմնուած, որը ամբող-

ւում էին Տերունի (στατερομήτης)։ Վանքերի մերձակայ հսկողութիւնը յանձնւում էր վանահայրերին, որոնք կոչւում էին հայրեր, աբբա, վարդապետ. կուսանաց վանքերինը մայրապետ, նրանք ունէին օգնականներ, տնտեսներ, հանդերձապահներ, գատաւարներ և այլն և այլն։ Վանահայրերի ընտրութիւնը պատկանում էր եպիսկոպոսին, պատրիարքին՝ ի հարկէ եղբայրութեան կամ միաբանութեան համաձայնութեամբ, առանց որի ընտրութիւն չէր կարող լինել։ Իսկ մասնաւոր անձինք իրաւունք ունէին վանահայր նշանակել իրանց շինած վանքերում։ Վանահայրերի պարտաւորութիւններն էին, 1) ընդունել վանականութեան մէջ անխտիր ամեն դասակարգի մարդկանց՝ ընտրելով արժանա-

ջութեամբ մեզ չի հասել, այլ փոփոխութեամբ և կտրներով. մինչև Բարսեղ գրւում պատարագ չի եղել, այլ բերանացի։ Սրա պատարագը թարգմանուելով ասորական, ղպտական, հաբէշական լեզուներով, գործադրւում էր Ասորիքում, Աֆրիկայում։ Բացի Բարսեղի պատարագից կայ և Ոսկեբերանի († 407) պատարագը, որի իսկականը մեզ չի հասել վերջինս չատ նման է Բարսեղի կազմածին և կրճատած գրութեամբ, որ արդիւնք էր ժողովրդի տրտնջանաց, որ պատարագի երկարութեան պատճառով չէր յաճախում եկեղեցի։ Այդ դրքում յիշւում է և Գրիգոր լուսաւորչի պատարագ, որ գործ էր ածւում Հայաստանում, և հայ կաթոլիկների պատարագ-Մխիթարեանց գործածածը։ Լուսաւորչի պատարագը երեք չրջանի է բաժանւում, 1) 300-ից մինչև 491 թիւը, երբ ըստ Զամչեանի Բաբգէնի ժամանակ մերժուեց քաղկեդոնականութիւնը (տես Ա. դիրք, Դուինի 507 թուի ժողովը, 356 երես). 2) 491-ից մինչև Շնորհալի (1166-1173) և 3) չրջան, Շնորհալուց մինչև այսօր (Explicalion de la messe—Лебріона 1716)։ Վերոյիշեալ պատարագները համարում է հեղինակը Երուսաղէմ-Անտիոքեան խումբ, հիմնուած Յակոբ Տեառն եղբօր պատարագի վրայ։ Նախալուսաւորչեան չրջանում ինչպէս և ասացինք, երկու լեզուով էր ժամերգութիւնը կատարւում հայոց երկրում, ասորոց՝ արեւելեան կողմերում և հարաւային, և յունաց՝ արեւմտեան կողմերում։ Լուսաւորիչ բերաւ այն պատարագը որը գոյութիւն ունէր արեւելքում, այն է Յակոբ Տեառն եղբօր՝ յունական փոփոխութեամբ, այն ինչ մինչև այդ՝ արեւելեան և Հայաստանի հարաւային մասում գործ էր ածւում Յակոբի պատարագի ասորական ձեւակերպութեամբ. թէ ինչպէս հաշտեցրեց Լուսաւորիչ

ւորը և յարմարաւորը. 2) տալ վանականներին աստիճան, նշանակել երգիչները, ընթերցողներ և այլն: 3) Միակ կարգադրել վանքի բոլոր գործերը, հսկել բոլոր պաշտօնեաների գործավարութեան վրայ և պատասխանատու լինել ամբողջ վանքի կողմից: 4) Կառավարել խորհրդով և ընդհանուր վճռով բոլոր կալուածքները, գոյքերը, ժողովել նուէրները, դրամները, նիւթեղէնները: 5) Հսկել վանական կանոնների անթերի կատարման վրայ, աղօթքների պաշտամունքների լրիւ գործադրուելուն վրայ:

Հայոց մէջ վանքերը սկսուեցին շինուել Լուսաւորչի օրով, լցուեցին վանականներով, որոնք մեծ մասամբ օտարական-

այդ երկուսի թեթև տարբերութիւնները, յայտնի չէ, միայն դիտենք որ «Հաւատամք»—ի վերջում աւելացրեց «իսկ մեր փառաւորեացուք» —ը, այն ինչ արեւելքում «Հաւատամքը» պատարագի մէջ մնաւ Անտիոքի Պետրոս Փուլոն (438 թ) եպիսկոպոսի ձեռքով, իսկ Պօլսում 510 թուին: Վրթանէսը այդ երկու տարբերութիւնների համար հրահանգ խնդրեց Երուսաղէմի Մակարիոս և վարուեց վերջինիս տուած տեղեկագրութեամբ (տես Ա. Դ. 483 եւես): Յամենայն դէպս հայոց պատարագի, հենց ժամերգութեան շրջանի բաժանումն սկսել չէ 300 —ից մինչև Սահակ, Յովհան Մանդակունի, բռնում է 406—490 թուերը, երբ թարգմանիչները ամբողջացրեց հայոցերին ամեն ինչ, լրացրին Գիւտ և Յովհան Մանդակունին և տուին այն ժամերգութեան ձևը, ինչ որ այժմ ունինք. Օձնեցու 719-ին արած ժողովի կանոնները հաստատում են այդ. (տես Ա. Դ. 406.425 երեսները): Շնորհալին լրացրեց թերութիւնները:

Պատարագի բ. խումբն է «Աղէքսանդրիան» (Ալբրիկայի).

Աղէքսանդրիայում յարգի էր Կիւրեղի պատարագը, որ հիմնուած էր Մարկոս աւետարանչի պատարագի վրայ. հարէչներինը «Առաքելական կարգադրութիւնների» մէջ յիշուած պատարագն է, յետոյ արդէն նրանք էլ ընդունեցին Կիւրեղինը (444 թ.), նոյնպէս և զատիկները:—

Գ. խումբն է Միջագետքի պատարագները—Թադէոսի և Մարի-ի. Նեստորականները կամ Բադդէացիք գործ են ածում «առաքելոց» կոչուած պատարագը, որ է Թադէոսի և նրա ուղեկից Մարիի, որը եղաւ Սելևկիայի եպիսկոպոս Թադէոսից և Ադդէից յետոյ. այս պատարագը չատ հին է և Նեստորական ոչինչ չունի, չատ պարզ է և նախական ձևով, որա մէջ չկայ ընծայաբերումն, վերաբերումն և

ներ էին, ահագին զարկ սուացաւ վանականութիւնը Ներսէս մեծի օրով, շինուեցին կաւսանայ վանքեր, յանձնուեցին վանքերին հողեր, կալուածքներ, նուէրներ, մինչև իսկ որոշակի տուրքեր և հարկեր նշանակուեցին. վանահայրերը մեծ մասամբ օտար էին և մեծ իրաւունքներով, կոչւում էին վարդապետ, առաջնորդ, վերակացու. Գինդի համար Բիւզանդ ասում է 230 երեսում. «Այս Գինդը Տարօն գաւառից էր, մեծ Դանիէլի աշակերտ էր եղել, իսկ նրանից յետոյ գլուխ աբեղայից, և վարդապետ միանձանց, և առաջնորդ մենակեցաց, և վերակացու վանորէից, և ուսուցիչ ամենայն անապատաւորաց, և տեսուչ ամենեցուն». Վանականութիւնը այնքան ուժեղացաւ բարոյապէս որ սկսեցին եպիսկոպոս, պատրիարք, կաթուղիկոս ընտրել այդ շրջանից. եկեղեցու ամբութեան հիմք համարւում էր վանականութիւնը, մանաւանդ երբ տիեզերական ժողովների պայքարներում նրանք դուրս էին գալիս պաշտպան և ջատագով ուղղափառ եկեղեցուն, նրանք խմբերով շրջում և քարո-

հաւատամքը. Նիլը ասում է «այս նշան է յամենայն դէպս խորին հնութեան, նա պարզ է, պատկառելի, բոլորովին ազատ է վերջին դարոդների վերան յաւելումներից և իր կազմութեամբ չի կարող յառաջ եկած լինել Կեսարիայի կամ Երուսաղէմի պատարագի տարածումից կամ փոփոխութիւնից», հնութեան կողմից հաւանարեցնում է Յակոբի և Մարկոսի պատարագների հետ և բնագրի համար աւելացնում, որ յունականի թարգմանութեան հեռքեր չունի: Բացի այս պատարագից Նեստորականները ունին Նեստորի պատարագը, տարուայ մէջ 5 անգամ (Ծիսդորի, Թէոդորի, և Նեստորի տօներին). բացի այդ նրանք գործ են ածում և Թէոդոր Մոպսուեստացու պատարագը, որ չատ նման է «Առաքելոց» –ին: Արդեօք Նախալուսաւորչեան Ատրպատական մասի Հայաստանում այս Թադէոսի և Մարիի պատարագը չէին գործածում. պատարագների համեմատութիւնից միայն հնար կլինի որոշ բան ասել: Ի—խումբն է Արևմտեան պատարագները. բացի յունականի նման պատարագներից այնտեղ կար Պօղոսի ուղեկից Բառնաբասի պատարագը, Մեդիօլանի եպիսկոպոս Ամբրոսիոսի († 397) պատարագն է, որ է Հռոմինը. կար և Պետրոսի ժամանակներից կազմուած պատարագ, որ գործ էր ածում Իտալիայում: Կային և Գալլոսի պապի (Ե. դար) և Գրիգոր մեծի պատարագները:

զում էին քրիստոնէութիւնը. Սահակ իւր 60 լուակեաց վանականներով շրջում էր Հայաստանի բոլոր անկիւններում և կարգաւորում ամեն ինչ։ Վանականութեան վարկը բարձրացաւ պատկերամարդութեան ժամանակ, այնքան շատ էին վանականներից եպիսկոպոս ընտրուած անձինք, որ հարց բարձրացաւ, թէ վանականութեան ուխտ անողը, հնազանդութեան, ամուրիութեան, անշահասիրութեան երդումն ընդունողը կարող է ժողովրդի մէջ ապրել, ոռճիկ կամ նուէրներ ստանալ, լինել տներում, կանանց շրջանում, որոնք հակասական էին վանական ուխտի հետ. կարծիքները տարբեր էին, բայց կեանքը գնում էր իւր հոսանքով և նոյն ձևով ընտրութեան ժամանակ առաւելութիւն ստանում էին վանականները։ Պօղոսյ 117 եպիսկոպոսներից 57-ը հոգևորականներից էր ընտրուած, 58-ը վանականներից, 2-ը անորոշ (Твор. отц. 1862 г. о санѣ епископскомъ въ отношеніи къ монашеству)։ Հայոց մէջ հէնց ամուսնութիւնը վերանալուց յետոյ, մեծ մասամբ կաթուղիկոսները և եպիսկոպոսները ընտրում էին կուսակրօններից-վանականներից, բացառիկ դէպքերում քահանաներից և աշխարհականներից։— Ե. դարու ժողովի կանոններից երևում է արդէն որ եպիսկոպոսական աթոռների վրայ նստած անձինք կուսակրօն էին, որ ենթադրել է տալիս, թէ՛ կամ ամուսնացած հոգևորականները ընտրութեան դէպքում հեռացնում էին կանանց կուսանոցները և իրանք կառավարում թեմերը, կամ ուղղակի ընտրում էին կուսակրօն հոգևորականներից։ Ս. Սահակի կանոնները խստութեամբ արգելում են վանքի և եկեղեցու ինչքը և ստացուածքը յանձնել կամ պարգևել ըստ քմահաճոյից իրանց բարեկամներին և մերձաւորներին, որ ասել է թէ եկեղեցին միշտ ձգտում էր ունենալ անգաւակ. անամուսին առաջնորդներ, որոնք իսկութեամբ չ'կարողացին կատարել իրանց սրբազան պաշտօնը յօգուտ ժողովրդի և եկեղեցու ու վանքի։

Բ. ԵԿԵՂԵՑՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ.

ա) եկեղեցիների և վանքերի տնտեսավարութիւնը։

(Изложеніе кононическихъ постановленій . . . “ „Христ. Чтеніе 1865 г)

Թէ ինչպէս պիտի ապրէին հոգևորականները, եկեղեցու սպասաւորները, այդ ցոյց տուաւ Յիսուս իւր կեանքով և օրինակով, ուր գնում էր, մտնում էր մեկի տունը, հաց ուտում և դուրս գալիս, կամ սպասում էր ունկնդիրներից մեկնու մեկի հրաւէրին, կամ ընդունում էր յօժարակամ նուէրներ, որոնցով հոգալ էր տալիս իւր և իւրայինների պէտքերը, և մինչև իսկ աղքատների. նոյն ձևով էլ պատուէրներ տուաւ իւր աշակերտներին ապրել ժողովրդի մէջ, քարոզելով և շրջելով, առանց մտածելու հացի վրայ. (Ղուկ. է, ժ գլ. Մատթ. ժ գլ.)։ Նոյն ձևով վարուեցին և առաքեալները, ստանում էին յօժարակամ նուէրներ և ուտում ու հանգստանում ամեն մի տան, ուր սիրով ընդունում էին և հիւրասիրում։ Պօղոս առաքեալը շնորհակալութիւն է յայտնում Փիլիպպեցիներին, նրանց ուղարկած նուէրների համար (փիլ. Դ.), Փիլիմոնին առաջուց գրով յայտնում է իջևանելու տեղի համար (փիլ. 22)։ Իսկ առաջին շրջանում մինչև իսկ քրիստոնեայ դարձածները վաճառում էին ամեն ինչ և յանձնում առաքեալներին ընտրուած անձանց՝ հոգալու բոլորի կարիքները և պէտքերը. (Գործ. բ.) Առաքեալները նոյնը պատուիրում էին իրանց յաջորդներին, հրահանգելով՝ սեղանի ծառայողը սեղանից ուտի, տաճարի ծառայողը՝ տաճարից (Ա.–կորնթ. թ. գլ.)։ Առաջին շրջանում քրիստոնեայ—հրէաները հետևելով հին-ուխտի կարգերին (Ղև. 27 գլ. 30, 32, թուոց, 18 գլ. 21, 26, 28, 31), տանում էին փող, հաց և գինի հաղորդութեան համար, խունկ բուրվառի, ձէթ կանթեղների համար, պաշտամունքից յետոյ, մնացած ուտելիքով կերակրում էին քահանաները, եկեղեցու սպասաւորները և ժողովուրդը, աւելին

տարւում էր քահանաներին և բաժանւում աղքատներին։ Այդ որոշում է Ս.–Ս.ռ. կանոնները Ա. գիրք, 84, 85, 101, 107 երես։ Թէոփիլէս Աղէքսանդրացին իւր 8 կանոնով որոշում է պատարագի մնացորդը յանձնել հոգևորականներին և չունևորներին (Ա. Գ. 253)։ Հոգևորականների այդ ձևով սննդուելու վերաբերմամբ խօսում են Յուստինոսը, Տերտուղղիանոսը, Առաք. կարգադրութիւնները (Ա. Գիրք, 62 երես)։ Պատարագը, ընծայաբերութիւնը, սերոյ ճաշերը լինում էին ամեն օր, Պօղոս առաքեալը շատ գանգատներ լսելով կերուխումի ժամանակ եղած անկարգութիւնների վերաբերմամբ, որոշեց ընծայաբերութիւնները կատարել միմեայն կիւրակի օրերը (Ա.—կորնթ. ժգ.). իսկ միքանի տեղերում նուիրատուութիւնները ժողովում էին ամսէ ամիս (Կիպրիանոսի թուղթ)։ Այս ձևով կառավարւում էր եկեղեցին և հոգևորականութիւնը մինչև Գ. դարը. այդ դարում երբ Հռոմում քրիստոնէութիւնը քաղաքացիական կրօն դարձաւ, եկեղեցու և նրա պաշտօնեաների ապահովութեան խնդիրը բոլորովին այլ կերպարանք ստացաւ։ — Կոստանդիանոս մեծը իրաւունք տուաւ եկեղեցուն ստանալ նուէրներ դրամով, կալուածքով թագաւորներից, իշխաններից կտակի միջոցով. Թէոդորոս և ապա Յուստինիանոս որոշեցին՝ անժառանգ անձանց գոյքը և ինչքը յանձնել եկեղեցուն. ամեն մի քաղաքում որոշուեց տէրունական հողերից որոշ մասն յատկացնել եկեղեցուն, և նրա արդիւնքով ապահովել եկեղեցականների տնտեսական կեանքը (Սոզոմէն, Ա. Ե.)։ Կոստանդիանոս մեծը Նիկիայի ժողովին մասնակցող եպիսկոպոսների գնալ՝ գալու համար հրամայեց բոլոր կուսակալներին, տալ առատութեամբ ամբողջ ճանապարհի ընթացքում նրանց ծախսը, հոգալ պէտքերը արքունական հարկերի հաշուից (Եւսեբիոս, Թէոդորիտ)։ Յուստինիանոսը հրամայեց որ իւրաքանչիւր մարդ, որ իւր յիշատակին եկեղեցի է կառուցանում, պէտք է անպայման ապահովացնի նրա գոյութիւնը՝ հոգալով եկեղեցու սպասաւորող հոգևորականների պէտք եղած կարիքները։

Նոյնպէս և իրաւունք էր տրւում հոգևորականներին ազնիւ աշխատանքի միջոցով հայթհայթել իրանց ապրուստը առաքեալի օրինակին հետևելով (Գործ. Ի. 34)։ Հայաստանը բոլոր ազգերից առաջ շնորհիւ Լուսաւորչի և Տրդատի ընդունելով քրիստոնէութիւնը իբրև քաղաքացիական կրօն, հոգ տարաւ ապահովեցնելու և եկեղեցիների և հոգևորականութեան տնտեսական դրութիւնը։ 1) Թագաւորական հրամանով յանձնուեցին եկեղեցիներին և հոգևորականներին բոլոր մեհեանների կալուածքները, ոսկէ և արծաթի իրեղէնները. 2) Թագաւորական հրամանով ամեն մի եկեղեցի ստացաւ հող ի մշտական սեպհականութիւն. 3) Մասնաւոր եկեղեցիները և վանքեր շինող իշխանները յատկացնում էին կալուածքներ ի մշտական սեպհականութիւն. 4) Լուսաւորչի և Տրդատի կարգադրութեամբ թէ եկեղեցիները և վանքերը, և թէ հոգևորականները ստանալու էին ամեն մի տնից յօժարակամ և պարտաւորական տուրք. 5) Եկեղեցիները իրաւունք ունէին փողով գնելու կալուածքներ. 6) Եկեղեցիները իրաւունք ունէին կտակով ստանալու շարժական և անշարժ գոյք, մանաւանդ անժառանգութեան դէպքերում. 7) Գոնէ մինչև Ե–Զ—դարը կաթուղիկոսները և առաջնորդները ունէին սեպհական ժառանգական գիւղեր և հողեր.

1; Եկեղեցիների առաջին ապահովողը եղաւ Տրդատ թագաւորը, որը հրամայեց մեհեանների ոսկին ու արծաթը և կալուածքները յանձնել եկեղեցիներին. այս մասին ունինք Ագաթանգեղոսից վկայութիւններ։ «Եւ զգաստակերտն (Անահտին պատկանող) հանդերձ գեանովքն և սահմանօք նուիրեցին եկեղեցւոյ ի սպասաւորութիւն». ճր.։ Նոյնպէս և Անի ամրոցինը. «Եւ զաւանն ամրաւն հանդերձ ի ծառայութիւն եկեղեցւոյ նուիրէին». «Եւ զգանձս երկոցուն մեհենացն աւարեալ ժողովեալ, ի նուէր սուրբ սպասու եկեղեցեացս Ս.՝ յ թողին տեղօքն հանդերձ». ձթ. ;«Եւ զգիօղն ամ դաստակերտօքն և գեանովքն հանդերձ սահմանօքն յանուն Ս.՝ նուիրէին». ձթ.։ «Ընտեցին կազմեցին զտեղիսն

(վկայարանն) և զարդարեցին ոսկի և արծաթի կանթեղամբ լուցելովք, և լապտերաւք վառելովք, և աշտանակօք բորբոքելովք»: «Նոյնպէս և զոսկին և զարծաթն և զկտաւսն փուխով կուտէին առ դուրս հնձանին. . . . և այդ ամենայն (հրամայում է Լուսաւորիչ) ի սպաս փառաւորընկալ սեղանոյն ի ձեռն քահանայապետին կացելոյ». 433 երես: Յուներ Կոստանդիանոս մեծի տուած ընծաները, բոլորը—ոսկի, արծաթ յանձնեցին եկեղեցիներին. «Եւ բերէին զպարգեւս բերեալս անդստին, զոսկին և զարծաթն, և զպատուական կարասին, ի նուէրս սպասու Ա՛յ եկեղեցւոյն և ի տունս նուիրաց սրբոց վկայից դնէին, նաև զտուեալ զոսկի սպասս կայսերն ի նոյն հանգիստ սրբոցն դնէին». 506 երես. Ա.Գ. : 2; Տրդատ հրամայեց բոլոր աւաններն և գիւղերն եկեղեցիներին հող յատկացնել, հոգևորականութեան ապահովութեան համար, կարգադրելով, որ աւանը տայ եկեղեցուն 7 ծխի հող, իսկ ագարակները (գիւղերը) 4. «Նոյնպէս և թագաւորն յամենայն իշխանութեան իւրում առ հասարակ՝ գրեաց չորս չորս հողս յամենայն յագարակ տեղիս, իսկ յաւանսն ևթն ևթն երդոյ հող, ի ծառայութիւն սպասաւորութեան եկեղեցւոյ նուէր պտղոյ Տեառն մատուցանէր». 443 երես. Ա.Գ. : Այդ կարգադրութիւնը տևեց մինչև Պապ թագաւորը, որը քիչացրեց հողերի քանակութիւնը. «Եւ հատ ևս յարքունիս Պապ թագաւոր զհող եկեղեցոյն, զոր տուեալ էր թագաւորին Տրդատայ առ մեծաւն Գրիգորիւ քահանայապետին ի սպաս պաշտաման եկեղեցւոյ ընդ ամենայն երկրին Հայոց: Զի յևթն հողոյն զհինգն հատանէր յարքունիս, և զերկուսն միայն թողոյր երկուս հողս: Եւ ըստ հողոյն թողոյր երկուս երկուս առ գեղ մի երեց և մի սարկաւագ, և զայն ի սպասաւորութիւն կացուցանէր լիտ ի ծառայութեան զեղբարս և զորդիս երիցանցն և սարկաւագաց» Բիւզ. 194 երես: Եղիշէն յիշում է որ Վասակը. «օրէցօր եկեղեցիների ռոճիկը շատացնում էր». Գ. 81 երես:

3; Մասնաւոր անձինք ապահովեցնում էին իրանց կառուցած եկեղեցիները թէ կենդանութեան ժամանակ, թէ մահուան

դէպքում կտակների միջոցով: Դեռ ևս Ե. դարում, ինչպէս վկայում է Ղազար Փարպեցին, Վահան Մամիկոնեանը և եղբայրները ոչ միայն նուէրներ էին տալիս էջմիածնի կաթուղիկէի վանքին, այլ և ռոճիկ, կանոնաւոր և ժամանակին: Մխիթար Գոշին պահողը, վանքին օգնողը. և ամեն պակասութիւն հոգացողն էր խնամակալ իշխանը: Բագրատունեաց, Սրբազունեաց թագաւորները, Սիւնեաց իշխաններով գիւղերով կտակներ էին անում և կալուածքներով նուէրներ տալիս: Ստեփաննոս Օրբէլեանը (ԺԳ. դար) այդպիսի կտակների շատ փաստեր է բերում. «Կամաւն Ա՛յ ես Սուփան՝ Սիւնեաց իշխան, շինեցի զմաքենոցաց եկեղեցիս և անխնայաբար զարդարեցի պատուական սպասուք և Աստուածային կտակարանօք, և ետու զսեփական տեղն մեր ի սա, որ ընդ անուան եկեղեցոյն Աստուածածին ասի, ամենայն սահմանօք, լերամբ և դաշտիւ, և ետու որս ձկանց գիողաշէն սեղանոյն և եօթն հարիւր դրամ ի գեղկանայ գետոյ զապալէն, երկու հարիւր դրամ-ի կաթիկայ, 350 յԱնմեռէն, որ լինի 1250 դրամ, ետու և 5 կուզպակ ի յԱնի և 5 այգի յԵրևան և հինգ հարիւր առու այգի ի գիւղաքաղաքն Գառնի, և 2 այգի յեղիկիս . . . . ետու և ջուլիրս եզանց և ջոկս գուարակաց և անդեայս և հօտս ոչխարաց». 131 երես:

Նոյն ձևով Փիլիպպէ Սիւնեաց իշխանը 844 թուին նուիրում է Տաթև գիւղը վանքին «ամենայն սահմանօք, լերամբ և դաշտիւ, այգօքն և ընկուզենօք, մարգագետնովք և ջաղացանով և որ ինչ համօրէն սահմանք են . . . » այն պայմանով որ ոչ ոք իրաւունք չունենայ—«հեռացուցանել, մի՛ վաճառել, մի՛ փոխել, մի՛ գրաւական դնել, այլ որ եկեղեցւոյ սպասաւորք լինին՝ իշխան լիցին ամենայն սահմանացն . . . Վայելեցէք ց գալուստն Քրիստոսի»: Փառաւոր է 906-ի կտակը Տաթևու վանքի նաւակատեաց ժողին հայոց թագաւորի, կաթուղիկոսի կնքով և վկայութեամբ. «Ահա այս իսկ են սահմանք զոր մեք ոտիւք մերովք կոխեալ և աչօք մերովք տեսեալ և ձեռօք մերովք նշանեալ՝ առանց զրկութեան և յափշտակելոյ գրեցաք և կնքեցաք մատանեաւ մերոյ

արքային և կաթուղիկոսին և մեր իսկ». (168 երես)։

4; Եկեղեցիները և վանքերը հողերը ձեռք է բերում նաև դրամով, գնելով. դրա բազմաթիւ փաստերը կարելի է գտնել 'ի մէջի այլոց և Ս. Օրբէլեանի պատմութեան մէջ, նոյնպէս և այդ հաստատութիւնների «զալալաններին» մէջ, որոնք ձեռագրերով գտնւում են հին դործերի մէջ։

5; Վանքերի և եկեղեցիների արդիւնքների աղբիւրներից գլխաւորն է յօժարակամ նուէրներ, տուրքեր, պատուղներ, տասանորդներ, խաչահամբոյրներ։ Իւզանդ 218 երեսում յիշում է Մանուէլ սպարապետի տուածների մասին. «բազում մասունս յընչից իւրոց տայր յեկեղեցիս և 'ի վկայանոցս, և բազում գանձս տայր ցքահանայապետան և ասէ մեւանի»։ Սչոտ Ս.-ի համար յիշատակում է Յովհաննէս կաթուղիկոս-80 երեսում. «այլև իձեռս Հայրապետին (Գէորգ) հաւատայր զլիակատար գանձարանացն մեծերս՝ և զերամակս ձիոց և զգասակս անդէոց և զհօտս ոչխարաց, ամենևին բաշխել յեկեղեցիս ուղղափառաց 'ի նուիրումն պատարագին սրբութեամբ»։

Բայց նուէրներից կային և նշանակած տուրքեր, որոնք պարտաւոր էր ժողովուրդը վճարել։ Ներսէս մեծը 2000 աչափ վանքերից զատ շինեց բազմաթիւ օտարանոցներ, աղքատանոցներ, ուրկանոցներ, որոնց պահպանութեան համար որոշ գիւղերի վրայ տուրքեր նշանակեց. Սահակը թարգմանելով Լուսաւորչի կանոնները պտղի և տասանորդ տուրքերի վերաբերմամբ պարտաւորական դարձնելով հրամայեց գործադրել իբրև Լուսաւորչաւանդ կարգ։ Փաւստոսն ասում է Պապի համար, «Եւ զկարգս պտղոյն և զտասանորդացն՝ որ 'ի նախնեացն կարգեալ սովորութիւն էր տալ յեկեղեցին, վասն այնորիկ հանէր հրաման ընդ աշխարհ, զի մի' ոք տացէ»-92 երես։

Փարպեցու թղթից երևում է կամաւոր տուրքերի և նուէրների տալու ձևը և քանակը. «Բայց երեք եղբարքն էլ սիրում էին ս. կաթուղիկէի վանքը ընծաներ և ամեն հարկաւոր բաներ նուիրելով, որոնցից ամեն մէկի տուածը յայտնի էր և գրով մնաց վանքում, և ճշմարիտ որ Տիրոջդ կամքի կատարողները դրանք եղան։ Որովհետև, ... դրանք եղան քո խօսքի հրամանը կատարողները, առանձին առանձին, իրենց կամեցողութեամբ վանքի պետերութիւնը հատուցանելով»։ «Իսկ ինչ որ կարգել էին ինձ տարեկան տէր Ներսէհը և Հրահատը-կերակրի, հանդերձի և ձիու համար, յայտնի է, նոյնպէս և Տիրոջդ եղբօրորդիներից նշանակուածը, այն էլ դեռ հերիք էր լինում ինձ, և երբեմն իմ աւելորդներից վանքի պէտքերի համար էր գործ դրւում»։ Թէ իւրաքանչիւր գիւղ պարտաւոր էր հարկ և կամաւոր տուրք տալ եկեղեցիներին, վանքերին և հոգևորականութեան, այդ երևում է և յետագայ դարերի գրողների յիշատակութիւններից, որոնցից կարելի է յիշել Սիւնեաց աշխարհի պատմագիր Ստեփաննոս Օրբէլեանի (ԺԳ. դար.) 12 գաւառների 677 առաջ բերած գիւղերի ցուցակը և ամեն մի գիւղի տալիք հարկի քանակը Տաթևու վանքին. «Սիւնեաց երկոտասան գաւառաց հարկք եկեղեցւոյ ըստ հին սահմանին այս են. Ս.. Ծղուկք գաւառ (այժմեայ Սիսիան). Նորիք 12. Տաթև 10. Յուր 6. Ծայարտ 10. Խովիտ 8. Տաշու 5. Հարժիք 10. Սրիտ 6. . . . . » և այլն։ Այժմ նոյն գիւղերը՝ ինչպէս և բոլոր այլ թեմերի գիւղերը տալիս են նոյն տուրքերը, պտղեղէն, ցորեն, գարի, իւղ, ձու, աղ; Սուրբ Սահակին վերագրած կանոններում մանրամասն գրուած է թէ մատաղներից, տուրքերից ո՞ր բաժինը պիտի հասնի քահանաներին, ո՞ր բաժինն եկեղեցիներին (քահանայից), և ո՞ր բաժինն վանքերին (տես մանրամասն Ս. Գիրք 527 երես)։ Վանքերը սկզբից հէնց իրանց ապահովեցրին կալուածքներով, դրամով, և շարժական այլ կոյքերով, անասուններով։ Էջմիածինը ունէր 15 գիւղ, Ս. Կարապետի վանքը 12 գիւղ, որոնցից մէկը ունէր 1040 հեծեալ, 840 աղեղաւոր, 680 սիգաւոր, 280 պարսաւոր։ Տաթևու վանքը ունէր մօտ 30 գիւղ, ահագին անտառներ. Գիւտայ վանքը 5 գիւղ, 1000 արջառ, 12000 ոչխար, 700 ուղտ, 600 ձի, 400 էշ և 170 կատեպան այգիների համար։ Խոթայ վանքը ունէր 150,000 գես-

իադին անտառ և արօտատեղի: Նոյնպէս և միւս վանքերը:—

6) Կաթուղիկոսները և առաջնորդները նախկին վեց դարերում ունէին սեպհական գիւղեր, կալուածներ, որոնք յետոյ դարձան սեպհականութիւն կաթուղիկոսարանի՝ որ է Մայր Աթոռի, և առաջնորդարանների:

Լուսաւորչից մինչև Սահակ կաթուղիկոսութիւն արաւ թևական տոհմը, որի կալուածքներն 15 գիւղ էին կազմում և մեծ մասամբ գտնւում էին Տարօն գաւառում, այդ գիւղերի արդիւնքով ապրում էին թէ կաթուղիկոսները, թէ նրանց ընտանիքները և թէ ամբողջ իրանց տոհմը: Բիւզանդ ասում է Գ. գլխում, «իսկ սոցա (Գրիգոր և Արիստակէս) պատրաստեցան տեղիք ընակութեան և շինմք հանգստեան մեծին Գրիգորի՝ ի Վարանդեաց գաւառին, ի գիւղն որ անուանեալ կոչի Թորգան և սրբոյն Արիստակեսայ որդւոյ նորա՝ յԵկեղեաց գաւառի, ի Թիլն աւանի, ի կալուածս Գրիգորի հօրն իւրոյ»: Յովհաննէս կաթուղիկոս 59 երեսում մինչև իսկ գրում է. «Այս գիւղ (Արամոն) սեպհական էր տան կաթուղիկոսարանի նախ քան զյարչարանս սրբոյն Գրիգորի յարքայէն Տրդատայ նմա իսկ հոգեցատուր պայմանաւ ընձեռեալ, որոյ և յետ կար վճռան պահի մինչև ցայսօր ժամանակի»: Բիւզանդ Գ. 97 երեսում մինչև կաթուղիկոսարանին յատկացնում է ոչ թէ 15 գիւղ, այլ 15 գաւառ «Այրարատ, Վարանդէ, Եկեղեաց, Տարօն, Բգնունիք, Ծոփք, և որ ընդ մէջ նոցա և որ շուրջ զնոքօք»: Թաղեցին ի բուն գեղն Հայրապետին Ներսէսի, որում անունն Ամօքն կոչի»—225 երես: Լուսաւորիչ այդ գիւղերի կառավարիչ նշանակել էր Գանիէլ քորեպիսկոպոսին: «Վերակացու և գլխաւոր եկեղեցեաց նահանգին Տարօնոյ, Գրիգորի ձեռական իշխանութեանն կողման մասին գործակալութեանն. . . »:

Ներսէս մեծի ժամանակ նոյն կալուածների կառավարիչն էր Խադ սարկաւագապետը: Հայոց կաթուղիկոսարանի Բուին փոխուելուց յետոյ Տարօնի կալուածների մասին յիշատակու-

թիւն չենք գտնում, յիշւում են կալուածները կաթուղիկոսարանին պատկանող Դուինի շրջակայքում՝ Արարատեան աշխարհում, որպիսի են Արտաշար, Կաւակերտ, Հոռոմոց Մարգ: Յովհաննէս կաթուղիկոսը պատմում է 63 երեսում. «Ոստիկան ոմն՝ Խուզիմա անուն, եկեալ ի Դվին քաղաք՝ զընդ իւրև կացեալն նուաճէր: Եւ տեսեալ զգեղեցկութիւն մեծամեծ դաստակերտիցն տան կաթուղիկոսարանին՝ զԱրտաշատն և զԿաւակերտն և զՀոռոմոց Մարգ հանդերձ նոցունց ագարակօք և դաւաճանեալ ի չար ցանկութենէ. . . . . ի հալրապետէն Յովսէփայ խնդրէր տալ նմա զմեծ դաստակերտս իբր ի պատճառս գնոյ արծաթոյ»—ապա զօրով խլում է Արտաշատը: Այդ շրջանից յետոյ արդէն, երբ կուսակրօնութիւնը գարձաւ ընդ հանուր օրէնք, գիւղերն այլ ևս չէին մնում կաթուղիկոսական տոհմի սեպհականութիւն, այլ համարւում էին Մայր-Աթոռի, կաթուղիկոսական Աթոռի սեպհականութիւն: Առաջի շրջանում ինչպէս կալուածքները պատկանում էին կաթուղիկոսական տոհմին, նոյն ձևով թեմերի կալուածքները պատկանում էին առաջնորդական տոհմին: Սեպհականութիւնը ժառանգաբար մնում էր նոյն տոհմի մէջ եկեղեցու առաջնորդութեան հետ միասին, արդիւնքները գործադրւում էր թէ եկեղեցու պէտքերի և թէ առաջնորդի ու նրա տան պէտքերի վրայ:

Փաւստոս 228 երեսում յիշում է մի անկարգ Յովնան անունով եպիսկոպոսի մասին, որն խեղկատակութիւններով և ծամածռութիւններով թագաւորի սիրտը շահում էր և փոխարէնը ստանում գիւղեր և մուրհակներ. «իսկ թագաւորին զմուրհակս գեղացց կամ զագարակաց գրեալ և կնքեալ դնէին ի վերայ ողին Յոհաննու փոխանակ ընդ մեղաց իւրեանց, և ի թագաւորացն հայոց ստացաւ իւր գիւղս և ագարակս և գանձս յուղղն լինելոյ և զմեղսն բառնալոյ ըստ բանից»: Թէորքան հողեր և կալուածներ ունէին եկեղեցիները, առաջնորդութիւնները, այդ երևում է Արշակի և Պապի հակաեկեղեցական կարգադրութիւններից, Մարդպետի բացարձակ բողոքից, Փարպեցու ժամանակ աբեղաների գործ դրած

միջոցներից, որ անպատճառ վանահայրութիւնը ձեռք ձգին: Առաջնորդները և առաջնորդական եկեղեցիները ստանում էին թագաւորներից ոչ միայն գիւղեր, այլ և գաւառներ. Փաւստոս ասում է որ թագաւորը հրամայեց տալ Աղբիանոս եպիսկոպոսին. «Եւ ետ գաւառն և զբուն գահոյից գեղն նահապետին մանաւազենից եպիսկոպոսին Աղբիանոսի յեկեղեցի, զՄանաւազկերտ ամենայն սահմանօքն և կաւառակաւն հանդերձ, որ շուրջ զնոքօք էր, որ կայ ի կողմանս գետոյն Եփրատայ: Եւ ետուն զբուն գեղն Որդունեաց որոց անունն էր Որդորու, ուստի եպիսկոպոս Բասանու»:

Խորենացին Սուրմակ քահանայի համար ասում է. «որ ապա զիւրոյ գաւառին զհղնունեաց եպիսկոպոսութիւնն ի Պարսից արքայէն եգիտ ունել ազգաւ»: Առաջնորդ-եպիսկոպոսները 2-դարից սկսած, երբ կուսակրօնութիւնը պարտաւորական դարձաւ, այլ ևս ժառանգաբար չէին յանձնում թէ առաջնորդական պաշտօնը և թէ կալուածները իրանց ժառանգներին, հապա ընտրուած յաջորդող եպիսկոպոսին:—

Ծխական եկեղեցիները և ծխական քահանաները ապահովուած էին Տրդատի հրամանով հողաբաժիններով, մեծ գիւղերը պիտի յատկացնէին եկեղեցիներին 7 տան հող, փոքր գիւղերը 3 ծխի հող: Պապ թագաւորը քիչացրեց այդ քանակը կէսից պակաս: Լուսաւորչի աւանդական գրից երևում է, որ քահանան պիտի ստանայ «մատաղներից կաշին, աղերին ճրագուն, զմակը, սիրտը, լերդաբոյթը, երիկամունքները ճարպով, կողերի մի մասը, լեզուն և աջ ականջը, շրթունքը հոտոտելիքով, աջ ականջը և բոլոր խորհրդական մասերը: Իսկ կալից և հնձանից և ուրիշ արմտիքներից տասանորդ . . . » Ա. Գիրք 531 երես:

Դուինի ը. ժողովի կանոններում գտնում ենք քահանայական արգիւնքների բաշխման համար կարգեր (Ա. Գ. 370--389 երես): Առաջին կանոնն թոյլ չի տալիս քահանաներին բաժանել ծուխը պաղի և մուտքի համար, հապա բոլոր արգիւնքը ժողովել եկեղեցի և գլխաւոր քահանայի նախաձեռնութեամբ բաժանել այս կարգով, $2^1/_2$ մասը տալ գլխաւոր

քահանային, քահանաներին 2 մասը, սարկաւագներին $1^1/_2$ մասը, դպիրներին և պարկեշտ այրի կանանց մի մասն: Ժողովի կանոնները սահմանուեցին Զ. դարու կէսերին: Դուինի 648 թուի ժողովի կանոնները (Ա. Գ. 390--406): Թոյլ չեն տալիս ծխաբաժանումն կատարել, հապա իրանց հայր - քահանաների բաժնով բաւականանալ իբրև ժառանգութիւն. նոյն ժողովի 8-րդ կանոնն բաց է ի բաց խօսում է քահանայական պաշտօնի և կալուածների ժառանգաբար քահանայի տոհմին պատկանելու մասին, մինչև իսկ իրաւունք տալով քահանային ժառանգ չունենալու դէպքում որդեգրել մեկին և իւր «օջաղի» վրայ ժառանգ կարգելով ծուխը, եկեղեցու հողը նրան յանձնել: Այս տարօրինակ և հակաաւետարանական կարգը տիրում էր մինչև 19—դարը շատ տեղերում, Տփխոի առաջնորդ Ներսէս Աշտարակեցու դէմ բողոքող նոյն քաղաքի իշխանները պաշտպանելով իրանց քահանայացուին, գրում են «Ահա հինգ հարիւր տարի է որ մեր տան քահանայն Տէր Յակոբի օջախն է եղեալ և այժմ նրա ժառանգ Տէր-Գաբրիէլին ենք ճանաչում , . . ». տես «ամենայն Հայոց կաթ.»— Երիցեանի: Վերոյիշեալ ժողովի կանոններից պարզ երևում է որ հայոց եկեղեցիները ունէին սեպհական հողեր, մնացած Տրդատի կարգադրութեամբ մինչև Է.—դարերը, որպիսի հողերին ժառանգաբար տիրում էին քահանաները, որոնք ամեն ճիգն գործ էին դնում իրանց որդիներին քահանայ ձեռնադրելով թողնել իրանց տոհմի մէջ որքէ ցորդի այդ հողերը: Վերջերում քահանաների արգիւնքը կազմում են, պսակագրամ, նշանագրամ, կնքագրամ, թաղմահարկ, գերեզման օրհնէքի հարկ, տնօրհնէքի հարկ, կալօրհնէքի հարկ (կալամուտ), այգեհնձանի օրհնէքի հարկ, գանձանակագրամ, կողոպուտ, մատաղներից-կաշի և երի, և այլն: Ներսէս Ե. սահմանեց որ իւրաքանչիւր 80 տուն ունենայ մի քահանայ, որ կարողանայ այդ արգիւնքներով ապրել: Գէորգ-Գ. սահմանեց բազմամարդ գիւղերի ամեն մի 100 տան մի քահանայ, իսկ փոքր գիւղերում մի մի քահանայ: Էջմիածնի Սինոդը Ռու-

սահայոց գիւղական եկեղեցիների համար որոշել էր, ամեն մի համախօսական կազմող ծխական ժողով պարտաւոր էր գրաւորապէս խոստանալ որոշ չափով հող յատկացնել ընծայացու անձին ցմահ՝ ձրիապէս, տալով պետական գանձարանին պատկանելիք հարկերը և կոռ ու բեկարը։ Նախկին կարգը Տրդատի ժամանակից, որով տրւում էր ազարակների եկեղեցիներին 7 ծխի հող, գիւղերին 3 ծխի հող գոյութիւն ունէը մինչև թ. ժ. դարերը, այդ թուերից յետոյ ժառանգական քահանայութիւնը սեպհականացրեց եկեղեցապատկան հողերը և դարձրեց քահանայական տան սեպհականութիւն, որով եկեղեցիները զրկուեցին սեպհական հողերից։ Ռուսաց տիրապետութեան օրով, երբ ազնուականների և վանքերի հողերի չափումն սկսուեց, քահանայական հին տները մէջ ընկան երբև հողատէրեր և խնդրեցին հողաչափներին իրանց հողերը ազնուականների հողերի իրաւունքներով չափել իրանց վրայ. այդպէս էլ եղաւ և նախկին եկեղեցիներին պատկանող հողաբաժինները շատ տեղեր պետական օրէնքի ոյժով դարձան վերջնական սեպհականութիւն հին քահանայական տների։ Այժմ ընդհանուր սովորութիւն է դարձել գիւղերում, ընծայացուին յատկացնել ձրի մի գլխի հող, կամ մի ծխի հող ցմահ վայելելու, իսկ քահանայի որդուց տրուած հողերից իրբև հասարակութեան անդամ պահանջել համահաւասար միւսներին հարկ։ Ծխական քահանաների իէ ընտրութեան և իէ ապահովման խնդիրը կանոնաւոր մշակման ենթարկուեց Մկրտիչ Ա.—ի ժամանակ 1901 թուին առանձին յանձնաժողովի ձեռքով, որի կազմած կանոնադրութիւնը տպուեց «Արարատի» 1902-ի թուի համարներից մէկում 'ի փորձ, բայց վերջնական դրական հաստատութիւն չստացաւ։

Վանքերը և Մայր Աթոռի տնտեսական ապահովութիւնը հիմնուած է այժմ գլխաւորապէս սեպհական գիւղերի, հողերի, անտառների արդիւնքների վրայ։ Մայր Աթոռի նախկին նուիրակութիւնը վերացել է, այժմ ստանում է կանոնաւորապէս Ռուսահայոց թեմերից հոգեբաժին, պատ-

կահարկ, պտղի (ցորեն, գարի, իւղ, ձու, աղ) և մասնաւոր նուէրներ։ Պարսկաստանի և Տաճկաստանի թեմերի արդիւնքը գնում է իրանց կենդրոնական վարչութեան պահպանութեան վրայ, իսկ Էջմիածնի անունով նուէրները և գանձանակագրամները ուղարկւում են Մայր Աթոռ, այս արդիւնքները կոչւում են ընդհանուր անուամբ Աթոռահասներ։

Տաճկաստանում դրամական բոլոր հաշիւները գտնւում է թաղական խորհրդի ձեռքում, Ռուսահայոց և Պարսկահայոց մէջ ընտրեալ երէցփոխի ձեռքում, որոնք առանց ծրխական ժողովի ոչինչ չեն կարող անել։ Իւրաքանչիւր գաւառակ ունի իւր գործակալը, որ հսկում է բոլոր գաւառակի եկեղեցիների բարեկարգութեան վրայ, նախկին քորեպիսկոպոսների պաշտօնով. նա տալիս է պսակի հրամանը ծխական քահանաների վկայականի վրայ յենուած, ժողովում է աթոռահաս արդիւնքները, պտղի, պսակադրամ, հոգեբաժին։ Գործակալները ենթարկւում են հոգևոր կառավարութիւններին և կամ կոնսիստորիաններին։ Տաճկահայաստանում թաղական խորհուրդը հաշուետու է գաւառական ժողովի առաջ։

Վանքերի հսկողութիւնը յանձնուած է վանահայրերին, որոնք կառավարում են բոլոր վանքական հողերը, գրամները և գործերը և հաշիւ տալիս բարձր իշխանութեան։ Վանահայրերի և մայրապետների ընտրութիւնը լինում էր վանական միաբանութեան համաձայնութեամբ և կաթուղիկոսի ու Պօլսոյ կեդրոնական վարչութեան հաստատութեամբ։ Ռուսահայոց մէջ Գէորգ-Դ-ից սկսած վանականութիւնը համարուեց մի գաստակարգ, որ իրաւունք չունի սեպհականութիւն ունենալու և մահից յետոյ իւր ազգականներին թողնելու ստացուածքը, (տես Ս., գիրք. 631—632 երես). Տաճկահայոց մէջ այդպիսի որոշումն պետական օրէնքի մէջոցաւ տեղի չունեցաւ։

Ներում մեծ մասամբ վանքերում նստում էին առաջնորդ եպիսկոպոսները, կամ փոխանորդ եպիսկոպոսներ, որոնք անսահման տէրէին իրանց վանքերի կալուածական և այլ

արդիւնքների. միւս վանքերը, ուր առաջնորդներ չէին նստում, նրանք նոյնպէս անմիջապէս գտնում էին իրանց առաջնորդների կարգադրութեան տակ, իսկ առաջնորդների աջ թև կազմում էին տեղական իշխանները, մինչև իսկ վճռական ձայնով: (Տես Ա. գ. Սահակի կանոնները 529, 404): Թէ առաջնորդները վանքական արդիւնքներից որ մասն պիտի բաժին հանէին Մայր աթոռին, անորոշէ, թողնուած էր իւրաքանչիւրի կամքին (տես Ա. Դիւք. 460):

Բ). ԲՐԻԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ.

Եկեղեցիների և վանքերի սկզբնաւորութեան հետ զուգընթացաբար ընթացել է աղքատների, տնանկների, այրեաց և որբոց խնամատարութիւնը. առաքելոց ժամանակից հանգանակած նուէրներից բաժին էին հանում կարօտեալներին, այդ հոգատարութիւնը ա. դարում յանձնւում էր ընտրեալ, անձանց, որոնք սարկաւագ էին կոչւում: Եկեղեցին կազմակերպութիւն սահմանելուց յետոյ, կանոնաւորութիւն ստացաւ և այդ բարեգործական ճիւղի կառավարութիւնը: Մեր մէջ այդ հիմնարկութիւնները բազմացան, կանոնաւորուեցին, նիւթականապէս ապահովուեցին Ներսէս մեծի ժամանակ: Խորենացին Գ. Ի. գլխում այսպէս է գրում Ներսէսի համար « 'ի Բիւզանդեայ դարձեալ ի Կեսարեայ, և եկեալ ի Հայս, զամենայն կարգս ուղղութեանց հարցն իւրոց նորոգեաց, այլ և առաւել ևս, քանզի զբարեկարգութիւնն, զոր եռես 'ի յունաց աշխարհին, մանաւանդ 'ի թագաւորեալ քաղաքին 'ի սմա նկարգարէ»: «Յայտ արարեալ զպատէհ պատեհ տեղիան զատուցանել՝ շինել աղքատանոցս, և 'ի ժողովել զախտաժէտս և զօրկունս և զմարմնակարս և զամենայն ցաւոտս, և նոցուն կարգեցին օրկանոցս և դարմանոց և ուճիկս, և պատանս աղքատաց . . . . և սոյն կամ եղև ամենայն սուրբ ժողովոյն, զի այնպէսիքն միայն նստեալ լեցին յիւրաքանչիւր կայեանս, և մի ելանել ի մուրոյն տաոսպանս . . . . զդարմանան և զպիտոյսն վճարեսցին ամենեքեան». Բիւզանդ. 46 երես: Բոլոր գիւղերում, ըստ Բիւզանդի, շինեց հիւանդանոցներ, օտարանոցներ, օտարատուններ. անկելանոցներում ժողովուեցին կոյրեր, կաղեր, մարմընահարներ, խուլեր, համրներ, կաթօտեալներ. Բիւզ. 65, 194 երես: Ներսէս այդ հիմնարկութիւնները բաժանեց գիւղերի, քաղաքների վրայ, որոնց պարտաւորութիւններն էին, հասերով, տուրքերով, նուէրներով ապահովեցնել այդ հիմնարկութիւնների տնտեսական կացութիւնը. գիւղացիք տալիս էին, հայ, շոր, խմիչք, մատաղներից բաժին և այլն. իսկ հոգևոր իշխանութիւնը պատիժների մէջ մտցրեց—"տալ յօգուտ այդ հիմնարկութիւնների որոշ գումար իբրև պատիժ." տես Զահապիվանի ժողովի կանոնները Ա. Դիւք 323—341: Դրանց բոլորի հսկողութիւնը յանձնեց Ներսէս 4 - 5 հոգու, Խադդին, Զաղիտային, Եպիփանին, Եփրեմին և Գինդին (խոր. բ. ի): Ներսէս այս կարգերը բերաւ Պօլսից, Յունաց աշխարհից: Յունաց կայսրները Կոստանդիանոսից սկսած նուիրում էին այդպիսի հաստատութիւններին կալուածներ, դրամներ. բարձրաստիճան անձինք հետևում էին կայսրների օրինակին: Թէոդոսի կինը Եւդոկիան իւր հաշուով աղքատանոց շինեց, ուր 400 ծերուներ էին պատսպարւում: Թէոդոս և իւր քոյր Պուլխերիան բազմաթիւ հիմնարկութիւններ հաստատեցին Պօլսում: Աչքի էր ընկնում Յուստինիանոսի կառուցած մեծ շինութիւնը անկար ծերուների համար, առանձին եկեղեցիով: Բարսեղ՝ մեծ զարկ տուաւ այդ հիմնարկութիւնների բազմանալուն, իւր ամբողջ եկամուտը և ունեցածը տալիս էր այդ հաստատութիւնների պահպանման: Ոսկեբերանը ամենամեծ պարտականութիւնը հոգևորականների վերաբերմամբ՝ համարում էր այդպիսի հիմնարկութիւնների համար աշխատելը և դրանց խնամելը:

Ներսէսից յետոյ շարունակուեց այդ հաստատութիւնների գոյութիւնը մինչև Արշակունեաց անկումը, Զահապիվանի ժողովի կանոններից երևում է, որ պարժապարտներին ուղարկում էին ուրկանոցները մէկից մինչև տասն տարի աղալու այդ անկար մարդկանց համար ալիւր, ձաւար պատ-

բաստելով։ Վարդանանց պատերազմից յետոյ, Աբաբացւոց արշաւանքների ժամանակ, երբ երկիրը ալէկոծ դրութեան մէջ էր, շատ դժուար է այդպիսի հաստատութիւնները պահպանել վանքերից դուրս. վանքերը շարունակեցին լինել մինչև այսօր օտարանոց, հիւրանոց, աղքատներին օգնող, ծերերին սննդող և խնամող։ Դրանց մնացորդներից է Պօլսոյ Ս. փրկչեան հիւանդանոցը մի քանի մասերով որոնք են 1) հիւանդանոց, 2) ծերանոց, 3) անկեղանոց, 4) որբանոց, 5) ուսանողների հարկ. 6) մոմարածն, տարեկան 1800-ի չափ հիւանդների խնամատարութեամբ։

Գ. ԵԿԵՂԵՑՈՒ ՕՐԷՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ.

(О церковномъ Законодательствѣ Хр. Чт. 1865 г»)

Եկեղեցու օրէնսգրական իրաւունքի աղբիւրն է եկեղեցու հիմնադիրը՝ Քրիստոս, որի պատուէրը և առաքեալներին տուած իրաւունքը թէ՝ ով ձեզ կլսէ՝ ինձ կլսէ՝ (Մատթ. ժ և իը։ 20), հիմք դրեցին եկեղեցու ապագայ օրէնսգրական իրաւունքին։ Առաքեալները Յիսուսի պատուէրներին հետևելով սկսեցին ամեն տեղ իրանց լսողներին, ժողովրդականներին պատուէրներ տալ, կանոններ սահմանել նրանց համար, պարտաւորեցնելով եկեղեցիներին զեկավարուել այդ կարգերով իբրև հաստատուած օրէնքներով (Գործ. ժե)։

Առաքեալները իրանց յանձնուած օրէնսգրական իրաւունքով սահմանեցին. 1) եկեղեցականների ընտրութեան, ձեռնադրութեան կարգը (ա-Տեմ.—Գ. Տիտ. Ա.)։ 2) Քահանայագործութեան կարգը. (ա-կորնթ. ժա.)։ 3) Եկեղեցական կառավարութեան կարգը (Ա.-պետ. Գ. Ե.) 4) Ամուսնութեան մէջ մտնելու կարգը (Եփ. Ե. ա-կորն.-է)։ 5) Խառն ամուսնութեան կանոնը (Ա.-կորն. է (12—17)։ 6) Ամուսնալուծութեան կարգը. (ա-կորն. է. (10—11)։ 7) Եկեղեցականների և մարմնաւոր իշխանութեան յարաբերութեան կարգը (Հռովմ. ժ. Գ.)։ 8) Եկեղեցական դատական իրաւունքի կարգը (ա-կորն. Զ.)։

Առաքեալները տալով այս կարգերը հաւատացեալներին, յորդորում էին ճշտութեամբ կատարել, իսկ որոնք չէին յաջողում հնազանդել դրանց, նրանք համարում էին եկեղեցուց խզուած, մերժուած. (ը թեսաղ. Գ.)։

Առաքեալներից այդ իրաւունքը յանձնուեց իրանց յաջորդներին և հետևորդներին՝ այն ձևով, ինչ ձևով որ իրանք էին սահմանում, այսինքն ոչ անհատական կամքի արտայայտութեամբ, այլ ժողովական։ Աւելի պարզ ասած, ով էր օրէնսգրական մարմինը, անհատը, եկեղեցու հովիւը, թէ առաքեալների ժողովը և ապա եկեղեցական ժողովը։ Այդ հարցի լուծումը տեսնում ենք հէնց առաքեալների ժամանակ, որոնք ընդհանուր ժողով կազմեցին և ընդհանուր խորհրդակցութեամբ որոշեցին Հին ուխտի ծէսերը պարտադիր չհամարել հաւատացեալների համար, այլ միմիայն Նոր ուխտի պատուէրները. ժողովից վճիռը իբրև պարտաւորական կարգադրութիւն առաքեալները ցրուելով գործադրում էին իրանց շրջանի ամեն կողմերում. (Գործք. ժե.)։ Նախնական եկեղեցին այդ կարգը ամենայն ճշտութեամբ գործադրում էր, իւրաքանչիւր մի սահմանադրութիւն օրէնք դառնալուց առաջ ենթարկւում էր եկեղեցական ժողովի քննադատման և համաձայնութեան։ 419 թուին Կարթագենի ժողովը Կելեստինա Հռոմայ պապին ուղղած թղթում, ուր խօսւում է պապերի օրէնսգրական միապետական ձգտումների դէմ, գրում է «ով կհաւատայ, որ Աստուած մէկին միայն կկամենայ ներշնչել արդար դատելու իրաւունքը և ժողովում գումարուած բազմաթիւ արբազան անձինքներին կբացասի այդ խնդրում» (книга правилъ)։

1) Այսպիսով երևում է, որ առաքելադիր օրէնք է համարում միմեայն ժողովին յատկացնել եկեղեցու օրէնսդրական իրաւունքը և ոչ որև անհատի, եկեղեցու պետին. (Տես Ա. Գիրք—100, 307, 31[illegible], 319. —465 երես)։

2) Այս օրէնքին չի կարելի հակասական համարել օտար և ազգային սուրբ հարց կանոնները, որոնք առանց ժողովի են արուել և ընդունուել բոլորի կողմից, որովհետև քրիստոն-

եայ հասարակութիւնը և եկեղեցիները այդ ձևով հրատարակուած կանոնները համարել են եկեղեցու սրտին համապատասխան և աւանդութեան համեմատ, առանց որ և է շեղման ժողովական սահմանադրութիւններից, մանաւանդ և այս պիտի ի նկատի ունենալ, որ սուրբ հարց եզական կանոնները միշտ մշակուել և գրուել են եթէ ոչ ժողովով, գոնէ եպիսկոպոսների և այլ խորհրդակիցների աջակցութեամբ և մասնակցութեամբ: Մինչև այժմ լինում են միշտ կաթուղիկոսական կարգադրութիւններ, որոնց հնազանդում են բոլոր հաստատութիւնները, և այդ չի հակասում ժողովական—օրէնսդրական սկզբունքին. ինչու. ա. որովհետև կաթուղիկոսական կարգադրութիւններն չեն դուրս գալիս այն գծած սահմանից, որ դրել են մեր նախկին ժողովները, նոր կարգերը կամ միմեանց լիշեցնում են նախկինները, կամ ըստ ժամանակի և հանգամանքի՝ փոփոխութեան են ենթարկում վարչական, պատժական և ձևական կողմերը. բ. ոչ կաթուղիկոսական կարգադրութիւն չի յաւակնել շեղել առանց ժողովի՝ նախնեաց աւանդից: Ներսէս Ե-ի մի օրով, երբ իւր լինամեայ բարեկամները և ջերմեռանդ ազգասէր Լազարեանները դիմեցին նրան խնդրելով թոյլ տալ ամենայարգելի պատճառներից ստիպուած ազգակցական չորրորդ աստիճանի ամուսնութիւն, կաթուղիկոսը աստիկ նեղացաւ, յարաբերութիւնը խզեց նրանց հետ: Երբ աղերսանք աղերսանքի եռևից թափեցին առ ոտս կաթուղիկոսի, նա պատասխանեց, որ ինքն թէ և կաթուղիկոս է, բայց առանց ազգային ժողովի կարգադրութեան ոչինչ չի կարող անել. և որովհետև այդպիսի խնդրի համար ժողով անելը հրնարաւոր չէ, ուստի և եթէ Պոլսոյ և Երուսաղէմի պատրիարքները ժողովներ կգումարեն, Էջմիածնի Սինոդը միաբանական ժողով կգումարեն և իրանց համաձայնութիւնը կտան, այն դէպքում թոյլ կարողէ տալ միայն մի սլսակը (Լազարեանները 2 քոյր տալիս էին երկու քրոջ տղոց): Երբ Լազարեանները պատրիարքների համաձայնութիւնը գրաւոր հասցրին Ներսէսին, վերջինս պատասխանեց, գրանց

ձայնը նշանակութիւն չունի, պէտք է ժողովների գրաւոր համաձայնութիւնը բոլորի ստորագրութեամբ ինձ հասնի: Եւ մինչև վերջն էլ այդ համաձայնութիւնը չտուաւ, թէ և Աստրախանի Մատթէոս եպիսկոպոսը ծածուկ պսակեց: Ներսէս —ե—ի արարմունքը ցոյց տուաւ թէ մեծ հայրապետը որքան մեծ և անփոփոխելի նշանակութիւն էր տալիս՝ ժողովի միմիակ օրէնսդրական իրաւունք ունենալուն և ոչ մի հովուապետի՝ կաթուղիկոսի կամ պատրիարքի չըվերագրելով այդ իրաւունքը, հաստատում էր այդ բարձր սկզբունքը: Որով և պարզում է կաթուղիկոսական կարգադրութիւնները հրատարակելու հարցի չհակասելը այդ սկզբունքին, քանի որ Ներսէս Ե. ունէր բազմաթիւ կանոններ հրատարակած (Ս. Գիրք 603—627) և նա գիտէր որ հրատարակութիւնները միմիայն հաստատութիւն են նախնեաց կարգերի:

3) Եկեղեցին ընդունում է և քաղաքական իշխանութեան օրէնսդրական իրաւունքը եկեղեցու վերաբերմամբ, երբ պետական սահմանումները չեն հակառակում եկեղեցու նուիրական սկզբունքներին: Լուսաւորչի ժամանակից եկեղեցու կանոնները զուգընթաց քաղաքացիական օրէնքների հետ գործադրում էին Հայաստանում համազօր ուժով, նոյն իսկ առաւելութիւն և արտօնութիւն էր տրւում առաջիններին: Նոյն ժամանակուայ տիեզերական եկեղեցին ընդունում էր քաղաքական օրէնսդրական իրաւունքը այն չափով, ինչ չափով եկեղեցու կեանքը շփւում էր հասարակական—քաղաքացիականի հետ, ընդհանուր կարգապահութեան, բարեպաշտութեան, հրամանների գործադրման, հաւատքի պաշտպանութեան խնդիրներում, որոնք հարկաւ եկեղեցու կանոններին համապատասխան էին: Լուսաւորչից յետոյ, Վարդանանց ժամանակ, ազգային ընդհանուր ժողովը Զահապիվանում՝ բացառիկ հանգամանքներից ստիպուած պատիժների գործադրման իրաւունքը յանձնեցին հոգևորականներին, մինչև իսկ մահուան դատապարտութեան: Հետագայ դարերում եկեղեցական ազգային ժողովը միշտ համարեա մինչև 1800

թիւը եղել է բացառապէս օրէնսդիր մարմին, և եթէ մուծել է մահմետական տիրապետութեան օրով պետական օրէնքներից կարգադրութիւններ, այդ ստիպուած ժամանակի հոսանքից, անհրաժեշտ փոփոխութեան կարիքից, որոնք հարկաւ չեն եղել հակառակ եկեղեցու սկզբունքներին։

Տիեզերական ժողովները հետագայ դարերում մինչև եկեղեցիների բաժանումը (ժ. դար) վարուել են ընդհանուր սկզբունքով։ Հայոց երկիրը և Ասիական մի քանի ազգութիւնները ընդունել են միմեայն առաջին երեք տիեզերական ժողովների օրէնսդրական իրաւունքը, մերժելով Դ. Ե. Զ. Է. կոչուած տիեզերական ժողովների նոյնպիսի իրաւունքը։ Տիեզերական ժողովը ընդհանուր եկեղեցիների վերաբերմամբ կարող է համարուել հանրական օրէնսդիր մարմին այն դէպքում երբ իւրաքանչիւր անկախ եկեղեցու ներկայացուցիչ կմասնակցի տիեզերական ժողովում և իւր ստորագրութեամբ համաձայնութիւն կտայ ժողովի որոշումներին, ՚ի հարկէ որքան որ ընդհանուր ժողովի որոշումը կհամապատասխանի իւր անկախ եկեղեցու սկզբունքներին և դարաւոր իրաւանց (տես նախնիայ 2 կէտը)։

Տիեզերական այդ ժողովներին պետութիւնը միշտ աջակցել է, աշխատել է ամեն կերպ եկեղեցու ինքնորոյնութեան, բարգաւաճման և բարեզարդութեան համար, կայսրները հաստատում էին այդ ժողովների որոշումները և հրամայում էին գործադրել։ Այդ ժողովներից յետոյ յունա-հռոմէական կայսրները շատ անգամ առանց ժողովի հրատարակում էին եկեղեցական կանոններ և պատուիրում կատարել իբրև օրէնք, եթէ նրանց հրատարակածները համապատասխան էին լինում եկեղեցու սահմանադրութիւններին՝ կատարուում էին առանց դժկամակութեան։ Հռոմայ եկեղեցին՝ բաժանումից յետոյ՝ բոլորովին բացառիկ դիրք ստեղծեց օրէնսդրական խնդրի վերաբերմամբ. պապերը ոչ միայն թոյլ չէին տալիս ընդունելու ժողովի օրէնսդրական իրաւունքը, այլ և մերժում էին որև է մի պետութեան մասնակցութիւնը այդ հարցում, համարելով իրանց Քրիստոսի փոխանորդներ, նրանք դարձան եկեղեցու միակ օրէնսդիր հովուապետ, որպիսի վերաբերմունքը կաթոլիկ աշխարհը վերջերումս ընդունեց իբրև հաւատոյ դաւանանք։ Պապը կարող է ժողով հրաւիրել և հարցերը ժողովով որոշել, բայց առանց ժողովի, ինքն իւր իրաւունքն է համարում օրէնքներ սահմանել իբրև ծայրագոյն օրէնսդիր թէ հաւատոյ դաւանութեան և թէ վարչական կազմակերպութեան վերաբերեալ։ Բողոքական եկեղեցում ընդհանրապէս օրէնսդրական իրաւունքը պատկանում է թագաւորին։ Ռուսաց մէջ Պետրոս մեծի չնորհիւ եկեղեցին ենթարկուեց նոր վարչական կազմակերպութեան, կլսորը համարուեց գլուխ եկեղեցու և բարձր օրէնսդրական իրաւատէր։ «Բոլոր օրէնսդրական կարգադրութեան սկզբնական հիմունքը եղել է, ասում է Սոկոլովը Մեծն Պետրոսի սրած այդ կարգադրութեան վրայ խօսելով, դարձնել եկեղեցական իշխանութիւնը Ռուսաստանում՝ պետական կառավարութեան մի ճառագողական գործիք՝ իւր նպատակներին հասնելու համար, և հաւասարացնել եկեղեցական իշխանութիւնը պետութեան միւս վարչական հաստատութիւններին, ենթարկելով նրանց նոյն կերպարանքին և տալով նոյն տիպը» (Пр. Обоз. 1870 г.)։ Հայոց եկեղեցին Ռուսական տիրապետութեան ներքոյ ստացաւ այն կերպարանքը, ինչ որ ռուսականը Պետրոս մեծից սկսած։

Տաճկահայաստանում և Պարսկահայաստանում մնաց նախկին հիմունքների վրայ։ —Յամենայն դէպս հայոց եկեղեցու օրէնսդրական ընդհանուր իրաւունքը առաջուայ նման, չնայելով իւր այժմեայ զանազանաւեսակ քաղաքական կերպարանքին, պատկանում է համազգային եկեղեցական ժողովին։

Եկեղեցական օրէնսդրութեամբ կազմւում են երկու տեսակ օրէնքներ, ա) դաւանաբանական և բ) վարչական՝ ներքին ու արտաքին։

Դաւանաբանականը՝ ինչպէս վերև նկատեցինք, իրանց հիմունքներով, սկզբնաւորութեամբ հաստատուած և ընդու-

նուած են տիեզերական և մեր ազգային ժողովներով, նրբիւ քննութեան չենթարկուող և անփոփոխ են։

Վարչականը՝ եկեղեցու ներքին և արտաքին կառավարութեան են վերաբերում. ներքին ասելով հասկացւում է՝ ժամերգութեան, ծէսերի կատարման և ներքին կարգապահութեան կանոնները, իսկ արտաքին՝ հոգևորականների միմեանց հետ ունեցած յարաբերութեան, կառավարելու ձևերի, դատելու, պատժելու, դատավարելու կանոնները։

Սահմանուած կարգերը պարտաւորական են թէ հոգևորականների և թէ աշխարհականների համար. սրանք ազատւում են այդ կարգերին ենթարկուելուց, երբ ա) հինը կորցնում է իւր ոյժը նոր կանոնադրութեամբ. բ) երբ հին կանոնները ժամանակին համապատասխան չլինելով, բոլորովին անգործադրելի են դառնում յետագայ ժամանակներում։ (օր. հաւատուրացների, ապաշխարանքի կանոնները)։

Գ. ԵԿԵՂԵՑՈՒ ԳՐԱՎՈՒՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԳՐԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ.

1) Եկեղեցական դատի հիմունքները.

(основаніе цер. суда. Прав. Соб. 1858. Оформахъ и началахъ дух. Суда. Хр. Чт. 1870)

Եկեղեցին ունենալով օրէնսդրական իրաւունք, ունի և օրէնքները գործադրելու իրաւունք յանցաւորների և զանցառուների նկատմամբ։ Իւրաքանչիւր յանցանք պիտի նախօրէն քննուի, պարզուի, յանցաւորի վրայ ապացուցուի և ապա ենթարկուի դատապարտութեան։

Ինչպէս որ եկեղեցական կառավարութիւնը յանձնուած է եկեղեցական մարմնին որոշ հիմունքներով, այնպէս էլ դատելը և պատժելը կազմելով եկեղեցու կառավարութեան մասերից մէկը, ենթարկւում է եկեղեցու իրաւասութեան նոյն հիմունքներով։ Դատելու իրաւունքը եկեղեցին ստանում է Յիսուսից, որը առաքեալներին պատուիրեց թէ «Եթէ մեղքեցէ քեզ եղբայր քո, երթ յանդիմանեա զնա, յոժամ դու և նա միայն իցէք, եթէ լուիցէ քեզ, շահեցար զեղ-

բայրն քո։ Ապա թէ ոչ լուիցէ քեզ, առ ընդ քեզ միւս ևս կամ երկուս, զի 'ի բերանոյ երկուց և երից վկայից հաստատեսցի ամենայն գան։ Իսկ եթէ և նոցա ոչ լուիցէ, առաջիք յեկեղեցւոջ. ապա եթէ և եկեղեցւոյն ոչ լուիցէ, եղիցի քեզ իբրև զհեթանոսն և զմաքսաւորն։ Ամեն ասեմ ձեզ, զոր կապիցէք յերկրի, եղիցի կապեալ յերկինս, և զոր արձակեցէք յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս». Մատ. ժը գլ.։ Նոյն կրկնում է Յովհաննէս—Ի. գլ. «Առէք Հոգի Սուրբ, եթէ ումեք թողուցուք զմեղս, թողեալ լիցի նոցա, եթէ զուրուք ունիցիք, կալեալ լիցի»։ Նոյնը երևում է Պօղոս առաքեալի գրած թղթերից հաւատացեալներին, մանաւանդ Ա՝— կորնթ. ժ. գլ. «Վասն այնորիկ զայս 'ի հեռուստ գրեմ, զի մի' յորժամ եկից, սաստկութեամբ վարեցայց ըստ իշխանութեանս»։ Առաքեալները Յիսուսի տուած կապելու և արձակելու իրաւունքը յանձնեցին իրանց յաջորդներին, իբրև եկեղեցու պաշտօնեաների։ Այսպիսի ձևով դատելու և արձակելու իրաւունքը ուղղակի ներքին է, հոգեկան և բարոյական, նա կապ չունի արտաքին իրաւաբանական դատական ձևերի և պարգևների հետ, որպիսի են քրէական և քաղաքացիական պատժական օրէնքները, այդ ձևով դատողը գործ ունի միմեանց մեղադրուածի կամ ամբիլի լաւ ասած մեղք գործողի հոգու հետ, խղճի հետ. որքան սրբատանց լինի զղջումը, որքան անկեղծ լինի մեղք խոստովանութիւը, այնքան էլ քիչ կլինի պատիժը և դիւրին արդարանալը։ Արձակել մէկին, նշանակում է ընդունել մեղանչողին կատարեալ զղջացած և ազատած խղճի խայթից, նա դառնում է արդար և անարատ։ Այսպիսի հոգեկան անարատ վիճակ առաջ է գալիս այն դէպքում, երբ մեղանչողը իւր յօժար կամքով, ներքին խայթից ստիպուած տանջւում է և ցանկութիւն է յայտնում անպայման ազատուելու այդ հոգեմաշ դրութիւնից, խոստանալով այլ ևս չմեղանչել։ Այսպիսի ձևով ձեռք բերած հոգեկան մաքրութիւնը պիտի հաստատուած լինի անկեղծ անարատ հաւատքի վրայ, որի վրայ և Յիսուս կառուցեց իւր եկեղեցին։ Այստեղից առա-

ջանում է այն, որ եկեղեցու՝ այսպէս ասած՝ ներքին դատական իրաւունքի հիմք կազմում են հետեւեալ էական կէտերը. 1) անկեղծ հաւատք, 2) Յիսուսի պատուէրը «կապեցէք և արձակեցէք», եկեղեցուն տուած. 3) Առաքեալներին և յաջորդներին շնորհուած «Առէք Հոգի Սուրբ . . . Յով. Ի. գլ. . . . » իրաւունքը, որով արձակողը պիտի լինի քահանայագործելու իրաւունք ստացած, այսինքն օծուած: Նոյն պատուէրը նոյն ոգով տալիս է Պօղոս առաքեալը Տիմոթէոսին. «Վասն որոյ յիշեցուցանեմ քեզ արծարծել զշնորհսն Աստուծոյ որ են ՚ի քեզ ՚ի ձեռնադրութենէ իմմէ» Տիմոթ. Ա.—ա-գլ. 6. : Կապելու և արձակելու դատը բարոյական լինելով, ներքին աշխարհի հետ կապուած քան արտաքին պայմանների, հիմնուած լինելով միմիայն քրիստոնէական հաւատքի վրայ, արձակողը հոգւոյն սրբոյ ստացած շնորհքով է արդարացնում մեղանչողին, այդ հիմքով այսպիսի դատը կոչւում է ներքին, քանի որ դատի հետեւանքը այն է՝ զղջումը՝ մնում է բոլորի համար գաղտնի, մեղանչողը զղջաց սրտով թէ ոչ, արդարացաւ թէ ոչ, այդ մնում է իրան խղճին և Աստուծուն: Շատ պարզ է որ այսպիսի դատի ենթարկուել կարող է միմիայն քրիստոնեան, և այն քրիստոնեան որ հաւատում է, իսկ ո՛չ քրիստոնեան և անհաւատը «կապելու և արձակելու» սահմանից բոլորովին դուրս են:

Եկեղեցու արտաքին համարուած դատաստանը բոլորովին տարբեր է, նա արտաքին աշխարհի հետ գործ ունի հաւատացեալ հասարակութեան, քահանայագործող անձանց վարքի, բարքի, յարաբերութեան, եկեղեցու պատուէրների կատարման հարցերով է զբաղւում, նա արդէն հասարակական դատաստան է: Արտաքին դատի հիմքը կազմում է Յիսուսի պատուէրը՝ եղբօր մեղանչելու դէպքում, որ եկեղեցու անդամը պիտի առանձին յանդիմանի մեղաւոր եղբօր, եթէ վերջինս կզղջայ, երկու վկայի ներկայութեամբ պիտի յանդիմանի մեղաւորին, եթէ նրանց էլ չլսի, պիտի յանդիմանուի բոլոր եկեղեցու (հաւատացեալ) առաջ, իսկ եթէ այս

վերջին միջոցն էլ չազդի յանցաւորի վրայ, վերջինս զրկւում է եկեղեցուց և դառնում է իբրև հեթանոս (Մատթ. ԺԸ. 15—18): Պօղոս առաքեալը իւր թղթերում նոյն ձեւով պատուէրներ է տալիս Տիմոթէոսին և Տիտոսին (Ա.—կորն. Ե, Զ, Է):

Թէ ներքին և թէ արտաքին դատաստանի դէպքերում եկեղեցին դատելու իրաւունք տալիս է միմիայն այն անհատներին, որոնք քրիստոնեայ են և անդամ եկեղեցու: 1) Հաւատի վերաբերեալ խնդիրներում դատելու իրաւունք չունին նրանք, որոնք եկեղեցուց հեռացրուած են և քրիստոնեայ չեն (Եփեսոս—1 կանոն) (Ա. Գիրք—175 երես) Պօղս. 6 կ. 1701 եր.): 2) Դատաստանը այն ժամանակ է օրինաւոր համարւում, երբ դատը և վճիռը կատարւում են եկեղեցական կանոնների հիման վրայ (Նիկիայի 5 կ. Եփես. 5. տես Ա. Գիրք. 150, 176): 3) Դատաստանը լինում է հոգևոր իշխանաւորների ձեռամբ, մասնաւորապէս եպիսկոպոսի (Նիկ. 5. Ա-Ա. 37-Ա. Գիրք-150, 100): 4) Դատերը կատարում է հոգևոր վարչութիւնը, ով կդիմի մարմնաւոր իշխանութեան՝ կպատժուի (Պօղ. 6 կ. Ա. Գիրք. 170): Վերոյիշեալ կէտերով ղեկավարուող դատարանը օրէնքների և կանոնների հիման վրայ քննում էր հասարակական կեանքում պատահած անկանոն երևոյթները, գտնում էր յանցաւորներին, որոշում էր երևած փաստերի հիման վրայ յանցանքների աստիճանները, յանցաւորների մեղաւորութեան չափը և նշանակում էր դրանց համապատասխան պատիժ-ապաշխարանք, յանցանքը և մեղքը սրբելու համար: Դատաստանը արդար կատարելու համար անհրաժեշտ է, որ նախնական քննութիւնը լինի բազմակողմանի, անաչառ. նախնական քննութիւնից թէ և չէ կախուած դատաւորների վճիռը, բայց նա կազմում է հիմքը: Բացի այդ դատաստանը լինում է դռնբաց, դատաւորների, մեղադրողի և մեղադրեալի ներկայութեամբ և հարց ու փորձով, որպէս զի վճիռը կայացնելիս, փաստերի դատաւորութիւնը և յանցանքի պարզորոշութիւնը կանոնաւոր լինի արտայայտած և

մեկնաբանած: Որովհետև դատաստանը ունի մեծ բարոյական նշանակութիւն թէ յանցագործի նկատմամբ թէ շրջապատողների իբրև խրատ միւս հաւատացեալների առմամբ, ուստի և նա պիտի կանգնած լինի բարոյական բարձրութեան վրայ, նա չպիտի ենթարկուի քմահաճոյքի, կամայականութեան, զանազան անձանց կրքերի, այլ լինի անկախ, հեռու անձնական յարաբերութիւններից, չենթարկուի եպիսկոպոսի կամ այլ նախագահի ճնշման. նոյն ձևով պիտի վարուեն և անդամները վճիռը կայացնելիս և յանձնեն ում որ հարկն է 'ի կատար ածելու առանց յետաձգման:

2) ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԴԱՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆԴՆ Է ՅԱՆՑԱՆՔԸ ԵՒ ՄԵՂՔԸ.

Յանցանք առհասարակ համարուում է օրէնքի խանգարումն գիտակցութեամբ 'ի վնաս ուրիշների. եկեղեցական յանցաւոր համարուում է եկեղեցու կանոնները խանգարողը, նրա սահմանած կարգեր չկատարողը. եկեղեցու որոշումների դէմ բարոյապէս մեղանչելը համարուում է մեղք, մեղանչողը՝ մեղաւոր: Նախկին դարերից սկսած մեղք և յանցանք համարուում էին.

1) հաւատուրացութիւնը (Ա. Գիրք—248, 107 երես).

2) հեթանոսի և հրէայի ծէսեր և կարգեր կատարելը (Ա. Գ. 109, 221):

3) աղանդաւոր և հերձուածող դառնալը (Ա. Գիրք. 237):

4) անտարբերութիւն դէպի հաւատը } Ա. Գիրք 203 եր.

5) մոլեռանդութիւն հաւատի մէջ }

6) կախարդութիւնը իւր բոլոր տեսակներով (Ա. Գ 194, 222, 246):

7) եկեղեցու օրհնած անօթների գողանալը } (Ա. Գ. 109).

8) և գործածութիւնը }

ՄԵՂՔԵՐ ՔԱՀԱՆԱՅԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԴԷՄ.

1) Մարմնաւոր իշխանութեան միջոցով հոգևորական

լինել և պաշտօն ստանալ—Ա. Գիրք, 98, 468, 576.

2) Աղանդաւորների և հերձուածողներից ձեռնադրութիւն ստանալը—Ա. Գ. 168

3) Սիմոնականութեամբ ստացած ձեռնադրութիւնը—97. Ա. Գ.

4) Ձեռնադրուածի անպատրաստութիւնը—Ա. Գ. 111.

5) Ձեռնադրուածի ամուսնական անսրբութիւնը, երբ երկկին է, անառակի վրայ է պսակուած և այլն —Ա. Գ. 93.

6) Կամաւոր ներքինիացածի ձեռնադրութիւնը—Ա. Գ. 95, 146.

7) Հոգևորականի անկանոն տեղափոխութիւնը և ոչ անմիջական իւր իշխանաւորից ձեռնադրութիւնը—Ա. Գ. 92, 156

ՊԱՇՏՕՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԴԷՄ

1) Եկեղեցական պաշտամունքի կանոնաւոր չկատարումը. Ա. Գ. 409—424.

2) Եկեղեցական կարգերի ինքնակամ փոփոխումը—Ա. Գ. 105.

3) Առանց եպիսկոպոսի ինքնագլուխ ծուխ հաստատելը .. Ա. Գ. 98

4) Կրկնամկրտութեան կատարումը —Ա. Գ. 103

5) Կրկնաձեռնադրութեան կատարումը—Ա. Գ. 109

ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ՅԱՆՑԱՆՔԸ

1) Ինքնակամ թողնել թեմը և անցնել ուրիշ թեմ.—Ա. Գ. 92, 466:

2) Ուրիշ թեմի կղերականին ինքնակամ իւր մօր պահելը եպիսկոպոսի կողմից—Ա. Գ. 93.

3) Թեմ ընտրելը եպիսկոպոսից չէ կախուած, այլ բարձր կանգնած եպիսկոպոսական ժողովից—Ա. Գ. 92.

ՍՏՈՐԱԴՐԵԱԼՆԵՐԻ ՅԱՆՑԱՆՔԸ

1) Ինքնագլուխ առանձին անկախ ծուխ կազմելը Ա. Գ. 98

2) Ուրիշ եպիսկոպոսի թեմում ձեռնադրուելը — Ա. Գ. 99։

3) Բանադրուածի ուրիշի մօտ գնալը՝ բանադրանքից ազատուելու համար—Ա. Գ. 98.

ԵԿԵՂԵՑՈՒ ՍԱՀՄԱՆԱԾ ԾԷՈՒԵՐԻ ՉԿԱՏԱՐՈՒՄԸ

1) Անտարբերութիւն դէպի ժամերգութիւն և հաղորդութիւն—Ա. Գ. 90.

2) Պասեր չպահելը, տօնը չյարգելը—Ա. Գ. 109.

ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԷՄ ՅԱՆՑԱՆՔՆԵՐ

1) Պոռնկութիւն անելը—Ա. Գ. 96, 243.

2) Վաշխառութիւն անել. Ա. Գ. 75, 102, 157, 17.

3) Կամաւոր ներքինանալը—Ա. Գ. 95, 96.

4) Սպանութիւն կատարել—Ա. Գ. 245.

5) Ծեծել և վիրաւորել—Ա. Գ. 97.

6) Գողութիւն և նման ամեն տեսակ յանցանքներ գործել—Ա. Գ. 96.

7) Երդմնազանց լինելը—Ա. Գ. 96.

8) Արբեցողութիւն անել, թուղթ խաղալ, գինետուն մտնել—Ա. Գ. 102, 106։

9) Զարամտութեամբ ուրիշին ծաղրել և վիրաւորել—Ա. Գ. 106.

3) ՊԱՏԻԺՆԵՐ.

1) Ապաշխարանք; ապաշխարանք նշանակւում էր եպիսկոպոսի կողմից այն յանցաւորների և մեղաւորների վերաբերմամբ, որոնք զանազան գործած յանցանքների պատճառով զրկւում էին եկեղեցում հաւատացեալների հետ աղօթելու իրաւունքից։ Ապաշխարանքի առաջի աստիճանին ենթարկւում էին հին եկեղեցում—ա) լացողները. որոնք պիտի կանգնէին միայն եկեղեցու դռանը, լսէին դրսից ժամերգութիւնը, աղօթէին արտասուալից աչքերով և խնդրէին յաճախող աղօթող հաւատացեալներին իրանց աղօթքում յիշել ապաշխարողի անունը։ բ) Դրսի ունկնդիրները, որոնք եկեղեցու գաւթում կանգնած իրաւունք ունէին լսել ժամերգութիւնը և աղօթել առանց եկեքեցու ներսը մտնելու և դուրս գնալ թերահաւատների հետ առանց լսելու պատարագի խորհուրդը։ գ) Ներսի ունկնդիրները կանգնում էին եկեղեցում ամբիոնի ետևում, որոնք ծնկաչոք կամ երեսնկեալ աղօթելով ապաշխարում էին իրանց մեղքը. դուրս գալուց առաջ չորում էին, ատանում եպիսկոպոսի իրանց կարգացած գլխին աղօթքի շնորհը և դուրս գալիս թերահաւատների ետևից եկեղեցուց չարժանանալով պատարագի խորհրդին։ դ) Հաւատացեալների հետ միասին կանգնողները իրաւունք ունէին եկեղեցում մնալ, պատարագին ներկայ լինել և վերջում դուրս գալ, բայց հաղորդուելու և ընծայաբերելու (գինի և հաց) իրաւունք չունէին մինչև ապաշխարանքի ժամանակամիջոցի լրանալը։ Ապաշխարանքի այս ձևը գործ էր ածւում Ա.-դարից սկսած մինչև Զ դարը

2) Ապաշխարանք; այս ապաշխարանքը իւր ձևով տարբեր է նախկինից, ա) ապաշխարանք նշանակում էր եպիսկոպոսը ժամանակաւոր՝ մէկ տարուց մինչև քսան տարի, որի ժամանակամիջոցին ապաշխարողը կարող էր միշտ եկեղեցի գնալ, բայց հաղորդուելու իրաւունք չունէր. նա պիտի պաս պահէր, աղօթէր, աղքատներին ողորմութիւն տար։ բ) Ապաշխարանք՝ որ տևում էր ցմահ, և մահուան ժամանակ կարող էր հաղորդուել։ գ) Ապաշխարանք ցմահ՝ եթէ մեռնելիս կղզիար, կարող էր հաղորդուել, եթէ ոչ՝ զրկւում էր հաղորդութիւնից։ (Ա. Գ. 237—249, 251, 505—509։

3) Տուգանք. ապաշխարանքի տեղ շատ անգամ նշանակում էին տուգանք, որ յանցաւորը որոշ քանակութեամբ դրամ յատկացնէր կամ վնասուած անձին, կամ եկեղեցուն, կամ աղքատներին, կամ բարեգործական հաստատութիւններին. (Ա. Գիրք—322—341)։

4) Մարմնական պատիժ; մասնաւորապէս հայոց մէջ՝ . . . Զահապիվանի ժողովում որոշուեց մարմնական պատիժը, այն է ծեծով, ուրկանոց ուղարկելով աղալու համար, աղուեսադրոշմ դնելով ճակատին և նոյն իսկ «ջիլերը կտրե-

լով». Տես Ա. Գիրք—338—340։

5) Եկեղեցական կարգից զրկուելը և աշխարհական աստիճանի վեր ածուելը. Ա. Գ. 243.

6) Քահանայագործութիւնից զրկուել որոշ ժամանակով, բայց իրաւունք ունենալ հոգևորականների հետ հաղորդուել։ Ա. Գ. 185. 196.

7) Բանադրանք, որով հեռացնւում է քրիստոնեան եկեղեցուց, և զրկւում է ամեն տեսակ օրհնակատարութիւններից. (օր. քահանան չի գնում նրա տունը, չի հաղորդում նրանց, անթաղ են մնում յանցաւորները եթէ չեն զղջում)։

8) Երկրորդ տեսակ բանադրանք, որ այլ բառով կոչւում է նզովք. նզովքի ենթարկուածը զրկւում է ամեն մի յարաբերութիւնից, եկեղեցուց հեռացնւում է մինչև որ նզովքը վերցնում է նզովողը. Ա. Գիրք 150, 70։

9) Զրկուել պսակուելու իրաւունքից շնութեան և այլ յանցանքների համար.

4) ՆԱԽԿԻՆ ԴԱՐԵՐԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԴԱՏԱՍՏԱՆԸ.

(Церк. Судъ въ первые три вѣка Хрис. Пр. Соб. 1870)

Նախորդ յօդուածում տեսնուեց որ դատաստանի հիմքը կազմում են աւետարանի և առաքեալների պատուէրները. առաքեալների յաջորդները նոյն ոգով առաջ տանելով եկեղեցու կառավարութիւնը, աւելի և կանոնաւորեցին, կարգաւորեցին եղած դատական կարգերը և պարզ ձևերի մէջ դրին։ Յիսուսի պատուէրը եղբօրը դատելու և Պօղոսի խօսքը Տիմոթէոսին երկու երեք վկայով քննելու յանցանքը, եղան մշտական հիմք դատավարութեան համար։ Բացի այդ Պօղոս առաքեալը խօսելով կորնթացւոց մէջ եղած պակասութիւնների վրայ, նրանց հեթանոս դատաւորներին դիմելու սովորութիւնը պախարակելով, յիշեցնում է որ ամօթ է ձեր վէճերը օտարին յանձնել, քանի որ ձեր մէջ անշուշտ կլինեն վստահելի անձինք, որոնց կարելի է դատաւոր ընտրել վէճերը վերջացնելու և դատերը կտրելու համար, ինչու

չէք ընտրում, հարցնում է առաքեալը. «Առ ամօթոյ ձերոյ ասեմ. այնչափ ոչ գոյ ոք իմաստուն ի ձեզ, որ կարիցէ իրաւունս ընտրել ի մէջ եղբօր իւրոյ» Ա—կորն. Ջ. գլ.։ Առաքեալի խօսքը բոլոր տեսակ հասարակական յանցանքներին է վերաբերում, որի մէջ մտնում է և կրօնական և քաղաքացիական խնդիրները. նա պատուիրում է միջնորդ դատաւորներ ընտրել և հարցերը վերջացնել։ Այսպիսով Ս. Գիրքը տալիս է մեզ երկու ձևի դատարան, մէկը՝ եկեղեցուն է յանձնում դատելու անկախ կերպով իւր բոլոր անդամներին, պատժելու և ճանապարհի բերելու մոլորեալներին, միւսը՝ ընտրուած միջնորդ անձին քննելու հասարակական դոյն ունեցող խնդիրները և վերջ դնելու նրանց։ Առաքեալներից յետոյ կառապաշտ պետութեան հովանաւորութեան ներքոյ քրիստոնէական դատի նշանակութիւնը իւր հետևողների համար աւելի ուժեղացաւ, լայնացաւ և հաստատութիւն գտաւ, մանաւանդ Դիոկղիտիանոսի ժամանակ, երբ նա արգելեց դատաւորներին ընդունել քրիստոնեաներից բողոքներ ու դանդատներ. եկեղեցին աւելի ուժեղացաւ և եպիսկոպոսի դատը և պաշտպանութիւնը իրաւիների համար աւելի ընդհանրացաւ և ամուր հիմք ընդունեց։ Առաքելական 37 կանոնը սահմանեց որ տարէնը 2 անգամ եպիսկոպոսական ժողով լինի քննելու և վերջ դնելու այն գժտութիւններին, որոնք կարող էին առաջ գալ այն շրջանի եկեղեցական կեանքում։ Եպիսկոպոսական այս ժողովի իրաւունքներին էր պատկանում և թեմի մեղադրուած եպիսկոպոսի դատը և քննելը ու պատժելը. այս մասին Ս—Առաքելական 74 կանոնը (Ա. Գ. 110 երես) այսպէս է ասում, «Եթէ եպիսկոպոսը արժանահաւատ մարդիկներից մեղադրուի. պիտի կանչուի եպիսկոպոսներից քննութեան, եթէ կգայ և կխոստովանի յանցանքը, կյանդիմանուի և պատիժ կնշանակուի նրան։ Եթէ առաջի կանչելուն չգնայ, երկրորդ անգամ երկու եպիսկոպոսի ձեռքով կկանչուի, եթէ այս անգամ չգնայ, երրորդ անգամ կկանչուի էլի երկու եպիսկոպոսի ձեռքով, երրորդ հրաւէրով չգնալուց յետոյ, եպիսկոպոսական

ժողովը իւր բարեհայեցողութեամբ վճիռ կկարդայ նրան, որպէս զի չկարծի թէ դատից փախչելով իրան օգուտ կարող է բերել»։ Յաջորդ կանոնը իրաւունք չէ տալիս ժողովին ունենալ եպիսկոպոսի դէմ վկայ հերետիկոս անձի, այլ պահանջում է որ վկան լինի ուղղափառ և երկու կամ երեք հոգի։ Եպիսկոպոսի թեմում գտնուած հոգևոր անձինք են թարկւում էին իրանց առաջնորդի իրաւասութեան և դատին։ Այդպիսի մի դէպք պատմում է Եւսեբիոսը. 230—ին Եգիպտոսի յայտնի գիտնական Որոգինէս, որ Աղէքսանդրիայում ուսուցչութիւն էր անում և մարդկանց զրպարտութիւններից ազատուելու համար ինքն իրան ներքինիացրել էր, գնալով Պաղեստինի Կեսարիա, քահանայ ձեռնադրուեց առանց իւր եպիսկոպոս Դիմիտրիոսի գիտութեան։ Դիմիտրիոսը մի քանի քահանաներով ժողով արաւ և զրկեց Որոգինէսին և ուսուցչութիւնից և քահանայութիւնից իբրև կամաւոր ներքինու։ Որոգինէսը բողոքեց վճռի դէմ. հետևանքը եղաւ նոր եպիսկոպոսական ժողով, որը հեռացրեց նրան իսպառ քահանայութիւնից. Որոգինէսը հեռացաւ Կեսարիա և ցմահ մնաց այնտեղ։ Քահանայական ժողովի մի դատ էլ տեղի է ունեցել 241-ին Զմիւռնիայում. Նօէտ անունով մէկը սկսել էր քարոզել որ Քրիստոս և Աստուած միևնոյն անձն են. քահանաները ժողով են կազմում, կանչում նրան դատի, հաստատում նրա վրայ և համարելով Հանգանակից դուրս, մեղադրում են և բանադրում։ Դատական այս ձևը գործադրւում և պաշտպանւում էր Եգիպտոսում, մասնաւորապէս Կիպրիանոսի ժամանակ (248—258)։ Սրա կարծիքով եպիսկոպոսն է դատաւոր՝ փոխանորդ Քրիստոսի, միայն առանց կղերի և ժողովրդի ոչ մի բան չպիտի կատարի։ Եպիսկոպոսը իւր ժողովով դատաւոր է իւր թեմում, իսկ ընդհանուր ժողովը դատաւոր է բոլոր աշխարհում. որ իւրաքանչիւր տեղական խնդիր պիտի քննուի գործոդութեան վայրում, ուր վկաները և մեղադրողները ապրում են, որ դիւրին լինի խնդիրը բազմակողմանի կերպով պարզել։ Կրօնապաշտական շրջանում եկեղեցին միշտ դատը կորում

էր իւր ձեռքով, առանց դիմելու մարմնաւոր իշխանութեան աջակցութեան. բայց երբ լինում էին պնդապլուխ հոգևորականներ, որոնք գժուարութեամբ էին հնազանդում ժողովի վճռին, այն ժամանակ ժողովը ստիպուած դիմում էր կռապաշտ իշխանաւորին։ Այդպիսի դէպք պատմում է Եւսիբիոս Պօղոս Սամօսատացու՝ Ասորոց Անտիոք քաղաքի եպիսկոպոսի մասին, որը դատաստանը դարձրել էր կեղեքելու և շահախնդրական գործով պարապելու միջոց, և միևնոյն ժամանակ քարոզում էր մոլար մարքեր, թէ Քրիստոս մարդ էր և ոչ Աստուած։ Եպիսկոպոսական ժողովը նրան մեղադրեց, բայց հովանաւորող թագուհու միջոցով ազատուեց։ 270-ի կազմած նոր ժողովը մեղադրեց իսպառ և զրկեց եպիսկոպոսութիւնից. բայց նա հակառակեց և շարունակեց առաջնորդական պաշտօնը։ Ժողովը ստիպուեց դիմել կռապաշտ Աւրելիանոս կայսեր նրան հեռացնելու, սա էլ գործը յանձնեց Հռոմի և Իտալիայի եպիսկոպոսների վճռին։

Հռոմում քրիստոնէութիւնը քաղաքացիական կրօն դառնալուց յետոյ, նոյն դատական վիճակը աւելի լայն ծաւալ ստացաւ, քրիստոնեայ կայսրները սկսեցին մինչև իսկ առաւելութիւն տալ հոգևոր դատաստանին և սրա վճիռը համարեցին հաւասարազօր քաղաքացիական դատարանի վճռին։ Այդ մասին վկայում է «Առաք. կարգադրութիւնների» Բ. Գիրք (Ս.. Գ. 58) և Որոգինէսը, վերջինս նմանցնում է քրիստոնեաների դատը հրէական աւազանների դատին։ «Առաք. կարգ.» ի մէջ որոշ հրահանգներ է տալիս քննական գործերի համար, որ մանր գործերը քննում էին քահանաներ և սարկաւագներ, մեծ գործերը եպիսկոպոսը. քննութեան և դատի օրը շաբաթուայ երկրորդ օրն էր լինում, որ մինչև կիրակի օրը ժամանակ ունենային երկու կողմն հաշտուելու և ս. հաղորդութեան արժանանալու. դատը վիճաբանական էր. դատաւորը լսում էր երկու կողմին, նաև ժողովրդի կարծիքը քննելի խնդրի և կողմերի մասին, երկու կամ երեք վկայի ասածներն, որոնք հանգիստ,

առանց բարկանալու, երկիւղածութեամբ պիտի ճշմարիտ վկայութիւն տային, ապա քահանաներ և սարկաւագներ մինչդրդներ էին ընկնում հաշտեցնելու համար, չհաշտուելու դէպքում եպիսկոպոսը ընդհանուր խորհրդով վճիռ էր կայացնում. սուտ վկայութիւնը և բամբասանքը խիստ հալածւում էր: Դատաւորները պատժի էին ենթարկում աշխարհականին և հոգևորականին ապաշխարանք նշանակելով, ամենախիստ պատիժն էր կարգալոյծ անել հոգևորականին և նզովել աշխարհականին:

Կոստանդիանոս կայսրը աւելի մեծ նշանակութիւն էր տալիս հոգևոր դատաստանին, հրամայում էր ի կատար ածել այդ վճիռները իսկոյն և եթ քաղաքացիականի ուժով, մինչև իսկ հրամայելով իբրև միչնորդ դատարանի վճիռ՝ թոյլ չէր տալիս բողոքելու նրա դէմ. մինչև անգամ կարգադրեց, որ ով աշխարհական դատարանից դժգոհ է, կամ չի ուզում դիմել նրան, կարող է դիմել եպիսկոպոսական դատարանին: Երանելի Օգոստինոսը վկայում է, որ ամբողջ օրը ծանրաբեռնուած լինելով դատ խնդիրների քննութեամբ, ժամանակ չի գտնում հոգևոր պիտոյքների վրայ մտածելու. երբ Միլան եկաւ, դատ. Ամբրոսիոսին նոյն վիճակում, ամբողջ օրերը զբաղուած դատեր կատարելով: Բոլոր եկեղեցիներում դատական ձևը հանրական էր, հասարակական և ոչ անհատական: Մինչև Նիկիայի ժողովը համարւում էր 60 տեղական ժողովներ եղած զանազան խընդիրներ քննելու համար ըստ Ա.-Առաք. կանոնի:* Դ. դարուց սկսած բացւում են արդէն տիեզերական ժողովները իբրև բարձրագոյն և վերջին դատական ատեան, որոնք քննում և վճռում էին ընդհանուր քրիստոնէական եկեղեցու մէջ ծագած խնդիրները վերջնական կերպով, առանց վճռաբեկութեան: Այսպիսով առաջ եկան արդէն դատական հետևեալ ձևի ատեաններ, ա) քահանաների և սարկաւագների ժողով՝ մանր տեղական խնդիրներ քննելու, բ) եպիսկոպոսական ատ.* «Каноническое устройство Церк. суда по началамъ Всел. собор. Законодательства» Пр. Соб. 1870:

ժողով քահանաների հետ թեմական գործերը քննելու. գ) Միտրոպոլտական ժողով եպիսկոպոսների հետ աշխարհի գործերը քննելու. դ) Տիեզերական ժողով միտրոպոլիտների հետ քրիստոնեայ աշխարհի գործերը քննելու: Այս ատեաններին բողոքելու իրաւունք ունէին ամեն մի ճշմարիտ քրիստոնեայ և հոգևոր անձինք, եթէ որ վստահելի էին, յարգելի էին, որև է յանցանքով բռնուած չէին. չէին կարող հաւատոյ խնդիրներում բողոքել և վկայութիւն տալ հերիտիկոսներ, հերձուածողներ, հրէական ծէսեր կատարողներ, բանադրուածներ, անարգուածներ, պատժապարտներ, ոչ քրիստոնեաներ. Ա. Գիրք - 110, 169երես: Ա. Տիեզերական: Նիկիայի ժողովը լինելով Կոստանդիանոս կայսրի ներկայութեամբ և աջակցութեամբ գումարուած, խիստ մեծ ազդեցութիւն ունեցաւ բոլոր քրիստոնեայ աշխարհի վրայ, նրա սահմանած կարգերը իբրև վերջնական հրամայուեցին կայսրի կողմից կատարել առանց որև է առարկութեան. այսպիսով վերջին եկեղեցական դատական բարձր ատեանը ստացաւ քաղաքական իշխանութեան կողմից օրինական անվիճելի սանկցիա: Կոստանդիանոսի յաջորդները նոյն ընթացքով չգնացին, նրանք լինելով արիոսական, սկսեցին հալածել ուղղափառ հոգևորականներին, եպիսկոպոսներին մատնեցին աշխարհական դատաստանին և աշխատեցին վայր ձգել հոգևոր դատարանի նշանակութիւնը: Եկեղեցին էլ իւր կողմից աւելի խստացրեց իւր կանոնները այդ կէտի վերաբերմամբ, հրամայելով խիստ պատժի երթարկել այն հոգևորականներին, որոնք աշխարհական դատարանին կդիմեն (Ա. Գ. 213): Թէոդորոսի կոդէքսից երևում է (2 Consf. 12, 41, 47) որ եկեղեցական դատարանը վճռում էր բոլոր տեսակ գործերը թէ եկեղեցական և թէ քաղաքացիական: 376—ին կայսերական հրամանով քրէական գործերը բաժանուեցին եկեղեցականից և յանձնուեցին աշխարհական դատարանին, իսկ 399—ին քաղաքացիական գործերը (Consf. 23). (տես церковный судъ внѣшный или обществен-

ный. Хр. Чт. 1865) Քրէական յանցաւորները բացի աշխարհական դատարանին ենթարկուելուց, ընկնում էին և եկեղեցական դատի տակ, որը զրկում էր հոգևորականին կարգից և յանձնում քաղաքացիական իշխանութեան։ Բայց էլի եղան նոյն միջոցին դէպքեր, երբ բաւականացան միայն եկեղեցական դատով. օր. Ա֊թանասին մեղադրում էին արիոսականները սպանութեան մէջ, Ոսկեբերանին և Գրիգոր Աստիքացուն պետական դաւաճանութեան մէջ, բայց երեքն էլ ենթարկուեցին միմեայն եկեղեցական դատի. առաջին երկուսը աքսորուեցին ժողովից յետոյ, թէ անկանոն ժողովի և վերադարձան էլի եկեղեցական ժողովի վճռի հիման վրայ (Սոկր. ա. գ.)։

452—ին Վալենտիանոս կայսրը արձակեց այսպիսի հրաման, թէ «կղերի մէջ առաջացած գործերը թոյլ է դրուում քննելու տեղական եպիսկոպոսին, եթէ բողոքողները դանում են այդ տեղի, և յանձնում են եպիսկոպոսին փոխադարձ համաձայնութեամբ և հնազանդելու խոստում են տալիս նրա վճռին։ Եպիսկոպոսները նոյնպէս կարող են դատել աշխարհականներ, եթէ սրանք կդիմեն եպիսկոպոսին. ուրիշ դէպքերում եպիսկոպոսները իրաւունք չունեին դատելու, որովհետև նրանց վերաբերում է միայն հաւատի գործերը»։ (Хр. Чт. внѣшный Судъ 1865) Վալենտիանոսի օրէնքներով քահանաները իրաւունք ունէին վիրաւորանքի դէպքերում աշխարհականի կողմից իրանց փաստաբանին ուղարկել դատարան՝ առանց իրանց ներկայութեան գործը քննելու, իսկ քրէական գործերում, բոլորը, նոյն իսկ եպիսկոպոսը պիտի անձամբ ներկայանային դատարանին։ Իսկ դրանից քիչ առաջ Թէոդորոս Բ-ի օրէնքով քրէական յանցագործ հոգևորականները ենթարկւում էին եկեղեցական դատի և կարգալոյծ լինելուց յետոյ յանձնւում աշխարհական դատարանին։ Զ. դարում Յուստինիանոսը աւելի ևս լրացրեց և կարգաւորեց այդ խնդիրը. 1) եկեղեցական կալուածական գործերը յանձնւում էին եպիսկոպոսին, որի վճռի դէմ կարող էին բողոքել մետրոպոլիտին և սրա

վճռի դէմ պատրիարքին, որը վախճանական վճիռ էր կայացնում (Նովել. 123). 2) աշխարհականը կարող է հոգեւորականի վրայ գանգատուել եպիսկոպոսին, եթէ մեղադրուողը գործը տասն օրուայ ընթացքում չի յանձնել աշխարհական դատարանին, վերջինս պարտաւոր է կատար ածել հոգևոր դատարանի վճիռը։ Իսկ բողոքի դէպքում այդ վճռի դէմ, գործը անցնում է աշխարհական դատարանին, իսկ եթէ եպիսկոպոսը գործը քննում է կայսրի լիազօրութեան համաձայն, բողոքը տրւում է կայսրին (Նովել. 83)։

3) Քրէական գործերում մասնակցում է և հոգևոր և աշխարհական դատարանը. եթէ հոգևորը մեղաւոր է ճանաչում յանցաւորին, կալգալոյծ է անում և յանձնում աշխարհական դատարանին. իսկ եթէ առաջ աշխարհական դատարանն է քննում, մեղաւոր ճանաչած դէպքում յանձնում է եպիսկոպոսին, որը եթէ համաձայն չէ վճռի հետ, գործը ուղարկում կայսրին (Նով. 86, 123)։

4) Եպիսկոպոսների մէջ առաջացած բոլոր եկեղեցական և քաղաքացիական գործերը յանձնւում են եպիսկոպոսական ժողովի իրաւասութեան մետրոպոլիտի նախագահութեամբ, բողոքը տրւում է պատրիարքին (Նով. 123)։

5) Եպիսկոպոսը անձամբ աշխարհական դատարան չի կանչւում կամ վկայութեան կամ ցուցմունքի համար, եթէ աշխարհական դատաւորը կհամարձակի կանչել, կզրկուի պաշտօնից և տուգանք կվճարի այն եկեղեցուն, որի եպիսկոպոսին կանչում էր դատելու. իսկ ով կօգնի եպիսկոպոսի վրայ դատավճիռ կայացնելուն, կաքսորուի (Նով. 84, 123։ Այս կանոնները իրագործութիւն գտան թէ արևմուտքում թէ արևելքում մինչև կայսրութեան անկումը և վերածնութեան դարը։

5) ՆԵՍՏԻՆ ԳՐԻԳՈՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

(Практика церк. суда на всел. и помѣст. собор. Пр. Обоз. 1871)

Կանոնների մէջ չկան կարգադրութիւններ դատավարութեան ձեւի, եղանակի վերաբերմամբ, այդ թողած է տեղական պայմանների՝ և հանգամանքների հետ ծանօթ անձանց կարգապահութեան։

Կեանքը՝ ինկատի ունենալով սովորութիւնը և տիրող պետական դատական ձեւը, մտցրեց և հոգեւոր դատավարութեան մէջ ընդունուած կարգերը համաձայն եկեղեցական կանոնների։ Տիեզերական և տեղական ժողովներ եղել են Հռոմէական կայսրութեան շրջանում և տիրող օրէնքների հովանաւորութեան ներքոյ, ուստի և դատավարական ձեւերն էլ ակամայից պիտի ենթարկուէին հռոմէական աշխարհական դատարանական ընդունուած և սովորական կարգ կանոնին։

Հռոմում քաղաքացիական օրէնքներով դատավարութիւնը լինում էր դռնբաց, հասարակութեան առաջ. կամաց կամաց սկսուեց դատը վարուել փակ հիմնարկութիւններում, իսկ քաղաքի պատուաւոր անձինք իրաւունք ունէին ունկընդիրների դահլիճում առաջի տեղերում նստել և լսել դատը։ Սկզբում դատը լինում էր բերանացի, թէ մեղադրողը թէ մեղադրեալը գանգատւում և պաշտպանւում էին բերանացի և գործը վերջանում էր հեշտութեամբ։ Երբ մտաւ իրաւաբան—փաստաբանների արձանագրական ձեւը, այն ժամանակ բերանացի դատավարութիւնը տեղի տուաւ գրաւորի։ Արձանագրում էին գանգատաւորի, պատասխանատուի, վկաների, պաշտպանների վկայութիւնները և ասածները արագ կերպով և կազմում առանձին գործեր, որպէսզի հարցը և վճիռը բարձրագոյն ատեան գնալու դէպքում, հնար լինէր արձանագրութիւնների հիման վրայ հարցը վճռելու։ 5 օրից յետոյ, երբ արձանագրութիւն կազմած, խնդիրը բազմակողմանի կերպով քննուած վերջացած էր լինում, դատաւորը վճիռը կարդում էր ամբիոնից։ Յուստինիանոսի ժամանակ աւելի կանոնաւորուեց, գանգատաւորը գանգատւում էր բերանացի կամ գրաւոր, բերանացին գրւում էր և ստորագրւում բողոքողի կողմից, անգրագիտութեան դէպքում երրորդ անձի ձեռքով գանգատաւորի խնդիրքով, կցելով հետեւեալը, որ գանգատաւորը պարտաւոր է ապացուցանել միւս կողմի մեղաւորութիւնը և դատը մինչև վերջը շարունակել, հակառակ դէպքում կենթարկուի պատասխանատուի վրայ բարդած չանցանքի պատժին։ Նշանակուած օրը եթէ չգար գանգատաւորը և երրորդ կոչին նոյնպէս չներկայանար ատենին, անունը ջնջւում էր և գործը վերջանում. դատաւորը եթէ հարկաւոր էր համարում, իրաւունք ունէր առանց մեղադրողի գործը շարունակել քննական ձեւով. եթէ պատասխանատու կողմը առանց յարգելի պատճառով չէր գալիս, գործը մնում էր, միայն պատժւում էր անհնազանդ գտնուելուն համար։ Երկու կողմի ներկայ լինելուց յետոյ, գանգատաւորը անում էր իւր գանգատը միւս կողմի վրայ և նրա չանցանքը աշխատում ապացուցանել. պատասխանատուն «մեղադրուած է» յայտարարուելուց յետոյ դատաւորի կողմից, զրկւում էր քաղաքացիական իրաւական գործողութիւններ կատարելու իրաւունքից և անընդունակ համարւում որոշ պաշտօններ վարելու մէջ։

Երկու կողմը իրաւունք ունէին վիճաբանական ձեւով իրանց արդարացնել, փաստաբանների միջոցով դատ վարել, վկաների հարց ու փորձին լինել ներկայ և պարզել խնդիրը. եպիսկոպոսների վկայութիւնը գրաւոր էր ուղարկւում դատարան. վկաների ծախքը վճարում էին կողմերը։ Արձանագրութիւնները կազմելուց, ամփոփելուց յետոյ, խորհրդակցութեամբ վճիռ էր կայացնւում, որի դէմ բողոքելու համար տրւում էր տասն օր ժամանակ և պատժի կատարումն ուշանում էր մինչև բողոքի վախճանը։ Ահա այս դատավարական ձեւը մտաւ Տիեզերական ժողովների նիստերի մէջ, մեղադրական և պաշտպանողական եղանակը նոյնութեամբ և նմանողութեամբ գործադրուեց եկեղեցական դատերի ընթացքում կայսրութեան սահմաններում։ Եկեղեցական մեծ դատավարութեան օրինակը տեսնում ենք 448—ին Եւտիքէսի դէմ յարուցուած Եւսեբէոս եպիսկոպոսի մեղադրութեամբ Պօլսում, տեղի պատրիարք Փլաւիանի նախագահ-

ութեամբ և բազմաթիւ ժողովականների խորհրդակցութեամբ։ Եւսեբէոսը ներկայացրեց գրաւոր մեղադրանք ժողովին, խնդրելով կարգալ և արձանագրութեան մէջ մտցնել։ Ժողովը մեղադրական կէտերը հաղորդեց Եւտիքէսին կարգացող քահանայի և փաստաբանի միջոցաւ և հրաւիրեց ժողով իրան արդարացնելու։ Մի քանի օրից յետոյ կազմուած ր. նիստում մեղադրողը ժողովի ուշադրութիւնը դարձրեց Նեստորի դատի ժամանակ վարած եղանակի վրայ և պահանջեց կարդալ Կիւրեղի երկու թղթերը դաւանութեան մասին, որոնք կարգացուեցին և իբրև դաւանաբանական հիմք Քրիստոսի մի բնութեան մասին ընդունուեցին և պահանջուեց քննել Եւտիքէսի քարոզածները Կիւրեղի այդ թղթերի հիման վրայ։ Գ — նիստում պատգամաւորները յայտնեցին, որ մեղադրական գիրը Եւտիքէսի երեսին կարդալուց յետոյ, ստացան պատասխան, որ ինքը վանքից դուրս գալ չէ կարող տուած ուխտին համաձայն, և երկրորդ որ Եւսեբէոսը նրան թշնամի է, մեղադրանքը թշնամանանք է իւր դէմ։ Երկրորդ անգամ 2 քահանայի միջոցով կանչուելուն Եւտիքէսը էլի բացասական պատասխան տուեց։ Երրորդ անգամ ուղարկուած երկու քահանան և մէկ սարկաւագը գգուշացրին Եւտիքէսին, որ չգալու պատճառով իրեւ անհնազանդ հոգևորական ենթարկուում է խիստ պատժի և նրան մի օր ժամանակ տուին ներկայանալու։ Յաջորդ անգամ գնացողները լուր բերին, որ Եւտիքէսը հիւանդ է և խոստանում է ստորագրել Նիկիայի և Եփեսոսի ժողովների վճիռները և Կիւրեղի աստծները։ Եւսեբէոսը պատասխանեց, որ ինքը մեղադրում է նրան ոչ ապագայի, այլ անցեալ քարոզութիւնների համար, որոնց մէջ և մեղադրում է և պատրաստ է ապացուցանել, քանի որ ինքը եթէ չկարողացաւ ապացուցանել, օրէնքով պիտի զրկուի եպիսկոպոսութիւնից և դուց է ենթարկուի աքսորանքի։ Փլաւիանը հիւանդութիւնը յարգելի պատճառ համարելով, նիստը ուշացրեց ևս մի շաբաթ։ Նշանակուած ժամին ժողովը սկսեց իւր նիստը Փլաւիանի նախագահութեամբ. Եւտիքէսը եկաւ զինուորներով, վարդապետներով և

կայսերական կոմիսարի հետ։ Կոմիսարը ժողովի թոյլտուութեամբ կարդաց կայսեր հրամանը, որի մէջ ասուած էր, թէ Փլօրէնցը հաւատի մէջ ամուր և հաստատ մարդ է, և որովհետև խնդիրը վերաբերում է ոչ միայն Եւտիքէսին, այլ և հաւատին, ուստի և պատուիրում էր Փլօրէնցին թոյլ տալ ժողովին ներկայ լինել։ Ժողովը համաձայնեց և Փլօրէնցը ներկայ եղաւ։ Ժողովը քննեց, մեղադրեց Եւտիքէսին, զրկեց քահանայութիւնից և վարդապետութիւնից և յայտնեց բոլոր եկեղեցիներին։ Եւտիքէսը բողոքեց վճռի դէմ։ Երկրորդ ընդհանուր մեծ ժողովը 128 եպիսկոպոսի մասնակցութեամբ և Դիոսկորոս Աղէքսանդրիայի եպիսկոպոսի նախագահութեամբ գումարուեց 449 թուին, 2 կայսերական կոմիսարների հսկողութեամբ, խռովարարներին արտաքսելու և կալանաւորելու արտօնութեամբ, և պայմանով որ հին դատաւորներից ոչ ոք չմասնակցի վճռահատութեան։ Փլաւիանը պահանջեց որ Եւսեբէոսը իբրև մեղադրող կանչուի ժողով. կայսերական կոմիսարները յայտնեցին որ այս ժողովի կարգաւորութիւնը որոշել է կայսրը, որ այստեղ պիտի դատուեն նախկին դատաւորները իրանց կայացրած վճռի համար. Դիոսկորոսը համաձայնեց և Եւսեբէոսը չկանչուեց։ Վերջը Դիոսկորոսին մեղադրեցին այս սխալի համար, որ նա կայսեր հրամանը կատարելով, մոռացութեան տուաւ կանոնական պատուէրները, որ նա անշուշտ պիտի հրաժարուէր նախագահութիւնից և թոյլ չտար որ կայսեր պատգամաւորները խառնուէին եկեղեցական դատավարական գործին։ Ժողովը քննեց խնդիրը, արդարացրեց Եւտիքէսին և ընդհակառակը մեղադրեց փոխադարձաբար Փլաւեանին և Եւսեբէոսին, որոնք երկու բնութիւն էին ուզում խոստովանել տալ Եւտիքէսին հակառակ Նիկիոյ և Եփեսոսի ժողովի որոշման հանգանակի փոփոխութեան վերաբերութեամբ. (տես Ա. Գիրք 361—365)։ Փլաւիանը բողոք ներկայացրեց Պապի լեգատների ձեռքով նոր ժողով գումարելու համար, որը և գումարուեց 451 թուին Քաղկեդոնում։ Պապի լեգատները ժողովում ներկայացան իբրև «բոլոր եկեղեցիների

գլուխ» պապի պատգամաւորներին, Դիոսկորոսին հեռացրին ժողովից, որ նա առանց պապի ժողով է արել. մեղադրեցին Դիոսկորոսին որ նա Փլիսւիանի արած ժողովի վճիռը իւր վարդապետ Եւաիքէսի դատապարտութեան վերաբերեալ փոխել է, որ Հռոմի Պապին բանադրել է, և երեք անգամ ժողով կանչուելուն չի եկել, արհամարհել է, այդ հիմամբ զրկեցին նրան եպիսկոպոսութիւնից: Նոյն ժողովում եղան և այլ դատեր: Այս ձևով էլ համարեա լինում էին և եղան ապագայ բոլոր եկեղեցական դատերը, որոնք ամեն բանով ընդօրինակութիւն էին աշխարհական դատարանների:

6) ԵԿԵՂԵՑԻԱՆ ԻՐԱՎ ԵՒ ԻՐԱՎԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ՀՌՈՑ ՄԷՋ.

Մեր եկեղեցական աղբիւրների մէջ բացի Ս. Առաքելական 74 կանոնից (Ս. Գ. 110 երես) և երեք տիեզերական ժողովների կանոններից, կան և զուտ ազգային կանոններ, որոնք թէ և պարզապէս չեն խօսում դատավարական ձևերի և բարձրագոյն ու ստորագոյն տեսանների մասին, բայց որոշակի դնում են յանցանքների համեմատութեամբ զանազան աստիճանի պատիժներ, նայելով յանցանքի փոքրութեան և մեծութեան. այսպիսի կանոններ տեսնում ենք Զահապիվանի ժողովում 447 թուին. (տես Ս. Գիրք 322—341): Ս. և Բ. կանոններով՝ եթէ եպիսկոպոսը, քահանան, սարկաւագը և դպիրը կանանցով և օրիորդներով, մինչև իսկ ազախնով, անառակութեան մէջ կբռնուին, վկաներով մեղադրանքը կապացուցուի, կարգալոյծ լինին կարգաւորները, կանայք հեռացնուին քահանայական տնից, նոյնպէս օրիորդը և ազախինը ապաշխարանքի ենթարկուելով, և տուգանք վճարեն կաթողիկոսին: Այստեղ եպիսկոպոսին է յանձնում պատժուած քահանայի և դպիրների հսկողութիւնը, իրաւունք տալով զղջման դէպքում ներումն շնորհել. իսկ եպիսկոպոսի դէմ ում պէտք դիմել գանգատով, ոչինչ չէ ասում, պարզ է աշխարհի եպիսկոպոսապետին որե կաթուղիկոս: Խնդիրն նրբանում է որ դրանց մեղադրելու համար հարկաւոր են գանգատաւորները, վկաները, գործը քննողները, մի՛թէ այդ բոլորը

եպիսկոպոսն էր քննում. հարկաւ նա կունենար օգնականներ՝ քահանաներից, որոնք իրրև քննիչ և գատաւորներ գործը կը-պարզաբանէին և վճիռ կկայացնէին. իրաքանչիւր հոգևորականին ապաշխարանքի ենթարկելուց յետոյ, պիտի լինէին անձինք որ հսկէին պատժի կատարման վրայ. այստեղից հետևցնելու է որ թեմական եպիսկոպոսը իւր քահանաներով վճռահատում էր եկեղեցականների գործերը և պատիժ նշանակում և ինքը՝ եպիսկոպոսն էլ՝ պատժւում և տուգանւում կաթուղիկոսի վճռով: Գ. Գ. Ե. Զ. Է. Ը. Թ. Ժ. կանոններով քննւում են, դատւում, վկայութեամբ մեղադրւում շինական և ազատ (քաղաքացի և ազնուական) ամուսնական խնդիրներում, յանցաւորները ենթարկւում են երէցազատ են՝ իրատի և տուգանքի, եթէ շինական են, ծեծի, տուգանքի, «խանձուին, մրուին», և ուրկանոց տարուին արկանք ազալու և ապաշխարանքի. նոյն պատիժներին ենթարկւում է և կինը: Բացի այդ մարգու և կնոջ բաժանման մէջոցին (14և5 կանոնները) որոշում է, թոյլ տալ կնոջ բոլոր իրերը որ հետը բերել է, հանդերձ, արծաթ, ազախին, անասուն —յետ վերցնել մարգու տանից և հետը տանել. կամ մարգու ունեցածը ամբողջովին կէս անել, որդիներ, տուն, հող, ջուր և կէս բաժինը հետը տանել: Պատուիրում է տուգանքները բաժանել կարօտեալներին կամ յանձնել գանձարանին կամ տալ եկեղեցուն: Կախարդներին դիմելու դէպքում եթէ 2 կամ3 վկայով կապացուցուի, նոյն պատիժներին ենթարկուին, ապաշխարին և զղջման դէպքում հաղորդուելու իրաւունք ստանան:

Ահա այսպիսի բարդ դատական գործողութիւններ կատարւում են թէ գիւղում թէ քաղաքում, բոլորն էլ ամուսնալուծական, կախարդական և չհաստական, որոնք աւելի եկեղեցական գոյնի խնդիրներ են քան զուտ աշխարհական. բայց պատիժների մեծ մասը աւելի աշխարհական դատարանի վայել քան եկեղեցական, 8-րդ կանոնի մէջ մինչև անգամ հրամայում է «քարկոծ» անել: Հարցէ ծագում ով էր գիւղերի դատաւորը և ով քաղաքինը, եթէ երկուսի դատաւորը

հոգևորականներն էին՝ քահանայք մեծ մասամբ, ո՛վ պիտի կատարէր պատիժները, ո՛վ պիտի ժողովէր տուգանքները, ո՛վ պիտի 100 հարուած տար յանցաւորին, ո՛վ պիտի ուրկանոց տանէր աղալու, ո՛վ պիտի մարդու ու կնոջ հողն ու ջուրը բաժանէր, ո՛վ պիտի «քարկոծ» անէր. մի՛թէ քահանայ դատաւորը. իսկ եթէ քահանայ դատաւորին չլսէին, ո՛չ տուգանավճարը հատուցանէին, ո՛չ թոյլ տային իրենց ծեծելու, քարկոծ անելու, ոչ էլ իրաւունք տալու հող ու ջուրը բաժանելու. եթէ յանցաւորները փախչէին. ուրեմն ի՞նչ, պիտի ենթադրել որ քահանայի վճիռը՝ պիտի կատարէին մարմնաւոր իշխանութեան մարդիկ. թէ՛ գուցէ բոլոր վճիռները և գործերը կարում և վարում էր թեմի եպիսկոպոսը. բայց նա բացի իրանից և ստորադրեալ քահանաներից ուրիշ ոյժ չունէր, մանաւանդ եկեղեցական կանոնները խստիւ արգելում էին ո՛չ միայն չծեծել քրիստոնեայ եղբօր, այլ և չվիրաւորել, հակառակ ընթացող հոգևորականը խստիւ պատժւում էր: Թէ գուցէ՛ մարմնաւոր դատարաններն էին այս գործերը վճռում և պատիժները կատար ածում. բայց խնդիրների մեծ մասը աւելի եկեղեցական են քան աշխարհական, եպիսկոպոսի իրաւունքից կախուած քան մարմնաւոր իշխանի: — Այս մութ խնդիրը լուծելու համար, պիտի 'ի նկատի ունենալ մի հանգամանք, այն, որ այսպիսի պատիժներով կանոններ մենք չունենք մեր ոչ մի հեռագայ ժողովի կանոններում, որ նշանակում է թէ բացառիկ հանգամանքների արգիւնք են այս խիստ հակաեկեղեցական պատիժները: Եւ ճշմարիտ. ժողովը եղել է 441-ին, այսինքն Վարդանանց պատերազմի միջոցներում, երբ թագաւորութիւն էին անում գողեր, ուրացողներ, մոգեր, կրակապաշտներ, ոտիտակ էր տուած եկեղեցի, սրբութիւն, ամուսնութիւն, ընտանեկան սրբութիւն: Իշխանները և եպիսկոպոսները, հոգևորականները և աշխարհականները միացել էին մեծ զայրոյթով միասին և աշխատում էին վերջ տալ այդ կոպտաբեր հոսանքին և կործանիչ դրութեան: Ահա այս հանգամանքը առիթ է տալիս ենթադրելու որ վերոյիշեալ

կանոնների գործադրման և պատիժների կատար ածելու մէջ մասնակցում էին անշուշտ գիւղում՝ գիւղական «իշխանները» գիւղապետի հետ միասին քահանայական դատարանին, քաղաքում՝ քաղաքի մեծամեծները՝ նախարարները եպիսկոպոսի հետ միասին: Այս ենթադրութեան օգնութեան է հասնում նոյն Զահապիվանի յաջորդող 16-րդ կանոնը (Ա. գիրք 336) որ ասում է «եթէ եպիսկոպոսը, երէցը, ազատ դատաւորը, և շինականը կամենում են առաջնորդներ կարգել, եկեղեցու հովիւներ պատրաստել,» ժողովրդապետներ և օրէնսդիրներ նշանակել, պիտի կաշառք չառնեն, ճշմարտութեամբ ընտրութիւն պիտի անեն և օրէնքի ու սրբութեան նախանձախնդիր մարդկանց պիտի ջոկեն»: Նոյն ժողովի 19 և 20 կանոնները վերաբերում են մեղանչութեան (պղծադործ աղանդաւոր. Ա. Գիրք 341) մէջ բռնուած հոգևորականներին և աշխարհականներին. առաջիններին ենթարկում է կանոնը կարգալուծութեան, ճակատներին դնում աղուեսագրոշմ և ուղարկում անապատ ճգնելու, «ջիլերը» կտրել է հրամայում երկրորդ անգամ նոյն յանցանքը կատարելուն համար և ուրկանոց ուղարկում: Պահանջում է որ քահանան իսկոյն իմաց տայ եպիսկոպոսին իւր ծխի մէջ գտնուած աշխարհական մեղանչի մասին, սպառնալով չիմացնելու դէպքում կարգալոյծ անել և մեղանչից պատժին ենթարկել: «Իսկ եթէ կհաստատուի, որ երէցը յայտնել է եպիսկոպոսին և վկայութեամբ ցոյց տուել մեղանչ եղողներին, և եպիսկոպոսը կաշառ առնելով, կամ աչառութիւն անելով, այդ բանը ծածկել է, ամրոխից ընկնի . . . : Իսկ եթէ եպիսկոպոսը ուշադրութիւն դարձնելով բողոքին, կամեցաւ յանցաւորին պատժել, բայց չարագործը յայտնելով մարմնաւոր իշխանութեան, գաւառի իշխանին, նախարարին կամ գիւղի գլխաւորին նրանց օգնութեան դիմելով կամեցաւ պատասխանատուութիւնից ազատուել, իսկ սրանք պաշտպան կանգնելով եթէ կ կամենան ընացողներին ծածկել կաշառառութեամբ կամ ակնառութեամբ, թող նզովեալ լինին, եկեղեցի չմտնեն, մինչև որ պղծադործին չտան եպիսկոպոսի ձեռքը»:

Իսկ եթէ նախարարի տունը մեղնեայ լինի, «նախարարը չհեռանայ այդ յանցանքը գործելուց, կամ եպիսկոպոսին չտայ ընտանիքը պատժելու, ինքնապատան լինի, թող տնով, որդիներով նզովեալ լինի, հրապարակ դուրս չգայ, ոչ ոք նրա հետ յարաբերութիւն չունենայ, մինչև որ ուղղութեան չգայ»: «Իսկ եթէ ինքը սղճութիւնից հեռու կլինի, թող ընտանիքը և ժառանգներին տայ գլխաւոր եպիսկոպոսին կշտամբելու»: Եթէ թագաւորական ցեղի մարդիկ լինին մեղնեայ, նրանց «հրապարակ բերեն գլխաւոր եպիսկոպոսի, մեծամեծ իշխանների և աւագ դատաւորների առաջ» և կշտամբեն: Վերոյիշեալ կանոններից երևում է որ ա) բոլոր եկեղեցականները եպիսկոպոսից մինչև գպիր թէ գուտ հոգևոր թէ քրէական գոյն ունեցող յանցանքների համար ենթարկւում են եկեղեցական դատի, քննութեան և պատժի, տուգանքի, մինչև իսկ մարմնական պատուհասի: բ) Որ իւրաքանչիւր թեմի մէջ գտնուած հոգևորականները նոյն պատժի սահմաններում ենթարկւում են թեմի եպիսկոպոսի իրաւասութեան մինչև իսկ ազուեսադրոշմ կրելու ճակատին և «ջիլերի» կտրուելուն ենթարկուելու և անապատ քշուելու ճգնութեան համար: գ) Որ բոլոր թեմերի եպիսկոպոսները ենթարկւում են գլխաւոր — եպիսկոպոսի այն է կաթուղիկոսի իրաւասութեան՝ նրա դատին և պատժին, կարգալոյծ լինելուն: դ) Աշխարհականները ենթարկւում են թեմի շրջանում իրանց եպիսկոպոսի դատին ամուսնալուծական խնդիրներում, թէ մարդ թէ կին, տուգանքի և ծեծի ու ապաշխարանքի, առևանգութեան դէպքում, կախարդութեան, հարցուկների մօտ երթևեկելու, հաւատուրացութեան, մեռելների վրայ լաց ու կոծ անելու, չհասկան պահակների, մծնդեական ազանդաւորների հետ միանալու բոլոր դէպքերում: ե) Թեմական եպիսկոպոսը այդ դատերը վարելիս օգտւում է քահանաների, գիւղապետների, դատաւորների աջակցութիւնից և օժանդակութիւնից, նաև պատիժների գործադրման մէջ: զ) Կաթուղիկոսն «մեծամեծ իշխանների և աւագ դատաւորների» հետ միասին դատում

են, կշտամբում նախարարներին և թագաւորազն անձանց մծղնէութեան մէջ գտնուելուն համար: է) Մարմնաւոր իշխանութեան կողմից եղել են նշանակուած դատաւորներ, ժողովրդապետներ, օրէնսդիրներ և աւագ դատաւորներ» քննելու աշխարհականների քրէական և քաղաքացիական գանգատները, որոնք և օգնում էին հոգևոր իշխանութեան կողմից նշանակուած պատիժները գործադրելու: ը) Հոգևոր դատարանները անզօր են գտնւում իրանց պատիժները գործադրելու մէջ աշխարհական անձանց վերաբերմամբ, երբ վերջիններին պաշտպան են հանդիսանում գիւղի իշխանն, գաւառի տէրը և նախարարը, սրանց ենթարկում են «գնովքի» և «բանադրանքի»: թ) Մեծամեծներին եկեղեցական պատժի ենթարկելու և նրանց չհնազանդուելու դէպքում, դատաւորները չեն դիմում թագաւորի աջակցութեան և հրամանին (այս կանոնների կազմութեան ժամանակ հայոց թագաւորութիւնը վերջացել էր): ժ) 16-րդ կանոնից երևում է, թէ և մուխ և ազօտ կերպով, որ գիւղերում, գաւառներում, թեմերում, առաջնորդների, քահանաների, «ժողովրդապետների» և «օրէնսդիրների» նշանակելը լինում էր հոգևորականների և աշխարհականների ընտրութեամբ. կանոնս պատւիրում է որ եպիսկոպոսը և քահանան, ազնուականները և շինականները (հարկատուները) վերոյիշեալ պաշտօնական անձանց ընտրութիւնը կատարելիս, աչքի առաջ ունենան ընտրուածի պատրաստութիւնը, մաքրութիւնը, արդար լինելը, օրէնքների իմանալը և չընտրեն անպատրաստ մարդկանց կաշառից կուրացած: Ժողովրդապետ՝ պիտի հասկանալ գիւղապետ և գիւղի «ազատիկներ», ծերունիներ, որոնք խորհրդով կատարում էին գիւղական գործեր, օրէնսդիր ասելով պիտի հասկանալ դատաւորներ, որոնք ոչ միայն դատէին և վճռէին գործերը, այլ և հարկը պահանջած ժամանակ օրէնքի հիման վրայ կարգադրութիւններ և կանոններ սահմանէին: Այս մուխ խօսքերի հիման վրայ դատողութիւններ տալ, թէ այս խնդրում հոգևորականները ինչ չափով էին մասնակցում դատական գործերում և աշ-

խարհականները բնչ, աւելորդ է և երկարաբանութիւն, քանի որ աղօտութիւնից պարզութիւն չի ըղխիլ: Սսի 1243-ի ժողովի կանոններում կարդում ենք. 11 կանոն «երկու անգամ եպիսկոպոսը տարւայ մէջ շրջի իւր թեմը և աչքի անցնի իւր հօտը, և գիտուն ու սրբակրօն քորեպիսկոպոս նշանակի, որ եկեղեցական գատերը վարել կարողանայ կանոնների համաձայն երկիւղածութեամբ և առանց ագահութեան»: 14 կանոնն ասում է. «եպիսկոպոսներն ու քորեպիսկոպոսները աւելի ջանք անեն պռոնիկներին և շնացողներին, հմաներին և բոլոր յանցաւորներին Դեհենի երկիւղով (ժժոխք) ուղղութիւն բերելու: Որոնց վրայ այս երկիւղը չի ազդիլ, մարմնաւոր և հոգևոր պատիժներով խրատել նրանց և տուգանքի ենթարկել, մանաւանդ այնպիսիներին, որոնք մարդու և կնոջ մէջ են ընկնում և նրանց դժբախտացնում, կամ մարդիկ, որոնք «բոզ» կնիկ են բերում, կամ օրինաւոր կնոջ թողնում են և «բոզերի» մօտ գնում, կամ առանց պռոնկութեան պատճառի աւելութեան համար թողնում են իրանց կանանց, այնպիսիներին անողորմ տուգանքներով պիտի խրատեն, եթէ պատուաւոր մարդ է, ընդդիմանում է եկեղեցական օրինաց, թագաւորը այդպիսի մարդուն թող խրատի առենի մէջ, իշխաններն էլ մեղադրեն, եթէ էլի չանեն նզովեալ լինին . . .»: 15-րդ կանոնում յիշում է, որ Հեթում Կիլիկիոյ թագաւորի և հօր ժամանակ, իշխանների առաջ բանադրուեցին նրանք, որոնք պասերը չեն պահիլ, եկեղեցու կարգերը չեն կատարիլ, ամուսներ նշանակուեցին հակելու համար որ չհայհոյեն «հաւասաը, ստեղծողին, կնունքը, հրեշտակին, քահանային . . .» և յիշոց տուողին բռնեն լեզուն կորեն կամ ծակեն, լար քաշեն միջովը, նախատանքներով մի օր շրջեցնեն, դոյքի համեմատ տուգանք առնեն և աղքատներին բաժանեն»: Մինչև անգամ քահանային նոյն յանցանքների համար նոյն մարմնական պատիժն է ենթարկում: Վերոյիշեալ կանոններից հետևցնում է, որ ա) եպիսկոպոսը նշանակում է հոգևոր դատաւոր գաւառակների վերայ քորեպիսկոպոսներին,

որոնք այժմեայ կարգով գործակալ քահանաների տեղն են բռնում. պահանջում է որ քորեպիսկոպոսը (սրանց մասին տես Ա. Գիրք 153, 187, 200, 212, 426, 427, 435, 455, 457, 518 երեսներում) լինի գիտուն այսինքն օրէնսգէտ և սրբակրօն: բ) որ քորեպիսկոպոսի գատին ենթարկուում են հոգևորական և աշխարհական անձինք գլխաւորապէս եկեղեցական յանցանքների համար. գ) հոգևոր դատաւորին իրաւունք է գրւում տուգանել, մինչև իսկ ծեծել, եթէ ազնուական մարդ լինի, որին հնար չլինի ոչ տուգանելու և ոչ ծեծելու, այն դէպքում դատաւորը պիտի դիմի Կիլիկիոյ հայոց թագաւորին և պատիժ խնդրի. եթէ այս ձևն էլ արդիւնք չունենայ, դատաւորը պիտի յանցաւորի գլխին «նզովք» կարդայ: դ) 15-րդ կանոնն իրաւունք է տալիս դատաւոր ընտրել աշխարհական աւագներից մէկին, իրաւունք տալով հաւատի, և նման հայհոյութիւններ տուողներին խիստ մարմնական պատիժների ենթարկելու, լեզուն կտրելուն, նախատինքներով փողոցները շրջեցնելու մի ամբողջ օր և տուգանելու: Պէտք է ի նկատի ունենալ որ եթէ այսպիսի դատաւորներ հնար կլինէր նշանակել ամենալայն իրաւունքներով յուսալով թագաւորի օգնութեան վրայ, այդ միմեայն Կիլիկիայում, ուր կանոնները սահմանուեցին և ոչ Կիլիկիայից դուրս Հայաստանի զանազան կողմերում, ուր պարսկական հրոսակների բռնի ոյժն ու վայրենի կամքն էր օրէնք և կանոն: Շնորհալու կանոններում կարդում ենք (Ա. Գ. 579 երեսում), «քահանան և ժողովուրդը եկեղեցական գործերի համար մարմնաւոր իշխանի մօտ չգնան գանգատուելու և դատաստան խնդրելու, այլապէս առաքելական կանոնական հրամանի համեմատ կարգալոյծ լինի»: Շնորհալու 34 կանոնը խստօրէն արգելում է քահանային «աշխարհի կառավարութեան մէջ խառնուելու, և քաղաքի կամ գիւղի հոգաբարձու, կամ գատաւոր, կամ հարկերի և սահկերի գրող, կամ որևէ աշխարհային գործակալութիւն առնող լինի»: Շնորհալու կանոններով եկեղեցական խնդիրների գատերը վերաբերում են միմեայն հոգևորական գատարա-

նին, և ընդհակառակն հոգևոր դատաւորն իրաւունք չունի քրէական և քաղաքացիական խնդիրների քննութեան մէջ մտնելու։ — Բացի սրանից, մենք չունենք ժողովների կանոնները, որոնք խօսէին դատակազմութեան և դատավարութեան վրայ։ Ունինք մի քանի մատենագրական տեղեկութիւններ կաթուղիկոսների և եպիսկոպոսների վրայ եղած դատավարութեան մասին։ Բիւզանդ պատմում է որ Յուսիկ կաթուղիկոսն Տիրանի վարած վատ վարքի համար, նախատում էր և արգելում եկեղեցի մտնելու։ «Պիտեց Տիրան թագաւորը մտնելու եկեղեցի ուրիշ աւագանիներով։ Իսկ նա հակառակ խօսելով ասում էր, չես արժանի, ինչու ես գալիս, ներս մի մտնիր։ Այլ պատճառով ներս քաշեցին նրան (կաթուղիկոսին) եկեղեցի խիստ ծեծեցին . . . մինչև կիսամեռ ընկաւ գետին» 98 երես։ Իսկ Վրդանէս կաթուղիկոսն յանդիմանում էր թագուհուն պոռնկութեան համար. «յանդիմանէր զնա (թագուհուն) սուրբն վասն գաղտնի շինութեան կծծութեան բարոյից պոռնկութեան» Բիւզ. 7։ Նոյն ձևով վարուում էր Ներսէս մեծ պապի և Սրշակի հետ հակաեկեղեցական արարքների համար։ «Իսկ սուրբ Ներսէսը՝ Հայոց եպիսկոպոսապետը մշտապէս ընդդիմանալով Պապ թագաւորին, կշտամբում էր և յանդիմանում էր մեծ վկայութեամբ, և նա բազմաթիւ չարութիւնների պատճառով չէր համարձակում եկեղեցու շէմքը կոխել և ներս մտնել . . . Պնում էր նրա առաջ Ս. Գրքից վկայաբանութիւններ, յաւիտենական դատաստանի պատիժներով ահ ձգելով նրա վրայ, հրաւիրում էր զգաստանալ և լաւանալ». 180 երես։ Թագաւորը կամենում էր կաթուղիկոսին սպանել, բայց քաշուում էր։ Ներսէս մեծ ունէր 12 եպիսկոպոս «ամրոցակից, գործակից և խորհրդակից», որոնք «կատարում էին ապքատանոցները» և բարեգործական այլ հաստատութիւնները, ուրկանոցներ, օտարանոցներ, հիւրանոցներ։ Պարսից թագաւորը տալիս է Զմուէլ ոչ ազգընտիր կաթուղիկոսին իրաւունք «մարզպանին ընկեր լինել, հսկել հարկերի, բաշխերի վրայ, դատաստաններին գլուխ քաշել, և ուրիշ աշխարհական կարգերի վրայ նայել» Խոր. Գ. կե։ Ուրիշ եպիսկոպոսներ էլ աշխարհի իշխանի հետ միացած գիմում էին Պարսից թագաւորին այլ եպիսկոպոսների թեմեր և կալուածքներ խլելու։

Վահան Մամիկոնեանը Ղազար Փարբեցուն նշանակում է Էջմիածնի վանահայր, իբրև իւր շինած և նորոգած վանքի. վանականները Ղազարի հետ ընկնում են, մեղադրում են նրան «որ ապանդաւորէ», ասում է «պոռնկութիւնը մեզք չէ», «պիղծ և չարագործ մարդ է»։ Չնայելով Վահանի մեծ պաշտպանութեան վրայ, վերջը հալածուում է և վանքից հեռացնուում։ Ղազար գիմում է կաթուղիկոսին խնդրելով դատ անել և քննելով խնդիրը կամ արգարացնել կամ մեղադրել. բայց նա վախենում է հակառակորդների շատութիւնից և ուժից և պատասխանում է «չեմ համարձակուում երկիւղից նաև տեսնել քեզ, բայց դու դեռ ասում ես, թէ գամ բժշկեմ և կամ թագէ»։ Ղազար ասում է կաթուղիկոսի հասցէին, «Ո՞ւր է արդար ուսուցչի հսկողութիւնը, ո՞ւր է արդար հայրապետի Քրիստոսին նմանելը։ . . . . . իսկ դա վերքերից թուլացած մարդու երեսին և ջուր անդամ տանել չհամարձակեցաւ մարդկանցից վախենալով . . . Իսկ դա նրա հակառակն է ազաղակում (Քրիստոսի), ո՞ւր ես գալիս, չեմ ուզում, համարձակութիւն չունիմ քեզ տեսնել»։ «Արդեօք, մէկ կամ երկու անգամ տարաւ ինձ իւր սենեակը, և խօսեցաւ ինձ հետ, ինչպէս Քրիստոսը հրամայում է, ես ու ինքը առանձին, կամ մէկ և կամ երկու ընկերով, որ չհաւնելով, և իբրև մեղաւոր և մաքսաւոր համարելով ինձ հալածէը . . , »։ Մի անգամ մի պարեգօտաւորների առաջ ասել է «իրաւացի չեղաւ Ղազարի մեր աշխարհից հեռանալը, պատճառ նա եկեղեցու զարդ էր» (տես Ղազարի թուղթը)։

«Թող թէ մեծ մեծ պաշտօնների հասցնել, ինչպէս եպիսկոպոսութեան, կամ նոցա մէջ առաջին պաշտօնի և կամ եկեղեցու դատաւորութեան, այլ քորեպիսկոպոս էլ չարաչ ինձ, որ պարսիկները և անարժան մարդիկ այսօր էլ անում են» (նոյն տեղը)։

Ս. Սահակ կաթուղիկոսին լուր հասաւ որ գանագան աղանդաւորներ եկել են Հայաստան և մարգկանց մտքեր են մոլորեցնում, նա հրամայեց Ս. Մեսրոպին քննել հեզութեամբ ու խրատով ճանապարհ բերել, եթէ ոչ տանջանքներով և չարչարանքներով հալածել. «հրամայում է քննել ժանտագործ բորբորիտոններին (Կորիւն 18 երես, ևս բարբարիանոսներին) և եթէ հեզութեամբ և սաստով սւղղութեան չգան, չարչարանքներով հալածել. զի թշնամանանք ի թշնամանաց վրէժ առնուցու, և խայտառակեալի իրաւացի մահուամբ անիրաւ մահ հոգւոց»: Մեսրոպ ճշտութեամբ կատարում է պատուէրը. «ապա նրանից յետոյ սկսում էր «գժպատեհ և կամակոր բարբարիանոս աղանդն» քննել. և երբ որ հնար չէր գտնում սւղղութիւն բերելու, առնելով գործի էր դնում թշուառացնող գաւազանը, ծանրագոյն պատուհասներով մատնում էր տանջանքների, բանտ, գիլարանի . . . . մինչև որ փախան կորան աշխարհից (Կորիւն 18 և Խոր. Գ. ծէ): Սեբէոս պատմում է Քրիստափոր կաթուղիկոսին (628-630 թ.) դատի ենթարկելու և գատելու դէպքը: «Նա դէմքով հպարտ և անբարտաւան մարդ էր, լեզուն սուր սուսերի նման: Սա շատ խռովութիւնների տեղիք տուաւ և կռիւ ձգեց իր չարախօսութեամբ Աստեփ և իր եղբօր մէջ: Երրորդ տարին բամբասանքներ բարդեցին նրայ վրայ (կաթուղիկոսի): Եւ ժողովուելով բոլոր եպիսկոպոսներն և իշխանները քննութիւն արին: Նրա ընտանիքից երկու մարդ եկան և նրա տեղ վկայութիւն տուին բոլոր բազմութեան առաջ: Եւ ասին նրանից հայրապետական պատուի փակեղն և կարգից ձգեցին և անարգանքով հալածեցին նրան: Եւ իսկոյն Եզրին կաթուղիկոս նստացրին»: (Սեբէոս 98 երես):

Երբ Եզր կաթուղիկոսը (630—641 թ.) դաւանութիւնը փոխեց, Յովհան Մայրավանեցին համարձակութիւն ունեցաւ նախատելու բոլորի դիմաց կաթուղիկոսին, ասելով «քանդեցիր պապերի հաւատքի սահմանը, խրամատեցիր առաքելական ցանկը, կործանուելով Լևոնի մարգատաւան տո-

մարով»: Դաւանափոխ կաթուղիկոսը խիստ բարկանում է և հրամայում է. «մուրցայի (բռունցքներով) տանջել նրա պարանոցը և կզակը»:

Յովհաննէս Ովայեցի կաթուղիկոսի (834 — 855 թ.) դէմ բողոքողներ են դուրս գալիս հէնց կաթուղիկոսարանի տնից աշխարհի իշխան Բագրատ Բագրատունուն, որը լսելով և հաւատալով մեղադրանքներին հրովարտակներ է գրում բոլոր աշխարհին մերժել կաթուղիկոսին և նորը ընտրել: Այս իմանալով Սմբատ սպարապետը և Սիւնեաց Գրիգոր իշխանըն, վրդովւում են Բագրատունու արածի վրայ, «համագունդ միասին ժողովուելով, եպիսկոպոսական ժողով գումարելով և ստուգապէս իմանալով որ նաներ իժամիոյն չար հայհոյիչների շրմունքների ստութեան արդիւնք են, էլի հաստատում են . . .» իւր աթոռին, իսկ երեք վկաները, որոնք դուրս էին եկել կաթուղիկոսի դէմ իրրև մեղադրողներ, մեռնում են: Պատմաբան Յովհաննէս կաթուղիկոսը 82 երեսում տալիս է դատավարական ձևի մի փառաւոր պատկեր Գէորգ կաթուղիկոսին (877—898 թ.) դատի ենթարկելու պատրաստութիւններից առաջ: Աբաս, իւր եղբօրորդու Սմբատին թագաւոր օծուելու պատճառ համարելով Գէորգ կաթուղիկոսին, կամեցաւ վրէժ հանել. այդ մտքով գանագան սուտ վկաներ գտնել տուաւ, պատրաստութիւնները սկսեց տեսնել ժողով գումարել տալու և կաթուղիկոսին մեղաւոր ճանաչել տալուց յետոյ գահընկէց անել. նա՛ի միջի այլոց գրեց նաև Սևանում ապրող ժամանակի յայտնի գրագէտ Մաշտոցին որ գայ ժողով և ամբաստանի կաթուղիկոսի դէմ, խոստանալով կաթուղիկոսութիւնը յանձնել նրան: Մաշտոցը գրում է պատասխան Աբասին ցոյց տալով որ հեշտ բան չէ կաթուղիկոսին զրպարտելը, «ժողով թէ հրամայում էք լինի, թող լինի, բայց չլինի չար պաշտօնէից քրիստոնեների ժողով, որոնք ինչպէս որ այն ժամանակ ժողովուեցին Անանիայի հետ . . .». պէտք է Նիկիայի հարց նման պատերով և աղօթքներով անցնեն և սուրբ աւետարանն միջնորդ դնելով, ճշմարիտը խօսեն և ոչ

ըստ քմահաճոյից։ Յիշեցէք Ս. Ստեփաննոսի և Յակոբ Տեառնեղբօր դէմ դուրս եկած վկաներին և մի խաբուէք, զորովհետև մարդիկ ապագայի զգուշութիւնից լաւ գիտեն անօրէն վկաների չարութիւնները գրի անցնել։ «Ա.ւելացնում եմ, որ գաղշելի անձնամատը վկայ չէ, և չի էլ կարող կանգնել ուղիղ ատեանի առաջ, այլ բաց է ի բաց կհալածուի։ Որովհետև պիղծ դէմքը պոռնիկ կնոջ դէմք չինելով և այլ մարդկանց շարքից ելնելով և խոստովանուելով քահանայի մօտ, վկայ լինել չէ կարող սիւնհոտոսական կարգի համաձայն, մինչև որ սուրբ կանոնների հրամայած ապաշխարանքը չվերջացնի և իւր զղջման մասին եկեղեցու առաջնորդներից վկայութիւն չբերի»։ Նոյնպէս էլ եպիսկոպոսներն պիտի ընտրուած և արդար լինին, ամանք հեռու տեղերից պիտի գան, որոնց վրայ ատելութեան կարծիք չլինի. նոյնպէս և սուրբ և աւագ հայրերը թող քննեն և հաւաստիանան . . . ապա ս. սեղանն և ամբոնը սևով պատեն, որ սուգի նշան է, որ Քրիստոսի փոխանորդ՝ վեցան ընկնում է . . . »։ Ահա արդարապէս քննելու ձևը, իսկ եթէ դուք կամենում էք մի ուրիշին կաթուղիկոս ընտրել, այդ կարող էք անել ո՛չ օրինաւոր կարգով, «այլ բռնի ուժով և կամ կամակոր մտքով Աստուծոյ հետ կռուելով»։ Բայց դուք իմ խօսքը լսեցէք, և արէք այն ինչ որ արդար է և հաճելի Աստուծոյ։ Մաշտոցի այս թուղթը խիստ ազդեց Աբաս իշխանի վրայ, որը գնաց կաթուղիկոսի մօտ ներողութիւն խնդրեց։ Ապա եղել են մի քանի ևս դատական ժողովներ մի քանի կաթուղիկոսների գործերը քննելու, դժբաղդաբար դատավարութեան մասին ոչինչ չկայ այդ նիստերի պատմութեան մէջ, ընդհանուր խօսքերով նկարագրում են պատմագիրները և անցնում, թէ մեղադրեցին այս ինչ անձին, վկաներով հաստատեցին և պատժեցին։ Այդպէս եղև 968-ին կաթուղիկոսացած Վահան Սիւնեցու օրով, որին մեղադրում էին քաղկեդոնականութեան մէջ. Աշոտի հրամանով Անիում ժողով արին, քննեցին խնդիրը, մեղադրութիւնը հաստատեցին և գահընկեց արին (Ս.. Գ. 438 – 439 երես)։

1036-ին եղև մեծ փառաւոր դատական ժողով 4000 հոգուց բաղկացած, հոգևորական և աշխարհականներից, ուր քննեցին Պետրոս կաթուղիկոսի պատրիկի գործերը, վկայութեամբ հաստատեցին մեղադրութիւնները, գահընկեց արին և բանադրեցին նրանից ձեռնադրուածներին։ (տես Ա. Գիրք 441 – 443)։ Մա. Օրբելեանը 319 երեսում յիշում է և Կոստանդին պրօնագործ կաթուղիկոսին (1286—1289 թ.) դատի ենթարկելու խնդիրը. որից երևում է որ Հեթում թագաւորը քէն ունենալով կաթուղիկոսի դէմ, հոգևոր և աշխարհական անձանց իւր կողմն է քաշում, վկաներ պատրաստել տալիս և ժողով գումարում, ուր 30 մեղադրական կէտերով վկաների ցուցմունքներով հաստատում են նրա յանցանքները և ստիպում գահընկէց լինելու։ Մեղադրական կէտերի մէջ կան այսպիսի մեղքեր, որ պատարագ անելուց առաջ շարբաթ է խմում, երկրորդ՝ որ Հռոմկլայի լկտանոցներից հարկ է առնում։ Այս մեղադրական կէտերի դէմ խիստ յարձակւում է Ստեփաննոս Օրբելեանը, համարելով առաջինը հիւանդութեան պատճառով արած, երկրորդն էլ բոլորովին օրինաւոր ըստ եկեղեցական կանոնաց, որ անառիկներից հարկ էր առնում իբրև տուգանք և յանձնում աղքատանոցներին։ 1002-ին Սարգիս կաթուղիկոսը ժողով արաւ, դատի ենթարկեց Թոնդրակեցի ապանդաւորներին, մեղադրութիւնը հաստատեց և նրանց գլխաւոր Յովհաննէս եպիսկոպոսին կարգալոյծ արաւ, աղուէսադրոշմ դրեց ճակատին, բանտարկեց և նզովեց։

Ստեփաննոս Օրբելեանը 260 երեսում յիշում է ևս մի դատ, որ տեղի է ունեցել 1216-ին Սիւնեաց եպիսկոպոսների և Լիպարիտ ու Ելիկում իշխանների մէջ «Սուրբ խաչի»ում պատկանելու մասին, որը բերդը գրաւելուս ստացել էր Իւանէ աթաբէկը։ Երկու կողմը դիմում են Իւանէ աթաբէկին որ նստում էր Դուինի և կառավարիչ էր երկրին Վրաց թագաւորից նշանակուած։ Աթաբէկը «Հրամայում է իւր մեծամեծներին (Վրաց աշխաններին), Տփխիսու Անու և Դուինի զաւիներին և Սուրմարիի երևելի շեխին, որոց հետ

Անու մեծ եպիսկոպոսին և Բջնոյ ու Հաղբատի եպիսկոպոսներին», որոնք քննեցին և վճռեցին, ս. խաչը պատկանում է նրան, ով որ գերուԹիւնից Թափել է, որովհետև կուռի իրաւունքով ձեռք բերած սեպհականուԹիւն է, գերի ընկածը մեռածի հաշիւ է: Դատաստանի վճիռը Իվանէ հաճուԹեամբ լսեց և ս. խաչը իշխանների եկեղեցու սեպհականուԹիւն համարեց: Ահա այս են մատենագիրների հաղորդած տեղեկուԹիւնները Հայոց եկեղեցու մէջ պատահած դատավարուԹեանց վերաբերմամբ: Հայոց եկեղեցու դատավարական կեանքը կարելի է բաժանել 3 մասի, ա) լուսաւորչի տոհմի կաթուղիկոսուԹեան ժամանակ, լուսաւորչից մինչև Սահակ. բ) մարզպանուԹեան ժամանակից մինչև Հայոց ԹագաւորուԹեան ջնջումը. գ) մահմեդական տիրապետուԹեան միջոց:

ա) Լուսաւորչի տոհմը լինելով բարձր իշխանական ծագումից, Հայոց Թագաւորական ցեղի հետ բարեկամ, ունենալով Հայոց Թագաւորների հետ խնամուԹիւն, և գուցէ անմիջական յաջորդուԹիւն լինելով Հայոց կաԹողիկոսական քրմապետուԹեան՝ որ համապատիւ Թագաւորի իրաւունք էր վայելում, այդ հիմունքներով այդ տոհմի կաթուղիկոսուԹիւնը շատ բարձր էր կանգնած յաջորդ դարերի կաթուղիկոսուԹիւնից: Նրանք էին ընդհանուր լիազօր կառավարիչները եկեղեցու, վանքերի, բարեգործական հիմնարկուԹիւնների, ժողովում էին հարկեր և տուրքեր բոլոր ժողովրդից այդ հիմնարկուԹիւնների պահպանուԹեան համար. նախատում, կշտամբում և անխնայ հալածում էին ամեն տեսակ եկեղեցական կանոնների հակառակ գնացող անձանց, լինէին նրանք շինական, Թէ ազնուական, նախարար Թէ Թագաւոր, առանց վախենալու ո՛չ մահից ո՛չ բանտից: Բանադրում և նզովում էին Թագաւորին, արգելում էին եկեղեցի մտնել, եկեղեցում աղօթք անել. Թագաւորը երկիւղից չէր համարձակւում դատել, բանտարկել կամ սպանել, դիմում էր գաղտագողի Թոյնի օգնուԹեան: Իրանք իրանց բարձր տոհմական դիրքով ել ու դուրս էին արքունիք և իւրաքանչիւր

բոպէ յանդիմանական-խրատական զրուցով յիշեցնում նրանց քրիստոնէական պարտիքը: Գուռգ Արշակ, որ ոչ մի սրբուԹիւն ճանաչելու դրամադրուԹիւն չէր ցոյց տալիս, Ներսէս մեծի յանդիմանուԹիւններից յաղԹահարուած, խնդրում էր ներել մեղքերը. «իսկ Թագաւորը նեղն ընկած մեծ ազաչանքով և շատ ազօԹքներով ազաչում էր հաշտուել իրան հետ և ուխտ դրաւ, որ այլևս երբէք նրա խօսքից դուրս չի գալ»—Բիւզ. 96 երես: «Հրաման տանք, ասում է Ներսէս Արշակ Թագաւորին, բոլոր աշխարհին քեզ հետ միասին քո գործած մեղքերի համար ազօԹքի և խնդրուածքի կանգնել, մենք էլ քեզ հետ մտնենք ապաշխարանքի տակ»: Թագաւորը Թուներաւորում է կաթուղիկոսին, վերջինս նախատական արհամարհական ձևով նկատում է. «իսկ քեզ, ո՛վ Թագաւոր, արժան էր իբրև Թագաւոր մարդ յայտնի հրաման տալ ինձ սպանելու, ո՛վ էր, որ կարողանար արգելել քեզ, կամ ո՛վ էր, որ կարողանար պահել քո ձեռքը . . . »: Այսպիսի ձևով վարուեցին Լուսաւորիչ, Արիստակէս, Վրթանէս, Յուսիկ, Ներսէս, Սահակ: Այդ շրջանում եղել են արտաքոյ օրինաց միջանկեալ օտարահաստատ կաթուղիկոսներ, որքան անզօր, որքան մեղկ և աննշան այդ հսկաների վերաբերմամբ. մեկի վերաբերմամբ Փաւստոս ժողովրդի բերանով ասում է. «Ներսէսի փոխանակ կաթուղիկոս դրին ոմն Զունակ, որ ստրուկ էր ՚ի ստրկաց արքունի»: (Բիւզ. 105 երես). Այս շրջանում կաթուղիկոսները իրանց աթոռակից՝ խորհրդակից» եպիսկոպոսներով կազմում էին ամեն ինչ, և դատաւոր, և օրէնսդիր, և կառավարիչ, և խնամակալ, նրանք միշտ շրջում էին ամեն տեղ և իբրև աւետարանի պատուական աշակերտներ ամեն տեսակ վէՃ, գատ կտրում իրանց ձեռքով. Սահակ 60 աշակերտներով ամբողջ տարին շրջում էր և խրատում, քարոզում ու սովորեցնում: Բարեգործական հիմնարկուԹիւնները գտնւում էին որոշ մարդկանց խնամակալուԹեան հոգատարուԹեան և կառավարուԹեան ձեռքի տակ, որոնք դրանց և պահողն էին և դատողը և կերակրողը: Այս շրջանում 3 դատական աստիճան-

ներ կային. կաթուղիկոսական՝ իւր խորհրդակից եպիսկոպոսներով և շրջիկ հոգևորականներով. եպիսկոպոսական սահմանուած իւրաքանչիւր թեմի գործերի համար և քորեպիսկոպոսական՝ գաւառակների եկեղեցական կառավարութեան և դատաստանի համար: Վարչական և դատաստանական բոլոր գործերը գտնւում էին այս երեք աստիճանի առեաններում: Սրանց դատաստանական գործավարութիւնը սահմանափակւում էր պսակների, առևանկութիւնների, չհասների, ամուսնալուծութիւնների, մեռելների վրայ լայ ու կոծ չանելու խնդիրներում, քրէական և քաղաքացիական գործերը վերաբերում էին քաղաքական իշխանութեան և նրա դատաւորներին, այս մասին քիչ յետոյ: Սահակի սահմանադրութիւններից երևում է որ ամեն տարի 2 անգամ ժողով էր լինում, որ եպիսկոպոսները իբրև հայր և քրիստոսի աշակերտներ պիտի իրանց հօտը լաւ խնամէին, հայրաբար կառավարէին, որ գաւառակների համար նշանակուած քորեպիսկոպոսները լինէին գիտուն և ժիր: Գիւղերի և գաւառակների դատաւորն և կառավարիչն էր քորեպիսկոպոսը (այժմեայ գործակալը). նրանց տալիս է ահագին իրաւունքներ, նրանք են վարչական և դատաստանական գործերի ղեկավարը. ո՛չ առանձին, ո՛չ բռպէական ազդեցութեամբ ղեկավարող, այլ խորհրդակցութեամբ, քննութեամբ, առեանի մէջ: «Քորեպիսկոպոսները պիտի հսկեն բոլոր եկեղեցիների վրայ, օրինազանց եկեղեցականներին կշտամբեն խրատով, ծեծով և տուգանքներով պատուհասեն առեանի մէջ, որ միւսները վախենան և խրատւեն». 5-րդ կանոնով իրաւունք է տալիս քորեպիսկոպոսներին զրկելու քահանայագործութիւնից առժամանակ ծոյլ, ժամերգութիւն չիմացող, պատարագը ոչ լրիւ սպասահարկութեամբ կատարող քահանաներին (Ա. Գիրք 518): Այս կանոնների մէջ յիշատակուած թէ եպիսկոպոսական թէ քորեպիսկոպոսական դատ ենթարկուող յանցանքները բոլորը եկեղեցական են: Սրանց համար ասուած վերոյիշեալ խօսքը թէ «Առեանում» պիտի պատժեն, դառեն քահանաներին, կարելի է հասկանալ երկու կերպ, կամ ժողովրդի, խուռն

բազմութեան ներկայութեամբ, կամ ուղիղ մտքով, երկու երեք հոգի դատաւորների ակնկայութեամբ:

բ) Եկեղեցական դատարանի երկրորդ շրջանն ընկնում է Արշակունեաց անկումից մինչև Ռուբինեանց անկումը, երբ կաթուղիկոսների սատար էին հայ մարզպանները, Բագրատունեաց, Արծրունեաց և Ռուբինեան թագաւորները: Այս շրջանի կաթուղիկոսները այն չեն, ինչ որ առաջի շրջանի, այստեղ վախկոտ են, խեղճ, նախարարների և թագաւորների քմահաճոյքին ծառայող, այն վեհութիւնը ինչ որ լուսաւորչի տոհմումն էր, չունէին. և պարզ է թէ ինչու. առաջինները նստում վեր էին կենում թագաւորների հետ և էին խրոխտ և յանդիմանող, սրանք ծագմամբ ամենախեղճ կացութիւնից բարձրացած բարձր աստիճանի այս ու այն նախարարի՝ թագաւորի միջոցով, էին համեստ, հաշտեցնող բնաւորութեամբ. առաջինները որքան բարձր շրջանից էին, նոյնքան համեստ և ժողովրդին մօտիկ, նրա կարիքներին դարման տանող. երկրորդները՝ հազիւ հազ իրանց գլուխները պահոզ: Ահա այս դրութիւնից էլ կախուած էր և դատական իշխանութեան ամրութիւնը, այժ և գօրութիւնը: Կաթուղիկոսը «պարեգօտաւորների» (աբեղաների) և իշխանների ահից վախենում էր ոչ միայն Ղազար Փարպեցու դատը կարել, այլ մինչև իսկ նրա երեսը տեսնել, թէ և Վահան Մամիկոնեանն էր Ղազարի պաշտպան իւր եղբայրներով և իրա կաթուղիկոսի կարծիքով Ղազարն «եկեղեցու զարդ էր» (տես Ղազարի թուղթը): Ռուբինեանց և Բագրատունեաց ժամանակ այս ու այն իշխանի քմահաճոյքից էր կախուած մեղադրանքներ բարդել, սուտ վկաներ ժողովել կաթուղիկոսի դէմ նրան գահընկէց անելու համար. Կոստանդին կաթուղիկոսին հեռացնում է թագաւորի կազմած ժողովը սուտ մեղադրանքներով, դրա արդար դատը պաշտպանում է Սիւնեաց եպիսկոպոսը հեռու արևելքից: Այսպիսի դրութեան ժամանակ սպասել բարեկարգ դատարանների և նրանց արդար վճռի եկեղեցական գործերի վերաբերմամբ, շատ մեծ բարեհաւատութիւն է: Այս շրջանում

էլ երեք աստիճանով եկեղեցական դատավարութիւնը տիրապետող էր. ա) ամբողջ աշխարհի համար բարձրագոյն և վերջին դատարան. բ) թեմական—թեմի համար և գ) քորեպիսկոպոսական—գաւառի և համայնքների համար: Բարձրագոյն ատեանը կազմում էր համազգային եկեղեցական ժողովը կաթուղիկոսի կամ նրա բացակայութեան միջոցին աւագագոյն եպիսկոպոսի նախագահութեամբ, մասնակցութեամբ աշխարհականների և հոգևորականների, եպիսկոպոսների և նախարարների, ներկայութեամբ նոյն իսկ թագաւորի, բաղկացած փոքրաթիւ անդամներից մինչև իսկ 4000 (տես Ա. Գ. 442 երես) հոգուց: Այս ժողովն է միակ օրէնսդիր, միակ և վերջին դատաւորի իրաւունք ունեցողը, որի վճիռը վերջնական է, առանց բողոքի և վճռաջինջ իրաւունքի: Այս ժողովի վճիռն է պարտաւորական և անգառնալի: Այս ժողովի վճիռով նզովւում են դպրից սկսած մինչև կաթուղիկոսներ, շինականից սկսած մինչև թագաւորներ: Այս ժողովն է միմիայն կաթուղիկոս ընտրող և գահընկէց անող (տես Ա. Գիրք 437, 438, 439, 441, 444 երեսներ): Դատավարութիւնը և դատակազմութիւնը այս ժողովներում յար և նման է տիեզերական ժողովներին, ղեկավարւում էին ժողովականները նոյն սկզբունքներով: Ժողովն ունէը նախագահ, անդամներ, մեղադրող կողմ, մեղադրեալ, վկաներ: Մեղադրական կէտեր կազմում էին եպիսկոպոսներ կամ իշխաններ, միմեանց հետ առաջուց հաղորդակցութեան մէջ մտնելով, վկաներ պատրաստելով. երբ մեղադրական գիրը համարւում էր պատրաստ, դիմւում էր աւագ իշխաններն և թագաւորին, եթէ մեղադրուողը կաթուղիկոսը չէը, գանգատաւորները դիմում էին կաթուղիկոսին, սրանք, այսինքն կաթուղիկոսը, կամ թագաւորը, երկուսի չեղած ժամանակ մեծ իշխանն կամ աւագագոյն եպիսկոպոսը ժողովի օր էը նշանակում, հրաւիրագրեր ուղարկում և ծանուցումն անւում թէ մեղադրեալին և թէ վկաներին ու մեղադրողներին: Դատը սկսւում էր սովորական մեղադրական գիրը կարդալուց յետոյ, վկաների ցուցմունքը լսելուց և մեղա-

դրեալի արդարացուցիչ խօսքերը լսելուց յետոյ: Վճիռը կայանւում էր, կարդացւում, գործադրւում և հրատարակւում 'ի լուր ամենեցուն: Սևանի Մաշտոց վարդապետը Աբաս իշխանին գրած թղթում յիշեցնում էր, որ վկաները կանոնական օրէնքի հիման վրայ պիտի լինեն երկու երեքից ոչ պակաս, յարգելի մարդիկ, պատժի տակ եթէ ընկած են, պիտի ապաշխարանք քաշած բոլորովին արդարացած լինեն, որ դատաւորները՝ հեռու տեղերի եպիսկոպոսներ պիտի լինին, որ ատելութեան հիմք չունենան մեղադրեալի հետ և խնդիրը վճռեն արդարութեամբ և անաչառութեամբ: Թէ և ոչինչ չկայ արձանագրութիւններ կազմելու վերաբերութեամբ այդ ժողովներում, բայց ենթադրելի է որ անշուշտ կազմելիս լինէին արձանագրութիւններ, այլապէս մեղադրական գրի 30 կէտերի առանձին առանձին քննութիւնները, վկաների ցուցմունքները և կողմերի ասածները ինչպէս պիտի մտքներում պահէին, որ վերջում գործը անաչառ վճռահատութեան ենթարկէին:

Բ—րդ աստիճանի դատարանն՝ եպիսկոպոսականն էր, թեմի գործերի համար, ատենական էր, թէ անձնական, անորոշ է, չկայ բայ որոշ ցուցմունք, բայց 'ի նկատի առնելով այն, որ մի անհատ դժուարութեամբ կարող էր գործերը վարել ամբողջ թեմում առանց օգնականի, դատաւորի, առանց արձանագրութեան, քանի որ կողմերը կարող էին դիմել կաթուղիկոսին, պիտի անշուշտ ենթադրել որ ատենական էր, և ոչ անձնական՝ անհատական: Փարպեցին դատւում է կաթուղիկոսից, թէ «եկեղեցու դատաւորութեան» էլ արժանի չարաչ իրան:

Գ—րդ աստիճանի դատարանն էր քորեպիսկոպոսական, որ դատում էր գաւառակի շրջանում, գիւղերում: Այս շրջանում սրանց դրւում է նոյն պատժողական իրաւունքները՝ ինչ որ առաջինում կար, Սահակի կանոններով, տուգանել, ծեծել, պատժել խօսքով՝ նախատելով, ապաշխարանքի ենթարկելով: ԺԳ—րդ դարի Սսի ժողովը հրամայում է (Ա. գիրք 455 երես) որ եպիսկոպոսը «սուրբ գիտուն քորեպիս-

կոպոս նշանակի, որ եկեղեցու դատարանն կարողանալ երկիւղածութեամբ և ոչ ագահութեամբ անել»: Սրանք եկեղեցական տուրքի և մեկի յանցանքի պատճառով շատ անգամ փակում էին եկեղեցու դռները, այս ինքնակամ գործողութիւնները արգելում է ութերորդ դարու Պարտաւի ժողովը. Ս.: Գ. 435): Սրանց իրաւասութեան ենթարկւում էին նոյնպէս միմիայն եկեղեցական յանցանքները և մեղքերը:

Գ) Դատարանական երրորդ շրջանը կազմում է Ռուբինեանց անկումից յետոյ մինչև Ռուսական տիրապետութեան և Տաճկահայոց մէջ մինչև 1860 թիւը Սահմանադրութիւնը: Այս շրջանը մահմետական շրջան է, այս բանական է ըմբռնել տալու համար հայոց եկեղեցական՝ թէ վարչական թէ դատարանական դրութիւնը: Մի տեղ, որտեղ արդարութիւն, ճշմարտութիւն կախուած լինի կաշառքից, դատ և իրաւունք կեդրոնացած լինի սրի, ոյժի, կոպիտ քմահաճոյքի մէջ, մի տեղ, որտեղ անկիրթ՝ վայրենի բնազդումներով Երևանի սարդար լինի կառավարիչ և Թաւրիզի խան, որոնք ամբողջապէս նուիրուած լինին մարմնական զուարճութիւնների և տուփական ցանկութիւնների, մթթէ այնտեղ եկեղեցին կարող է արդար դատաստան ունենալ: Առաքել Դաւրիժեցի պատմագրի (1601—1669 թ.) որ երեսը բացանելու լինիս, ամեն տեղ կտեսնես բռնութիւններ եկեղեցու վրայ, բռնազբօսիկ վարմունք կաթուղիկոսների վերաբերմամբ, եկեղեցին ամբողջ կազմով խաղալիք դարձած:

Էջմիածինը իւր 4 կաթուղիկոսներով, որոնք միաժամանակ գահ են բազմել սարդարի և շահի գրպանը լցնելու և նրան քմահաճոյքներին ծառայեցնելու, դարձրել էին եկեղեցական կառավարութիւնը և դատաստանը վաճառանոց: Միաժամանակ չորս կաթուղիկոս, Մելիքսէթ, Դաւիթ, Սրապիոն և Սահակ գրաւել էին շահի ծառաների ուղեկցութեամբ շրջիկ հարկահաններ. ահա ինչ է ասում Դաւրիժեցին. նրանք «կաշառքով թէ եպիսկոպոսներին թէ քահանաներին անարժանութեամբ ձեռնադրութիւն էին տալիս, կաշառքով մեկ վանքի սեպհական վիճակը կտրում ուրիշ վան-

քի էին տալիս, արձակ հրամաններ էին տալիս չհասի, «մեղօքի», կնաթողութեան, երկկնութեան: Այսպիսի և սրանց նման բազմաթիւ անկարգութիւններ էին գործում կաթուղիկոսներն և իւր եպիսկոպոսներն . . . » 223 երես: Այսպէս էին եկեղեցու կառավարիչը, իսկ սարդարները. «Նոյնպէս էին, ասում է Դաւրիժեցին 289 երեսում, և գիւղական երէցները, անունով միայն քահանաներ, ոմանք վերցնելով իրանց վրայ մելիքութեան իշխանութիւնը (տանուտէրութիւն), և ոմանք տանուտէրութեան, և ոմանք պռոնիկներ և երկկանայք, ոմանք այլազգի իշխաններին յարած, նրանց չար գործերի արբանեակներ և քրիստոնեաների մատնիչներ , . . . թողնելով ժամ պատարագ» փակել էին եկեղեցիները և իրանց ցանկալի արուեստներով պարապում: Շահը, սարդարը խաները 4 կաթուղիկոսին դարձրել էին փողի քսակ, միմեանց «աչըղու» հակառակ, բանտարկում, չարչարում, տանջում էին նրանց, Դաւիթը տանջանքից փախաւ Սպահան, Սրապիոնը գարհուրելի չարչարանքից փախաւ իւր հայրենիք Տիգրանակերտ, Սահակը նոյնպէս դէպի Վան, իսկ Մելիքսէթի չարչարանքները թող պատմի Դաւրիժեցին. 208 երես. «Նորանից յետոյ բերին Մելիքսէթին Երևանի բերդի մէջ և տարածեցին գետնի վրայ, չորս կողմից քարշելով պարկեցին նրան, կապելով ցցերից, ձգեցին սրոգալթի մէջ, և առնելով բևեռաքարշը (ունելիք) և նրանով կտրեցին թևերից մին, և կտրած միսը դրեցին բերանում, և երկու կողմում կանգնած փայտաւորները խփում էին նրան և ասում էին, ծամիր և կուլ տուր և Մելիքսէթն թէպէտ և չէր կամենում, բայց վտանգից անճար մնալով, ծամեց և կուլ տուաւ իւր միսը. և յետոյ մուներիկը ազատակեց թէ թագաւորի հրամանը խալիֆայի վրայ կատարուեց, իւր միսը ծամեց և կուլ տուաւ» այն էլ Աստուածածնի պահոց օրերը. և այս բանի պատճառն էր իւր ամուսակից Դաւիթ կաթուղիկոսը, որը շահին ասել էր թէ Մելիքսէթը կաշառ է առել և թոյլ տուել որ կաթուղիկները Ս. Հռիփսիմեանց գողացած մասունքները տանին, փոխանակ յետ խլելու: Այս կա-

տարուել է տասն և եօթերորդ (ԺԷ) դարում: Մինչ արժէ կրկնել Դաւիթ—Դանիէլեանի կաթուղիկոսական կուիւը, որ շարունակուեց երկար տարիներ և պատահեց ու թոյլացրեց եկեղեցական կարգերի ոյժն ու զօրութիւնը, այն էլ 19 րդ դարի սկզբում, հետաքրքրուողները թող կարդան «Ամենայն Հայոց կաթ.» Գիրքը Ա. Երիցեանի: Մինչ այսպիսի պայմաններում, այսպիսի հրէշաւոր ժամանակ, կարճ էր որոշել, կամ քննութեան տակ ձգել Հայոց եկեղեցու դատավարութիւնը և դատակազմութիւնը ինչպէս էր, ով էր դատողը և մեղադրողը, ով վկան, ով պատիժ կրողը՝ եկեղեցական դատաւորը և պատժողը, և քննողը, էր կաշառքը, քմահաճոյքը, ստոր սորկութիւնը, խանի և սարդարի բնազդմունքները: Շատ պարզ է, որ այսպիսի տասն պատահարներ չկարողացան և չեն էլ կարող ջնջել մեր եկեղեցու դարաւոր կանոնական սահմանադրութիւնները դատի, դատավարութեան և դատակազմութեան վերաբերմամբ, որոնք առժամանակ միայն մոխրի տակ պահուած մնացին, որովհետև բռնի ոյժով արածը օրէնք չէ, եկեղեցին իւր ներքին ուժով այդ բռնութեան դէմ մաքառեց և շարունակեց նախկին սկզբունքներով կեանք վարել:

Մեր եկեղեցու երեք դատարանական շրջանում հետևեալ սկզբունքները մնացին անխախտ. ա) երեք աստիճանով կազմուած դատարանական ձևերը սկզբից մնաց մինչև վերջը առանց փոփոխութեան, այն՝ է 1) կաթուղիկոսական՝ ազգային ժողովի մասնակցութեամբ, վերջնական և անբողոքելի դատական, օրէնսդրական վճռահատութեամբ, կամ՝ ի բացակայութեան կաթուղիկոսի աւագագոյն եպիսկոպոսի նախագահութեամբ. 2) եպիսկոպոսական՝ կամ առաջնորդական, սահմանափակուած թեմի գործերով և 3) քորեպիսկոպոսական կամ գործակալական, գաւառակի կամ համայնքի գործերով սահմանագծուած: բ) Սկզբից մինչև երրորդ շրջանի վերջը երեք եկեղեցական դատավարութեան հիմունք եղել է կանոնական իրաւունքը, կանոնների ցոյց տուած սահմանագծերը: գ) Եկեղեցական դատաստանի նիւթը եղել

է եկեղեցական-կրօնական խնդիրներ, այն է՝ պսակի, չհասի, ամուսնալուծութեան, առևանգութեան, կախարդութեան իւր տեսակներով, ազանդների, ժամերգութեան, ծիսակատարութիւնների, բարեգործական հիմնարկութիւնների և կալուածների կառավարութեան և պահպանման, եկեղեցական հաստոյքների և տուրքերի կարգագրման և ժողովման խնդիրներ: Դ) Եկեղեցական դատաստանին ենթարկուել են վերոյիշեալ յանցանքներում մեղադրուած բոլոր հոգևորականները՝ դպրից սկսած մինչև կաթուղիկոս անխտիր: ե) Նոյն յանցանքներում մեղադրուած բոլոր աշխարհականները նոյնպէս ենթարկուել են նոյն եկեղեցական դատին շինականից սկսած մինչև թագաւորը: զ) Քրէական և քաղաքացիական գործերը ենթարկուել են մարմնաւոր դատարանին և չունենք փաստ ապացուցանելու թէ ենթարկուած լինին եկեղեցական դատաստանի: է) Հոգևորականները քրէական և քաղաքացիական գործերի համար ենթարկուել են երկու դատարանին էլ՝ թէ եկեղեցական թէ մարմնաւոր, կամ խառն դատարանի, որպիսին էր Սիւնեաց եպիսկոպոսների դատը երկու իշխանների դէմ «Ս. Խաչի» տիրապետութեան համար. փոքր քրէական յանցանքների համար միմիայն եկեղեցական դատարանին: ը) Ժարձրագոյն եկեղեցական դատարանին ենթարկուում էին՝ կաթուղիկոսը և թագաւորը, եպիսկոպոսները և իշխանները (նախարարները). եպիսկոպոսական դատին՝ անպաշտօն եպիսկոպոսները, վարդապետներ և այլ հոգևորականներ, գաւառի աննշան իշխաններ և ազատ ու շինական: Քորեպիսկոպոսական դատին համայնքում ապրող ազատ ու շինական և քահանաներից սկսած մինչև դպիրները: թ) Երեք աստիճանի դատավարութիւնը լինում էր դռնբաց, ժողովական և խորհրդակցական և ոչ անհատական, բարձրագոյն ատենին բողոքելու իրաւունքով: ժ) Երեք աստիճանի դատարաններում գործատրուող պատիժներն էին՝ ապաշխարանքներ զանազան տեսակ, ծոմապահութեամբ, ծնրադրութեամբ, չոքելով, գլուխը կարգալով, եկեղեցու դուռն կանգնելով, հաղորդու-

թիւնից զրկուելով, եկեղեցի մտնելուց զրկուելով, աղօթքի կանգնելով, տուգանքներ յօգուտ աղքատանոցի, եկեղեցու, բարեգործական հաստատութիւնների և յօգուտ գանձարանի, պատիժները -մուրացայի և ճիպոտի հարուածներով, ուրկանոց ուղարկել-ազատու համար (ցորեն և ծաւար արկանքներով), աղուէսադրոշմ ճակատին (խարած շամփուրներով), պատիժները ոչ մարմնական-բանտարկել, խայտառակելով էշի վրայ նստացրած շրջեցնել; իրաւունքի զրկումն-հոգևորականներին՝ զրկուել պատուից, պաշտօնից, կարգից; երկու դասակարգի վերաբերմամբ՝ զրկուել քրիստոնէական բոլոր օրինակատարութիւնների շնորհքից՝ բանադրութեամբ և նզովքով։ ժա) Եկեղեցական դատարանն ինքն է գործադրում պատիժները բոլոր եկեղեցական անձանց վերաբերմամբ, նոյնպէս և ինքն է գործադրում վերոյիշեալ պատիժները աշխարհականներից շինականների վերաբերմամբ, իսկ աղնուականները ծեծից օրէնքով ազատ էին, եթէ ինքնայօժար տուգանք կտային, այն է պատժին կենթարկուէին, եթէ ոչ, եկեղեցին անզօր էր գտնուում պատիժը գործադրել. «եթէ պատուաւոր մարդ է և եկեղեցական օրէնքին հակառակ է կանգնում» (Ա. Գ. 457) ասում է Սսի կանոնն, պէտք է նզովքի ենթարկել. ուրեմն աշխարհականներից ուժեղների կամքին էր թողնուած եկեղեցական դատարանին ենթարկուելը, եկեղեցին անզօր գտնուելով սրանց դէմ՝ բանադրում և նզովում էր միմիայն։ Թէ ինչու եկեղեցին գիմում էր հակաեկեղեցական միջոցների յանցաւորների դէմ, այդ պէտք է բացատրել հանգամանքների, մարդկանց վարք ու բարքի կոպտութեան, տիրող կարգերի անկանոնութեան միջոցով. մարմնական պատիժը, ծեծը բոլորովին հակառակ է աւետարանի բարձր սկզբունքին, եկեղեցու քարոզչութեամբ լոյս սփռելու ձգտումներին, որոնք պահանջում են ազդել խօսքով, յորդորներով, սրտի ներշնչմամբ և ոչ գաւազանով։ Այս դրութեան պատասխանում է Նահապիվանի ժողովի 13-րդ կանոնն (Ա. Գ. 335 երես), որ խօսելով յանցաւորներին խիստ տուգանքների և մարմնական պատիժների ենթարկե-

լու մասին, ասում է, «իսկ եթէ հակառակեն (պատժի ենթարկուողները) և ասեն, ինչու Նիկիական կանոններում այդպէս ծանր պատիժ չէ նշանակուած, նրանք սխալւում են այդպէս մտածելով, որովհետև այնտեղ ի նկատի չունէին թէ այսքան չարիք և ոճիրներ մեր աշխարհում պիտի գործուէին։ Ահա ժողովի պատճառաբանութիւնը, որի անդամները իմացել են իրանց եկեղեցական ոգու ոչ համապատասխան պատիժները նշանակելը, բայց միևնոյն ժամանակ գտել են որ ուրիշ միջոցներ չեն կարողանում որոնել այդ անկարգութիւնների առաջն առնելու համար։ Այդ խստութիւնները միևնոյն չափով գործադրւում էին թէ հոգևորականների և թէ աշխարհականների վերաբերմամբ։ Մինչև իսկ Սսի ժողովը հայոց թագաւորի կարգադրութեամբ սահմանում է, մարդիկ նշանակել ամեն տեղ, քաղաքներում, գիւղերում, հրապարակներում, փողոցներում հսկելու և բռնելու այն մարդկանց, որոնք հայհոյելիս կլինեն Աստուծուն, եկեղեցուն, հաւատքը, կնունքը ևայլն ևայլն, և ծակելու նրանց լեզուները, լար անցկացնելու մէջովը, մի օր այդպէս շրջեցնեն և տուգանք առնեն աղքատներին բաժանեն (Ա. Գ. 458 երես)։ Այսպիսի պատիժ հետևանք է միմիայն կացութեան, վարք ու բարքի՝ փչացման և բրդացման։

Այն հարցը թէ հոգևորական թէ աշխարհական անպիսի յանցանքների համար ո՞ր ով աստիճան պատիժների էին դատապարտւում, շատ դժուար է որոշել, պարզ և դրական կերպով լուծուած այդ խնդիրը մենք չենք գտնում մեր կանոններում, չկան որոշ սահմանագծուած օրէնսգրքի յօդուածների նման վճռական կանոններ, այդ թողուած է գործադրողների քմահաճոյքին և հանգամանքներին ծանրութեան ու թեթևութեան։ 1836-ից յետոյ երբ Ռուսաց կայսրը հրամայեց հայոց եկեղեցական կանոնների հիման վրայ ներքին եկեղեցական կեանքի վերաբերեալ սահմանադրութիւն կազմել, սինօդը երեք անգամ նշանակեց այդ հրամանը ի կատար ածելու որ անշուշտ ի նպաստ էր հայոց ե-

կեղեցու կանոնաւոր կառավարութեան, դժբախտաբար կազմողները այժիւ վեր տեսնելով այդ գործը յետ քաշուեցին և մինչև այսօր էլ մնում է նախկին տարտամ դրութեան մէջ։ Հայոց եկեղեցու 1836-իւ յետոյ եղած դատաստանական խնդիրների մասին Ռուսահայոց համար, և 1860-իւ յետոյ Տաճկահայոց վերաբերմամբ կխօսենք Գ. գրքում աւելի մանրամասն։

Այն հարցը քրէական յանցանքները քննուել և վճռուել են հայոց մէջ եկեղեցական դատարաններում, կամ աւելի կարճ, թէ քրէական դատերը ենթարկուել են հոգևոր դատարաններին և ոչ աշխարհական, այս մասին երկու խօսք կասենք և դատական մասին վերջ կտանք։

Թէ եկեղեցական դատաստանին էին ենթակայ աշխարհականների գործած քրէական յանցանքները, այդ պնդում են հանգուցեալ Վահան վարդապետ Բաստամեան իւր Մխիթար Գօշի դատաստանագրքի յառաջաբանի մէջ և Գարագաշեան իւր «քննական պատմութեան» Ի. գրքում։ Առաջինը բերելով մի քանի կտորներ մեր եկեղեցական ժողովի կանոններից, ապա ի նկատի առնելով օտար եկեղեցիներում նոյն ժամանակներում՝ կարգերը, գալիս է այսպիսի եզրակացութեան «այսպէս ուրեմն՝ բոլոր վերոյբերեալ քաղուածքները հաստատում են, գոնեա իմ մէջ, դրեթէ անկասկածելի կերպով, այն համոզմունքը որ՝ արդարև դատաքննութիւնը և դատաստանը, գէթ քրէական յանցանքների, գտանում է հոգևոր իշխանութեան ձեռքին երկար ժամանակ՝ սկսած Ս. Գրիգոր լուսաւորչից մինչև Ռուբինեանց թագաւորութիւնը Կիլիկիայում։ . . . . . Իսկ ինչ վերաբերում է քաղաքացիական գործերի դատաքննութեան դատաստանին, զոր օրինակ՝ կալուածքները գնելուն և վաճառելուն . . . . . դոցա համար երևի թէ կամ առանձին աշխարհական դատարաններ կային, որք սկիզբն ստացան կամ բարեկարգութեան Վաղարշակ թագաւորի օրով . . . . . և կամ գաւառապետները, քաղաքապետները, գիւղական տանուտէրները և մանաւանդ նախարարները վա-

րում էին դատաւորական իրաւասութիւնը . . . » 76—77 երես։ Իսկ Գարագաշեան Ի. գրքի 18 երեսում ասում է, «Գիրքը և ժողովոյ կանոնք եղան ոչ միայն հիմն երկրին օրէնսգրութեան, այլ և նոյն իսկ օրէնսգրութիւնն։ Այս է պատճառ որ չունինք ի նախնեաց մնացած դատաստանագիրք։ . . . Առ քրիստոնէութեամբ, երկրին օրէնքն էր, ինչպէս երբեմն յԵրոպա՝ կանոնական իրաւունք (qroif canon) և կանոնագիրքն էր դատաստանագիրք։ Շատ հաւանական է, թէ տունք երիցանց էին դատարանք, և գերագոյն ատեան եպիսկոպոսարանի . . . . . Պօլսոյ հայ պատրիարքաց դատարանական իշխանութիւնը, ոչ քաղաքայինն միայն, այլ և պատժականն, որ տրուած նոցա իբրև առանձնաշնորհութիւն Օսմանեան կայսերաց կողմանէ՝ համարելի է ոչ այնչափ նոր արտօնութիւն, որչափ ի վաղուց վայելեալ իրաւանց ճանաչումն։ . . . . . Դատուել եկեղեցական օրինօք և քրիստոնեայ դատաւորէ՝ էր առ նախնիս մեր իբրև հաւատոյ մասն, մինչև սմին հակառակ որևիցէ կարգադրութեան համարուել «աղաւաղումն փառաց եկեղեցւոյ»։ Երկրորդիս կարծիքով քաղաքացիական և քրէական (պատժական) գատերը եկեղեցու ձեռքին էր։

Վահան վարդապետ Բաստամեանի բերած վաստերից գլխաւորն է՝ իւր առարկութիւնը ապացուցանելու, Տահապիվանի ժողովի 20-րդ կանոնի գրաբառը (տես Ա. Գ. 355 և 339—340 և Մխիթար գօշ-ի յառաջաբան 71 երես), որի մէջ ասւում է թէ, եթէ ժողովրդի մէջ մեկը «չարագործ» դուրս գայ, և քահանան լմանալ և նրանից տեղեկութիւն չտայ եպիսկոպոսին, ենթարկուի խիստ մարմնական պատժի, որպիսին դրւում է մեղնեայ աղանդաւորին։ Նա «չարագործ» բառը ընդունում է «իւր պարզ և սովորական իմաստով», որ վերաբերում է «առհասարակ չար գործերին, որոնց մէջ կարող են մտնել և զուտ քրէական յանցանքները», այդպէս ընդունելուց յետոյ, երբ տեսնում է որ «20 կանոնն» այդ գործը յանձնում է եպիսկոպոսական և կամուղիկոսական դատին, վճռում է, թէ ուրեմն քրէական գործերը

ենթարկուում էին եկեղեցական դատարանին, ահա Բաստամեանի գլխաւոր պատճառաբանութիւնը։ Դժբախտաբար այդ 20-րդ կանոնը այնքան պարզ է և այնքան որոշ թէ «չարագործ» ասելով ինչ պիտի հասկանալ, որ Բաստամեանի թէ նախագրեալը և թէ եզրակացութիւնը յոլորովին սխալ են և կանոնի մտքից հեռու։ Որովհետև Տահապիվանի 19 և 20 կանոնները բացառապէս խօսում են մեղանչութեան մասին, որ է անբարոյական՝ «պղծագործ» և «չարագործ» աղանդ, որի պատիժն նոյնպէս «չարագործական» է, կրթումն «ջիլերի» այն է սեռական գործարանի մասերից, պուէսագրում ճակատին. պատմագրները այս աղանդը անուանում են պղծագործ աղանդ, չարագործ աղանդ, որ նշանակում է թէ Բաստամեանի եզրակացութիւնը «չարագործ» բառի իմաստի վերաբերմամբ յոլորովին սխալ է. որ այդ գործողութիւնը վերաբերում է աղանդաւորական խնդրին և է՛ եկեղեցական հարց և ենթակայ եկեղեցական դատին։ Մինչև անգամ Բաստամեանի բերած 20 կանոնի վկայութիւնից երևում է, որ եկեղեցական խնդիրներում եթէ յանցաւոր էին գտնում նախարարները և թագաւորաշն անձինք, այն ժամանակ նրանք ենթարկուում էին ոչ լոկ եկեղեցական դատարանին, այլ խառն հոգևոր և աշխարհական դատարանին. կանոնն ասում է, դրանց «վերցնեն պղծագործ ընտանիքի հետ միասին և հրապարակ բերեն, գլխաւոր եպիսկոպոսի, մեծամեծ իշխանների եւ աւագ դատաւորների առաջ Աստուծոյ օրէնքի վրէժխնդիրը լինին։ Որպէս զի ուրիշները տեսնելով սրբութեամբ և երկիւղով պաշտեն Աբարչին, կատարեալ լինին աստուածպաշտութեան կարգի, սրբերի և օրէնքների յարգելուն մէջ և ճշմարիտ ծառաներ լինին Աստուծոյ՝ խօսքով և գործով»։ Վերոյիշեալից շատ պարզ երևում է որ «չարագործ» բառն վերաբերում է մրծունէութեան, որ եկեղեցական յանցանքը յանձնել են ոչ թէ լոկ հոգևոր դատարանին, այլ խառն. որ վերոյիշեալ 20 կանոնի հիմամբ կարելի է Բաստամեանի արած եզրակացութիւնից հանել հակառակ եզրակացութիւն, թէ քրէական

յանցանքները ենթարկուում էին աշխարհական դատարանին։ 20-րդ կանոնն նորից չեմ արտագրում ամբողջութեամբ այդ պարզ յուցնելու համար, հետաքրքրուողները թող կարդան իսկականը վերևում յոյց տուած գլքերում։ Բացի այդ փաստից Բաստամեանը բերում է մի քանի կցկտուր քաղուածներ Ներսէս ամն կաթուղիկոսի յատկացրուած կանոններից զանազան քրէական գոյն ունեցող յանցանքների պատիժների վերաբերմամբ, ցոյց տալու թէ քրէական յանցանքները ենթարկուում էին ոչ աշխարհական դատարանին, որովհետև, ասում է նա, այս յանցանքների պատիժները - ապաշխարանքներ են եկեղեցուց նշանակուած։ Այդ ամն Ներսէսի 42 կանոնն բոլորովին անվաւեր են և անհիմն, կցկտուր և միմեանց հակասական, (տես Ա. Գիրք 369 երես) նրանց վրայ վստահանալ և նրանց հիմամբ եզրակացութիւն անել, չի կարելի, և երկրորդ՝ մթէ ապաշխարանք նշանակելը եկեղեցու կողմից դիւցուք սպանութեան համար, ապացոյց կարող է լինել թէ սպանութեան խնդիրը ենթարկուել է հոգևոր դատարանին, չէ որ այսօր էլ հէնց պետական քրէական օրէնքը շատ յանցաւորներին պատիժ նշանակելուց յետոյ - ենթարկում է նրանց եկեղեցական ապաշխարանքի։

Բաստամեանի առարկութիւնը՝ թէ «նոյն իսկ ժողովրդի համար աւելի օգտակար էր և ձեռնտու որ՝ քրէական գործերի դատաստանը լինէր ոչ թէ մարմնաւոր, այլ հոգևոր իշխանութեան ձեռքին, որովհետև այդ իշխանութիւնը միշտ աւելի ներողամտաբար էր վերաբերուում և գործ էր ածում միշտ աւելի թեթև, միայն ուղղեցուցիչ պատիժներ — զանազան տեսակ ապաշխարանքներ» (69 երես)։ Այս դատողութիւնը աւելի քան միամիտ է, սպանողի համար ճշմարիտ է, շատ նպաստաւոր է հոգևոր դատարանին դիմելը, որովհետև միմիայն ապաշխարանք կրելով յանցանքից կազատուի, բայց սպանուողի կողմի համար ինչ օգուտ յանցաւորի խաղաղ ապաշխարանքը, որ մարդը կհամաձայնի իւր եղբօր սպանողին ազատ համարել պատժից, գոհ մնալով նրան եկեղեցական ապաշխարանք քաշելուց, հապա եթէ յանցաւորը պընդա-

գլուխ է և եկեղեցական ապաշխարանք կրելու ոչ հակամէտ, ինչ պիտի անի եկեղեցական դատարանը, ոչինչ, նա պիտի այն ժամանակ նզովքի ենթարկի այդպիսի անձին: Ի՞ այսպիսով աշխարհ կարելի է կառավարել, ի հարկէ ոչ:

Մենք մեր կանոններում ոչ մի տեղ չենք գտնում փաստ, որով կարելի լինէր ապացուցանել թէ աշխարհականները քրէական գործերի համար ենթարկւում էին հոգևոր դատարանին, բայց ունինք տեղեկութիւններ հակառակը ապացուցանելու, այսինքն որ աշխարհականները թէ քրէական թէ քաղաքացիական յանցանքների և մեծ քրէական յանցանքների համար ենթարկւել են աշխարհական դատարանին կամ խառն դատարանին: Սկզբից մինչև վերջ՝ հոգևորականութիւնը լինելով ժողովրդի ընտրութեամբ այդ դասակարգի մէջ մտած, և նրա նիւթական ապահովութիւնը սահմանափակուած լինելով ժողովրդի կամաւոր տուրքերով և հասոյթներով, նա, հոգևոր դասը եղել է միշտ կեանքի մէջ երկրորդ կարգում, խաղալիք և ստորադրուած իշխանների, հարուստների, բռնաւորների ձեռքին: Հոգևորականութեան ամենաուժեղ ժամանակ, լուսաւորչից մինչև Սահակ, զօրեղ հոգևորականները, եպիսկոպոս և կաթուղիկոս մեռել են թագաւորի և նրա մարդկանց ձեռքից, կամ փախել են անապատ: Ներսէս մեծի նման մարդը, որի արքունիք մտնելիս, Արշակ թագաւորը մտնում էր անկիւնում կուչ գալիս, անզօր գտնուեց մի քահանայի դէմ, որը հաղորդութեան մէջ թոյն խառնելով մարդ սպանեց թագուհու պատուէրով: Նոյն Արշակ երբ Արշակաւանը շինեց և հրամայեց որ բոլոր յանցաւորներով լցուի նոր քաղաքը՝ իրաւունք տալով նրանց պատիժներից ազատուել, երկիրը դարձրեց աւազականոց, անառականոց, հոգևոր իշխանութիւնը, որ իւր ամենաուժեղ ժամանակն էր, ոչինչ չկարողացաւ անել իւր խրատներով և քարոզներով, իսկ Արշակ միայն արհամարհում էր Ներսէսի և տեղակալ Խադի հանդիմանութիւնները. ահա Փաւստոս 91 երեսում ինչպէս է նկարագրում այդ վիճակը. «Շատ վնասներ էին տալիս (յանցաւորները) և այնտեղ էին փախչում (Արշակաւան), շատ տղամարդիկ իրանց կանանցն էին թողնում և այնտեղ ընկնում, շատ տղամարդիկ էլ իրանց կանանց արձակելով, ուրիշ կանայք առնելով այնտեղ էին վազում, շատ ծառաները իրանց տիրոջ գանձը գողանալով այնտեղ էին գիմում, . . . *ղատ չկար.* և արքունիքից ոչ մէկին իրաւունք չէր տրւում, . . . բոլորի ասելով՝ թէ իրաւունքը մեռաւ . . . »: Ներսէս յանդիմանում է Արշակին և խորհուրդ է տալիս ցրուել Արշակաւան և երկրի մէջ կարգ ձգել, ասելով որ քո մեղքերիդ համար բոլոր տշխարհով ապաշխարանքի կմտնենք: Արշակ ծիծաղում է, իսկ Ներսէս անճարացած դուրս գալիս: Եգնիկից ունինք դատ մասին մի քանի խօսք Ա. Գլ. ԺԵ. «Ինչու օրէնքը թագաւորները են դնում, և սաստերը իշխանները, և *պատիժները դատաւորները*, չէ որ մէմիայն չարիքների առաջն առնելու համար: Եթէ չարիքն ի բնէ է, այն ժամանակ ոչ օրէնսդիրը պիտի օրէնք դնի, և ոչ *իշխանը պատիժները նշանակի* . . . Տեսնում ենք որ թագաւորը իւր օրէնքի վրէժն է պահանջում, և վրէժի պահանջմամբ չարիքն է կարճում, և *դատաւորն էլ զողին եւ աւազակին է սրկում եւ քերում* (սրկէ եւ քերէ) վնասակար գործերն մէջ տեղից վերացնելու համար. և հայրը՝ դժնեայ որդուն մահուան դատապարտելով՝ դատաւորներին է մատնում, և ուրիշներն էլ իրանց անձնական վրէժները պահանջում են կամ անձամբ կամ իշխանների ձեռքով»: Եգնիկ Կողբացու վկայութիւնը շատ լուրջ է և տրամաբանօրէն, որից պարզ երևում է, որ գողերը և աւազակները յանձնւում են դատաւորների դատին և պատժին, որ այդ դատերը բոլորը իշխանական են, այսինքն է աշխարհական և ոչ եկեղեցական. մինչև իսկ Ե. դարում երբ հայրական իրաւասութիւնը պիտի անչափ լինէր որդու վրայ, բայց և այնպէս հայրը դատը ինքը չէ կատարում որդու վերաբերմամբ, այլ յանձնում է աշխարհական դատարանին: Ե-րդ դարում հայ իշխանները փոխանակ եկեղեցին պահպա-

նելու օտարների ոտնձգութիւններից, շատերը քահանաներին և եկեղեցիները հարկի տակ էին ձգում. Դուինի ժողովի 9-րդ կանոնը նզովքի է ենթարկում այդպիսի հալ իշխաններին. (Ա. Գ. 403 երես)։ Նոյն ժողովի 10-րդ կանոնից իմանում ենք, որ «ազնուականներից ոմանք վանքերի վրայ իշխանութիւն են բանեցնում, ում կամենում են վանական են նշանակում և արձակում։ Ոմանք էլ ընտանիքով նստում են վանքերում, արհամարելով Աստուծոյ եկեղեցին»։ (Ա. Գ. 405)։ Ը-րդ դարու կանոններում կարդում ենք «գիւղի աւագը (գիւղապետը) եթէ արքունի հարկերի համար բռնաւորին կդրսի եկեղեցու դռները փակել և ժամերգութիւնը խափանել, մինչև մահ նզովեալ լինի»։ Մի՛թէ այսպիսի պայմաններում կարելի է մտքովն անգամ անցկացնել թէ քրէական յանցաւոր աշխարհականները ենթարկւում էին հոգևոր դատարանին։ Թէ ինչ դրութեան մէջ էր հայոց եկեղեցին 12, 13, 17-րդ դարերում, այդ երևում է Շնորհալու կանոններից և նախորդ երեսներում Մելիքսէթ կաթուղիկոսի դէպքերի պատմելուց. վերջապէս թէ ինչ դրութեան մէջ էր այս դարուս սկզբին, թող հետաքրքրուողները կարդան Երիցեանի «ամենայն հայոց կաթուղիկոսութիւնը» ուր Ներսէսի կռիւները բռի և քմահաճ իշխանների հետ հասնում էր ծայրայեղ աստիճանի։ Երիցեանը 343 երեսում առաջ է բերում ռուս Զուբարևի պաշտօնական թուղթը Պետերբուրգ գրած մելիքների շահատակութիւններից. որ Նայիբ Մելիք Խուդադը ամեն մի պսակի համար պահանջում է 20 ոսկի, կամ կնոջ անվայել առաջարկութիւններ է անում, պսակի ժամանակ ներս է մտնում եկեղեցի, հայհոյում քահանային և շտապեցնում, ասելով որ հարսին պիտի տանի իր սենեակը։ Մի՛թէ այդ նոյն չէ, ինչ որ Դուինի ժողովի կանոնում կարդում ենք, ժողովական նզովք այն իշխանների վրայ թափած, որոնք անառակ կանանցով և գուսաններով կերթան վանք շաբաթներով լրբութիւններ կկատարեն։ Բաստամանը պընդում է որ մինչև Ռուբինեան թագաւորութեան անկումն

քրէական դատերը եկեղեցու ձեռքին էր, մի՛թէ այսպիսի պատմական դէպքեր ունենալուց յետոյ կարելի է այդ պընդել, իհարկէ ոչ։ Առաջնորդները, քահանաները մի մի գերի են եղել բռի, կոպիտ ոչ միայն իշխաններին, այլ հասարակ պնդագլուխ անձանց ձեռքին, բաւական է որ քահանան, եպիսկոպոսը իշխանի «խաթրը» կոտրեցին, չհասը չպատկեցին, կամ երկրորդ կին բերելու իրաւունք չտուին, պրծաւ, մի՛թէ նրանք այլևս կկարողանան եպիսկոպոսութիւն կամ քահանայութիւն անել։ Գարագաշեան ճիշտ է ասում, թէ «Ամուսնութեան և եկեղեցական կարգաց պահպանութեան խնդիրները ոչ միայն դատել, այլ և անոնց եղծումը զսպել խիստ միջոցներով էր թոյլ տուած, մանաւանդ թէ ճանչցուած կառավարութենէ։ Անրով Պատրիարքարան տարուել, նաև գանըմպել կամ բանտարկել ստահակելոց և հեստելոց ընդդէմ պատուիրանաց եկեղեցւոյ, ինչպէս պահոց, չէր անսովոր իրը կէս դար կամ աւելի առաջ»։

Դեռ այդ ձևը աւելի մեղմն է համարելի քան այն եղանակը, որ բանացնում էին Ղարաբաղի միտրոպոլիտները յանցաւոր քահանայից դէմ. բանտարկել, մօրուսը փետտել, ծեծել, քաղցած թողնել ընդհանուր օրէնք էր նոցա համար. կինը եթէ կգար մարգուց գանգատուէը, կամ ընդհակառակն, առաջնորդը կամ գործակալը կծեծէին երկու կողմն այնքան, որ կտիպէին հաշտուել։ Ներսէս Ե-ի ժամանակ Դաւրէժի Նիկողայոս առաջնորդը մի քանի անառակ կանանց նստացնում է մրած երեսով էշերի վրայ երեսները դէպի պոչը և շրջեցնել տալիս Դաւրէժի փողոցներում։ Այս բոլորը ճիշտ են, մինչև իսկ մինչև այսօր պատահում են, բայց դրանք օրէնք չեն, դրանք դատաստան չեն, հապա քմահաճոյք և կոպիտ բռնութիւն. մի ծայրայեղութիւնից միւս ծայրայեղութիւն ընկնել։ Առաջնորդը վախից ամեն տեսակ զեղծումներ կանէր, խանի, իշխանի գրպանը լցնելու համար, իսկ երբ առաջին կտեսնէր անգօր գիւղացի, կամ խղճուկ քահանայ, մօրուսը կփետտէր. սա օրէնք չէ, ի՛ հարկէ. սա կամայականութեան ծայրայեղ աստիճանն է,

և գոյութիւն ունի այնտեղ, որտեղ օրէնքի վրայ գաղափար չկայ և օրէնքի հետք չի մնացել: Մատթէոս կաթուղիկոսի օրով Աստրախանի քահանաները յայտարարութիւն են տալիս կաթուղիկոսին, թէ պռոնիկների տունը չյաճախելը ըստ կոնդակի մեծ յուզումներ է առաջացնում, պռոնիկ համարուած կանայք բռնում են քահանայի օձիքից և պահանջում նրանից թէ ինչ իրաւունքով իրան պռոնիկ են համարում և կոնդակի հիման վրայ տունը չեն օրհնում, և դատի են ենթարկում իրանց անուանարկող քահանային: Այս կարգադրութիւնը հին էր, կանոնական սահմանով պռոնիկներից հարկ էր առնում իբրև տուգանք և վճարւում էր ազքատանոցներին, (տես Ա. Գ. 393 երես): Այստեղից պարզ երևում է, թէ կամայական կարգադրութիւնները առաջնորդող անձանց կողմից եղել են միակ միջոցը, որի ուժով ըստ քմահաճոյից. նայելով հանգամանքներին կառավարել են թէ եկեղեցին թէ ժողովուրդը՝ միմիայն եկեղեցական գոյն ունեցող խնդիրների նկատմամբ. որպիսի գրութիւնը ոչ միայն չէր կարող ոյժ տալ եկեղեցուն, որ սա իւր գատաստանին ենթարկի ոչ եկեղեցական գործերը և խնդիրները, այլ ընդհակառակն բոլորովին քայքայման էր հասցնում եկեղեցական վարչական կազմութիւնը և սրան ենթարկում աշխարհական դատարանին և աշխարհական կառավարութեան նոյն իսկ եկեղեցական խնդիրների վերաբերմամբ:

Գալով այն հարցին, թէ ինչպէս է այժմ մեր և Տաճկահայոց մէջ դատավարութիւնը և դատակազմութիւնը, այդ կտեսնենք Գ. գրքում:—

Հայոց եկեղեցու դատավարութիւնը սկզբից մինչև վերջ եղել է անդրադարձութիւն մարմնաւոր իշխանութեան դատավարութեան, Արշակունեաց, Բագրատունեաց և Ռուբինեանց շրջաններում թէ եկեղեցական թէ աշխարհական կեանքում տիրապետող ոյժը դատավարութեան մէջ եղել է, բռնութիւնը, կաշառք. մահմեդական տիրապետութեան օրով շարունակուել է նոյն դատական ձևը, աւելի ամրացել է շարիաթի պահանջներով և խաների անզուսպ կրքերի ը-

պէական հրոյթներով, որոնցով հայոց եկեղեցին ոչ միայն դատական՝ այլ և վարչական կողմից դարձել էր խաղալիք և խանական գրպանը լցնելու միջոց: Մինչև ռուսական տիրապետութիւնը հոգևորականների թէ անձնական վիրաւորանքների և թէ եկեղեցական այլ խնդիրների դատավարութիւնը կեդրոնացած էր առաջնորդների ձեռքում, որոնք ծեծով, բանտարկութեամբ և կաշառքով վճռում էին ամեն տեսակ վէճեր և պահները լուծում կամ իշխանների մասնակցութեամբ կամ նրանց ուղղակի ցուցմամբ. դեռ ևս Շնորհալին հեռու Կիլիկիայից խիստ խօսքերով յանդիմանում և արգելում էր առաջնորդներին վարուել եկեղեցու օրէնքների հակառակ:

Եկեղեցին միշտ վարուել է այդ խնդիրներում այնպէս, ինչպէս որ վարուել է մարմնաւոր իշխանութիւնը և հէնց ինքը ժողովուրդը, որոնց գործնական կեանքը ամփոփւում էր «եօլա» գնալու, մի կերպ կառավարուելու մէջ: Այսպէս լինելուց յետոյ շատ դժուար կլինի արձանագրողի համար հետևողական կերպով որոշել թէ հայոց եկեղեցու դատաստանը և դատավարութիւնը գործնականութեան մէջ, եկեղեցու կեանքի ընթացքում ինչպէս էր կառուցւում, ինչ եղանակով էր գործադրւում կանոնական սահմանադրութիւնը, ինչ հիմունքներով քննւում և վճռւում խնդիրները. մեզ մնում է սփոփուել նրանով, որ այժմեայ մեր եկեղեցական գործնականութիւնը ունի բոլոր հիմունքները վարելու եկեղեցական դատ և դատական եղանակը այն լայն՝ արդար՝ անկաշառ սկզբունքով, որը թելադրում է աւետարանը և մեր ժողովրդական եկեղեցու ոգին:

Ե. ՊՍԿԻ ՄԱՍԻՆ

(Վ. վ. Բաստամեան—«Փորձ» 1880 և 1881, Обзоръ постановленій о бракѣ въ пр. цер. Пр. Соб. 1858, 1859 «50 глава Корш. книги какъ практическій и историческій источникъ рус. бр. пр. А. Павлова.

Պսակը եկեղեցու խորհրդներից մեկն է, որ կատարւում է քահանայի օրհնութեամբ և եկեղեցու սրբագործմամբ, որի միջոցով երկու ամուսիններ օրինաւոր կերպով կապուելով միմեանց հետ, մտնում են որոշ իրաւունքների և սահմանների մէջ։ Այդ երկու անձինք միանում են միմեանց հետ իբրև մի մարմին և գաղափարական կերպով պատկերացնում են Քրիստոսի միանալը իւր եկեղեցու հետ։ Պօղոս առաքեալը Եփեսացոց թղթում գրում է, «Չի ոչ ոք երբէք ատեաց զանձն իւր, այլ սնուցանէ և դարմանէ զնա, որպէս և Քրիստոս զեկեղեցի. Չի անդամք եմք մարմնոյ նորա, և ի մարմնոյ նորա և յոսկերաց նորա։ Վասն այսորիկ թողցէ այր զհայր իւր և զմայր իւր, և երթիցէ զհետ կնոջ իւրոյ, և եղիցին երկոքին ի մարմին մի։ Խորհուրդս այս մեծ է, բայց ես ասեմ ի Քրիստոս և յեկեղեցի։ Այլ և դուք նոյնպէս մի ըստ միոջէ, զի իւրաքանչիւր ոք զիւր կին այնպէս սիրեսցէ իբրև զիւր անձն, և կին երկնչիցէ յառնէ իւրմէ» (Գլ. Ե.)։

Այդ խորհրդի նշանակութիւնը և ազդեցութիւնը այնքան մեծ է համարում Պօղոս առաքեալը, որ իրաւունք է տալիս քրիստոնեայ ամուսնուն պսակուել, կամ իբրև ամուսիններ տալել հեթանոս անձի հետ, ենթադրելով որ այդ խորհուրդը իւր շնորհքով հեթանոս ամուսնուն քրիստոնեայ կդարձնի, կամ թէ չդարձնի էլ, նրա գօրութեամբ անհատը սրբացած կլինի (Ա. Կորն. Է. 14)։ Առաքեալների աշակերտ ս. Իգնատիոսը (Անտիոքացին) + 115 թ.) քրիստոնեաներին տալիս է այսպիսի խրատ. «պսակուղներին հարկաւոր է ամուսնանալ եպիսկոպոսի գիտութեամբ, որպէս զի պսակը լինի Տէրոջով և ոչ ըստ ցանկութեամբ»։ Առաքեալ-

ների յաջորդների ցանկութիւնն էր պսակների նշանակութիւնը, ազդեցութիւնը ուժեղացնել անհատականութեան և ամուսնալուծութեան դէմ կռուելու համար. հաւատացեալներից շատերը ըստ հին սովորութեան շարունակում էին ամուսնանալ առանց եկեղեցու գիտութեան և օրհնութեան։ Գ. դարու հայերից մեկը Տերտուղղիանոս մի քահանայի ասում է, «Մեր մէջ ծածուկ պսակները վտանգի են ենթարկւում դատուելու շնութեան և անհատականութեան հետ հաւասար»։ Սրա վկայութեամբ պսակը կատարւում էր այսպէս, ընդհանուր ժամերգութեան ժամանակ, երբ պատարագ անում վերջացնում էին, հաղորդւում էին բոլորը, ի միջի նոցա և պսակուղները և բոլորի ներկայութեամբ հանդիսաւոր կերպով ընդունում էին քահանայի օրհնութիւնը և համարւում էին ամուսնութեան մէջ մտած։ Բայց ընդհանուր սովորութիւն էր դարձած կանչել քահանային տուն և պսակը օրհնել տալ ձեռքը ձեռքի հետ միացնելով ի նշան ամուսնական կապի։ Ի հարկէ քահանան պիտի ուշ դարձնէր որ չհաստական արգելք չլինէր, որը այն ժամանակ կայանում էր դեռ և մովսիսական ամուսնական կանոնների պահպանման մէջ և երբ այդպիսի արգելք տեսնէր, պիտի չօրհնէր։ Մովսէսի օրէնքներով չհաստութիւնը սահմանափակւում է երեք աստիճանի մէջ, չորրորդ աստիճանը կարող է պսակուել։ Պօղոս 38 թուի մասնաւոր ժողովում Ալէքսանդրիայի արքեպիսկոպոս Տեմոթէոսին հարցնում են. «Եթէ կղերից մեկը կանչուի մեկի տուն պսակը օրհնելու համար և այնտեղից լսի որ անկանոն է, կամ չհաս է, պիտի՞ նա պսակը կատարի թէ ոչ»։ Նա պատասխանեց, ի հարկէ չպիտի օրհնի պսակը, պիտի թողնի դուրս գայ։ Նոյնը հաստատում է և Ոսկեբերանը, որը խօսելով ապուհասի ներքութեամբ արած պսակների վրայ, իրատում է որ պսակը և հարսանիքը հանդարտութեամբ կատարեն, «որ առաջուց քահանաներին կանչեն և նրանց ազօթքով և օրհնութեամբ հաստատեն ամուսնական համաձայնութիւնը»։ Եկեղեցական հայերի ջանքերը պսակը անշուշտ միայն եկեղե-

ցական օրհնութեամբ կատարելու դլուխ եկաւ իններորդ դարուն, կայսերական հրամանի ուժով, մինչև 9-րդ դար եկեղեցական պսակի հետ ընդունւում էր և քաղաքացիական պսակը։ 893-ին Լևոն իմաստասէր կայսրի 89 նովելլայով հրամայուեց ընդունելի համարել այն ամուսնութիւնները, որոնք եղել են եկեղեցական օրհնութեամբ և պսակով։ Իսկ սորուկները իրաւունք չունէին պսակուել, այդ կանոնն վերացաւ միայն 1095 թուին Ալէքսէյ Կոմնենոս կայսեր ժամանակ, որը հրամայեց եկեղեցական պսակով թոյլ տալ նրանց ամուսնանալ։ Մինչև այս թուականները կային պսակներ, որոնք եկեղեցական չէին, բայց ընդունւում էին իբրև օրինական — քաղաքացիական պսակի մտքով, ինչպէս էր օրինակ և հեթանոսների պսակը, եթէ մարդ ու կին միասին քրիստոնեայ էին դառնում, նրանց նորից չէին պսակում, կամ եթէ ամբողջ ընտանիքը քրիստոնեայ էր դառնում, նրանց ընտանեկան կապը համարւում էր օրինական և նորից չէր ենթարկւում օրհնութեան ըստ Պօղոս առաքեալի պատուէրի։ Այս մտքով էլ մի քանի գրողներ մինչև իններորդ դար, կեղծ — Դիոնէսիոս Արիսպագացին, Յովհան Դամասկացին, Թէոդորոս Ստուդիտը պսակը միւս խորհուրդների հետ չէին դնում։ Պսակի օրհնութեամբ չէին ամուսնանում նոյնպէս երկակները (երկրորդ անգամ պսակուողները), որոնց օրհնութիւնը լինում էր ուռենիով կամ խաչն ու պսակը ուսերի վրայ դնելով։

Հայոց մէջ Դ — դարուց սրդէն վկայութիւն ունինք որ եկեղեցական պսակը ընդհանրացած և օրէնքի ոյժ ստացած էր. Փաւստոս խօսելով Ներսէս մեծի արած կարգադրութիւնների և ի միջի այլոց պսակների վրայ, ասում է «ոչ ոք չէր համարձակւում Նրա (ահից) հանել կամ թողնել իւր կինը բոլոր հայոց աշխարհում, որին (կնոջ) միանգամ քօղով կամ հարսանիքի պսակի օրհնութեամբ առել էր, և ոչ էլ համարձակուել պսակուել ուրիշի հետ». բայց երբ Արշակ թագաւորը Արշակաւանի պատճառով այդ կարգերը վերացրեց, այն ժամանակ մարդիկ, «թողնում էին, իրանց կանանց. մարդ կար, որ տասն կնիկ էր առնում, բոլորը փչացնելով ապականութեան». 18ս երես։ Ե. դարում Շահապիվանի ժողովի կանոններին նայելով, սրդէն խիստ կարգ կանոն էր սահմանուած ոչ միայն պսակի մասին, այլ և պսակից առաջ յարաբերութիւն չունենալու վերաբերմամբ, տուգանադրամով, ծեծով պատժւում էր պսակից առաջ յարաբերութիւն ունեցողը և ենթարկւում էր ոչ կոյսերի պսակին, այլ երկակների (երկրորդ անգամ պսակուողների)։ Ա. Գ. 331 երես)։ Իսկ չհաս պսակ անող եպիսկոպոսը նոյն կանոններով մինչև անգամ ենթարկւում էր կարգալուծութեան և տուգանադրամոյ (Ա. Գ. 334)։

Բ) ԵՐԿՐԱԿՆԵՐԻ ՊՍԱԿ (ԵՐԿՐՈՐԴ ԸՆԴՈՒՆ ՊՍԱԿ)

Երկրորդ պսակի համար Պօղոս առաքեալը ասում է, «որովհետև ես կամենում եմ որ իւրաքանչիւր մարդ ինձ նման լինէր (ամուրի) . . . . . ամուրիներին և այրիներին ասում եմ, լաւ կլինի, որ նրանք ինձ նման կենան. եթէ չամբերութիւն չունենան, թող պսակուեն, որովհետև աւելի լաւ է ամուսնանալ քան թէ ջեռնուլ» Ա. Կորն. է. գլ.։ Նոյն առաքեալը Հռոմայեցոց թղթում գրում է «Քանի որ կնոջ մարդը կենդանի է, նա օրէնքով կապուած է, իսկ եթէ մարդը մեռնի, նա ազատ է . . . . . » Է. գլ.։ Առաքեալը թոյլ է տալիս երկրորդ պսակը, բայց ողջախոհութեան կանոններին համապատասխան է համարում երկրորդ անգամ չպսակուելը քան ամուսնանալը։ Այդ հիմամբ էլ պահանջում է որ եպիսկոպոս թէ քահանայ մի անգամ պսակուած լինին (Ա. Տիմ. Գ., — Տիտ. Ա.), արգելելով երկակներին մտնել հոգևորականութեան մէջ։ Այդ հիմամբ Ա. — Ա. 17 կանոնը որոշեց գրականապէս. «Ով մկրտութիւնից յետոյ երկու անգամ պսակով կապուած լինի, կամ հարճ ունենայ, նա չի կարող եպիսկոպոս, երէց, սարկաւագ և քահանայական կարգի անգամ լինել», Ա. Գ. 93.։ Արտաքին տերական ժողովները քահանաներին արգելեցին ներկայ լինել երկապսակների հարսանիքին, (Ա. Գ. 198), իսկ միւս

կանոնն նրանց ենթարկում է ապաշխարանքի (Ա. Գ. 217)։ Մինչև 9-րդ դարը երկապսակների ամուսնությունը լինում էր կամ եկեղեցու օրհնությամբ կամ առանց օրհնության, քաղաքացիական կարգով, 9-րդ դարու կայսերական հրամանից յետոյ եղաւ վերջնականապէս եկեղեցու օրհնությամբ։ Երկրորդ պսակը իսկապէս համարւում էր օրհնանք, այն էլ ուռի ճառի ոսկի օրհնությամբ իսկական պսակից զանազանելու համար։ Յունա—հռոմէական օհէնքները թոյլատրում էին երկրորդ պսակը առաջինից գոնէ մի տարի յետոյ և կալուածական մի քանի սահմանափակումներով։ Մեր շահապիվանի 7-րդ կանոնը ասում է, եթէ պսակից առաջ՝ աղջիկը ու տղան յարաբերութիւն կունենան, «այն ժամանակ նրանց պսակը օրհնեն իբրև երկակի՝ ուռը խաչակնքեն և գլխին դնեն, իսկ եթէ կոյս են մնացել, օրինաւոր պսակ անեն». Ա. Գ. 331 երես։ Նոյնպէս և նոյն ժողովի 3-րդ կանոնը հրամայում է որ մեղանչած կոյսի պսակը պիտի լինի երկակի պսակ և ոչ օրինաւոր, «միայն խաչակնքելով». Ա. Գ. 326։ «իսկ եթէ մէկը կուսան է, միւսը պոռնկութիւն արած, կուսանի պսակը օրհնուի օրինաւոր կերպով, իսկ միւսինը իբրև երկակի, այսինքն խաչակնքել ուռը և դնել գլխին իբրև նշան ճշնամու յաղթութեան»։ Դուբնի ժողովի կանոններում աւելի մեղմացած են այդ կանոնները. «Զպէտք է կոյսերին այրիների հետ և ոչ այրիներին կոյսերի հետ ամուսնացնել, որովհետև համեմատ չեն» Ա. Գ. 384։ Յետին դարերում երկրորդ պսակը սկսուեց օրհնուել առաջին պսակի նման և ապաշխարանքի ենթարկելը վերացաւ։ Տես Ա. Գ. 415 երես, 16-րդ կանոն.

Բ) ԵՐԿՐՈՐԴ ՊՍԱԿ (ԵՐԿՄԻՍՆՈՒԹԻՒՆ).

Բարսեղ Կեսարացին ասում է. «Ամուսնութեան համար օրէնք չկայ, ամուսնութիւնը օրէնքով չի թոյլատրւում։ Այդպիսի գործողութեան վրայ նայում ենք ինչպէս անմաքրութեան վրայ եկեղեցու մէջ, բայց հասարակական դատապարտութեան չենք ենթարկում» Ա. Գ. 244։ 4-րդ

կանոնով նոյն անձը եռապսակներին ենթարկում է 5 տարուայ ապաշխարանքի, համարելով երրորդ և չորրորդ պսակները բազմակնութիւն կամ անառակութիւն. «Եւ այսպիսի ամուսնական կապը համարում են ոչ պսակ, այլ բազմակնութիւն կամ անառակութիւն։ . . . . .

Մենք հետևելով ոչ կանոնին, այլ մեր նախորդների օրինակին, եռապսակներին 5 տարուայ ապաշխարանքի ենք ենթարկում» Ա. Գ. 238 երես։ Ութերորդ դարու մեր ժողովի 13-րդ կանոնը ասում է շատ խիստ կերպով. «Եռակնների ամուսնութիւնը խառնակութիւն և պղծագործ շնութիւն, անքաւելի յանցանք է, դրանք եթէ կամենում են մեղքերը քաւել, նախ՝ թող բաժանուեն միմեանցից և ապաշխարեն, իսկ նրանց միացնող քահանան թող կարգալոյծ լինի և նզովուի «Ա. Գ. 431։ Կանոններս իւրեանց խստութեամբ չդարձադրուեցին, կեանքը ստիպեց նրանց կազմողներին հաշտուել իրականութեան հետ։

Գ) ՉՈՐՐՈՐԴ ՊՍԱԿ (ՔՐԻՍՄՈՆՈՒԹԻՒՆ)

Բարսեղ Կեսարացին ասում է. «Հայրերը լռել են, բազմամուսնութեան մասին ոչինչ չեն ասել իբրև անառնական և մարդկային ցեղին չվերաբերող գործ. այս յանցանքը անառակութիւնից ծանր եմ համարում, դրա համար այդպիսի մարդուն պիտի ապաշխարել տալ այսպէս մի տարի լացողների, 3 տարի ներսի ունկնդիրների հետ և ապա ընդունել եկեղեցի հաւատացեալների հետ»։ Ա. Գ. 248։

Նէոկեսարիայի կանոնը ասում է. «բազմամուսնութեան մէջ ընկնող մարդկանց ապաշխարութեան ժամանակը յայտնի է. բայց և այնպէս նրանց հաւատը և զղջումը կարճացնում են ժամանակը» Ա. Գ. 197։ Այս կանոնները իրանց խստութեան հետ միասին չեն լուծում պսակը, հապա միայն ապաշխարանք են նշանակում։ Յունաինեանոսը վճռապէս չէ պահանջում այդպիսի պսակների լուծումն. բայց Վասիլ Մակեդոնացին խստութեամբ արգելեց, լուծել տուեց պսակները և որդիներին չընդունեց իբրև օրինաւոր ժա-

ռանդ, նաև պատժի ենթարկեց իրրև անառակութեան մէջ բռնուածներ։ Ծ—դարուց յունաց մէջ արգելուեց չորրորդ պսակը։ Ներսէս Ե. Հրաման տուեց Կոստորիաներին թոյլ տալ չորրորդ և հինգերորդ պսակները նախօրէն իմանալով պսակուողի ծայրայեղ դրութիւնը և անճար վիճակը, տես Ա. Գ. 613 երես։

ՊՍԱԿԻ ԿԱՑԱՐՈՒԻՆ

Պսակը երկու գործողութիւնից է բաղկացած, նշանադրութիւնից և պսակուելուց.

Ա) ՆՇԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ.

Նշանադրութիւն ասելով հասկացւում է պսակուելուց առաջ երկու կողմի համաձայնութեամբ կայացրած վճիռը, որով յայտարարւում է մի որև է աղջիկ նշանած մի տղայի։ Այս սովորութիւնը շատ հին է, նախաքրիստոնէական նոյնիսկ։ Ծողովրդական սովորութեամբ դեռ օրօրոցում եղած մի[ջ]ոցին, ծնողները խօսք էին տալիս խնամի դառնալու, մինչև իսկ «օրօրոց էին խաղում» ի նշան այդ խօսքի. փոքրերները մեծանալուց յետոյ հարսանիքից առաջ նշանը օրհնում էին և երկրորդ անգամ, եկեղեցու միջամտութեամբ հարսնացուի և փեսացուի ապագայի ամուսնական շաղկապը ամրապնդում։ Կամ պսակից փոքր ժամանակ առաջ, երբ տղայ ու աղջիկ հարսնախօսների միջոցով կամ ուղղակի խնամիների համաձայնութեամբ նշանդրէքի օր էին նշանակում, բերում էին մատանի կամ օղակ տղայի տունը, քահանան կարդում էր սահմանած օրհնութիւնը և նշանադրութիւնը համարւում էր կայացած։ Օրհնութեամբ եղած նշանադրութիւնից յետոյ լինում են դէպքեր նշանը յետ տալու, երբ որև է թիւրիմացութիւն է տեղի ունենում երկու կողմի մէջ, այդ դէպքում դժուարութիւններ են առաջանում թէ ծախքերի վերաբերմամբ թէ քահանայի կողմից նշանի օրհնութիւնը դժուարութեամբ քանդելու նկատմամբ։ Անկիւրեայի ժողովի 11-րդ կանոնը սահմանում է, որ եթէ

նշանուած աղջիկը առևանկւում է, և մինչև իսկ լկւում, էլի պիտի գնայ նախկին նշանածին. Ա. Գ. 187). կանոնս շատ խիստ է, դժուար գործադրուող։ Բարսեղի 22 կանոնը (Ա. Գ. 241) աւելի ազատ է սահման որոշում, իրաւունքը յանձնելով փախցրուած աղջկան և ծնողներին Լևոն իմաստասէրի օրէնքով (74 նովել.) եկեղեցական նշանադրութիւնը կարելի էր կատարել ոչ վաղ քան թէ եկեղեցական չափահասութեան հասնելը այն է՝ տղայի համար 13 և 15 տարի, աղջկայ համար 9 տարի։ Նոյնը հաստատեց Ալէքսի Կոմնենոս կայսրը 1054 թ. բացատրելով որ եկեղեցական նշանադրութիւնը որ աղօթքով և օրհնութեամբ է եղած, պէտք է ընդունուի հաւատարմօր պսակին և անքակտելի։ Իսկ փոքրահասակ ժամանակ եղած նշանադրութիւնը ընդունել իրրև քաղաքացիական խոստում պսակուելու, որի խախտումը կախուած չէ եկեղեցական որև է արարողութեան հետ, կսելով որ եկեղեցական օրհնութեամբ նշանադրութիւնը քակտել կարելի է այն կարգով, ինչ կարգով որ պսակն է լուծւում։ Յունաց եկեղեցին հետևելով կայսերական կարգադրութեան, համարեա նոյնութեամբ ընդունեց նշանադրութեան համազօրութիւնը պսակի հետ, մինչև իսկ նշանուած անձի չետ դառնալը և ուրիշի հետ ամուսնանալը համարել երկրորդ պսակ։ Պետրոս մեծը յունական օրէնքները նշանադրութեան վերաբերմամբ փոփոխեց, նշանակելով 6 շաբաթ ժամանակ պսակից առաջ և ազատութիւն տալով նրանց պսակուելու կամ ոչ։

Մեր կանոններում որոշ հրահանգներ չկան այդ մասին, Ս. Սահակ պատուիրում է նշան դնել նշանուածների հաւանութեամբ և համաձայնութեամբ. Գէորգ—Գ. աւելի խստացրեց այդ կանոնները. պատուիրելով նշանադրութիւնը քանդելու համար դիմել առաջնորդին կամ յաջորդին և նուէր ստանալուց յետոյ յօդուտ բարեգործական հաստատութեան իրաւունք տալ քանդելու (Ա. Գ. 637)։ Բայց ընդհանրապէս տիրապետող սովորութիւն է, եթէ երկու կողմից հաշտուել են ծախքի համար և գանգատները չեն ներ-

կայացնում, նշանագրութիւնը խախտուած է համարւում առանց հոգևոր իշխանութեան մասնակցութեան։

ե) ՊՍԿՈՎԻՈՒԹԻՆ (Церк. пр. Суворова)

Պսակադրութիւնը կատարում է քահանան եկեղեցու մէջ այն ժամանակ, երբ չի գտնում որևէ մի արգելք այդ խորհուրդը կատարելու եկեղեցու կանոնների համաձայն։ Պսակը իրաւունք ունի կատարելու քահանան. ա. եթէ հարսն ու փեսան փոխադարձաբար հաւանում են միմեանց և սիրում, և երկուսն էլ բոլորի՝ քահանայի ներկայութեամբ այդ բանը հաստատում են. բ. եթէ երկուսի ծնողները նոյնպէս ընդունում են և նրանց կամքի հակառակ չէ. գ. եթէ երկուսի տարիքն էլ հասած է և երկուսն էլ չափահաս են եկեղեցական կանոնների հիման վրայ. դ. եթէ պսակի կատարման մէջ որևէ կողմից ըննութիւն, խարէութիւն չկայ։ ե. Եթէ երկուսից մէկն կապուած չէ երրորդի հետ պսակով, ուրիշ խօսքով՝ պսակուողներից մէկի ամուսինը կենդանի չէ և պսակը լուծուած չէ. զ. եթէ պսակուողները կուսակրօն և փեսան քահանայ և սարկաւագ չէ։ է. Եթէ պսակը կատարւում է թոյլատրուած օրերում. ը. դաւանական կամ կրօնական արգելք եթէ չկայ։ թ. Եթէ չկայ ազգակցական, խնամիական և կնքահայրական չհաւատութիւն ա. բ. պսակուող անձանց և ծնողների փոխադարձ համաձայնութիւնը անհրաժեշտ պայմանն է պսակադրութեան. Բասեղի 38 կանոնով (Ս. Գ. 243) առանց հօր կամքի մարդի գնացած աղջիկը պոռնկութիւն արած է համարւում. եթէ հօր հետ հաշտուի, երեք տարի պիտի ապաշխարի, որ հաղորդուելու իրաւունք ստանայ։ Շահապիվոնի 7-րդ կանոնը ասում է եթէ քահանան առանց ծնողների կամքի զաւակի պսակ արաւ, զրկուի քահանայութիւնից և տուգանուի (Ս. Գ. 331)։ Ծնողների և պսակուողների փոխադարձ համաձայնութեան մասին ասւում են Ս. Սահակի և Շնորհալու կանոնները, «ոչ ոք չհամարձակի տղայի և աղջկայ կամքի հակառակ պսակ անել, այդպիսի

պսակը անհաստատ է և լուծանելի. և պսակադիրը՝ եթէ ըննութիւնից մինչև անդամ ստիպուած արած լինի պսակը, էլի կպատժուի։ (Ս. Գ. 579)։ Բարսեղը աւելի խիստ որոշում է տալիս ակամայ պսակի վերաբերմամբ. «ակամայ պսակը առատակութիւն է» (244 Ս. Գ)։ Յունա—հռոմէական կանոններով 1) հայրը կարողը ստիպել որդուն պսակուել, եթէ վերջինս անառակ կեանք էր վարում. 2) աղջիկը կարող է հակառակել հօր կամքին, եթէ նրան անբարոյական տղայի էին կամենում տալ. 3) եթէ ծնողները առանց յարգելի պատճառի չէին կամենում ամուսնացնել իրանց որդոց, սրանք կարող էին դիմել քաղաքացիական իշխանութեան միջնորդութեան։ Սարսկները առանց տերջ ցուցման իրաւունք չունէին նշանած ընտրել։ Զինուորականները առանց իրանց մեծի իրաւունքի չէին կարող պսակուել։ գ. Պսակուողները պիտի լինին չափահաս. նախորդ դարերի եկեղեցական կանոններում ասում է ընդհանուր բան, որ հարսն ու փեսան լինեն չափահաս, բայց որ տարիքն է համարւում չափահաս, անորոշ էր, մինչև Յուստինիանոս կայսեր հրամանը, որով որոշուեց չափահաս համարել 14 տարեկան տղային և 12 տարեկան աղջկան. Լևոն Իսաւրացին որոշեց 15 տարի տղայի և 13 տարի աղջկայ համար։ Նոյն կանոնները մտան և Ռուսաց եկեղեցու մէջ. նոյն կանոններով օգտուեցին և հայոց հայրապետները։ Ներսէս Շնորհալին սահմանեց տղայի համար 15 և աղջկայ համար 12. «Անմեղ տղաներին ժառանգութեան և կամ այլ պատճառով չպիտի պսակել, այլ հասակն առածներին, եթէ տղան 15-ը լրացած և աղջիկը 12-ը լրացրած կամ էլ աւելի հասակում, որպէս զի գիտակցարար լինի նրանց ամուսնութիւնը և ոչ անգիտութեամբ» Ս. Գ. 578 երես։ Սւելի հին կանոն ունենք, այն է Ս. Սահակինը, որ ասում է. «Դուք էլ քահանաներ, անչափահասներին մի պսակէք մինչև չհասնեն, միմեանց չհաւանեն, քննեցէք տեսէք նշանածները միմեանց ընդունում են, եթէ ծնողների բռնադատութեամբ է, մի պսակէք» (Ս. Գ. 579 երես)։ Զ. դարի Դուինի ժողովի կանոնն ասում է, «տղայոց պսակը չհամարձակուեն օրհնել և

ոչ էլ չափահասներինը առանց միմեանց տեսնելու . . . . . այսպիսի պսակը կորուստ է ժողովրդի համար» Ա. Գ. 383։ Ներսէս Ե. սահմանեց տղայոց համար 16 տարեկանը, աղջկանց համար 13-ը լրացած։ Սսի 13-րդ դարու ժողովի 7-րդ կանոնը Շնորհալու սահմանածը աւելի մեղմացրեց «փեսան ոչ պակաս քան տասնեւչորս տարեկանը և հարսն քան տասներկուսը» (Ա. Գ. 453)։ Ուսւոց պետական օրէնքը կովկասցիների համար որոշեց տղայի համար 15 և աիջկայ համար 13-ը լրացած։

դ. Պսակը պիտի կատարուի առանց բռնութեան և խաբէութեան։ Բռնի պսակը կարող է լինել ծնողների, բարեկամների և խնամակալների կողմից զանազան պատճառներով, կարող է լինել փեսայի կողմից, կարող է լինել առևանկութեամբ, երբ աղջկայ կամքի հակառակ կամ նրա կամքով է լինում։ Խաբէութեամբ պսակ լինում է, երբ փեսան աղջիկը չեն լինում այն անձինք, որոնք պիտի լինէին. օրինակ, տղային ցոյց են տալիս աղջիկը, և պսակի ժամանակ տանում են եկեղեցի նրա տգեղ քոյրը, կամ փեսայի փոխարէն պսակելուս տանում են ուրիշ մարդ. խաբէութեամբ պսակ կլինի, եթէ աղջիկը կուսութիւնը խախտած լինի նախ քան պսակը ոչ իւր նշանածի յարաբերութեամբ։ «Ակամայ պսակը պոռնկութիւն է» ասում է Բարսեղ և օրինաւոր է համարւում փոխադարձ համաձայնելուց յետոյ։ Առևանկութեան համար պատժի են ենթարկում թէ պսակուողները և թէ օգնողները. իսկ «եթէ առևանկութիւնը կատարուել է առանց բռնութեան, առանց գողութեան. և առանց մեղանչման, պատիժ չի նշանակւում». Ա. Գ. 243։ Շահապիվանի ժողովի 7-րդ կանոնը բռնութեամբ և անիրաւութեամբ արած առևանկութեան համար ենթարկում է տուգանքի յօգուտ բարեգործական հաստատութիւնների, թէ օգնողներին, և թէ պսակուողներին կամ փեսային. գաղտնի պսակող քահանային էլ զրկում է քահանայութիւնից. (Ա. Գ. 331)։ Վերոյիշեալ բոլոր դէպքերում եթէ հարս ու փեսայի կողմից ոչ մի թիւրիմացութիւն տեղի չի ունենալ

այդպիսի ձևով պսակուելուց յետոյ և ոչ մի գանգատ չի հետևիլ, այն ժամանակ ոչ մի արգելք չի լինիլ պսակը համարել օրինաւոր, (Տես Լուսաւորչի 9 կան. Ա. Գ. 507 երես)։

ե. Պէտք է պսակուող անձինքներից ոչ մէկը կապուած չլինի ուրիշի հետ չլուծուած պսակով։ Այս կանոնը բղխում է Յիսուսի, առաքեալների արձակած պատուէրից, եկեղեցական կանոնների սահմանումներից. որով որոշւում է՝ պսակը լուծել պոռնկութեան և այլ թոյլատրելի պատճառներով, եթէ պսակը չի լուծուած, այն դէպքում ամուսինները համարւում են կապուած եկեղեցական լծով միմեանց հետ, որոնց նոր ամուսնութիւնը խախտում է օրէնքով և են-թարկւում հալածանքի, իսկ քահանան կարգալոյծ է անւում եթէ դիտութեամբ է պսակել։ Քահանան պիտի պահանջի օտար, անծանօթ մարդու ծխական քահանայից յայտարարութիւն, և հաստատ իմանալուց յետոյ յօժարանայ պսակել։ Հին կանոններով պսակը լուծւում էր միմեայն կնոջ անառակութեան պատճառով, այսպիսի դէպքում պսակը լուծուելուց յետոյ կինը իրաւունք չունէր մարդու գնալու իրև մեղաւոր կողմն. ուրիշ դէպքերում մեղաւոր կողմն իրաւունք չունի պսակուելու նորից, նախկինի լուծուելուց յետոյ։

զ. Պսակուողները չպիտի ունենան արգելառիթ հոգևոր աստիճան, թէ կուսակրօն թէ աշխարհիկ։ Առաք. 26 կանոնը (Ա. Գ. 96 երես) ասում է. «կուսակրօն հոգևորականութեան մէջ մտածներից ամուսնանալ կարող են միմեայն գրակարդացները և սաղմոսերգուները»։ Անկիւրիայի 19-րդ կանոնը (Ա. Գ. 189) ասում է «Չպսակուելու ուխտ անողը և ուխտ խախտողը կենթարկուի երկապսակների ապաշխարանքին». Նոյն ժողովի 10-րդ կանոնը ասում է, «սարկաւագները ձեռնադրութեան ժամանակ եթէ կյայտնեն, որ պսակուելու ցանկութիւն ունին, կարող են ձեռնադրութիւնից յետոյ պսակուել և ծառայութեան մէջ մնալ, եթէ եպիսկոպոսը կթոյլատրի։ Իսկ եթէ ձեռնադրելիս կլռեն, կխոստանան ամուրի մնալ, ՝բայց յետոյ կամուսնանան, այդպիսի-

ները պիտի դադարեն սարկաւագութիւն անելուց». կանոնս բոլորովին մեղմ է վարւում և աւելի թեթևացնում ձեռնադրութիւնից յետոյ պսակուելու խնդիրը: Բարեղ մեծը խիստ է ընդհանրապէս և մասնաւորապէս այս դէպքում. «Աստուծուն նուիրուած կոյսերի անառակութիւնը պսակով չպիտի միաւորել, այլ բոլորովին պէտք է լուծել նրանց ապօրինի կապը, եկեղեցու հաստատութեան համար այդ է օգտաւէտ համարւում»: «Մեղանչող սարկաւագը կարգալոյծ է լինում և աշխարհական դառնում, բայց եկեղեցուց չի մերժւում» — (Ա. Գ. 238 երես): «Ուխտական մարդիկ ասելով հասկանում ենք վանականները, որոնք կուսակրօն կեանք վարել են ցանկանում: Նրանցից պարզ և որոշ խոստում պիտի առնել միշտ կուսակրօն մնալու, ով կմեղանչի՝ անառակների պատժին կենթարկուի»: Բարսեղը 60 կանոնով նոյն մտքով է արտայայտում իւր հայեացքները. «Կոյս լինելու խոստում անողը եթէ երդմնազանց լինի, շնացողի ապաշխարանքին կենթարկուի, նոյն պատժին կենթարկուին կուսակրօնութեան խոստում տուողները» (Ա. Գ. 246): Մեր կանոններում նոյն միտքն է արտայայտում. «կրօնաւորը եթէ կամաւոր ուխտած է և ոչ հարկից ստիպուած, և եթէ կամենայ ամուսնանալ, նա իւր քահանայական կարգը ուրացող կհամարուի» (Ա. Գ. 482): Լուսաւորչի կանոնը ասում է. «Քահանան եթէ կին առնի, 9 տարի ապաշխարի և ապա հաղորդուի» Ա. Գ. 505 երես: «Կոյսը, միայնակեացը (մոնոզոն) եթէ նուիրում են իրանց Աստուծուն, չհամարձակեն ամուսնանալ, ամուսնացողները հաղորդութիւնից մերժուեն, նրանց ընդունելութիւնը կախուած լինի եպիսկոպոսի մարդասիրութիւնից» — (Ա. Գ. 509): Մեր կանոնների դրամադրութիւնից երևում է որ հոգևոր աստիճանի մէջ եղածները կիսասարկաւագութիւնից սկսած դէպի բարձր իրաւունք չունեն պսակուելու. ը. այդ աստիճանում եղած ժամանակ եթէ կամուսնանան, կզրկուին իրանց կարգից և աստիճանից և կենթարկուին եկեղեցական ապաշխարանաց. գ. եթէ նրանք եկեղեցական առեներ վճռով զրկուած

են կարգից, իբրև աշխարհական կարող են ամուսնանալ:

Ե. Պսակը պիտի կատարի քահանան թոյլատրուած օրերում: Մեր կանոններով պսակը պիտի կատարել առաւօտները մինչև ճաշ, որ պատարագից յետոյ հնար ունենան հարսն ու փեսան հաղորդուելու կամ պատարագի ժամանակ հաղորդութեան միջոցին սրբութիւն առնելու: Ներսէս Շնորհալին սահմանել է. «Քահանան պսակ պիտի անի առաւօտից մինչև ճաշը: Խմած մարդուն եկեղեցի թողնել չի կարելի, նոյնպէս և անառակ կանանց, որ պսակի օրհնութիւնը չաղտեղեն: Դուսաններըը նոյն միջոցին չերգեն: Բուն բարեկենդանից մինչև զատիկ, զատկից էլ մինչև Պենտեկոստէն և բոլոր կիւրակի օրերը պսակ անել չի կարելի»: Ա. Գ. 579 երես: Առաքելական 52 կանոնը նոյնպէս և 53-ը սահմանել էին. «Քառասնորդական պասին պսակ անել կամ ծնունդը տօնել չի կարելի»: «Քրիստոնեան պսակ գնալու ժամանակ չպիտի ձիարշաւ գուրս գայ, պարի, այլ գիշերը պիտի հանգիստ անց կացնի». (Ա. Գ. 225 երես): Դուինի ժողովի 5-րդ կանոնն նոյնպէս սահմանում է. «Չէ արժան քառասնորդական պասին, զատկին, մինչև պենդեկոստէն հարսանիք անել . . . որովհետև ամեն օր կիւրակի է, և միշտ կատարւում է աստուածային խորհուրդը.» (Ա. Գ. 410): Նոյն ժողովի 3-րդ կանոնը պսակը անվաւեր է համարում և պսակադիը քահանային պատժում է, եթէ ճրագալոյցի օրը պսակ է կատարում (Ա. Գ. 409): Նոյն ժողովը պահանջում է, պսակ անել առանց խմելու, սրբենալու, այլ միշտ աղօթքով և խորհրդաւորութեամբ: Ներսէս ե.—ի կանոնը. «պսակ չանել՝ 1) բուն բարեկենդանից մինչև Հոգեգալստեան առաջի յարութեան կիրակին. 2) կիւրակի օրերը. 3) տէրունական տօների պահոց օրերը, ուրբաթի՝ զկնի ծննդեան և նաւակատեաց. իսկ մնացած օրերը անխտիր կատարել պսակի խորհուրդը» (Ա. Գ. 614): Քահանան պսակ չպիտի անի՝ ուրեմն. ա) բոլոր կիրակի օրերը. 2) Ուրբաթ և չորեքշաբթի և բոլոր պաս օրերը. 3) 5 նաւակատիքների պաս շաբաթներից յետոյ՝ եկող ուրբ օրերը.

4) Մեծ պաս և Ծննդեան պաս իւր ութօրէիցով. 5) զատկից մինչև Հոգեգալստեան յաջորդող առաջի կիրակին։ Թէ օրուայ որ ժամին է լինում այժմ. այդ կարգը Հնի հակառակ կատարւում է այժմեայ սովորութեամբ, ոչ մինչև ճաշ, այլ երեկոյեան, պսակը կատարւում է մինչև երեկոյեան ժամի տասը։

ը. Պսակը կատարւում է, եթէ դաւանական և կրօնական արգելք չկայ։ Այս մասին ունինք Պօղոս առաքեալի պատուէրը, որով անխտիր՝ թոյլ է տալիս քրիստոնեային ամուսնանալ հրէայի՝ հեթանոսի հետ, առանց վերջիններից կրօնափոխութիւն պահանջելու, այն յուսով որ քրիստոնեայ ամուսինը իւր անարատութեամբ և մաքրակրօն լինելովը բարոյապէս կճնշի ոչ քրիստոնեայ ամուսնուն քրիստոնեայ դառնալու։ «Բայց ուրիշներին ես եմ պատուիրում և ոչ Տէրը. եթէ եղբայրներից մէկը անհաւատ կին ունենայ և նրան հաճելի է բնակուել նրա հետ, թող չթողնի նրան, և կինը եթէ անհաւատ մարդ ունենայ և նրան կամք լինի ապրել նրա հետ, թող ապրի։ Որովհետև սուրբ է անհաւատ մարդը՝ կնոջով, և սուրբ է անհաւատ կինը՝ մարդով. ապա թէ ոչ ձեր որդիքը պիղծ են, իսկ այժմ սուրբ»։ (Ա. Կորն. Է. Գլ.)։ Եկեղեցին չհաւոյ նոյն չաւղով գնալը դժուար համարեց, կանոնը աւելի խստացրեց և իսպառ արգելեց հրէի և հեթանոսի հետ ամուսնանալ։ Լաւոդ. 31 կանոնը որոշեց «հերետիկոսների հետ խնամութիւն անել այն դէպքում, երբ կխոստանան քրիստոնեայ հաւատացեալ լինել» (Ա.. Գ. 222)։ Մովսէս Կաղանկատուացին պատմում է Վրաց բաժանման մասին հայադաւանութիւնից և Աբրահամ կաթուղիկոսի բոլոր գործ դրած չանքերի ապարդիւն անցնելու վերաբերմամբ, կցելով կաթուղիկոսի կոնդակը՝ արձակած Հայոց աշխարհին՝ արձանագրելով եղած վերջացած դէպքը և երևի թէ, երկնչելով դաւանափոխ վրացիների անելիք վատ ազդեցութիւնից հայոց վրայ, նզովում է նրանց, որոնք վրացիների հետ խնամութիւն, նոյն իսկ յարաբերութիւն կունենան։ «Ամենևին յարաբերութիւն չունենալ նրանց հետ, ոչ աղօթքով, ոչ կերակրով, ոչ խմելիքով, ոչ բարեկամութեամբ, ոչ դայեկութեամբ, ոչ ուխտ գնալ Մցխեթայ խաչը, ոչ Մանգլիսայ խաչը, չընդունել նրանց մեր եկեղեցին և ամուսնութեամբ բոլորովին հեռանալ, միայն առևտուր նրանց հետ ինչպէս հրէաների հետ» (Մով. կաղանկ. 214 երես)։ Նոյնպիսի վերաբերմունք կար յոյների և ռուսների կողմից դէպի հայերը։ Մինչև ԺԷ-դարը Ռուսաց եպիսկոպոսները և միտրոպոլիտները այսպիսի երդումն էին ուտում. «Զթողնել իւր վիճակում որ ոչ մի ուղղափառ՝ հայերի հետ հարսանիք չանի, նոյնը և Լատինների հետ. եթէ մի որև է քահանայ այդ անի, պիտի անմիջապէս իմ միտրոպոլիտիս յայտնեմ» (1424 Акт. Эксп. 1)։ Հայոց եկեղեցու կարգերը այս բանի վերաբերմամբ հետևեալ դործնականութիւնը ստացան. 1) Հայ քահանան կարող է պսակել հրէայի, հերետիկոսի, մահմեդականի հայադաւանի հետ, եթե նրանք կմտնեն մկրտութեամբ հայոց եկեղեցու ծոցը. 2) հայադաւանին կարող է պսակել հայ քահանան քրիստոնեայ այլադաւանի հետ, երբ պսակը երկուստեք համաձայնութեամբ լինելու է հայոց եկեղեցում. 3) այս կանոնը բացառութիւն ունի Ռուսաստանում, յունադաւանների և հայերի վերաբերմամբ. ա) Ռուսաց օրէնքը պահանջում է որ հայադաւանի և յունադաւանի պսակը լինի ռուսաց եկեղեցում. բ) հայադաւանը ստորագրութիւն տայ, որ ծնուած որդիքը պիտի համարուեն ռուսադաւան։ Հայ քահանան թոյլադրուած պսակը անելիս վերոյիշեալ անձանց հետ, պիտի ղեկավարուի հայոց եկեղեցու օրէնքով պսակի արգելքների նկատմամբ, այն է՝ ծառները երկրորդ պսակով չկապուին, եթէ առաջի պսակը լուծուած չէ, կամ եթէ զրկուած են պսակուելու իրաւունքից, կամ նրանք հոգևորական են և չեն կարող պսակուել ևայլն ևայլն։

թ. Պսակը կարող է տեղի ունենալ այն ժամանակ, երբ չկան ազգակցական, խնամական և կնքահայրական չհաստական արգելքներ։

ա. Ազգակցական չհասութիւն. ազգ կամ ցեղ համարւում է մի որև է նախահօրից առաջացած արական և իգական արիւնակցական կապով միացած որդիքը, որոնք կոչւում են ազգականներ, արիւնակիցներ: Նախկին բոլոր հին ազգերի մէջ ազգակցութիւնը պահման խնդրում միշտ որոշ չհասական աստիճաններ ունէր, ազգակից լինելը աւելի պատուաւոր էր քան խնամի դառնալը: Մովսէսից սկսած հրէաները որոշ օրէնքներ ունէին ազգակցական պահների մասին. յունա—հռոմէական շրջանում որոշուեց կանոնաւոր կերպով ազգակցական պահների հեռաւորութեան և մերձաւորութեան չափը, դրուեցին գծեր և աստիճաններ, որոնցով ամենադիւրին կերպով կարելի եղաւ չհասական աստիճաններ որոշել:

Աստիճան կամ պորտ անուանւում էր մէկի կապը մեւս անձի հետ ծննդեամբ. աստիճանների կապը անընդհատ շարունակուող—գիծ (լինիա, օրդօ):

Գիծը սկսւում է այն անձից, որից ծնւում է սրդին, սրանից էլ յաջորդող անձը և շարունակաբար գնում է ցած դէպի թոռներ ծոռներ, այս գիծը կոչւում է ստորագիծ, դէպի ցած գնացող գիծ: Երբ հաշւում ենք ծոռնից սկսած դէպի վերև, հայրը, պապը, պապի պապը, այս գիծը կոչւում է վերագիծ, դէպի վերև գնացող գիծ: Երբ հաշւում ենք ոչ ուղիղ գծով, այլ դէպի կողքերը գնացող ուղղութեամբ, դէպի եղբայրներ, քոյրեր, հօրեղբայրներ, հօրաքոյրեր, այն դէպքում ստանում կողագիծ, այսինքն կողքերը գնացող գիծ: Առաջինի օրինակ. պապս, որդին, թոռը, ծոռը, թոռան թոռը, ծոռան ծոռը: Երկրորդի օրը—ծոռը, ծոռան հայրը, ծոռան պապը, ծոռան պապի հայրը: Երրորդի օրինակ հօրեղբօրս որդիքը, հօրաքրոջս աղջիկները, մօրաքրոջս թոռները: Աստիճանները և մերձաւորութիւնը հաշւում են շատ դիւրին կերպով. ամեն մի ծնունդը համարւում է մի աստիճան կամ մի պորտ հօրից սկսած. օրինակ՝ որդին հօր վերաբերմամբ մի աստիճան է, թոռը պապի վերաբերմամբ երկրորդ աստիճան է, որովհետև երկրորդ

ծնունդն է: Երկու եղբայր միմեանց նկատմամբ երկու աստիճան են, որովհետև երկու ծնունդ են, երկու պորտ են:


ա. Մարդ և կին չեն կազմում առանձին աստիճան, նրանք համարւում են մի մարմին, ուստի մարդ ու կին պիտի հաշուել միացած:

բ. Որդիքը՝ տղայ և աղջիկ դէպի ծնողները մի աստիճան են:

գ. Որդիքը՝ տղայ և աղջիկ դէպի միմեանց երկու աստիճան են:

դ. Մի հօր և խորթ մօր, կամ մի մօր և խորթ հօր որդիքը բոլորը համարւում են մի մօր, մի հօր, հարազատի աստիճանով պիտի հաշուել:

ե. Կանայք և մարդիք իրրև ծնունդներ հօր վերաբերմամբ միևնոյն կանոնին են ենթարկւում: Օրինակ՝




1) Ա. Նախահայրն է, 2) Բ. և Ե. որդիք. 3) Գ. և Զ. թոռներ. 4) Դ. և Է. ծոռներ: Զախ կողմից՝ Բ-կազմում է դէպի հայրը՝ Ա—մէկ աստիճան; Գ կազմում է դէպի Ա-երկրորդ աստիճան; Դ կազմում է դէպի Ա երրորդ աստիճան: Աջ կողմից՝ Ե—կազմում է դէպի Ա մէկ աստիճան; Զ կազմում է դէպի Ա երկրորդ աստիճան; Է—կազմում է դէպի Ա—երրորդ աստիճան: Ուրեմն երեք աստիճան ձախ կողմումն է, երեք աստիճան աջ, որ կանի բոլորը 6 աստիճան: Որովհետև Բ. և Ե. երկու եղբայր են, կամ երկու քոյր, երկու ծնունդ են, դէպի միմեանց երկու աստիճան են; Գ. և Զ. թոռներ են, երկու ծնունդ իրանք են, երկու ծնունդ էլ իրանց հայրերը, կլինի 4 աստիճան;

Դ. և Է. ծռաններ են, երկու լրանք են, 4 էլ նախորդները, բոլորը 6 աստիճան։


Վերոյիշեալ ճիւղագրութիւնը ազգակցական է, որի մէջ նախահայրը Ա. կազմում է վեց աստիճանով մեծ ընտանիք, որդիք, թոռներ, ծոռներ; տղայ թոռներով, աղջկայ թոռներով նա կազմում է հարազատ ազգ, արիւնակից մեծ ընտանիք, որ խառն չէ ուրիշ ընտանիքի հետ։

բ. Խնամական չհասութիւն. պսակի միջոցով յարաբերութեան մէջ են մտնում երկու օտար ընտանիք, որոնք միմեանց վերաբերմամբ կոչւում են խնամի. ստանում ենք երկու ցեղի բարեկամութիւն, երկցեղ խնամութիւն։ Խնամութիւնը կազմում է, 1) ամուսինը և կնոջ բարեկամները, 2) երկու ամուսինների երկու կողմերը. 3) մէկ ամուսնու և միւսի առաջին ամուսնութեան ստորագիծ ծնունդները (խորթ որդիք)։ 4) Փեսան դէպի հարսի բարեկամները այն աստիճանի մէջ է, ինչ աստիճանի մէջ որ գտնւում է հարսը դէպի իւր արիւնակիցները։ 5) Հարսը դէպի փեսայի արիւնակիցները գտնւում է այն աստիճանի մէջ, ինչ աստիճանում որ գտնւում է փեսան դէպի իւր ազգակիցները։ Այս երկու դէպքումն էլ հարսն ու փեսան մի մարմին՝ մի աստիճան են կազմում։ 6) Հարսն և փեսան ջոկ ջոկ աստիճաններ են կազմում եթէ երկու կողմի բարեկամների աստիճանները հաշւում ենք։ Աստիճանները հաշւում են միշտ ուղղահայեաց և թեք գծերով, մարդ ու կնոջ պսակը միացնւում է հորիզոնական գծով (մ.——կ.)։ Օրինակ՝




1) Ա. Բ. Գ. կազմում են մի ընտանիք, հայր և երկու որդիք. 2) Դ. Ե. Զ. կազմում են մի ուրիշ ընտանիք մի հայրով և երկու որդով։ Երկու ընտանիքը ուզում են խնամի


դառնալ. Գ. առնում է Ե.—ին. Գ—տղայ է. Ե—աղջիկ. կատանանք այս.



Գ. և Ե. մարդ ու կին են, միացած հորիզոնական գծով։ Ի՞նչպէս հաշուենք աստիճանները։ Բ և Գ. եղբայր և քոյր են, ուրեմն երկու ծնունդ՝ երկու աստիճան են։ Ե. և Զ. եղբայր և քոյր են, ուրեմն երկու ծնունդ՝ երկու աստիճան են։ Երկու կողմն միասին կլինին 4 աստիճան։ Իսկ եթէ այսպէս լինի



կունենանք երկու աստիճան, որովհետև և Հարսը (Ե) փեսայի հետ մի է, փեսայի ազգականների հետ նոյն աստիճանում է, ինչ որ փեսան։ Կամ էլ եթէ այսպէս լինի




, էլի կունենանք երկու աստիճան, որովհետև փեսան (Գ) հարսի հետ մի է, ուստի և Հարսի ազգականների հետ այն աստիճանումն է. ինչ որ ինքն հարսը։


Իսկ եթէ հարսն ու փեսայի ազգականները հաշւում են, այն դէպքում հարսն և փեսան գառնում են ջոկ ջոկ աստիճաններ իրանց ազգի հետ (վերևի քաշածի պէս)։ Խնամական բարեկամները կոչւում են. աներ, զոնքանչ, փեսայ, հարսը, տալ, քենի, սկեսուր, սկեսրայր, պատրոն, տէգր, տէգրակին, աներձագ, խորթ հայր և մայր, խորթ տղայ և աղջիկ։

Յաջորդութիւնը մտնում է թէ ազգակցութեան և թէ խնամութեան մէջ, նա կանգնած է երկուսի մէջ տեղը։ Նրա աստիճանները պիտի հաշուել ընդհանուր կանոնով։

Օրինակ՝ Ա.—մարդն է; Բ—կինը. որդին է՝ Գ: Ա.—մեռնում է; Բ—գնում է մարդու Գ-ին և տանում է հետը որդուն—Գ—ին: Գ-կոչւում է եկովի, բերովի տալ, խորթ տալ նոր հոր (Գ—ի) վերաբերմամբ:



Խորթ որդին (Գ-) նոր հոր վերաբերմամբ (Գ-) կազմում է մէկ աստիճան: Գ—պակուեց Ե—ի հետ. Ե—ի եղբայրը Զ—կլինի Գ—ի վերաբերութեամբ երրորդ աստիճանում. այստեղ



կայ երեք ցեղ, Գ—ի, Գ—ի, և Ե—ի ցեղը, որ կոչւում է եռացեղ խնամութիւն:

Պահպանելի աստիճանների մերձաւորութեան և հեռաւորութեան կարգը եկեղեցին վերցրեց Մովսիսական օրէնքից: Մովսէս Ղևտացոց ԺԸ. գլխում սահմանեց, որ ոչ ոք իրաւունք չունենայ մօտենալ հօր, մօր, հօրը կնոջ (մօր), քրոջ թէ հարազատ թէ խորթի, որդու աղջկան, աղջկայ որդուն, հօրը կնոջ աղջկան, հօրաքրոջ, մօրաքրոջ, հօրեղբօր և սրա կնոջ, հարսին (որդու կնոջ), նորա տալի աղջկան (ծոռան), եղբօր կնոջ, եղբօր աղջկան և թոռան, երկու քրոջ; ազգակցական մինչև չորրորդ աստիճանը և խնամական երկրորդ աստիճանը արգելեց Մովսէս: Ա.—Առաք. 33 կանոնը (Ա. Գ. 80 երես) մատնացոյց արաւ Մովսէսի օրէնքը և հրամայեց կատարել: Այնուհետև Նէոկեսարիայի 2 և Բարսեղի 23, 78 և 87 կանոնները Մովսէսի սահմանումները հաստատեցին: Մեր մէջ առաջի վճիռը կայացրեց Ներսէս մեծ Աշտիշատի ժողովում, արգելելով մերձաւոր ազգակցութեամբ եղած պսակները, առանց որոշելու աստիճանները. Շահապիվանի 447-ի ժողովը երկրորդ անգամ սահմանեց ժողովական կանոնով հետևեալը. «ոչ ոք չի-

մարձակի ամուսնանալ քեռորդու, եղբօրորդու կամ հօրաքրոջ, կամ ազգականի հետ մինչև չորրորդ ծնունդը»: Այսպիսի պսակը անվաւեր է հրատարակում և պսակադիր թէ եպիսկոպոս թէ քահանայ կարգալոյծ լինում: Ի և Ը. դարերում չորրորդ աստիճանը խստատ արգելուեց. Մովսէս կաթողիկոսարանին 252 երեսում խօսելով Ադուանից իշխանի պսակը իւր թոռակի հետ ասում է «Տէր-Միքայէլը մերժում էր նրան, թէ մի յանդգնիր առնել, որովհետև թոռներ էք»: Դուինի 771-ի ժողովը նոյն վճիռը կայացրեց, որ չորրորդ գաղմբ պսակել չի կարելի (Ա. Գ. 432): Նոյն ժամանակներում ընդհանուր եկեղեցու մէջ համարեա թէ նոյն կանոններն էին պահպանւում. Ամբրոսիոս Մեդիոլանցին խօսելով այդ բանի վրայ՝ թէ կարելի է արդեօք հօրը՝ պսակել որդուն, իւր խորթ թոռան հետ, աւելացնում է, որ առաջին դարերում պսակը արգելւում էր ոչ միայն ուղղագիծ ազգականների մէջ մինչև չորրորդ աստիճան, այլ և կողագծերով մինչև չորրորդ աստիճան: Բարսեղը խօսելով նոյն արգելքների մասին, ասում է այս կարգերը մտել են աւանդաբար, գործադրուել են կեանքի մէջ և օրէնքի ոյժ ստացել: Օգոստինոս ասում է. «եղբօրորդիների մէջ մեր ժամանակ արդէն պսակը շատ հազիւ էր թոյլատրւում, ըստ սովորութեան և եղբայրական կապի մօտիկութեան պատճառով, թէ և դրա համար օրէնք չկայ, որովհետև Մովսէսի օրէնքը այդ չի արգելում, և քաղաքական օրէնքները դեռ չեն արգելել»: (Обз пост. . . . Пр. Соб. 1858, 1859): Յունա—Հռոմէական օրէնքներով ուղղագիծ ազգակցութեան մէջ պսակը անսահման կերպով արգելւում էր, օրինակ, հայրը՝ աղջկայ, թոռան, ծոռան, ծոռան ծոռան և այլն և այլն հետ. եկեղեցին էլ ընդունեց նոյնը: Կողագիծ ազգականների համար քաղաքական օրէնքը արգելում էր մինչև 3 աստիճանը. իսկ եղբօրորդիների մէջ մինչև Թէոդոս պսակը արգելուած չէր, որը ոչ միայն արգելեց, այլ և մեծ պատիժ նշանակեց: Թէոդոսի որդիքը և Յուստինիանոսը թոյլ տուեցին նոյնպէս պսակը: Արևմտեան եկեղեցու

ժողովները արգելեցին պահքերը Զ. դարում մինչև 5 աստիճան։ Ե. դարում Տրուլլի ժողովը 54 կանոնով արգելեց խնամական 4 աստիճանի պահքը երկու եղբօր և երկու քրոջ մէջ, իսկ արիւնակցականը թողեց հին կարգով, եղբօր որդիների մասին ոչինչ չորոշելով։ Հռոմի եկեղեցին Ե. դարում պահք թոյլ էր տալիս 5 աստիճանում, բայց 3 և 4 աստիճանում եղածները չէր լուծում։ Թ. դարում Վասիլ Մակեդոնացու պրօխիրօնում և Լևոնի ու Կոստանդինի էկլօգում և Բազիլիկում մացրուեց իրեւ դրական օրէնք որ ոչ միայն եղբօրորդիքը չեն կարող պահպանել, այլ և նրանց որդիքը, միայն նրանց թոռները կարող են պահպանել (պրօխ. 7. 39. էկլոգա—12. Բազիլ. 28—տես Пр. соб. 1858—59)։ Անպայման արգելուեց վեց աստիճանի պահքը և թոյլատրուեց ութ աստիճանները, իսկ 7 աստիճանի վերաբերմամբ որոշ ոչինչ չասուեց։ Այս մասին Թ. դարում Պօլսում վէճ ծագեց 7-րդի վերաբերմամբ, որի համար Ալէքսի կայսեր հրամանով Պօլսում ժողով եղաւ և որոշուեց, որ եթէ պահքը 7—րդումն է, կամ մի կողմից 7, միւս կողմից 6 աստիճան է, դեռ ևս կատարեալ չէ, պահել չի կարելի, եթէ պահքը կատարուած է, չքանդել, այլ ապաշխարանքի ենթարկել (Кормч. 50 գլ.)։ ԺՒ. դարում Ղուկաս պատրիարքի օրով 1168 թուին արգելուեց պահքը 7-րդ աստիճանում, պահքը լուծել և պահպանիչին կարգալոյծ անելու սպառնալիքով. ժողովի վճիռը հաստատեցին Նիկիփոր և Մանուէլ կայսրները։

Յունական հասարակական աստիճանները չորս էին մինչև 9-րդ դարու վերջերը; Ը-դարում սահմանուեց յունական եկեղեցում վեցերորդ աստիճան (Кормч. 50 գլ.) որը հաստատուեց Միքայէլ պատրիարքի կազմած ժողովում 1057-թուին, 7-րդ աստիճանը թոյլատրելի համարելով, այս կարգադրութիւնը հաստատուեց քաղաքական օրէնքով։ Հայոց մէջ խորթութիւնը աւելի կապ ունի ազգակցականի քան խնամականի հետ. խորթութիւնը նայելով որակին, մի, երկու ամսիճանով պիտի աւելի համարել քան իսկապէս է.

օրինակ. եթէ խորթական աստիճանները պարզ հաշուած 6-է, պէտք է համարել 7 և ոչ 6. խորթ ծոռները 6 աստիճանի են, խորթութիւնը մի աստիճան աւելացնում է և դարձնում 7. այնպէս որ խորթ ծոռները կարող են պահպանել։ Խորթութեան մէջ նշանակութիւն ունի միայն հայրականը, այսինքն երբ երկու հօրից են և մի մօրից որդիքը. իսկ եթէ երկու մօրից են և մի հօրից, այդպիսի խորթութիւնը հարազատների աստիճանով պիտի հաշուել։

Ընդհանրական աստիճանները նոյն կարգով ընդհացան յունական եկեղեցում, մինչև 8-րդ դարը 4-րդ աստիճանն էր, 997—1001 թ. Պօլսոյ պատրիարք Սիսինի օրով արգելուեց մինչև վեցերորդը, որոշուեց 6-րդը թոյլատրել, 7-րդ ոչ; ժա. դարում թէ յունական եկեղեցին և թէ քաղաքական իշխանութիւնը փոփոխակի կերպով 6 և 7 աստիճանի պահքերը թոյլատրում, երբեմն արգելում էին, բայց սովորաբար 6-րդ թոյլատրուում էր։ Մեր եկեղեցին հետևում էր ընդհանուր եկեղեցու քայլերին. մեր մէջ 7 և 8-րդ դարերում ինչպէս ասացինք չորրորդ աստիճանը արգելուում էր։ Շնորհալին (1166—1173 թ.) որոշեց որ երկու կողմից չորս չորս աստիճանը լրանայ և ապա 9 և 10 աստիճաններում պահք լինի, որովհետև ասում է, մարմնի բնութիւնը չորս տարերքից է բաղկացած, երկու եղբայրները կէս են անում հօր արիւնը, թոռները հայրերի արեան կէսը են ընդունում, ծոռները նրանց կէսը, իսկ վերջին ծնունդները արեան չորրորդ մասն են առանում։ Վերջնական ժողովական կարգադրութիւն այդ մասին մեր մէջ եղաւ 1245-46-ի Սսի ժողովում, որի 7-րդ կանոնն ասում է «պահքը ընտրութեամբ անեն, վեց ծննդով հեռացած ազգակցական արիւնից». այսինքն ազգակցական պահք կարելի է միմիայն 7-րդ աստիճանում. այս կանոնն դարձաւ վերջնական և մինչև այսօր տիրող կարգն է, ժողովրդական «օխտը պորտը» այդ կարգադրութեան հետևանքն է։ Խրիմեան Հայրիկ 1899-ին հայրապետական կոնդակով վաւերացրեց նոյն կարգը։ (տես Ա. Գ. 453 և 669 երես)։ Վերջին կարգադրութիւնը


նրա համար էր, որ կային մարդիկ, որոնք առաջնորդում էին Շնորհալու կանոնով, ոմանք Յակովը Խրիմեցու կազմած ճիւղագրութեամբ, ոմանք էլ Սսի վճռով։ Խնամութեան մասին մեր եկեղեցական կանոններում որոշ կերպով ասուած կանոն չունենք. Շահապիվանի ժողովի կանոնները արգելում են երկրորդ աստիճանը. Ը-դարու Դուինի ժողովի կանոնները ընդհանրապէս արգելում են 4-րդ աստիճանը, թողլով միայն 5-րդը, թէ ազգակցական թէ խնամական։ 18-րդ դարում ունենք պատմական փաստ, որով պարզ ասւում է թէ խնամութեան 5-րդ աստիճանն է թողլ դրւում։ 1734-ին Աբրահամ կաթուղիկոսի «Հայր Յօհաննու վանից թիմին»—անունով գրած կոնդակում ասւում է «Այլ և կանոնագրեմք և դուք հնազանդ լերուք, ազգականութեան ժ. ճիւղ, խնամութեան Ե. ճիւղ, և կնքաւորութեան Ը. ճիւղ կոյս ընդ կոյսի և այր ընդ այրոյ» (Ցեղագիր գեղարքունեաց գաւառի», 44։ երես)։

Այս կոնդակը պարզ սահմանում է խնամութեան 5-րդ աստիճանում թողլագրել պսակը։ Վերջին կարդադրութիւնն էր Խրիմեան Հայրիկինը 189*-ին, որով թողլատրուեց խնամական 5-րդ աստիճանը (Ա. Գ. 669 երես)։

Գ. Կնքահայրական չհաստութիւն. կնքաւորական չհաստութիւնը կոչւում է նաև հոգևոր ազգակցութիւն. սա սկիզբն առել է առաքեալների ժամանակից, երբ հեթանոսներն քրիստոնեայ էին դառնում և մկրտւում, պիտի անշուշտ պատրաստուէին քրիստոնէական հաւատոյ գիտելիքների մէջ, քննութեան ենթարկուէին և ապա որոշ ժամանակից յետոյ իրաւունք ստանային մկրտուել և հաւատացեալ կոչուել։ Երբ քրիստոնեայ ընտանիքներ բազմացան, նրանք պարտաւորւում էին իրանց որդիներին կրթել քրիստոնէական ոգով և ապա գիտակցաբար մկրտել տալ. բայց որովհետև շատ երեխայք կարող էին մեռնել առանց մկրտութեան, ուստի և սովորութիւն մտաւ նորածիններին ուղիղ օրից յետոյ մկրտել ծնողների երաշխաւորութեամբ, այն պայմանով որ նրանք անպայման մկրտելուց և մեծանալուց

յետոյ կրթեն նրանց հաւատոյ գիտելիքի մէջ։ Եւ որովհետև շատ անգամ ծնողները անգոր էին գտնւում այդպիսի կարևոր պաշտօն կատարելու վերաբերմամբ, եկեղեցին սահմանեց, որ երաշխաւոր լինին եկեղեցում ծառայող սարկաւագը և աղջիկների համար սարկաւագուհիները։ Մկրտութեան ժամին երաշխաւորող սարկաւագը, որ խոստանում էր իւր գիրկը գրած մանկան պատրաստել քրիստոնէական հաւատի և աստուածպաշտական կարգերի մէջ, կոչուեց մկրտութեան հայր, կնքահայր. իւր գիրկը վերցրած մանուկը սան, և ապա սանամայր, սանահայր։ Կնքահօր և սանիկի մէջ առաջացաւ ուղղակի հայրական յարաբերութիւն միւռոնի միջոցաւ, ուստի և կնքահայրութիւնը կոչուեց հոգևոր ազգակցութիւն։ Զ. դարում Յուստինիանոսի օրէնքները սահմանեցին որ պսակը արգելւում է սանիկի և կնքահօր մէջ. ապա եկեղեցին արգելեց կնքահօր և սանամօր պսակը. ապա քաղաքական օրէնքները արգելեցին կնքահօր որդու և սանիկի, ու սրա ծնողների և սանիկի որդու պսակը (Кормч. 50 гл)։ 1107-ին Նիկոլայ պատրիարքի ժամանակ արգելուեց կնքահայրական պսակը մինչև 7 աստիճան, որը ընդունելութիւն չգտաւ յունաց ժողովրդի մէջ։ Կնքաւորական աստիճանները այսպէս պիտի հաշուել. 1) կնքահայրը՝ իբրև հոգևոր հայր, դէպի սանիկը առաջին աստիճանումն է գտնւում. 2) կնքահայրը դէպի սանիկի ծնողները իբրև եղբայր երկրորդ աստիճանումն է. 3) կնքահայրը սանիկի եղբայրների նկատմամբ երրորդ աստիճանումն է իբրև հօր եղբայր։ 4) կնքահօր որդիքը սանիկի հետ երկրորդ աստիճանումն են իբրև եղբայրներ. իսկ սանիկի եղբայրների հետ 4-րդ աստիճանումն են իբրև հօրեղբօր որդիք։ Հայոց եկեղեցական կանոններում ոչինչ չկայ այս խնդրի վերաբերմամբ գրուած։ Ութերորդ դարու, Սսի կանոնները ընդհանուր առմամբ խօսելով 7 աստիճանի հաստութեան վրայ, ենթադրել տուին որ կնքաւորական աստիճաններն էլ 7 պիտի լինին։ Վերոյիշեալ Աբրահամ կաթուղիկոսի կոնդակով թողլագրեալ է ութերորդ կնքաւորական աստիճանը։

Ներսէս Ե. 1851-ին Օինօգին արձակած հրամանով վերացրեց այդ անորոշ դրութիւնը և սահմանեց, որ կնքաւորական աստիճանն է երեք, որը պիտի հաշուել միմեայն կնքահօր և սանիկի մէջ ուղիղ գծով. որ սանիկի և կնքահօր կողագիծ աստիճանները, եղբայրներ, քոյրեր, հօրեղբայրներ, հօրաքոյրեր չեն մտնում այդ սահմանափակման մէջ (տես Ա. Գ. 613 երես)։ Օրինակ. Ա.—կնքահայրն է, Բ—սանիկ, Գ—Սանիկի հայր կամ մայր, Դ—սանիկի որդի, Ե—կնքահօր որդի։



Կնքահայրը (Ա.) դէպի սանիկը (Բ) հոգևոր հայր է և եղբայր Գ-ին, որ սանիկի հայրն է; Բ. և Ե. եղբօրք են իբրև կնքահօր որդի և մարմնաւոր հօր որդի; Բ—դէպի Գ և Ա.—առաջին աստիճանն է; Դ—դէպի Ա. երկրորդ աստիճանն է; Գ—դէպի Ա.—երրորդ աստիճանն է իբրև եղբօրք; Ե—դէպի Բ—երկրորդ աստիճանն է; Զ—դէպի Դ—չորրորդ աստիճանն է որոնց պսակը թոյլատրելի է Ներսէս Ե-ի կոնդակի զօրութեամբ։

Որդեգրութիւն. Քաղաքացիական օրէնքներով կնքաւորութեան փոխարինում է որդեգրութիւնը, որը կատարւում է այսպէս. որդի չունեցող հայրը օտարի տղային, վերջինիս ծնողների համաձայնութեամբ բերում է իւր տունը, պատշաճաւոր թղթեր և փաստագրեր են կազմում, և ընդհանուրի վկայութեամբ վերցնում է իրան որդի, որ կոչւում է որդեգիր. այս գործողութիւնը կատարւում է առանց եկեղեցու օրհնութեան, թէ և ըստ կամաց կարող է լինել և օրհնութեամբ։ Որդեգիրը՝ պարզ է չի կարող իբրև որդի պսակուել որդեգրողի աղջկայ հետ։ Լևոն իմաստասէրը որդեգրութիւնը կատարեց եկեղեցու օրհնութեամբ և չհաստութիւնը հասցրեց 7 աստիճանի, մինչև իսկ այն դէպքում

իբր մէկը իւր փեսային որդեգրում էր, պիտի վերջինս կնոջից բաժանուէր։ Բայց գործնականութեան մէջ մնաց Յուստինիանոսի սահմանածը, որ որդեգրի և որդեգրողի մէջ ուղղագիծ պսակ լինել չի կարող մինչև երրորդ աստիճանը ինչպէս և կնքաւորութեան մէջ։ Որդեգրութեան մասին մենք կանոններ չունենք, քիչ յետոյ կբերեմ Յակոբ Խրիմեցու ճիւղագրութիւնը և այդ մասին արած դատողութիւնը. յամենայն դէպս որդեգրութեան և կնքաւորութեան վերոյիշեալ 3 աստիճանի սահմանումն պիտի համարել հաւասարազօր, եթէ որդեգրութիւնը եղել է օրինաւոր և վերջնական կարգով։

Եղբայրանալ. Թէ հներում և թէ այժմ պատահում է եղբայրանալու սովորութիւնը, երբ մէկը մի օտար տղայի կամ աղջկայ հետ եղբայրանում է քահանայի օրհնութեամբ. եթէ այսպիսի լուրջ դէպք պատահում է, թէև ոչ մի սահմանադրութիւն չկայ այս մասին ոչ մեր և ոչ օտար եկեղեցական կանոններում, բայց և այնպէս ոչինչ չի արգելում այսպիսի դէպքերում վարուել վերոյիշեալ կնքաւորական և որդեգրական կանոններով, այսինքն եղբայրացածների վերաբերմամբ ընդունել ուղղագիծ 3 աստիճանի չհաստութիւն։

Չհաստական աստիճանների վերաբերմամբ բացի կանոնական սահմանադրութիւններից կան և երկու մասնաւոր գրութիւններ, մէկը Մխիթար Գօշինը է, միւսը Յակոբ վարդապետ Խրիմեցու ճիւղագրութիւնը, բացի այս էջմիածնի գրադարանի կանոնագրքերի յետևներում պատահում են ճիւղագրութիւններ, որոնք ինքնուրոյն աշխատութիւններ չեն, բոլորը ընդ օրինակութիւն են Յակոբ Խրիմեցու։

Գօշը իւր դատաստանագիրքը սկսեց 1184-ից և շարունակեց մինչև մահը 1213 թուականը, ուստի և նրան յայտնի լինել չէր կարող Սսի ժողովի կանոնները, իսկ Շնորհալու ընդհանրականը (1166—1173) երևի թէ չէր ընկել Գօշի ձեռքը, կամ եթէ ընկել է, վերջապէս նա չի օգտուել Շնորհալու կանոններով ճիւղագրութեան վերաբերմամբ, այլ միմեայն Մովսէսական օրէնքներով, և որի վերջին չհաստ-

կան աստիճանն է 5-րդը, ուստի և Գօշի հաղորդածը այդ կողմից նշանակութիւն չունի։ Յակոբ վարդապետ Խրիմեցին Դէօրգ վարդապետ Երզնկացու, որ աստուածաբանական գիտութիւններով պարապող էր, աշակերտն էր, ապրում էր 1400 թուականներին, «որ արար գլուխ ծմռունս կազմութեան մարդոյ, և զազգագրութիւն ի խնդրոյ Թովմայի մեծոքացոյ և գմեկնութիւն տումարի» (Զամչեան Գ. հատ. 453 երես), որը և կազմել է չհասական ճիւղագրութիւնը, գծերով, նշաններով, օգտուելով Շնորհալու կանոններից. սրա կազմած ճիւղագրութիւնը դարձել է ընդհանուր հրահանգ, որովհետև մանրամասն խօսում է ազգակցական, խնամական, կնքաւորական, խորհրդական և որդեգրական չհասական աստիճանների մասին։

ՅԱԿՈԲ ԽՐԻՄԵՑՈՅ ՊՍԱԿԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

«Իմանալի է, որ այս կանոնը նրանց համար է, որոնք սրբութեամբ սնուում են և լինում են տասն և հինգ տարեկան։ 15 տարեկան կարիճ տղան փեսացու է, և 14 տարեկան աղջիկը հարսնացու է։ Եւ եթէ կնեզուին, 14 և 12 տարի դարձնեն, և ապա այս անցաւոր աշխարհի ամուսնութիւնը գլուխ բերեն։ Եւ պէտք է քահանան քննի առաջ և իմանայ որ կարևոր, կամ կնքաւոր և կամ խնամի չլինեն։ Որովհետև կարևորը—ազգականն է, որ չորս պորան անցնում է և 5-րդում խնամանում են, և կնքաւորն երեք պորան անցնում է և 4-ում խնամանում են, և այս է որ գրում եմ, դու էլ մտքումդ պահիր։

Մի հօրից երկու եղբայրներ իրանց հօր արիւնը կիսում են, նրանց որդիքը երեք մասն արեան, նրանց որդիքը երկու բաժինն արեան և սրանց որդիքը օտարացան, չորս տարերքը բաժանուեցին։ Պէտք է խնամանան, որովհետև չորս տարերքը միմեանցից հեռացան, և արիւնը վերջացաւ»։ Բացադրութիւնը նոյն է ինչ որ Շնորհալուն, 4 մի կողմից, 4 միւս կողմից, ուրեմն չորրորդին թոյլ չի տալիս պսակուելու, այլ 9 և 10 աստիճաններից։ Շարունակութեան և ճիւղագրու-

թեան մէջ պարզում է այսպէս. «Իսկ որդիքը ունին բոլոր արիւնը, թոռներից երրորդ մասն արեան, թոռների որդիքը երկրորդ մասն արեան, թոռների թոռները մի մասն միայն, այստեղ արիւնը վերջանում է, սրանց որդիքը՝ որ են ձագ թոռնեայք առնում են միմեանց»—այսինքն 9 աստիճանը տասներորդի հետ. նոյնը՝ ինչպէս վերև ասացինք Աբրահամ կաթուղիկոսը 1734-ին հրահանգեց, (10 աստիճան ազգակցութեան)։ «Կնքաւորութիւնը երեք ազգն նրա համար պիտի անցնի, որովհետև հոգին երեք մասից է բաղկացած, և մարմնի նման չորս տարերքից չի կազմուած։ Նոյնպէս և կնքաւորութիւնը երեք պորան անցնում է, հոգևորը ազգակցութիւն է»։ Սրա կանոնով կնքաւորական աստիճաններն են 6, վեցերորդը արգելում է, թոյլ է տալիս 7-ը 8-ի հետ, ինչպէս և Աբրահամ Կրեացին (Ը. աստիճան կնքաւորութեան)։

«Խնամութիւնն ոչ մարմնաւոր ազգակցութիւն է և ոչ հոգևոր, դրա համար երկու պորան անցնել—բաւական է, ... և երրորդ պորան կարելի է փեսայանալ»։ Պորտ ասելով Խրիմեցին հասկանում է 2 աստիճանը միասին, այսինքն երկու եղբայրը մի պորտ են, երկու թոռները մի պորտ, ուրիշ խօսքով երկու կողմի համապատասխան աստիճանները մի է համարւում։ Խնամական երկու պորտը՝ որէ 4 աստիճանն թոյլ չի տալիս, 5-ին իրաւունք է տալիս պսակուելու. նոյնը և Աբրահամ կաթուղիկոս (Ե. աստ. խնամութեան)։

Խորհրդութեանց համար հետևեալն է ասում.

«Այս էլ պէտք է իմանալ, որ կան կիսաեղբայրներ և կիսաքոյրեր, որոնք խորդ են կոչւում որ երկու կերպ է լինում։ Կայ որ երկու մօրից և մի հօրից է, սրանք հարապատ են. և . . . . . սրանց ձագ թոռնեայքը առնում են միմեանց». այսինքն 9-ը 10-ի հետ կարող են պսակուել։

«Իսկ եթէ երկու հօրից է և մի մօրից, սրանք արեան կէսը ունին, որովհետև կինը կէս է, սրա որդիքը լրու-

թեամբ հօր արիւնը չեն կարող ունենալ, սրանց թոռները խնամանում են և իրանց թոռնեայքն միմեանց առնում»... որ ասել է 8-ը 7-ի հետ. այստեղ երկու աստիճան է պակասեցնում:

Որդեգրի կամ հոգեզաւակի համար սահմանում է «թոռները խնամանում են և թոռնեայքը առնում միմեանց, որովհետև որդեգիրը խօսքով և կամքով է լինում». որ ասել է 6 աստիճանն արգելում է և թոյլ է տալիս 7-րդ աստիճանը 8-ի հետ: Այս որդեգրական ճիւղը ուղղագիծ է, նա օտար է համարւում որդեգրի և որդեգրոյի կողագիծ բարեկամներին, եղբարց, քոյրերին, որովհետև «հոգեզաւակն է միայն նրա օրինաւոր որդին, քոյրերը և եղբայրները օտարեն . . . »:


Եղբայրանալ. «Այս պիտի իմանալ, որ չլինի թէ հարան ու փեսան մի մօր կամ կերած լինին, և եթէ կերել են, քոյր և եղբայր են» չեն կարող պսակուիլ:

Այս է ընդհանուր բովանդակութիւնը Յակոբի ճիւղաբաժանութեան, որը հետևելով Շնորհալու կանոնագրութեան, որը միայն վերաբերում է ազգակցութեան, նա գործել է հիմք խնամականի, կնքաւորականի, խորթականի, որդեգրականի: Նա չոշափում է կնքաւորական և մի հարց, եթէ կնքահայրը գրկել է երկու օտար անից երկու սանիկ, երկու օտար սանիկները կարող են պսակուել միմեանց հետ. և վճռում է ոչ, որովհետև մի հոգևոր հօր զաւակ են թէ և ջոկ ջոկ տներից. սրանց համար նշանակում է 6 աստիճանի չ'հասութիւն, թոյլ տալով 7-ը 8-ի հետ ամուսնանալ:

Ա) ԱՋԳԱԿՑԱԿԱՆ ՃԻՒՂԱԲԱԺԱՆՈՒԹԻՒՆ


1 աստիճան. ես և մայրս, ես և հայրս:
2 աստիճան. ես և պապս, ես և տատս; ես և եղբայրս:
3 աստիճան. ես և պապիս հայրը, ես և տատիս հայրը (մայրը):
4 աստիճան. ես և պապիս պապը. ես և տատիս տատը: Ես և հօրս եղբօր տղան, ես և մօրս քրոջ աղջիկը;

5 աստիճան. ես և հօրս եղբօրը թոռը. իմ որդիս և մօրս քրոջը տղան. իմ թոռս և եղբօրս որդին:
6 աստիճան. իմ թոռս և եղբօրս թոռը. իմ որդիս և եղբօրս թոռանը տղան. իմ պապը և պապիս եղբօրը թոռը:
7 աստիճան. ծոռս և եղբօրս թոռը. տատիս ծոռը և իմ թոռը:
8 աստիճան. հօրս եղբօրը թոռան ծոռը. երկու եղբարց ծոռները:




Բ) ԽՈՐԹԱԿԱՆ ՃԻՒՂԱԲԱԺԱՆՈՒԹԻՒՆ

1. ես և խորթի աղջիկս. ես և խորթի մայրս.
2. ես և խորթի թոռս. ես և խորթի պապս. ես և խորթի քոյրս:
3. ես և թոռանս խորթի որդին. ես և խորթի մօրս տատը:
4. ես և խորթի հօրս եղբօրը որդին, ես և պապիս խորթի աղջկայ որդին:
5. ես և խորթի տատիս քրոջ աղջիկը:



Գ) ԽՆԴՄԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ

1. Ես և զոքանչս. հարսը և պատրոնը։
2. Ես և անորս տղան. հարսը և տէգրը։
3. Ես և անորս թոռը. ես և եղբօրս կնոջ մայրը։
4. Ես և եղբօրս կնոջը քոյրը. ես և փեսայիս քոյրը։
5. Ես և եղբօրս կնոջ քրոջ որդին. ես և փեսայիս քրոջ աղջիկը։



Այն հարցը թէ պակի խնդիրներում ումն է պատկանում բացառիկ իրաւունք «ոչ օրինակ այլոց» թոյլ տալու կարիքից և հանգամանքներից ստիպուած շեղումներ ընդհանուր կանոններից, այդ հարցը եկեղեցական կեանքում զորձնականապէս զարթնել է և վճռուել ի դէմս ամենայն հայոց կաթուղիկոսի։

Կեանքը իւր բազմատեսակ պահանջներով և ընթացքով միշտ տալիս է այնպիսի բացառիկ օրինակներ ընդհանուր կանոնից շեղուելու, որոնք զանցառութեան տալ չի կարելի, պէտք է որև զիջմամբ լուծել խնդիրը, ահա առաջ է գալիս եկեղեցու մէջ բացառական իրաւունք ունենալու խնդիրը (դիսպէնզացիայի իրաւունք—диспензація)։

Որովհետև մեր ընդհանուր կանոնները սահմանուած են ազգային ժողովով, պարզ է որ այդ ժողովի սահմանուածներից թեթև շեղումներ անելու իրաւունքն կարող է վայելել միմեայն այն անձն, որն որ նոյն ընդհանուր ժողովի մասնակցութեամբ ընտրուած է եկեղեցու պետ, կաթուղիկոս ամենայն հայոց. այդ հիմամբ դիսպէնզիայի իրաւունք չուներն, ոչ առաջնորդները, ոչ Սինոդը, ոչ Պօլսոյ կրօնական ժողովը և ոչ պատրիարքները։ «Ոչ օրինակ այլոց» ի միջոցով

կարգադրութիւններ անում է կաթուղիկոսը խնամական, ազգակցական և այլ չհասութեանց վերաբերեալ խնդիրներում։

ԹՈՒՆՕՓՈՒԹԻՒՆ. Նորերումս Էջմիածնի Սինօդը կարգադրեց որ առաջնորդները «բժշկական վկայական պահանջեն ամուսնացող երիտասարդներից». «բժշկական վկայական պահանջել երկրորդ անգամ ամուսնացող այրի կանանցից և արգելել նաև թոքախտով վարակուածների պսակը»։ (Տես Արարատ 1904 թ. դեկտեմբեր)։ Սինօդը այս կարգադրութիւնը կարող էր հրատարակել միմեայն ամենայն հայոց կաթուղիկոսի կոնդակով և այն էլ Պօլսի կրօնական ժողովի համաձայնութիւնը նախօրօք առնելուց յետոյ։

Զ) ՊՍԱԿԱԼՈՒԾՈՒԹԻՒՆ

Յիսուս լեռան վրայ ժողովրդին քարոզելու ժամանակ ի միջի այլոց խօսեց և ամուսնալուծութեան մասին. «Առաջուց ասուեց թէ, ով որ իւր կնոջ արձակի, թող նրան արձակման թուղթ տայ։ Բայց ես ձեզ ասում եմ, ով որ իւր կնոջ կարձակի առանց պոռնկութեան պատճառի, նա նրան շնութիւն է անել տալիս, և ով որ արձակուած կին է առնում, շնութիւն է անում» (Մատթ. Ե. գլ)։

Պօղոս առաքեալը Կորնթացոց գրած թղթում համոզում է խիստ զգուշութեամբ կեանք վարել, ցանկանում է որ կարող է թող իւր նման անամուսին կեանք վարի, իսկ ով չի կարողանալ համբերել, թող պսակուի. կինը կապուած է մարդուն հետ այնքան ժամանակ, որքան մարդը կենդանի է, իսկ մարդու մահից յետոյ նա ազատ է, կարող է երկրորդ անգամ ամուսնանալ. բայց երանելի կլինի, ասում է առաքեալը, եթէ իմ խրատիս համաձայն վարուի և մարդու չգնայ. (Ա.. Կորն. Է. գլ.)։ Բարեզ մեծը հետևելով Տիրոջ պատուէրին, ընդունում է կնոջ արձակել պոռնկութեան համար, «այդ խօսքը պիտի վերաբերէր թէ մարդուն թէ կնոջ, բայց սովորութեան մէջ այդպէս չէ, երբ մարդը անառակ է, կնոջ պատուիրուում է մարդու մօտ մնալ. բայց եթէ կինը անառակ է, մարդուն թողլատրուում է արձակել» (Ա.. Գ.

239)։ Իսկ 31 կանոնի մէջ՝ ստիպուած հարկից, թոյլ չէ տալիս թէև զինուորների և բացակայութեան մէջ գտնուող անձանց կանանց մարդու գնալ առանց իրանց մարդկանց մահուան լուրը ճշտելու, բայց թեթև պիղծութիւն է անում (36 կանոն) (Ա.. Գ. 243), ենթադրելով որ պատերազմում կարող են մահուան դէպքեր լինել։ Լուսաւորիչ 23 կանոնով պոռնկութեան համար թոյլ է տալիս արձակել կնոջ, միայն մի տարի ապաշխարանքի ենթարկելով (Ա.. Գ. 509)։ Տահապիվանի ժողովի 3-րդ կանոնը խիստ ծեծի, կշտամբանքի, տուգանքի, ապաշխարանքի է ենթարկում չնութիւն անող թէ կնոջ թէ մարդուն։ 4-րդ կանոնը ասում է, եթէ մարդը շնաբարոյ է, և առանց պոռնկութեան պատճառի կամ մարմնական արատի արձակում է կնոջ, սա բոլոր մարդու շարժական և անշարժ կայքի կէսը իրաւունք ունի հետը տանելու և եթէ կամեցաւ երկրորդ անգամ մարդու գնալ, պէտք է տարած կարողութիւնը գանձարանին տայ, իսկ մարդը ենթարկւում է ? տարուայ ապաշխարանքի, տուգանքի և ծեծի, և եթէ տարին չլրացած մի ուրիշ կին գայ այս մարդուն և իմացուի որ այս կնոջ պատճառով է մարդը իւր առաջին կնոջ արձակել, երկրորդ կնոջ տանեն ուրիշանոց աղալու մի տարի ժամանակով։ Յաջորդող 5-րդ կանոնը նոյն ձևով, նոյն պատիժներով, նոյն տուգանքներով կշտամբում է այն մարդուն, որը առանց պոռնկութեան և մարմնական արատի կարձակի կնոջ ամլութեան համար։ Վերոյիշեալ երկու կանոնն օրինաւոր են համարում ամուսնալուծութիւնն երկու պատճառի համար այն է պոռնկութեան և մարմնական արատի։ Ուրիշ պատճառներով արձակելը համարում են ապօրինի և փոխանակ արգելելու այդպիսի գործողութիւնը, բաւականանում են միայն տուգանքի, պատժի, ծեծի ենթարկելով, և երկրորդ՝ չեն կարողանում արգելել որ ապօրինի վարուող մարդը իրաւունք չունենայ ուրիշ կին առնելու, հապա մինչև մի տարի այդ մարդը էլի պահւում է, և երկրորդ կինը ենթարկւում է մի տարի ապաշխարանքի այն դէպքում, երբ հաստատւում

է որ մարդուն գլխահանողը այս վերջին կինն էր։ Այստեղից երևում է. ա) որ բացի եկեղեցական պահքից, կար և առաջուայ կարգով քաղաքացիական պահք, ինչպէս և ընդհանուր եկեղեցւոմն էր երևում. քաղաքացիական պահք կատարելիս, հարսնախօսութիւնից յետոյ, մի քանի բարեկամներով գնում էին հարսի տունը, հայկերոյթ սարքում, և խնճոյքի ժամանակ հանդիսաւոր յայտարարւում էր որ այս ինչ մարդը առնում է այս ինչ աղջկան. և պահքը համարւում էր եղած։ բ) Որ ամուսնալուծութիւնը չէր ենթարկւում եկեղեցու խիստ հսկողութեան, եկեղեցին մեղմութեամբ էր վերաբերւում այդպիսի յանցանքներին. մեղմութեամբ ասելով չպիտի հասկանալ տուգանքի, ապաշխարանքի չենթարկելը, ո՛չ, քանի որ խիստ ծեծը սովորական պատիժն էր այդ յանցանքում բռնուածների համար. հապա պրկելով երկրորդ անգամ ամուսնանալուց, խիստ սաստելով քահանաներին որ այդպիսիների տունը չգնան, եկեղեցի չթողնեն նոցա։ Այն ինչ երևում է որ առանց պատճառի կնոջ արձակողը իսկոյն պահւում է, թէև ապաշխարանքի տակ է համարւում արձակողը։ գ) Առանց օրինաւոր պատճառի արձակուած կինը իրաւունք է ստանում մարդու գնալու, միայն մարդու հետ կէս արած իւր բաժինը գանձարանին յանձնելով, այս երևի այն մտքով է, որ բաժանման ժամանակ կինը կարող է անօգնական մնալ և այդ հիմքով թոյլ է տալիս մարդու հետ ամեն ինչ կէս անել, իսկ յետոյ մարդու գնալը համարում էին կնոջ համար արգէն նիւթականապէս ապահով դրութիւն և գրաւում էին յարքունիս նրա բերած բաժինը, երևի թէ պատիժ համարելով այդ գրաւումը կնոջ նկատմամբ նրա համար՝ որ չէր կարողացել գրաւչութեամբ ամուսնու սիրտը շահած պահել և արձակման առաջն առնել։ դ) Բաժանման դէպքում շարժական և անշարժ կայքի հետ մարդ ու կին կէս են անում և որդիքը. թէ ինչպէս. անորոշ է. սրդեօք հայրը վերցնում էր տղաներին, կինը աղջիկներին, թէ հաւասար թու-

ով հէնց կէսում էին առանց այդ 'ի նկատի ունենալու. մանրամասնութիւնների համար ոչինչ չկայ։

Մարդիկ չնչին բաների համար արձակելով իրանց կանանց և ուրիշների հետ պսակուելով առանց որևէ խիստ՝ չոշափելի պատժի ենթարկուելու, պիտի դարձնէին երկիրը կնահաններով, մարդամոլներով լիքը մի վայր, քանի որ մի քանի տարի ապաշխարանքը, ծեծը տուգանքը (100 դրամ =մօտաւորապէս 20 րուբլի) մի մեծ նեղութիւն չէր համարուել կին արձակողների համար, որոնք անպիտան կանանցից ազատուել—և իրանց հաւանած անձանց հետ կուզենային ապրել։ Այստեղ հարկաւ նշանակութիւն պիտի ունենար քաղաքացիական օրէնքը, որ պսակը համարելով մի որոշ հիմք ունեցող կապ, լինի քաղաքացիական թէ եկեղեցական, պիտի տար նրանից ծնուած մանկանց որոշ իրաւունքներ, որոշ պատասխանատուութիւններ, որոնք խճճում էին ըստ քմահաճոյքից ամուսնալուծական դէպքերում, և ժառանգական հարցերը իւր բոլոր ճիւղերով յանձնում կամայականութեան։ Թէ եկեղեցին ինչու այս խնդիրներում չէր որոշում վաւերական պսակը անվաւերից, կամ պատասխանատուութեան ենթարկում պսակադիր եպիսկոպոսին կամ քահանային, հասկանալի չէ, քանի որ այդ ամուսնալուծութիւնները նա համարում էր ապօրինի, և քանի որ նոյն ժողովի հետագայ 7-րդ կանոնը գաղտնի պսակը համարում է անվաւեր, որ նշանակում է թէ վաւերական պսակ և անվաւեր պսակ՝ արդէն եկեղեցական կանոնական շրջանում գոյութիւն ունէր, և բացի այդ գաղտնի պսակ անող քահանային զրկում էր քահանայագործութիւնից և 100 դրամի տուգանքի ենթարկում։ Այս հարցերը շատ էլ կարևոր եթէ լինեն էլ, պիտի մնան առանց պատասխանի, որովհետև կանոնները շատ հետևողական չեն, հակասող կէտեր շատ ունեն և մութ են։ Նոյն ժողովի 13-րդ կանոնը խօսում է մերձաւոր ազգականների պսակի մասին, զրկում է քահանայութիւնից պսակադիր քահանային, և սմոռից եպիսկոպոսին, եթէ սրանք օրհնել են պսակը և նրանց հար-

սանիքը գնացել, իսկ պսակուողների բաժանման խնդիրը թողնում է ամուսինների կամքին, կամաւոր բաժանման դէպքում մեղմ պատիժներ նշանակելով, չբաժանուելու դէպքում խիստ. մեղմ պատիժն այն է, որ պսակուողները իրանց ունեցածի կէսը տան կարօտեալներին և ցմահ ապաշխարեն և մեռնելիս հաղորդուին։ Այս կանոնից էլ ընդհակառակն երևում է, որ եկեղեցական պսակը տիրապետող օրէնք էր և կանոն, այլապէս մերձաւոր ազգականները կդիմէին քաղաքացիական պսակին և ոչ եկեղեցականին. այս՝ վերոյիշեալ մեր ենթադրութեան հակասում է; որից պիտի եզրակացնել, որ կամ նախորդ կանոնները առաջուց կազմած և ապա կցած են այս կանոններիս հետ, կամ ուղղակի ժողովականները կազմել են և մտցրել կանոնների շարքը առանց հետևողաբար մշակելու և քննելու խնդիրը։

Յամենայն դէպս Շահապիվանի ժողովը կողմնակի կերպով թոյլատրում է ամուսնալուծութիւն 1) պոռնկութեան դէպքում, 2) մարմնական արատի համար։ Իսկ եղած պսակը լուծուած է համարւում և անվաւեր, 1) գաղտնի եղած դէպքում, և 2) ազգակցական չհաս աստիճանում։ Ամուսնալուծութիւն չի կարող տեղի ունենալ 1) Ամլութեան պատճառով, 2) Մարդու և կնոջ փոխադարձ համաձայնութեամբ։ Շահապիվանի ժողովը ուրեմն ամուսնալուծութեան նոր կէտ մտցրեց, որ աւետարանում չկայ, այն է՝ մարմնական արատի համար։ Թէ ինչ է հասկանում ժողովը «մարմնական արատ» ասելով, չի որոշում, գժուար է ենթադրութիւններով բացատրել. բայց ունենք «Սրբոց Հարց հեռեւոդաց» անվաւեր կանոնների մէջ մի յօդուած, որը իւոսում է այն նիւթի մասին, թէ երբ կարելի է կնոջ արձակել և երբ չի կարելի արձակել։ (Տես Ա. Գ. 482 երես)։ «Կնոջ արձակել չի կարելի ամլութեան, ծախտութեան, վատութեան պատճառով, այլ միայն *պոռնկութեան, պիտակութեան, դիւահարութեան, գիշերութեան կամ մշտական պոռնկութեան համար*»։ Այս կանոնս մասամբ բացատրում է «մարմնական արատ»-ի տեսակները, բորոտութիւնը և պի-

սակութիւնը վարակիչ՝ համարեա եթէ ոչ անբուժելի, գլխուաւոր բժշկելի հիւանդութիւններ են, այն դարերում բոլորովին անբուժելի, որոնց համար և Ներսէս մեծի օրուանից շինուած էին «ուրկանոց»ներ անապատ տեղերում. հրէաների մէջ այդպիսի հիւանդները իրաւունք չունէին բնակուած վայրերում ապրել: Ուստի և կարող ենք «մարմնական սրբատ» բացատրել այսպէս, այն անբուժելի վարակիչ հիւանդութիւնները և մարմնի վրայի այն արատները, որոնք անկարելի են դարձնում ամուսնական յարաբերութիւնները, պիտի մտնեն այդ հասկացողութեան մէջ, ինչպէս օրինակ՝ անբուժելի բորոտութիւն, պիսակութիւն, սիֆիլիս, դիւահարութիւն կամ խելագարութիւն և արատներից «մարդ-կին» յատկութիւն ունենալը, որ ժողովրդական լեզուով կոչւում է «Ղըզօղլան»: 7-րդ դարու Պուբինի ժողովը սահմանում է նոր դէպի ամուսնալուծութեան, այն է 6–7 տարուայ բացակայութիւնը: Ժողովի 7-րդ կանոնն ասում է. «Շատերը մեր աշխարհից գերի տարուեցան, թշնամիներից հեռու տեղեր, նրանց, ամուսինները առանց վարդապետի հրամանի ամուսնացան: Դրանց համար սահմանում ենք, ով մինչև 6–7 տարի, երբ զուգակիցը գերութեան մէջ է, կհամաձակի ամուսնանալ, նա պոռնկութիւն սրած կհամարուի, ծեծ և պատուհաս կկրի. նրա ինչքից և ստացուածքներից կխլուի վարդապետների ձեռքով և աղքատներին կբաշխուի. նրանց պէտք է միմեանցից բաժանել և 7 տարի սպասիլ բանքի ենթարկել, իսկ եթէ 7-րդ տարին գերութիւնից չեա դարձան, իւրաքանչիւրը իւր ամուսնուն գնայ . . . .»: Կանոնս 7 տարի ժամանակ է տալիս ամուսիններին սպասել, կարծելով որ ով որ ողջ լինի չեա կդառնայ, եթէ ոչ կամ մեռած լինի կամ կրօնափոխ եղած, այս դէպքում ոչինչ չի ասում որշ, բայց պիտի ենթադրել, ուր կանոնս 7-տարուց չեայ սպասող ամուսնուն իրաւունք պիտի տայ պսակուելու, այլապէս ինչու էր 7 տարուայ ժամանակամիջոց նշանակում սպասելու համար, հապա պարզ արգելական հրաման կդնէը (Տես Ա. Գ. 398):

Ներսէս Ե. հրամայեց ամուսնութեան համար անկարելի համարել պսակալուծութիւն (Ա. Գ. 613): Գէորգ-Դ. պսակը «անլուծանելի» հրատարակեց (Ա. Գ. 638): Խրիմեան Հայրիկ ձիգ տարիների փորձը ի նկատի առնելով պսակալուծութիւն թոյլատրում էր շատ դէպքերում և ամենաշատ այդպիսի դէպքեր եղել են նրա կաթուղիկոսութեան օրով: Պօլսոյ պատրիարքը և կրօնական ժողովը գտնում են. որ «չիք բաւական փաստ և օրինական պատճառք, որք ըստ արդարութեան իրաւունս տացցեն լուծել պսակն վերոյիշեալ ամուսնացելոցն»: Վեհափառը գտնում է արդարացուցիչ այսպիսի կէտեր, 1) որ նշանախօսութեան ժամանակ պէտք է քննուէը և տեսնուէը երկուսի անհամեմատութիւնը, մէկը շատ առողջ է, միւսը հիւծուած բոլորովին. 2) որ տասներկու տարի է անբախտ օրիորդը փեսայից հեռացած, նստած է հօր տանը, նրանք միմեանց վերաբերմամբ մեռած են, առանց եկեղեցու էլ նրանց պսակը լուծուած է. ուստի «Աւետարանի ազատ ոգին և իմ խղճիս գիտակցութիւն թոյլատրէ գիս չմոռալ մանկամարդ տատապեալ կին մի մինչև մահ դատապարտեալ յամլութիւն . . . ». ապա շարունակում է, լուծում եմ այդ պսակը, կնոջ թոյլ տալով ամուսնանալ, իսկ այրը եթէ «վատահ է յանձն իւր կարող է կրկին ամուսնանալ»: (Կոնդակ յանուն պատրիարքի թ. 167 ի 5 վեար. 1899): Նոյն թուականին Պետերբուրգի կառավարիչ սենատից ստացուեց գրութիւն, որով հրահանգուում էր պսակալուծութեան խնդիրները յանձնել Սինոդի տնօրինութեան և ոչ Վեհափառի անհատական վճռին: Վեհափառը 1899-ին հոկ. 18 թ. 1188 Կոնդակով Սինոդի առնունով խօսելով այդ մասին գրում է. «նկատեալ ի նոսին պախատումն դարեւոր իրաւանց Հայրապետաց Հայաստանեայց եկեղեցւոյ. Մեք ոչ կարեմք համաձայնել ընդ որոշումն կառավարիչ Սենատին» և կրդրաքենք Կայսեր: Նոյն ամսի 20-ին թ. 1197 կոնդակով յանուն Սինոդին գրում է. «Մեք ի բացադրութեան Սենատին և ի վճռոյ Սուենիգ տեսանիմք

զահմանափակումն դարևոր իրաւանց Հայրապետաց Հայաստանեայց եկեղեցւոյ»։

Պետերբուրգի կառավարիչ Սենատը ստանալով Կայսեր մակագրութեամբ Վեհափառի բողոքը և՛ նկատի ունենալով Էջմիածնի Սինոդի վճիռը պատկանութեան վերոյիշեալ խնդրի վերաբերմամբ, 1904-ին հաստատում է իւր նախկին որոշումը ամուսնալուծութեան դէպքերը ենթարկելու Էջմիածնի Սինոդի կարգադրութեան և ոչ կաթուղիկոսի անհատական վճռին։ Էջմիածնի Սինոդը հետևելով իւր նախկին որոշման, Սենատի վերջի բացատրութիւնը և որոշումները վճռում է ընդունել՛ի հրահանգութիւն։ (Տես «Արարատ» Յուլիս—Օգոստոս, 59 երես, 1904 թուի)։

Պատկանութեան դէպքերը Տաճկահայոց և Պարսկահայոց վերաբերմամբ մնացին նախկին դրութեամբ, այսինքն է կախուած Վեհափառի վերջնական կարգադրութիւնից։ Պատրիարքը և Պօլսոյ կրօնական ժողովը քննում են գործը, վճիռ կայացնում և գործը ուղարկում՛ի հաստատութիւն և՛ տնօրէնութիւն կաթուղիկոսի։ 1899-ի մայիսի 14-ի Կոնդակը թ. 602 յանուն Պօլսոյ պատրիարքի, խօսելով պատրիարքի կողմից առաջարկուած երեք պատկի լուծման խնդիրների մասին, գրում է, քննել երեքի գործերը և «զարգիւնս ըստ վճռոց Զերոց և կրօնական ժողովոյդ մատուսջիք՛ի վախճանական տնօրէնութիւն Մեր»։ Պարսկահայոց երկու թեմական առաջնորդները պատկանական քննական գործերը ուղարկում են՛ի վերջնական տնօրէնութիւն Վեհափառ կաթուղիկոսի։

Յամենայն դէպս պատկի դէպքերում եղած վճիռների վերջնական տնօրէնութիւնը վերագրելով ընդհանուր ազգային ժողովի իրաւասութեան, կանենք հետևեալ վերջաւորող եզրակացութիւնը. որ Հայոց եկեղեցին թոյլ է տալիս ամուսնալուծութիւն 1) պատնկութեան համար. 2) մարմնական արատ ունենալու դէպքում՝ վերոյիշեալ բացատրութեամբ և 3) 7 տարի անյայտ բացակայութեան դէպքում։

Թէ այժմ ինչ դրութեան մէջ է այդ հարցը, կամ տիրապետող պետութեան օրէնքները որքան են միջամտում այդ հարցում, ինչպէս են կատարւում ամուսնալուծական գործերի քննութիւնը, դատավարութիւնը, այդ մանրամասն կտեսնենք Գ. գրքում. առայժմ այսքան։

Յունա—Հռոմէական եկեղեցին քրիստոնէական նախկին դարերից առաջնորդուել է Աւետարանի, Բարսեղ մեծի կանոններով. փոփոխութիւններ այդ խնդրում մտել են յունա—հռոմէական կայսերութեան ընթացքում քաղաքացիական իշխանութեան կողմից Կոստանդիանոս մեծից սկսած։ Սա պատկը լուծելու համար՝ իրաւունք էր տալիս մարդուն հեռացնել կնոջ պատնկութեան, վնասակար նիւթեր պատրաստելու և անպատուաբեր միջնորդութեան համար. իսկ կնոջ ազատուել մարդուց՝ մարդասպանութեան, վնասակար (կեանքի դէմ) նիւթեր պատրաստելու և գերեզմանատեղերի ու գերեզմանաքարերի անձեռնմխելիութիւնը խանգարելու համար (Цер. Пр. Суворова 333 երես)։ Ամուսնալուծութեան խնդիրը աւելի լուրջ կարգերի ենթարկուեց Յուստինիանոսի ժամանակ. նա ամուսնալուծութիւն թոյլ տուեց 1) կնոջ պետական յանցաւոր ճանաչուելու դէպքում, երբ նա կայսեր կեանքի դէմ եղած դաւադրութիւնը չէր յայտնել իւր մարդուն. 2) պատնկութեան համար. 3) մարդու կեանքի դէմ արած փորձի համար, 4) կնոջ ազատ յարաբերութիւնը ուրիշների հետ, որից կարելի է եզրակացնել կնոջ անառակ լինելը, օրինակ. օտար մարդկանց հետ բաղնիս գնալ, հասարակ մարդու կամքին թատրոն, ցիրկ գնալ և այլն և այլն։ 5) Արգանդի պտղի ոչնչացման համար։ Կնոջն էլ իրաւունք էր տրւում պաշտպանելու իրան և մեղադրելու մարդուն համանման դէպքերի համար։ Հետագայ կայսերական օրէնսդրութիւնները լրացրին այդ կէտերը նոր պատճառներով. 1) ամուսնական կեանքի անընդունակութեան համար. 2) Անյայտ բացակայութեան և գերութեան մէջ գտնուելուն համար՝ լրնթացս 5 տարուայ, ըստ Կոստանդիանոսի կարգադրութեան 4 տարուայ, ըստ

Յուստինիանոսի օրէնքի 10 տարուայ, ըստ Լևոնի անորոշ ժամանակով մինչև գերութեան վերջ (Суворовъ—335 երես) 3) Սմուսիններից մէկը խելագարութեան պատճառով, 4) Վանականութեան մէջ մտնելու համար. 5) մարդուն եպիսկոպոս ընտրուելու դէպքում, պայմանով որ կինը հեռու վանքերից մէկը քաշուի: Մինչև 10-րդ դարը պսակը լինելով թէ քաղաքացիական և թէ եկեղեցական կապ, ենթարկուում էր պետական օրէնքներին իւր հետևանքներով, 10-րդ դարից յետոյ երբ պսակը դարձաւ կայսերական հրամանով եկեղեցական խորհուրդ, առանց որի օրինաւոր համարուել չէր կարող, յունական եկեղեցին սկսեց չարմարուել կայսերական օրէնքների ցոյց տուած կէտերին ամուսնալուծական դէպքերում: Օտար եկեղեցիների այժմեայ ամուսնալուծական կանոնների մասին կխօսենք Գ. գրքում:

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Государственная Библиотека
С.С.Р.А.
7/XI-1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Ց Ա Ն Կ

Ա. ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

Ա. Եկեղեցու անդամների մասին . . . 7
Բ. Եկեղեցու անդամի պարտք և իրաւունք . 11
Գ. Եկեղեցու անդամութիւնից զրկուելը . . 15
Դ. Եկեղեցու անդամների բաժանմունքը . . 16
Ե. Հոգևորական դառնալու պայմանները . . 17
Զ. Ձեռնադրող անձի լիազօրական պայմանները . 28
Է. Ձեռնադրութեան վաւերական պայմանները . 33
Ը. Հոգևոր դասակարգի ընդհանուր յատկանիշները 36
Թ. Նուիրապետութեան անդամները . . . 44
Ա.) Եպիսկոպոսներ 45
Բ) Քահանաներ 54
Գ) Սարկաւագներ 59
Ժ. Վանական դասակարգ 64

Բ. ԵԿԵՂԵՑՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

Ա. ԵԿԵՂԵՑՈՒ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

1) Ընդհանուր եկեղեցու կառավարութիւնը . 75
2) Ազգային եկեղեցու կառավարութիւնը . 82
Ա.) Նախալուսաւորչեան եկեղեցին . 84
Բ) Նախասահակեան եկեղեցին . . 96
Գ) Ազգային շրջան 100
3) Գլխաւոր եպիսկոպոս 102
4) Միտրոպոլիտների մասին . . . 103
5) Արքեպիսկոպոս և էկզարխ . . . 107
6) Պատրիարքութիւններ 108
Դ) Հայոց հայրապետութիւնը . . 112
Ե) Կաթուղիկոսական պարտք և իրաւունք 120

Զ) Հայոց պատրիարքութիւնները և կաթուղիկոսները 128
Է) Պոլսոյ Հայոց պատրիարքութիւնը . 130
Ը) Սսի և Աղթամարի կաթուղիկոսութիւնները 132
Թ) Թեմերի եկեղեցական կառավարութիւնը 135
Ժ) Գիւղական եկեղեցիների կառավարութիւնը 144
(Պատարագի զարգացման ընթացքը) 148
9. Վանական կառավարութիւն . . . 149

Բ. ԵԿԵՂԵՑՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

Ա) Եկեղեցիների և վանքերի տնտեսավարութիւնը 155
Բ) Բարեգործական հիմնարկութիւնների կառավարութիւնը 168

Գ. ԵԿԵՂԵՑՒՈՅ ՕՐԷՆՍԴՐՈՒԹԻՒՆԸ

Դ. ԵԿԵՂԵՑՒՈՅ ԴՊՐՈՒԹԻՒՆԸ

1) Եկեղեցական դաւի հիմունքները . . . 176
2) Եկեղեցական դաւի առարկան . . . 180
3) Պատիժները 182
4) Նախկին դարերի եկեղեցական դատաստանը . 184
5) Նախկին դարերի դատավարութիւնը . . 191
6) Եկեղեցական դատը Հայոց մէջ . . . 196

Ե. ՊԱՇԿՈՒ ՄԸՍԻՆ

Ա) Երկակների պաշտ 235
Բ) Երրորդ պաշտ 236
Գ) Չորրորդ պաշտ 237
Դ) Նշանագրութիւն 238
Ե) Պատկագրութիւն 240

Ազգակցական
Խնամական
Կնքահայրական
Որդեգրական
Խորթական
} Հաստութիւն

Զ) Պատկառելիութիւն 265

ՎՐԻՊԱԿՆԵՐ

էջեր.	տող.		սխալ.	ուղիղ.
9	17	վերևից	քրիստոնիայ	քրիստոնեայ
10	6	—	տ՛եսակէտով	տ՛եսակէտով
18	9	—	ընդրուսմ	ընտրուսմ
19	2	—	պաշտօնիայի	պաշտօնեայի
23	4	վերջից	կնօջ	կնոջ
26	19	—	ընտեալ	ընտրեալը
32	7	—	Մակիդոնի	Մակեդոնի
37	21	—	համալանքները	համալնքներ
39	24	—	դարաւոր	դատաւոր
95	17	—	երևուէ	երևում է
103	20	—	եկեղեցիայ	եկեղեցեայ
107	2	—	Բզնոյ	Բջնոյ
117	1	—	Աբրհամ	Աբրահամ
124	1	—	միմեան	միմիայն
134	3	—	միմեան	միմիայն
151	24	—	[illegible]	եբր
151	1	—	պատարագի	պատարագը
152	1	—	նախական	նախնական
156	12	—	միմեայն	միմիայն
162	8	—	թևական	Պարթևական
169	14-34	—	Զահապիվան	Եահապիվան
169	16	—	Զաղիտային	Եաղիտային
170	9	—	մամարաճն	մամատուն
172	16	—	ոչ	ոչ մի
172	18	—	Ե—ի մի	Ե—ի
173	5	—	Զահապիվան	Եահապիվան
177	4	—	առաջիք	աստջիք
181	6	—	մօր	մօտ
183	2	—	եկեքեցու	եկեղեցու
183	3	—	Զահապիվան	Եահապիվան
187	15	—	Ավբելհանոս	Ավբելիանոս

ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐԵԼԻ

203	11	վերևից	արգիւնք	արգիւնք
204	3	վերջից	Զմուէլ	Եմուէլ
209	4	վերևից	գահընկեց	գահընկեց
211	3	—	դրամադրութիւն	տրամադրութիւն
215	30	—	դրւում է	տրւում է
216	1	—	տատարանն կարդանալ	դատաստանն կարդանայ
216	9	—	տիրապետութեան	տիրապետութիւնը
217	22	—	պարկեցին	պրկեցին
218	2	—	Դանիէլեանի	Դանիէլեան
218	13	—	բնագդմունքները	վայրենի բնագդմուն.
218	13	—	տասն	դառն
221	24	—	որովաստիճաւ	որ աստիճանով
221	33	—	անգամ	անդամ
222	29	—	կալուածքները	անշարժ կալուածքն.
223	10	—	եպիսկոպոսարանի	եպիսկոպոսարանք
226	2	—	հանդիմանու՛ինները	յանդիմանու՛ինները
270	15	—	դէպի	դէպք
270	5	—	ուր	որ

ՅԱՅԳ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀՄ
ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0221410

38. 849

348
V-45